



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1826

84

7-60

XVI/2 Ws

~~0124 - 25/11/25~~

~~0169 - 27/11/27~~

03 - 20/11/27

884
7-60 u

ԱՆԹՕՆԻՆ



ՀԵՂԻՆԱԿ

ԱԼԵԿՍԱՆՏՐԸ ՏԻԻՄԱՅ ՈՐԴԻ

ԹԱՐԳԱՐՆԵՑ

ՕՐԻՈՐԳ ՄԱՐԻԱՄ Յ. ՃԵՐՄԱԿԵԱՆ

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱՊԷՏ

ՏԻԳՐԱՆ ԵՍԵՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԸՆՆ

8
7

1001
969



2003



Զմիռնիստ

ՏՊԵՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԸՆՆ

1876

4123

9

Ա Ն Ք Օ Ն Ի Ն

Ա.

Այլ սիրէք այն վիպասանութիւնները որ այսպէս կ'ըսկսին .

Պայծառ ու զեղեցիկ առտօք մը .

Կամ ,

Գարնանային զեղածիծաղ իրիկուն մը , և այլն : Ես շատ կը սիրեմ զանոնք : Անմիջապէս զուարթութիւն մը կ'ըզգաս , արև ու օդ կը վայելես , կը շնչես , կը հասկընաս որ սիրոյ ու բնութեան , երիտասարդութեան և բանաստեղծութեան վրայ խնդիր կայ : Ա՛՛շ այն մատենագիրներուն , որ պատմութեան սկզբնարանէն , ձմեռը ցուրտ սենեակ մը կը մտցընեն զքեզ , որուն գերեզմանի չորս միջնորմերու նման մերկ պատերուն մէջ կը տեսնես խեղճ ընտանիք մը , որ իւր կրակին վերջին կայծերուն առջև տխրութեամբ կծկտած կը գողգղայ :

Ա՛՛շ այն վիպասաններուն որոնցմէ զուարճութիւն կը խնդրես պարագայ ժամերուդ համար , և նոքա փոխանակ Ստոլածային սքանչելագործութեանց հիանալի տեսարանը քու առջև պարզելու , կոշտաբար կենաց և թշուառութեան դառն իրականութեան միջամուխ կ'ընեն քեզ : Այսու ամենայնիւ չեմ ըսեր թէ տխրալի նկարագրութիւնները բոլորովին զանց առնուին , այլ այն պայմանաւ միայն կը հաւանիմ որ ինչպէս վերնայարկ մ'ենելու համար հարկ է նախ առաջին աստիճաններէ անցնիլ , նոյնպէս մատենագիրք բարերաս-

տիկ անձանց նկարագրէն սկսելով՝ սակաւ առ սակաւ պէտք են իրենց բուն նպատակին հասնիլ :

Մտոյդ է որ զանազան պարագաներու մէջ ձմեռն ալ իւր հրապուրանքը ունի : Օրինակի համար , օթոցով լաւ ծածկուած սենեակ մը , մետաքսեայ մեծ վարագոյրներ՝ որոնցմէ կիսալոյս պայծառութիւն մը կը թափանցէ , այնպէս որ ներսէն չզիտցուիր թէ դուրսը ինչ օդ կ'ընէ , և թէ երկինքը ամպամած է թէ լուրջ կապոյտ . ցուրտ է թէ տաք , կակուղ թաւարծի օթոց մը՝ սրուն վրայ դեկտեմբերի մէջ անգամ մերկ ոտքեր կրնան հանդիլ , շրջանակեայ զուարթ պատկերներ , լայն ու փափուկ թիկնաթուռներ , քանակութեամբ մը , ծաղիկներ , կերպասներ , վիժակներ , արծաթածու կրակ մը որ ճարձատելով իր լուսանշջլ բոցերը սենեկին շուրջը կը ծաւալէ և բունի մը պէս տաք կը պահէ զան . անկողնոյն մէջ կիսամերկ կին մը որ բռնածիգ ցրտէն պասսպարուելու համար սաւանը մինչև այտերը քաշելու չէ՝ հարկադրուած . այս տեսարանը ոչտխուր է և ոչ ալ անախորժ . մանաւանդ երբ կինը նորատի ու գեղեցիկ ըլլայ :

Սակայն մենք մեր անդրադոյն սէրը զարնան համար պահելով , առաւել ղմայլական ու հեշտալի կը գաննեք բոլոր բնութեան զուարթութիւնը՝ քան առանձին սենեկի մը շքեղութիւնը , և յունիս ամուսն հովանին յունվարի կրակէն նախապատիւ կը համարինք :

Աւստի 1834 մայիսի գեղեցիկ առտու մը , երկու երիտասարդներ թև թևի տուած Բիւլօլիլի փողոցին կամարներուն ասի կը պարտէին :

Ժամը տասնմէկ էր և ճիշդ նախաձաշնին լմնցուցած էին : Երկուքն ալ մէկ հասակաւ կարծես մի և նոյն տարիքն ունէին . միայն թէ մէկը խարսեաշ էր իսկ միւսը սև մազերով :

Ամօրուս ծնօտ , կապոյտ աշուրներ , թէթև մը գունատեալ այտեր , քաղցրատեսիլ դէմք և վերջապէս այս ամենը փոքրաթախիժ երեւոյթով մը քողարկեալ՝ որ իրեն սքանչելի կերպով կը վայլէր , ասէա խարսեաշին նկարագիրը :

Թխերեսը՝ որ սևակնեայ ու մօրուսաւոր երիտասարդ մ'էր , իր

լայն ուսերով և սունական այն հաստատ քալուածքով՝ որ ամեն օր կենանք վասնելու յորդութիւն մ'ունի՝ երկաթեայ առողջութիւն մը կը վայելէր : Ասիկա կը ծխէր նաև , զուարճութիւն մը՝ որմէ միւսը կը ծուժկալէր : Ասիէ զատ , ընկերակցին գեղեցկատիպ քաղցրութիւնը իր դիմաց վրայ ալ կը փայլէր : Այս յաղթանգամուժեղ պատանին տեսնողը իսկոյն պիտի հասկընար թէ ինչպէս ամեն ճոխ ու մեծանձն բնաւորութիւնները՝ ասիկա ալ իր ամեն զօրութիւնովը՝ այսինքն թէ ֆիզիկապէս և թէ բարոյապէս կը սիրէր :

Զեմ՝ զիտեր եթէ աղէկ կը բացասուիմ , բայց ըսել կ'ուզեմ թէ այն անձերէն էր որ ամեն ժամու մէջ կարող են գորովալիւր ցոյց մը յայտնել այլոց , քանզի իրենց գոյութիւնը անշիթ է : Մեր պատանին այ չունէր ոչ սովորոյթ , ոչ մեղամաղձութիւն և ոչ որ և իցէ իր մը՝ սրոնց պատճառաւ մարդիկ կը հարկադրուին իրենց յանձին վրայ երբեմն զբաղելու :

Խարտեաշը Էտմօն տը Բէրէօ կը կոչուէր . թխերեսը Աիւսթավ Տօմօն : Ասոնք դպրոցական երկու բարեկամներ էին որ սքանչելապէս մէկմէկ կը կատարելագործէին :

Էտմօն երեք տարուան էր երբ հայրը մեռաւ . ուստի մինչև տասն և հինգ տարու մայրենի դաստիարակութիւնը ընդունելով՝ իրական սեռին ամեն սովորութիւնները ու կրնամ ըսել բոլոր ցանկութիւնները ստացաւ :

Աիւսթավ մանկութենէն հայրը ու մայրը կորսնցնելով , պատգորոս խնամակալի մը յանձնուեցաւ , որուն խիստ հրահանգը իր հաստատ ու վաղահաս բնաւորութեան կարի շահաւոր եղաւ :

Եօթը տարուան էր միայն Աիւսթավ երբ դպրոց դրուեցաւ . իսկ Էտմօն՝ ինչպէս որ տեսանք՝ տասնհինգ տարի իր մօրը կրթութիւնը ընդունելէ յետոյ՝ տիկին տը Բէրէօ հաղիւ հաճեցաւ իր զաւակը ուսումնարան խրկել :

Աիւսթավ շուտ մը իր նոր ընկերակցին վրայ կանացի դաստիարակութիւն առած տղու մը երկչոտ ու ամօթխած բնաւորութիւնը նշմարեց և անմիջապէս անոր բարեկամ ու պաշտպան կանգնեցաւ : Իրենց մտերմութիւնը այն ատենէն սկսաւ և դպրոցէն ետքն ալ միշտ անփոփոխ մնաց :

Գրեթէ ամեն օր զիրար կը տեսնէին :

Ահա՛ թավ հօր պէս կը սիրէր Էտմօնը : Թ. և տարիքով անորմէ մեծ չէր . բայց իր ուժը և դպրոցին մէջ անոր վրայ ունեցած հսկողութիւնը՝ Էտմօնի աչաց կը ծերացընէին զինքը և տեսակ մը հայրական իշխանութիւն կու տային իրեն , իշխանութիւն մը՝ որ սակայն խիստ քաղցրութեամբ կը գործածէր :

Օր մը տիկին տը Բէրէօ ըսած էր Ահա՛ թավին ,

— Ահա՛ թավ , աղէկ հոգ տար զաւկիս վրայ :

Եւ այն խնամը՝ որ բարեկամական հաճութիւն մ'էր իրեն համար մինչև այն ատեն , այն օրէն նուիրական պարտք մը դարձաւ :

Այս ալ ըսելու է նաև որ Ահա՛ թավ երբեմն տիկին տը Բէրէօի աչքերը Էտմօնի վրայ անհանդստութեամբ յառի՛լը տեսած էր . և այս կը պատահէր այն օրերը՝ երբ : տմօն սովորականէն աւելի մտախոհ ու գունատ երևէր : Աստի այս մայրական անհանդստութիւնը Ահա՛ թավի նոր արիւթիւն կու տար , որնոր տիկին տը Բէրէօի ձեռքը բռնելով կ'ըսէր .

— Անհոգ եղիք , ես հոս եմ :

Ահա ինչ են ու ինչ էին Էտմօն ու Ահա՛ թավ մինչև այն օրը որ իրենց հետ կը ծանօթանանք . մէկ մէկու համար անկեղծ ու խոր համակրութիւն , մէկուն կողմէն քիչ մը հնազանդութիւն , ժիւսին կողմէն քիչ մը պաշտպանութիւն և զոյնութիւն , այն դէպքերուն համեմատ որ համառօտապէս նկարագրեցինք :

Արդ՝ մեր երկու բարեկամները մայիս ամսուան գեղեցիկ առտու մը Ռիփօլի փողոցին կամարներուն տակ կը պտըտէին ու կը խօսակցէին :

Յանկարծ Էտմօն ծխավաճառի մ'առջև կանկ առնելով ,

— Աեցիք , ըսաւ Ահա՛ թավի , սիկառ մ'առնեմ :

— Անօդուս է , պատասխանեց Ահա՛ թավ բարեկամին լեզու մընէլով :

— Եւ ինչո՞ւ :

— Քանզի ծուխը քեզ կը փնստէ :

— Բայց դու կը ծխես :

— Ո՛հ , ես , այդ ուրիշ բան է : Ինծի ատիէ փնստ մի չգար : Մանաւանդ թէ ատիկայ մօրդ դժգոհութիւն պիտի պատճառէ : Էտմօն առանց խօսք մ'ալ աւելցընելու իր շրջագայութիւնը շարունակեց :

Քասթիլիօն փողոցը հասած ժամանակին , մէկ կողմ քաշուեցան , պարոնի մը ու հետը եղող նորատի օրիորդի մը ճամբայ տալու համար :

Պարոնը եղանակին հակառակ լօղիկով մը պարածածկուած էր : Խաղաղ ու շնորհալի կերպարան մ'ունէր և յիսուն կամ յիսուն հինգ տարեկան կ'երևէր : Մոխրագոյն մազերուն վրայ լայնեզր ցած փեղոյր մը դրած՝ ձեռքն ալ սեպուտի գաւազան մը բռնէր էր : Նաև շքանշան ալ ունէր :

Աճապարենք ըսելու օր այս պարոնը հազիւ թէ երկու երիտասարդներուն ուշադրութիւնը գրաւեց , որոնք երիտասարդուհոյն ալ նկատողութիւն չպիտի ընէին դուցէ՛ առանց հետևեալ պարագային :

Այս օրիորդը քաղցր ու համակրական դէմք մ'ունէր , բայց այնքան շուտ կը քալէր որ հազիւ Էտմօն նշմարեց զան . իսկ Ահա՛ թավի դալով անոր հակառակ կողմը կը նայէր :

Ասիկայ ասանկեղ կամ տանկեթ տարեկան փոքրահասակ աղջիկ մը կը համարուէր : Մոխրագոյն շրջագոյնտի մը վրայէն առեր էր մետաքսայ սև մեկնոցակ մը . գլուխը յարդեայ փեղոյր , ձեռքը կանաչ հովանոց մը իւր հաղուստը կը լրացընէին , որ ինչպէս կը տեսնուի խիստ պարզ էր և ամենէն նայուածքները գրաւելու ենթակայ չէր :

Էտմօն և Ահա՛ թավ ճամբանին շարունակելու վրայ էին , երբ ասիկայ հօրը լեզու լծող տալով , շրջագոյնտը քիչ մը վեր վերցուց և սկսաւ ոտքի մատուըներուն վրայ քալել , որպէս զի առանց ցետտուելու Ռիփօլի փողոցին ան աղմուտ տեղէն անցնի :

Գուցէ հարցընէր թէ այսպիսի պայծառ առաւօտ մը ինչպէս կ'ընար Ռիփօլի փողոցը տղմով լեցուն ըլլալ : Սակայն ասիկայ խիստ պարզ է . թէև ութ օրէ 'ի վեր անձրև չէր եկած , բայց Բարիդի մէջ ձեռնարկութիւն մը կայ , որ հրաշալի կերպով անձրևին պակասութիւնը

կը լեցրնէ . ասիկայ ուղղելու հոգաբարձութիւնն է և իրեն տրուած ստալը այնպէս ուղղութեամբ կը վաստակի , որ իր կառքերուն անցած տեղերը ոչ միայն ջուր՝ այլ նաև տիղմ ալ կը գտնուի :

Ճիշդ նոյն միջոցին այս կառքերէն մին անցեր էր :

Ուստի երիտասարդուհին շրջագոյնս վերցուց և Էտմոնի աչուրները որ մեքենայէս անոր կը հետևէին , երկու պղտիկ ստունները տեսան վայելչապէս կօշկեալ , որոնց կոճին բարակութիւնը երթալով կ'ընդարձակուէր և երկու շնորհագեղ սրունքներ կը խոստանար՝ որ քօրէժի կանանց և Բրուտիէի արձաններուն վրայ միայն հազիւ կը տեսնուին :

Եւ գեղեցիկ սրունք մը սրչափ յանկուցիչ է :

Չեմ գիտեր ինչու , բայց այն փոքրիկ ստունները որ սալայատակին վրայ թեթևաքայլ կ'ընթանան , այն լաւ մը պարզուած սպիտակափայլ գուրպանները , այն սրունքն՝ որուն եռամասին տեսքով միայն բովանդակ շնորհաձեւութիւնը կը յայտնուի , այս ամենը էրիկ մարդոց երևակայութեան վրայ անպատմելի ազդեցութիւն մ'ունին :

Արնամ ըսել թէ տղան անցնելու համար վեր վերցուցած շրջագոյնս մը ձմռուան մեծ մխիթարանք մ'է :

Էտմոն ալ վերջապէս էրիկ մարդ մ'էր . ուստի պահ մը այն երկու վայելչագեղ պղտի ստունները , այն մաքրափայլ , ձևաւոր ու կանխահաս երկու սրունքները նկատելէն ետև՝ ըսաւ Արսութեամբին .

— Տեսա՞ր հօրը հետ անցնող սա սիրուն աղջիկը :

— Ա՛չ , պատասխանեց Արսութեամբ :

— Արն որ դէպ 'ի հոն կերթայ , շարունակեց Էտմոն զան յուցրնելով :

— Գեղանի է , հարցուց Արսութեամբ :

— Աքանջելի՛ն , սիրելիս , տես ինչ ալ որ սրունքներ , ինչ հիանալի ոտքեր : Եթէ անոր հետևէիք , վրայ բերաւ Էտմոն երկչոտութեամբ մը :

— Ինչու համար :

— Հետևելու համար միայն :

— Ա՛հ , ստուգիւ գեղեցիկ ղուարձութիւն մ'է . հօրը հետ եղող աղջիկի մը հետևելը ինչի՞նչ պիտի ծառայէ :

— Եւ ոչ բանի մը , բայց որովհետև կը պարտինք , լաւագոյն չէ՛ որ աչքերնուս առջև երկու բոլորագեղ ու շնորհալի ստուններ ունենանք :

— Երբ Թիւլլորի համնի , շրջագոյնս վար պիտի ձգէ և ան տեսն բան մը չպիտի տեսնես :

— Ան ատեն դիմացէն կ'անցանք ու զան կը նկատենք . ետքը ուր բնակիլը կ'իմանանք :

— Իխսա կարևոր է :

— Ո՞վ գիտէ :

— Թող ուրեմն ուզածդ ըլլայ , քանի որ ասիկայ քեզ պիտի ղուարձացրնէ և ուրիշ ընելիք մ'ալ չունինք :

Էտմոն ու Արսութեամբ առաջադիմութեամբ անմիջապէս երիտասարդուհւոյն և ծեր պարոնին կը համնին : Այս վերջինը երբ անդամ մը Թիւլլորի պարտէզը մտաւ , ալ կառքերէն երկուք մը չունենալով ոչ իրեն և ոչ նորատի ընկերակցուհւոյն համար , ակնոցը աչքը դրաւ , և զրպանէն լրագիր մը հանելով սկսաւ կարգալ՝ Բոյալ կամուրջին ուղղութեամբ կամաց կամաց քալելով : Իսկ աղջիկը հովանոցը գոցելով անոր քովէն կ'երթար , ալ Բէրէօ և Տօմոն ալ իրենց թիւր մեկնութիւններով անոնց ետևէն կ'երթային :

— Արդեօք իր կ'ընն է , կ'ըսէր Էտմոն :

— Իսնդ ես :

— Բայց ինչու , քանի քանի ծերունիներ խիստ մանկամարդ աղջիկներու հետ ամուսնացած են :

— Բայց ասիկայ յայտնի է որ կարգուած կ'ին մը չէ :

— Ուսկից յայտնի է :

— Ամեն բանէ սիրելիս , կարգուած կ'նկան մը ոչ հագուստը : ոչ տարիքը և ոչ շարժուածքը ունի :

— Ինչ որ ալ ըլլայ սիրուն անձ մի ըլլալու է : Եթէ կ'ուզես քիչ մ'առջև անցնինք ու զան աղէկ մը դիտենք :

— Անցնինք :

Երկու պատանիները շտապելով անոնցմէ քանի մը քայլ առջև անցան ու սկսան ետևնին գառնալ՝ իբր թէ ուրիշ ընկերակիցներու կ'սպասէին :

Այս շարժումը և դիտարութիւնը երիտասարդ աղջկը ըմբռնելով իսկոյն աչքերը խոնարհեցուց, ոչ թէ կեղծ պարկեշտութեամբ այլ պարզապէս երկու մարդերու հետ երես առ երես չդռնուելու համար :

— Սքանչելի՛ անձ, մըմնջեց Էտմօն :

— Արդարև, ըսաւ Արևսթավ, ի՛նչ պաշտելի վարսագեղ զլուս մը ունի, ի՛նչ մեծ մեծ աչուրներ :

— Ուրեմն կը զղջաս հիմա անոր հետեւելուդ :

— Չէ՛, բայց դու ալ խոստովանէ որ ասկէց մեծ օգուտ մը չքաղեցինք :

— Ասկէց այն օգուտը քաղեցինք որ գեղեցիկ կ'ին մը տեսանք . և այս՝ այնպիսի զբաղմունք մ'է որ անարգելի չէ :

Եւ ահամայ Էտմօն միւս անգամ ետին դարձաւ, որուն վրայ այս անգամ գեղանի օրիորդը կարմրելով շփոթեցաւ :

Շփեր պարունը լրագրոյն մէջ խորատուլեալ բան մը չէր տեսներ :

— Այդքան տէ՛ս մի նայիր, ըսաւ Արևսթավ բարեկամին, գուցէ աղջկան անհաճոյ թուի :

Իբաւուրք ունիս, նորէն ետ մնանք . ան ատեն չպիտի հասկընայ որ իրեն կը հետեւնք և մենք դիւրութեամբ կրնանք իրեն նայիլ : Բայց երանի թէ գետեզրը ուղղած ու տուներնին ալ բաւական հեռու ըլլար :

Ուստի Էտմօն և Արևսթավ կանկ առին, բայց իւրեանց կերպերէն երիտասարդուհին անմիջապէս մտքերնին հասկըցաւ . և թէպէտ ալ չէր տեսներ զանոնք և ոչ ալ ձայներնին կը լսէր սակայն հաւաստի էր որ իր ետեւէն ու իրեն համար կու գային :

Եւ ի՛նչ բան կրնայ արդիւել կին մը այս տեսակ իրողութիւնները գուշակելու :

Արդ՝ որչափ որ օրիորդը վստահ էր իր ետեւէն գալերնուն վրայ, այսու ամենայնիւ ուզեց աւելի ստուգել այս կարծիքը :

Ասիկայ միթէ պչրանք էր :

Անշուշտ ո՛չ . զինքը դրդողը աւելի այն հետաքրքրութիւնն և խուն մի սնափառութիւնն էր որ բոլոր երիտասարդուհեաց բնական յատկութիւնն է, և որոնց համար յարգանք մը որչափ անուղղակի ըլլայ՝ այնքան հրապուրելի ու գգուելի է : Այն մը զրեթէ բնաւ չդժկամակիր երբ իրեն հետեւին, մանաւանդ երբ գիտնայ մեր օրիորդին պէս թէ այս անխորհուրդ տարփական յարակցութիւնը ինք հաստատած չէ, և թէ իր գործը փորձառու, խոհեմ ու բարեճաշակ մարդոց հետ է :

Մեր դիւցազնուհին գուցէ մեզի չափ չճարտարամտէր, բայց հաւաստի ենք ու դարձեալ կը կրկնենք թէ երկու երիտասարդներուն հետամուտութիւնը իրեն անհաճոյ չէր :

Մանկամարդ աղջիկները այս տեսակ չնչին դէպքերու վրայ աներկեան՝ հողի կու տան, քանզի ասոնցմով իրենց կին ըլլալը կը հասկընան, զանոնք իրարու պատմելով կը հրճուին և իրիկունք երբ զուարթագին խորհուրդներով ու քաղցր ակնկալութիւններով իրենց սենեակը կ'առանձնանան, այն ատեն այս գիպուածները իրենց նորաբողոք երեակայութեան առջև բերելով կը խնդամտին :

Արդ մեր դիւցազնուհին շատ կը փափաքէր գիտնալու թէ երկու պատանիները արդեօք միշտ իրեն կը հետեւէին : Փափաք մը՝ որ թէև խիտ ներելի էր, սակայն զան փորձելը քիչ մը դժուար, քանզի աղջիկը չէ թէ կը վախնար որ հայրը այս բանն չզիտէ, այլ չէր ուզեր որ երկու երիտասարդները իր հետաքրքրութիւնը ըմբռնելով՝ որ և իցէ մեկնութիւն տան :

Ուստի բաւական մտածելէ յետոյ կամացուկ մը ձեռնոցներէն մին հանելով վար ձգեց, ապա քանի մը քայլ ևս առաւ իբր դեռ անտեղեակ այս կորուստին՝ զորն որ Էտմօն և Արևսթավ նոյն վայրկենին տեսէր էին, սակայն ամենևին դիտարութիւն մը չէին նշմարած :

— Ի՛նչ գեղեցիկ առիթ, գուշեց Էտմօն :

Եւ բարեկամին թեք թողլով իսկոյն վազեց ձեռնոցը գետնէն ժողվելու՝ ճիշտ այն միջոցին որ նորատի անձանօթուհին իր կորուստը նշմարել կը ձևացընէր սահած ժամանակը բաւական սեպելով :

— Օրիորդ, ըսաւ անոր մօտենալով, զան ողջունելով, ձեռնոցը

աալով և անխառնոյց անոր նայելով, ահա կորսնցուցած ձեռնոցնիր :

— Հնորհակալ եմ, պարոն թոթովնց աղջիկը ակնիր շառագնե-
լով :

Եւ ձեռնոցը առաւ : Ծերունին տեսնելով որ աղջիկը մէկու մը
հետ կը խօսէր կանկ առաւ ու ըսաւ :

— Ի՞նչ է, ի՞նչ կայ :

— Հայր իմ, պատասխանից օրիորդը, պարոնը բարեհաճեցաւ
ձեռնոցս տալու որ գետինը ընկեր էր :

Ծերունին շնորհակալ եղաւ Էտմոնէն առանց անոր նայելու իսկ
և լրագրին ընթերցումը շարունակեց :

Այս փոքրիկ անցքէն յետոյ, Էտմոն դնաց Գիւթավիկն միանալու,
որ ըսաւ իրեն :

— Է՛հ, հիմա գո՛հ ես :

— Ըուարած եմ, սիրելիս, այդ պզտիկը հրաշագեղ աղջիկ
մ'է, և եթէ չեմ սխալիր, ինձ այնպէս երեցաւ որ ըրածս իրեն
տհաճելի չէր :

— Ըրածդ ամենապարզ բան մ'էր :

— Եւ սակայն սիրտս կը տրոփէ :

— Իե՛նչ ես : Օ՛ն հիմայ ձեր տունը երթանք :

— Ըմենեին, կուզեմ անոր ուր բնակիլն ալ իմանալ :

— Տակաւին կուզես անոր ետեւն երթալ :

— Այս գեղեցիկ ճամբուն մէջ տեղը կանկ չեմ առնուր :

— Եւ սակայն նոյն դէպքէն ետքը, իրեն հետեւ իր անպատեհ է :

— Ո՞վ պիտի հասկընայ այս բանս :

— Ինքը :

— Ի՞նչ կերպով :

— Հաւաստի եմ որ տասն վայրկեան չանցած ետին գառնալու
միջոց մը պիտի գտնէ. ես աղէկ կը ճանչնամ այդ պզտի աղջիկ-
ները :

— Իմ ուզածս ալ այն է որ իրեն հետեւիլս գիտնայ :

— Ստիկա բանի մը չպիտի ծառայէ քեզ :

— Ո՞վ գիտէ որ մը ինչ կը սպասահի :

— Բայց իր տունը երբէք չպիտի ներկայիս :

— Ո՛չ :

— Կաև իրեն նամակ չպիտի գրես :

— Չէ. բայց ուր բնակիլը հասկընալով՝ շրջակաները պիտի
թափառիմ առանց իրեն դրելու կամ հետը խօսելու, և նա ան-
գաղար իւր ճամբուն վրայ զիս գտնելով, հարկաւ սիտի իմանայ
թէ իրեն սիրահարած եմ. և ասիկա միշտ յառաջարան մը կը հա-
մարուի :

Ասիկէ դատ ոլլատոնական ստորիանքները կը սիրեմ ես : Օր մը
կը կարգուի անշուշտ և ամուսին մը հօր մը պէս չէ, կին մը աղ-
ջիկի պէս չէ. ան ատեն առ ի՞նչ մը կը դանեմ անոր ներկայանալու
և հետը սիրաբանելու :

— Հա՛, հա՛, դու խիստ հեռուն կը նկատես :

Այս միջոցին հայր ու աղջիկ Թիւլլորին ելնելով Բոյալ կա-
մուրջին կողմը կը զարնէին, ուրիկց միշտ շատ բազմութիւն կ'անց-
նի : Գեղանի պատանու հին կարծելով թէ այն անհամար անցորդ-
ներուն մէջէն կրնար առանց տեսնուելու քիչ մը գլուխը դարձը-
նել, շուտ ընդ փոյթ ակնարկ մը ձգելով ետին իրմէ քսան քայլ
հեռու կը տեսնէ իր երկու հալածիչները՝ որոնց աչքէն այս հե-
տաքննութիւնը չպրծիր :

— Ետին պարձաւ, ըսաւ Էտմոն :

— Կանխաւ իմացուցած էի քեզ որ այս պիտի պատահէր :

— Բայց խիստ հաւանական է որ ասիկա կարգուած կին ո՞րչայ :

— Քովի ձերուն հետ :

— Չէ, որովհետեւ հայր կոչեց գան : Ստոր տարիքը կնիկներ կան
որ տարիէ մը 'ի վեր կարդուած են : Բայց աս ալ կ'իմանանք :

Երկու բարեկամները վարկածներով ժամանակ կ'անցընէին, և
Էտմոն երիտասարդուհոյն շնորհակալ եղած ժամանակ իր վրայ
նետած ակնարկէն յուսադրուած, իրեն նպաստաւոր խիստ գգուելի
հաւանականութիւններ կը կազմէր երևակայութեան մէջ. սակայն
չէր համարձակեր զանոնք բարեկամին հաղորդելու :

Այս ալ ըսենք որ Էտմոն բնաւ պանծարան մէկը չէր, այլ ընդ-

Հակառակը տարիական իրողութեանց մէջ նշանաւոր երկչոտութիւն և անփորձութիւն մ'ունէր : Սակայն մարդ որչափ ալ անտեղեակ-բլլայ այս սրտաբախ զգացման , ամենահմուտ անձի մը չափ ենթադրութիւններ կրնայ ունենալ անոր վրայ :

Ծեր պարոնը և իր ուղեկցուհին Պագ փողոցը զարկին , քիչ մը յառաջացան , ձախ կողմը Լիլ փողոցը մտան և 18 թուոյն առջև կեցան :

Այս դռնէն ներս մտնելու ատեն , երիտասարդուհին կրկին անդամ գաղտագողի ետին զտանալով՝ նորէն երկու երիտասարդները ատեսաւ :

— Ի՞նչ պիտի ընեն հիմակ , մտածեց :

Եւ ըստ որում ինքն ալ սիրոյ մէջ բռնորովին անփորձ էր , սկսաւ գողալ որ չբլլայ թէ ձեռնոցին պատմութիւնը մեծ թեթեւութիւն և վտանգալի մեղք մը եղած լինի իրեն համար :

Բ

— 18 թիւը մտաւ , ըսաւ Էտմոն Արսթալի :

— Հիմա գոհ ես :

— Այո՛ , բայց կը վախնամ :

— Ինչո՞ւ :

— Ար գուցէ հոս չբնակիր : Գեո. խիտտ կանուխ է , կարելի է հօրը հետ նախաձաշելու համար եկած ըլլան :

— Հաւանական է :

— Աւրեմ ի՞նչպէս գիտնալու է :

— Միթէ հաստատ միտքդ դրած ես իմանալու :

— Այո՛ :

— Հարցո՞ր ուրեմն :

— Բայց դռնապանին հետ խօսած ժամանակս եթէ ինք վար իջնէ :

— Պիտի տեսնէ զքեզ և հայրն ալ գուցէ ճանչնայ , ահա այս է ամեն ըլլալիքը :

— Ա՛հ , հայրը չպիտի ճանչնայ զիս , ձեռնոցը աղջկան տուած ժամանակս երեսս իսկ չնայեցաւ . այդ մասին անհոգ եղիր :

— Մանենք ուրեմն :

Երկու երիտասարդները դէպ 'ի տունը յառաջացան , քանզի նախկին խօսակցութիւնը ընելու համար կայներ էին :

Այս միջոցին գոց պատուհանի մը վանդակափեղկին ետեէն շնորհագեղ զլուխ մը մեր երկու բարեկամները դնելով՝ զարմանաքանչ շարժում մը կ'ընէ , երբ անոնց դ պ 'ի տանը դուռը դիմելին կը տեսնէ :

— Հնար մը գտայ , գոչեց յանկարծ Էտմոն , չորս դին նայելէն ետքը :

— Ի՞նչ հնար :

— Հիմայ կը տեսնես :

— Տիկին , ըսաւ դռնապանուհւոյն , վարձու սենեակ ունի՞ք :

— Այո՛ , պարոն :

— Տանը առջևի կողմը թէ ետեի :

— Առջևի :

Գատիկոնին , ձեին ու գնոյն վրայ տեղեկութիւններ ստանալէն ետքը , Էտմոն յաւելցուց :

— Այդ սենեակը կը յուսամ որ ինձ շատ յարմար պիտի գայ , ուստի հաճեցէք տիկին զան ինձ ցուցընելու :

Այս ըսելով՝ կը յուսար գեռատի օրիորդը անդամ մ'ալ տեսնել , բայց սանդուղը ամայի գտնելով՝ պարզօրէն հարցումներ ընելու զիջաւ :

— Միթէ հոս չբնակիր ծեր պարոն մը իւր աղջկանը հետ , հարցուց դռնապանուհւոյն , սենեակը քննել ձեացընելով որուն չէր նայեր իսկ :

— Պարոն Տըվոն , ըսաւ դռնապանուհին :

— Այո՛ , կարծեմ՝ այդպէս կը կոչուի , աղջիկը տաննակեց կամ տասնեակօթ տարեկան կայ , ու անունը կարծեմ թիւրիկթ է :

— Ա՛չ, պարոն, Անթոնին կը կոչուի: Քիչ մը առաջ հօրը հետ տուն եկան:

— Հիմակ կը յիշեմ, այո, այնպէս է, Տրվո կը կոչուի: Այնը մեռած է, այնպէս չէ, յաւելցոց Էտմօն ըստ զիպոց:

— Այո, պարոն, երկու սարիէ ՚ի վեր:

Էտմօն Ախսթավի աչք մ'ըրաւ որ ըսել կ'ուզէր. «Ի՞նչ կ'ըսես, ըրածս մեծ վարպետութիւն չէ»:

— Խեղճ տիկին Տրվօն . . . յարեց Էտմօն:

— Եթէ կ'ուզէք հետը տեսնուիլ, շարունակեց դռնապանուհին, երկրորդ դստիկոնը կը բնակի:

— Ա՛չ, ո՛չ, չեմ ուզեր զինքն անհանգիստ ընել, բայց շատ երջանիկ պիտի ըլլամ եթէ իր կեցած տանը մէջ բնակիմ: Ի՞նչ կ'ընէ հիմա:

— Միշտ բժիշկ է:

— Ա՛հ, իրան: . . . Ես կը կարծէի որ ալ քաշուած էր:

— Ճիշտ քառանկեան վրայ կը բնակի:

— Է՛հ, տիկին, այս սենեակը խիստ պատշաճաւոր դաս, ըստ Էտմօն, որ բոլոր բազմացածն իմանալով ել թալու կը փափաքէր, և վաղը կու գամ պատասխանը բերելու:

Գռնապանուհին բնակարանին քանի մը առաւելութիւններն ևս ցոյց տալէն յետոյ, մեր երկու բարեկամները իրմէ բաժնուեցան երկրորդ օրը գալու խօսք տալով:

— Այս բարեմիտ գռնապանուհին, ըստ Էտմօն Ախսթավին երբ գուրս ելան, իր տունը բնակելու եռանդ մը միայն կը սեանէ վրաս:

— Ա՛հ, կը տեսնեմ որ դու մեծ քաղաքացիա մ'ես, և ինչպէս ալ շուտ կը յառաջանաս:

— Ենչու շտ. բաժնեքը շլտեցիր ուրեմն:

— Ուշադրութիւն չէի ընեք:

— Թէ այս պարոն Տրվօն բժիշկ է:

— Լաւ:

— Այս առթիւ կրնամ իր տունը մտնել:

— Ի՞նչ կերպով:

1001
069



— Խորհրդակցութիւն մը խնդրելու կու գամ:

— Որո՞ւ համար:

— Ինծի համար:

— Բայց դու հիւանդ չես:

— Է՛հ, ի՞նչ կ'ըլլայ հիւանդութիւն մը կը կեղծեմ:

— Ուրեմն այդ դէպքին կարեորութիւն կու տաս:

— Ատարեւապէս. և երբ տեսնեմ թէ ըրածս ընդ ժամանակե կորուստ է, ան ատեն կը հրամարիմ:

— Ուրեմն շուտ պիտի թողուս. քանզի այդ պղտիկը որ խիստ պարկեշտ աղջիկ մը կ'երեւայ, յայտնի կը տեսնուի որ հօրը հսկողութեան ներքե է, հետեապէս սիրաբանելու ալ ոչ այնքան զիրաւ մէտ:

— Ազգային վրայ չեմ գրազիր: Սիրուն ու բարեհաճոյ աղջիկ մ'է, այս բաւ է ինձ: Ենչու շտ զան տեսնելու միջոց մը պիտի գտնեմ, քանզի կը յուսամ որ հօրը տունը երթալ գալով, վերջապէս օր մը իրեն պիտի հանդիպիմ և նա հարկաւ իմ երթեկութեանս պատճառը պիտի ըմբռնէ: Ուստի կամ կը սիրահարիմ կամ ոչ, բայց ինչ որ ալ ըլլայ միշտ զուարճալի գրազմունք մը պիտի ունենամ, և որովհետեւ հիմակու հիմա ուրիշ ընելիք չունիմ, ասոր օձիբէն լաւ մը կը բռնեմ: Իրաւունք չունիմ:

— Թող այդպէս ըլլայ:

Այսպէս խօսակցելով Էտմօն և Ախսթավ կրկին անգամ Եսեանին դառնալով աներնէն հեռացեր էին:

Օրիորդ Անթոնին իւր գիտարանէն չէր մեկնած:

Ամենուն քաջամասնօթ է երիտասարդուհեաց վիսպասանական հակումը, ուստի հարկ չկայ օրիորդին հետաքրքրութիւնը բացատրել որ պարզապէս առաւօտեան հանդիպման հետեանքն էր:

Նորատի աղջիկը կարծիքներու մէջ կը վարանէր, անդպար հարցումներ կ'ընէր խրովի, մանաւանդ ամեն բանէ աւելի կը փափաքէր իմանալ թէ երկու պատանիները ի՞նչ ըսած էին արդեօք դռնապանուհեոյն: Ուստի միտքը դրաւ հարցընելու:

Երիտասարդուհեաց ժամանակը ու երեսակցութիւնը ելքէք չկրնար

դատարկ մնալ : Այն երկու տարիները որ պարոզէն մեկնելէն անմիջապէս ետքը կ'սկսին , և ամուսնութեան կը յառաջեն , այսինքն տասն-և-վեցէն մինչև տասնևութ տարիները ըսել կ'ուզեմ , աղջկանց միտքը սիրոյ այն ծանր խնդրով զբաւուած է՝ որուն մէջ առաջին անգամ գրեթէ միշտ կը պատրուին :

Ամենէ զլատ աղջիկներն իսկ ամեն բանի մէջ մտախոհութեան և խորհրդածութեան նիւթ մը կը դանեն և իրենց դեռատի անմտութեամբը այն քարտիսեայ սիրուն դղեակներուն հիմը կը դնեն , որ մեղմ շունչով մը կը տասլալին : Արձատեւ յոյսեր , և կարճատեւ պատրանքներ , որ սիրտ չէք վիրաւորեր , այլ նորաթիթի ճողոյ մը երազներն էք միայն :

Հարցուր ամենէ առաքինի կնիկան , թէ արդեօք քանի քանի անուններ իր ամուսնութենէն առաջ , հեշտութեամբ կը հնչէին ականջին և միշտ պիտի խոստովանի որ այս տարիանքներէն առ նուազն երեք շորսր , դանէ ամբողջ օր մը յաւիտենական կարծած էր , և թէ հիմայ սրտովին կը խնդայ եթէ ընկերութեան մէջ անոնցմէ մէկուն հանդիպի :

Քանի քանի շուքեր կ'անցնին ան ջինջ հայելոյն առջևէն որ երիտասարդուհի կը կոչուի , որուն մէջ վայրկեան մը ցոլալէն յետոյ՝ առանց իրենց հետքը թողլու կ'աներևութանան :

Պղտի հօրեղբօրորդուց աւանդութենը միշտ ամբոխօխ է :

Ուստի զարմանալի չէ որ երկու բարեկամներու պնդութեանք՝ Անթօնի միտքը քիչ մը յափշտակեց :

— Վաղը իսկ , կ'ըսէր Էտմոն , պիտի երթամ Անթօնի հայրը տեսնելու :

— Երգէն կ'սկսիս պարզապէս Անթօնին կողմէ :

— Բայց շխտակը պաշտելի աղջիկ մ'է : Ենչ սքանչելի պղտի ոտերներ ունի , ինչ քաղցրութիւն , ինչ վեհութիւն : Այսպիսի բաներ կան որոնք կը հասկընամ ես :

— Որո՞նք են :

— Կը հասկընամ որ տասնևութերորդ պարտէ վիպասանութեանց պէտք , առաջին անսովորութեամբ կարելի է սիրահարել :

— Այո , կարելի է , բայց ան ատեն կարճատեւ սէր մը կ'ըլլայ :

— Ինչո՞ւ :

— Քանզի ան ատեն աչօր միայն կը սիրահարիս և սէրն ինքնին մեծ խեղամտութեան կարօտ է : Լուրջ և խոհական սէր մը՝ բազմատուութեամբ և մանրամասն սլաքայաներէ կը ծագի ու կը զարգանայ , և չէ թէ առաջին նայուածքով մը :

— Բայց աս ալ ստոյգ է , որ եթէ մինչև այս իրիկուն կարենայի օրիորդ Տըվօն ամուսնութեան խնդրել և ընդունել կը կարգուէի հետը :

— Երգարև սքանչելի ամուսնութիւն մը պիտի ըլլար այդ :

— Ի՞նչ ընեմ , ես այսպէս եմ :

— Երկու օրէն օրիորդ Տըվօն վրայ ալ չպիտի մտածես :

— Արձեմ որ կը սխալիս :

— Քանի քանի անգամ այդպէս խօսիլդ լսած եմ :

— Իրաւունք ունիս , բայց ան ատեն խնդիրը սիրահարու կանանց վրայ էր , իսկ այսօր նորատի աղջկան մը համար է խօսքս որ սիրոյ ինչ ըլլալն անգամ չդիտեր :

— Աստի՛ դիտես :

— Հաւանական է :

— Անանց համար հաւանական բան չկոյ :

— Վերջապէս ամեն ինչ պիտի իմանամ : Իրաւ է որ օրիորդ Տըվօն տարեկից և գուցէ իրմէ աւելի սիրուն շատ աղջիկներ տեսած եմ բայց անոնցմէ և ոչ մէկուն վրայ այս տեսակ զոգացում մը չկրեւտ համար՝ կը հետեցընեմ որ այս տպաւորութիւնը երկայնատեւ պիտի ըլլայ , որուն դու չես ուզեր հաւատալ :

— Ես 'նիշէթը աւելի կը սիրեմ :

— Նիշէթ սքանչելի աղջիկ մ'է , բայց չեմ կարծեր որ զան Անթօնի հետ բաղդատելու զխառնորութիւն ունենաս :

— Նիշէթ՝ քու տարօքդ եզոզ երիտասարդի մը ամենայարմար կինն է , այսինքն ուրախ , ղուարթ , հանձարեղ , ու բարեբարոյ աղջիկ մ'է : Եթէ երբէք օրիորդ Անթօնի սիրահարիս , քանզի ան կարելի է որ արդէն սիրահարած ըլլաս , երբ բան պիտի պատահի յի կամ սիրուհիդ պիտի ըլլայ , կամ կինդ , կամ ոչ կինդ և ոչ սե՞

բուհիդ : Հեանաբար դու եթէ ոչ զժբարդու թիւն , բայց միշտ ձանձ-
րոյթ պիտի ունենաս :

Եթէ սիրուհիդ ըլլայ որ հաւանական չէ , ոչ միայն իր առարի-
նութեան շնորհիւ , այլ աւելի զինքն շրջապատող հսկողութեան պատ-
ճառաւ՝ զան խիստ քիչ անգամ տեսնելովք պիտի վշտանաս , բազ-
մաթիւ դժուարութիւններ զիմադրատելու պիտի ենթարկուիս , պար-
կեշտ աղջիկ մը մուրթելուդ համար ինքզինքդ պիտի կշտամբես և
այն օրը երբ ամեն բանէ տաղակացած անջատուիլ պիտի ուզես
իրմէ , անհամեստ մարդ մը պիտի համարուիս :

Իսկ եթէ կինդ ըլլայ , անշուշտ օր մը պիտի իմանաս թէ ըրածդ
խենդութիւն էր . քանզի միթէ խենդութիւն չէ՞ կնկան մը կամ աղ-
ջկան մը հետ ամուսնանալը՝ շրջագոյնս զի վերջուցած ժամանակ
անոր գեղեցիկ սրունքները տեսած ըլլալուդ համար : Եթէ վերջու-
պէս չյաջողիս , այդ զյայտն բնաւորութեամբդ Վէրթէրի ցուրտ
նկարներէն մին պիտի ըլլաս , որ որչափ ալ հրաշալի նախատիպ
մ'ըլլայ վիպասանութեան մէջ՝ իրական կենաց մէջ այնքան տաղ-
տապելի է : Ուստի բացորոշ կ'ըսեմ քեզ , այդ կատակարանութիւնը
մէկդի թող ու ալ չխօսինք ատոր վրայ : Օրիորդ մը տեսար , որ
պզտիկ ոտուրներ ու բարեձև սրունք մի ունի , անոր հետեցար ,
ձեռնոցը գետնէն վերցուցիր , անունը ու հասցէն սորվեցար , ատկէ
աւելի ինչ կ'ուզես . և ինչ ծիծաղելի դաղափար է այդ տղայամտու-
թեան լրջօրէն յառիլ ուղելդ :

— Միրելի Աիւթալս , ես այն անձերէն եմ , որոնք կը հաւատան
թէ ամեն ինչ քիչով կ'ըլլայ : Նստաւարտ համարութիւնը կ'ընդունիմ
և համոզուած եմ , որ մեր կենաց ամենամեծ դիպուածները պզտիկ-
ներէն ծագում առած են միշտ : Մեր բաղդին մէջ անօգուտ բան
մը չկայ : Քանի քանի անձեր , եթէ իրենց անցելոյն վրայ յետադարձ
հայեացք մը ձգեն , այս առատօտեան դիպուածին նման՝ երևու-
թապէս աննշան պատահարներ պիտի տեսնեն , որոնք յետոյ իրենց
գոյութեան մէջ մեծ դեր մը խաղացած են : Իբրևստարդ եմ , հա-
րուստ , դործ մը չունիմ . զիսեմոր իմ մղումն աւելի զգայական է
քան թէ մտաւորական . բայց նաև պարկեշտ մարդ մ'եմ , ուստի

չեմ երկնչիր օրինաորութեան և արգարութեան սահմանէն քանի
մը քայլ առաջ անցնելու , և անխախտ սրողում՝ ըրած եմ կեանքս
սլառահարներու յորձանքին մէջ նետել , և անոնք թող զիս կամ
ի խաղաղութիւն կամ ՚ի մըրիկ տանին :

Չեմ ըսեր թէ օրիորդ Անթունին կը սիրեմ . բայց կ'ըսեմ որ հիմակու
հիմա ամեն բանէ աւելի անոր վրայ զբաշխը խիստ զմայելի կը թուի
ինձ , ուստի կ'ըզբաղիմ . թող այս զբաղման հետեանքն կամ սէր
ըլլայ կամ անտարբերութիւն , կամ հաճոյք և կամ վիշտ , հոգս
չէ :

— Ուրեմն ալ ատոր խօսքը չընենք . մանաւանդ թէ ատկէ
մեծ գժբաղդութիւն մ'ալ չծագիր : Ամառուան մէջ ենք . ուստի
քու սիթեւոյդ պատահաններուն ներքև կրնաս թափառիլ առանց
հարբից կենթարկուելու . երազէ , բարեկամս , և եթէ քու դիմա-
դրաւութիւնդ կշիւ առնու և թէ կարենամ քեզ օղտակար ըլլալ ,
յիշէ՛ զիս :

Երկու բարեկամները իրարու ձեռք թոթվեցին , և մինչև Էտմոնի
մօր տունը համեմունին , որ թրու-Ֆրէր փողոցը կը բնակէր , ալ
օրիորդ Տըվօի խօսքը չեղաւ :

Տիկին սը Բէրէօի լսան դուրը հասնելով , Աիւթալ Էտմոնին
բաժնուեցաւ :

— Չես գար մայրս տեսնելու , ըսաւ այս վերջինը :

— Չէ՛ , ժամանակ չունիմ :

— Ո՛ր պիտի երթաս :

— Նիշէթի տունը պիտի երթամ , զորնոր երկու օրէ ՚ի վեր
չեմ տեսած :

— Ե՛րբ քեզ պիտի տեսնենք :

— Այս իրիկուն , անպատճառ :

— Ուրեմն , այս իրիկուն :

Իրարու ձեռք սեղմելով բաժնուեցան :

Գ.

Էտմօն մեծ կամարակապ դաւիթ մը մտաւ և աջակողմեան տան-
դօղէ մը երկու ոտք ելնելով, կրկնակի դուռ մը զարկաւ և դուռը
բացող ծառային հարցոյց թէ :

— Մայրս տո՛ւնն է :

— Այո՛, պարոն, պատասխանեց ծառան :

Էտմօն ընդարձակ ու շքեղազարդ յարկէ մը անցնելով, դահլիճ
մը մտաւ . ուրտեղ՝ բայց պատուհանին առջև՝ երկայն հանդստարանի
մը վրայ կին մը նստեր ու գլուխը ծուած ասղանկար կը դործէր :

Այս կինը թէև երեսուննէնը տարեկան էր, տակաւին խիստ դե-
ղանի ըլլալուն, հազիւ երեսուննեւերկու կ'երևէր : Էտմօնի կը նմա-
նէր, բայց աւելի իր քոյրը քան թէ մայրը կրնար ըսուիլ : Բե-
հեղեղայ վայելչազարդ շրջազոյստ մը հաղած էր և գլուխը՝ ժպտա-
ւէններով յարդարեալ այն պզտի դղակներէն մին դրած՝ որ չգիտ-
ցուիր թէ կանայք ինչ հնարքով զանոնք գլխընուն վրայ կը դե-
տեղեն :

Էտմօնի ներս մտած ժամանակ, տիկին տը Բէրէօի աչքերը կա-
թողին անոր վրայ սեւօեցան, և ուրախութեան ժպտով մը իւր
դէմքը փայլեցաւ :

Այս ժպտը ոչ միայն գորովալիւր էր այլ նաև սիրալիւր :

Սրդ ջանանք լաւ մը բացատրել թէ ինչէին մայր և որդի իրարու
համար :

Տիկին տը Բէրէօ տասնևվեց տարեկան խիստ նորատի կարգուելով,
տասնևեօթ տարուան այս Էտմօն զաւակը ունեցեր՝ ու քսան տարե-
կանին Պ. տը Բէրէօէն այրի մնացեր էր : Տիկին տը Բէրէօ իւր է-
րիկը նախ պարտաւորութեամբ սիրած էր, յետոյ սովորութեամբ
ու վերջը համակրութեամբ : Սնկեղծօրէն արտասուեց անոր մահ-
ուան վրայ, և ուրիշ երիտասարդ այրիներու հակառակ՝ ոչ երկ-
բորդ բամուսնութեան տենչաց և ոչ ալ իւր այրիութեան ազատու

թնէն օդուտ քաղել ուզեց : Թէև զեղանի էր ու խիստ գեղանի,
և հետամուտներ չէին սրակներ իրեն, բայց մի առ մի կը մարժուէին :

Սակայն տիկին տը Բէրէօի տարիքին մէջ, այն սիրոյ տենչը որ
Աստուած ամեն նորաբողբոջ ու ազնուախոհ սրտերու մէջ դրած
է, պէտք էր որ եթէ ոչ մէկու մը գոնէ բանի մը հակի, հետևա-
պէս Էտմօն իր մօրը սիրտը լիապէս զրաւած էր :

Էտմօն երեք տարեկան դիւրաբեկ ու զաղփաղփուն մանուկ մի
մայրական խնամոց մեծ կարօտութիւն ունէր, ուստի տիկին տը Բէրէօ
յօժարակամ ու անտրտունջ բողբոջին իր անձը զաւկին նուիրեց : Այս
յարասեւ գործոյ տասով սնաւ ու մեծցաւ հայրազուրկ տղան, և այն
կրկնակի խանդաղատանքը զոր բնութիւնը սղոց հողւոյն մէջ հաս-
տատած է իրենց ծնողաց համար՝ մի միայն մօրը ընծայեց :

Տիկին տը Բէրէօ աշխարհէ քաշուեցաւ, կամ դէթ աշխարհա-
յին զուարճութիւններէն ու աղմուկներէն :

Իւր բոլոր ընկերութիւնը երկանը սիրելի եղող անձանց պզտի
խումբէ մը կը բաղկանար, որոնց ստէպ Էտմօնի կրթութեան վրայ
խոհօրդ կը հարցնէր :

Ահա այսպէս մեծցաւ Էտմօն ու երբ տասնևհինգ տարեկան եղաւ,
ինչպէս որ այս պատմութեան առջի գլխին մէջ տեսանք տիկին տը
Բէրէօ իւր խորհրդակիցներուն մաղթանացը զիջանելով, որդին
դպրոց դրաւ, որպէս զի մարդկային կատարեալ ընկերութեան մէջ
կենցաղական լրջադոյն նշմարանք մ'առնու : Անսկարադրելի են ծաղ-
կահասակ մօր խնամները որ մինչև դպրոց իսկ զաւկին կը հետևէին :
Օր չէր անցներ որ տղան տեսնելու չերթար : Եւ երբ Էտմօն մօրը
պատմեց թէ Վիւսթամ իր վրայ մեծ հոգատարութիւն ունէր, ջերմ
համակրութեամբ ու երախտագիտութեամբ զգածուեցաւ գորովապու-
թիւնը զաւկին այս նոր ընկերակիցին համար :

Սրդ՝ այս նախնական ու կնային գաստիարակութենէն պատանւոյն
հողւոյն մէջ, համակրութեան, վստահութեան ու ծաւալման սաս-
տիկ տենչ մը ծագեր էր, զորն որ բովանդակապէս իր մօրը նուի-
րեց : Ասիկէ զատ Էտմօն իր անսակ մը ընդոճին զգայնութեամբ
բնական մեծամաղձութեամբ, ընդարթոյ բանաստեղծութեամբ՝ դիւրազ-

զաց ու սիրուն անձ մ'էր, ըսել կուզեմ՝ իր էրիկ մարդու ծածկոյթին ներքե՛ կնկան ողի կը բարախէր։

Ինչպէս իր մօրմէն կը սիրուէր, նոյնպէս ինքն ալ զան կը սիրէր, այսինքն զինքն աշխարհ բերող կնիկէ մը տարրեր էակ մը կը նկատէր։

Ոչ միայն երբէք չմոռցաւ անոր իր վրայ տարածած փոյթեռանդն ինամաները, այլ նաև երբ բաւական խելահաս եղաւ, ճանչցաւ այն մեծ զոհողութիւնը որ մայրը ամուսնոյն մեռած ատեն՝ տակաւին նորատի ու գեղեցիկ՝ իր կեանքը զաւկի մը դաստիարակութեանը բոլորանուէր տուած էր։

Ուստի Էտմօն երբ այն տարիքը հասաւ, ուր մարդ իր ծնողքներէն զատ ուրիշ արարածներ սիրելու անորոշ քաղց մը կ'ըզգայ սրտին մէջ, ինքն ալ ուրիշներու պէս զզաց այս օրհասկը և իւր սիրտը կարծես թէ տարբեր ազդմամբ մը, այսպէս ըսելու համար, դէպ ՚ի իւր մայրը նոր թուիչ մ'առաւ։

Եւ յիրաւի ալ այս դեռահասակ մայրը, որուն սրտազբաւ չըքնադուրթիւնը տակաւին անվթար էր, Էտմօնէ զատ բնաւ մէկը չէր սիրեր, որուն նաև առաջին զգացմանց մտերիմն եղաւ։

Պարզապէս առանց ամենալու Էտմօն իր զգացմանց վրայ մօրը հարցումներ կ'ընէր և նա կը բացատրէր։

Այս խորհրդակցութիւններէն մօր ու որդւոյ մտերմութիւնը առաւել հաստատուեցաւ, և Էտմօն սկսաւ տիկին աը Բէրէօն քիչ մը օտարոտուհւոյ մը պէս սիրել. այսինքն իբր այն առաջին կինը որ իր սիրտը բարախել տուած ըլլար։ Իսկ մայրը իր կողմէն կը սիրար որդւոյն գեղեցկութեանը ու աչնիւ բարեմասնութեանցը վրայ, զորոնք լիապէս իրեն կը պարտաւորէր, և այն երկնային սիրոյ սերմի որ կնկան հօգւոյն յատակը միշտ կը մնայ, մայրական գորովոյ հետ խառնուելով իւր շնորհք ու հրապոյրը կ'աւելցնէին։

Եյսպէս օր կար որ մայր ու որդի երկու սիրահարներու կը նմանէին, այնքան իրենց խօսակցութիւնը քաղցր, վստահամիտ, գողտր ու սիրալիւր էր։

Հատ անդամ Էտմօն տիկին աը Բէրէօն ոտից ներքև պատկած, անոր վրայ հիանալէն չէր կշտանար, գլուխը անոր ծնկաց վրայ դրած, ամբողջ ժամեր իր երիտասարդութեան վրայ կը խօսէր և իբր սիրուհւոյ մը իւր յարգանքը անոր մատուցանելով, ձեռքերը

կը բռնէր ու կը համբուրէր։ Էտմօն պահանջեց նաև որ մայրը ընկերութեանց մէջ մտնէ, զան ցուցընելով կը խրոխտար։ Էտմօնի տիկին աը Բէրէօն վրայ ունեցած զգացումը սէրէ ալ աւելի էր, Կրէթէ ջերմեռանդութիւն էր։

Ուստի, ինչպէս որ ընթերցողը նշմարած է, երբ կրկնվաւ ուղեր զայն բանէ մը արդիւնէլ, այս մտդական խօսքերը միայն բաւ էին։ Ատիկայ մայրը կը վշտացընէ։

Երկար ժամանակ Էտմօնի այն սիրոյ տենչը՝ տարապայման զգացականութեամբ և եթ կը յայտնուէր, և ան ատեն իր մայրը միայն կը կը բաւէր, բայց հասաւ այն վայրկեանը, ուր հասկըցաւ թէ զգացման բովանդակութիւնը որնոր մինչև ցարդ անձանօթ էր իրեն, ուրիշ կանանց քով փնտուելու էր։

Տիկին աը Բէրէօն, որոյին սովորականէն աւելի մտախոհ տեսնելով, շուտ մը անոր մտքէն անցածը հասկըցաւ։ Էտմօն իր նորածին խորհուրդներէն կ'ամչնար, որոնց մէջ ընկիւմած ժամանակ կը կարծէր թէ մօրմէն բան մը կը դողար։ Ահա այն ատեն նորատի մայրը, որու պաշտպանութիւնը սահման մ'ունէր, Էտմօն կրկնվաւ ինամոցը յանձնելով։

— Հսկէ որդւոյն վրայ, ըսաւ անոր, իւր առաջին հաղորդակցութեանցը մէջ, գիտեմ որչափ կը սիրեն զինքը և նա ինչպէս հլու է քեզ։ Յիշէ որ անողջութիւնը խիտ ախար է, որ սիրտը խիտ դիւրազամ։ Ա երջապէս յիշէ միշտ թէ ես որչափ կը սիրեմ զինքը։ Աւրիշ բան չունիմ բոնիք։

Կրկնվաւ սրտովին խօսք տուաւ իրմէ խնդրուածը կատարելու, և իւր բարեկամական հսկողութիւնը սկսաւ։

Այս ալ ըսենք որ կրկնվաւ այն աշխոյժ ու վառ բնաւորութիւնը վից ամիսի չափ սածտիկ սիրահարած էր տիկին աը Բէրէօն, թէև առանց բնաւ իւր սիրոյն վրայ խօսք մը բանալու անոր։ Այս սէրը որ պարօցին մէջ ծնունդ առած էր, և հիմա գրեթէ բոլորովին անհետացած՝ բայց իր սրտին յատակը՝ այս կնկան համար միշտ անձնուիրութիւնը մը, խորին կրօն մը կը կրէր, որնոր առաջինը եղած էր իւր զգացումները գրգռելու։

Այս նախընթաց սերէն այն միայն մնացած էր, ինչ որ կը մնայ ինքնասուգառ անուշահոտութենէ մը, այսինքն երբ կ'սկսի իւր երևութական գոյութիւնը կորսնցընել, աչքն ու ձեռքը այնուհետև չեն կրնար գտնել զան, բայց միշտ զգալի կը մնայ և թերևս աւելի քաղցրահամը :

Դ.

Ուստի երկկողման խանդակաթ համակրութիւն մ'էր այս : Հիւսիս մայրը քաշուելով, կնկան կը շնորհէր իր տեղը, ինչպէս որ տասն և հինգ տարի առաջ կ'էինը՝ նոյնը մօր շնորհած էր : Տիկին տը Բէրէօի խնամակալութիւնը ոչ կասկածելի էր և ոչ պախարակելի : Իսկ որդւոյն հնազանդութիւնը անտաղտուկ և անփհհեր էր : Երբ Էտմօն չափահաս եղաւ, մայրը ուղեց հօրը հարստութեանց հաշիւը տալ անոր, բայց նա քաղցրութեամբ մը շեխելով ըսաւ .

— Ահա այս առաջին անգամն է որ կը կասկածիս իմ վրայ :

Չմեռը միատեղ պարահանդէս կ'երթային : Էտմօն մօրը պարելը տեսնելով կը զուարճանար, մայրն ալ իր կողմէն բերկրութեամբ մտիկ կ'ընէր որդւոյն վրայ եղած դովեստները : Վաճառը դիւզը կ'երթային, իրիկունները երկու սիրահարներու պէս կը պարտէին, ձի կը հեծնէին և հիւր կ'ընդունէին :

Վերջապէս աիկին տը Բէրէօ՝ որ բնաւ աշխարհային կեանք չէր վարած, Էտմօնի տարիքին ողին կը կրէր :

Երբեմն Էտմօն յանկարծ կուլար, մտածելով թէ մայրը օր մը պիտի պառանար ու մեռնէր . . . և ինքնին կը հարցընէր թէ ան ատեն ինչ պիտի ընէր :

Իրերը այսպէս էին, ու միշտ եղած էին : Սրբ Էտմօն Յնթօնին հանդիպելէն ետքը տուն մտաւ :

Մեր գիւցաղնոյն քանի մը խօսքերէն զիւրաւ կը հասկցուի որ

իւր իրական դաստիարակութեանը հակառակ՝ կենցաղական տեսակ մը իրաց բոլորովին անտեղեկ չէր, մօրը հաճութեամբն մի քանի մտերմութիւններ հաստատած էր : Նշանակելու արժանի է այն դիւրաջօժարութիւնը՝ որով ամեն առաքինի մարք անգամ ոչ միայն կ'ընդունին, այլ և կը քաջալերեն իսկ իրենց զաւակաց սիրակցութիւնները : Քանի քանի մայրեր իրենց չափահաս որդիքը երիտասարդաց սովորական անառակութիւններէն զզուցացընելու համար ըսած են անոնց, «Այս ինչ կամ այն ինչ տիկնոջ հետ սիրարանէ, ատիկայ կարողուած կ'ին մ'է ու քեզ մնաս մը չգար», Աշխարհ լի է այս դիմագարձութիւններով : Էտմօն ալ այս կանխատես փուլին տակէն անցած էր : Իսկ Յիւսթավ կը սիրէր կ'ինը, ինչպէս մեր հայրերը տասնութերորդ դարու մէջ կը սիրէին՝ քիչ մը Տէգօթիէի եղանակաւ, այսինքն ուրախ, գեղեցիկ, մտացի կ'ինը զուարճութեանց ժամանակ : Այս ուզածը կրնար գտնել անուանարկ կանանց քով միայն : Յիւսթավ ՚ի սկզբան այս կանայք իբր անշահ արարածներ նկատելով՝ կարևութիւն չէր տար : Բայց յետոյ տեսնելով որ ասոնց մէջն ալ սիրտ հրապոյր ու զմայլանք կը գտնուի, հասկըցաւ որ ասոնցմէ մի քանիները տեսակ մը պատուաւոր կանանցմէ աւելի ընածին յատկութիւններ ունէին, և թէ սիրտն էր աւելի իրենց խորհրդատուն քան թէ շահասիրութիւնը : Իրենց ճշմարիտ անձնութեանցը ականատես ըլլալով՝ այնուհետև անոնց համար յարգ ու համակրութիւն տալ ծեց : Մանաւանդ Նիշէթ հետեւեալ դէպքով՝ որ հիմայ պիտի պատմենք՝ իր մտքին վրայ մեծ ազդեցութիւն ըրած էր, և Յիւսթավ ասոր հետ բարեկամացած ժամանակ՝ ատիկայ այն բազմիցս չարախօսուած դասին կը վերաբերէր :

Էտմօն այս պատմութիւնը մօրը պատմեր էր, որմէ բան չէր պահէր, և խանդակաթ կ'ինը արտասուալից աչք մտիկ ըրած՝ ու յետոյ փափաքած էր սոյն դիւցաղնուհին ճանչնալու, Նիշէթ նորաձեւութեան վաճառուհի մ'ըլլալով՝ աիկին տը Բէրէօի տունը բերելու մեծ գիւրութիւն կար : Այս աիկինը առաջին տեսութեամբ սէր կապեց Նիշէթի վրայ, այսու ամենայնիւ անոր Յիւսթավի հետ ունեցած յարաբերութեանցը վրայ գիտակցութիւն ունենալը չյայտնեց :

երբեմն ժամբում անոր հետ խօսքի կը նստէր, և բարեկամաբար խրատներ կու տար, որ նորատի աղջիկը հնազանդութեամբ մտիկ կ'ընէր, քանզի Կիւսթավ ըսած էր իրեն որ աիկին տը Բէրէօ որբու հի մ'էր և սա Կիւսթավի ամեն խօսքերուն հաւաքը կ'ընծայէր:

Հիմա կրնանք մեր ընթերցողներուն հասկըցընել թէ ինչ զարմանալի եղանակաւ Տօմնն Նիշէթի հետ ծանօթացած՝ և այնպէս անկեղծութեամբ անոր յառած էր:

Օր մը, ասիկէ տասնևութ ամիս առաջ, առաօտեան գրեթէ ժամը ութին, Կիւսթավ որ ինչպէս տեսանք կանխայարոյց էր, Մատըլէնի ծաղկանց վաճառանոցը կը պարտէր: Քանի մը անձինք գարնանային պիտոյքներ կը գնէին: Աին մը բամբակեայ գեղեցիկ շրջագցեստ մը հազած, դլուխը յարդեայ փեղոյը մը և մերինոսէ ցփսի մ'առած՝ որտոր իւր աղբերուն ելևէջէն քիչ մը կը փոթէր, ամեն խանութներու գիմաց կանկ կ'առնուր և ամեն սնդամուն իր ուղածը չգտնալ կ'երևէր, քանզի կարճ զննութենէ մը ետքը կ'սկսէր քայել, վաճառողներու հրախրանաց ակննջ չկատելով՝ որոնք կը կանչէին: Տես, սիրուն զաւակ, ընտրէ ուղածդ առ, ինչ կ'ուզես:

Կիւսթավ հեռուանց տեսնելով այս վէս գնողը, անոր մօտեցաւ ու տեսաւ որ գեղանի էր: Աչուրները մեծ մեծ ու կանաչաթուխ էին, այսինքն այն քաղցր դունով սողորեալ՝ որ չեմ գիտեր որ բանաստեղծին նոյնհասնդութիւն ընելու նպաստեց, երբ Նըվերի չքնազողէմ դ քսուհնոյն յանպատրաստից դովեստ մը ընել ուղեց: Կաթի պէտ սպիտակ մորթ մ'ունէր, սղտիկ քիթ, կեռասի պէս վարդադոյն բերան մը, այտերուն վրայ երկու սիրուն փոսիկներ, և ձախ այտին վրայ նշան մը: Բայց այս խոշոր աչուրներուն և սև ընթախներուն հետ ամենէ նշանաւորն էին իւր ցորենի պէս խարտեաշմաղեղը, որ կարծես թէ արևի ճառագայթ մը անգագար կ'ոսկեզօծէր, և որոնք գլխուն բոյրտիքը թեթևածուփ խոպոպելով, Ուաթթօյի նորանշան ու սիրուն ձև մը կու տային իրեն, իր կերպարանին շարժմանցը վրայ կատուի սրամտութիւնը կը տեսնուէր: Կիւսթավ ակամայ կայնեցաւ այս հրաշագեղ գէմքը նկատելու: Կարծես թէ իր կտաւէն քակուած նկար մ'էր՝ Փիկմախոնի մը հա-

մար կենդանացած: Այս կինը որ հազիւ տասնևութ կամ տասնևինը տարեկան կար, փոքրահասակ, ծիծաղերես, զուարթ ու պշտալի էր:

Այսպէս վարանելով երբ վաճառանոցին վերջին ծայրը կը մօտենար, կարծես ինքնին որոշում մը ընելով, ծաղկավաճառուհոյ մը դիմաց կայնեցաւ, որ ուրիշներուն հաւասար վաճառքներ պարզած էր:

Կիւսթավ ալ իբր թէ կ'ուզէր թան մը ծախու առնել անոր քով կեցաւ:

— Քանի է այս վարդենին, հարցուց երիտասարդուհին ներգաշնակ հնչումով մը, իւր փոքրիկ ձեռնոցեալ ձեռքը գէպ ՚ի ծաղկանց անօթներուն երկնցընելով, որոնք կարգաւ շարուած էին:

— Քառասուն սու, պատասխանեց ծաղկավաճառուհին:

— Ո՛հ, ինչ սուղ է, գուցէց աղջիկը:

— Սիրուն աղջիկս, ունեցածներուս ամենէ գեղեցիկն է այս: Տես մէյ մը սա վարդերը, հապա այս նորափթիթ կովոնները որք երկու օրէն պիտի բացուին: Այս վարդենիով բոլոր ամառը վարդ պիտի ունենաս, հաւտած ինձ:

— Ի՞նչ կ'ըսես, այդ թաղարին տակ կ'իւր կայ և տասնևհինգ օրէն պիտի թուով:

— Կ'ուզես որ պարպեմ: Ես վարդենիներուս մէջ կ'իւր գնեմ: Ի՞նչեր կը մտածես, պղտի մարիկս: Ահա ուրիշներ ալ, բայց ասոր չափ պատասխանատու չեմ ըլլար:

— Չէ, ես ասիկայ կ'ուզեմ, բայց քառասուն սու չեմ տար: Կիւսթավ այս խօսակցութիւնը մտիկ կ'ընէր:

— Նայինք որչափ կու տաս:

— Քսան սու:

— Երեսուն տուր և առ:

— Չէ:

— Ճշմարիտ կ'ըսեմ որ երսուն սուէն պակաս կը փաստուիմ:

— Ուրեմն չեմ առնուր: Ի՞նչ կ'ըսես:

— Ասիկէ պակաս անկարելի է:

Երիտասարդուհին քայլ մ'առաւ հեռանալու:

— Օրիորդ , ըստ ան ատեն Վիսթավ զլխարկը հանելով , հրա-
ճան կու տաք ինձ այս վարդենին ձեզ ընծայելու որուն այնքան կը
փափարիք :

— Բայց , պարոն , պատասխանեց Նիշէթ շառագնելով , չեմ կրնար
ընդունիլ , քանզի զձեզ չեմ ճանչնար :

— Լաւ ուրեմն , օրիորդ , կը ծանօթանանք :

— Մտիկայ միթէ պայման մ'է :

— Ամենին , միայն վարդենին ձեզ ընծայելու հրաման կը խընդ-
րեմ , նաև ուրիշ ծաղիկներ ալ եթէ կը հաճիք :

Մինչ Նիշէթ քաղցրօթ պիտ դէմքով մը Վիսթավի կը նայէր ,
ծաղկավաճառուհին նշան ըրաւ որ ընդունի :

— Իւրաքանչիւր որ կէսը վճարէ , ըստ Նիշէթ :

— Չէ , պատասխանեց Վիսթավ , այս վարդենին կ'ուզեմ ձեզ
նուիրել , որ ինծի համար փնաս մը չէ : Իւ գիտցիք որ քառսուն
սունոց վարդենիի մը փոխարէն ընդունելու բնաւ դիտաւորութիւն
չունիմ :

— Լաւ կ'ընդունիմ ըստ Նիշէթ : Վարդենին սո՛ր մարիկ :

— Շատ աղէկ , ըստ ծաղկավաճառուհին և թաղաբը Նիշէթի
երկնցոց , որնոր բազկայը մէջ առաւ :

— Չգեցէք ձեր տունը տանել տամ ասիկայ , ըստ Վիսթավ :

— Հարկ չկայ :

— Ուրեմն տուէք ես տանիմ :

— Չէ , կ'ուզեմ ես տանիլ :

— Տուներնիդ հեռու է :

— Կոտո փողոցը :

— Հրաման կու տաք որձեզ ընկերանամ :

— Քանի որ ձեր ծաղիկը ընդունեցայ , հարկաւ ձեր ընկերու-
թիւնն ալ կրնամ ընդունիլ :

Երկու երիտասարդները խօսակցելով Կոտո փողոցը ուղևորեցան :
Նոր բարեկամութիւն հաստատող երկու անձանց խօսակցութիւն , էրիկ
մարդուն կողմանէ հեարբրրութիւն , խի կնոջ կողմանէ զգուշա-
ւորութիւն :

Տանը գուռը երբ հասան Նիշէթ Վիսթավի ձեռքը բռնելով ը-
ստաւ ,

— Շնորհակալ եմ , պարոն :

Եւ ներս մտնելու պատրաստուեցաւ :

— Հրաման կու տաք , օրիորդ , ըստ Վիսթավ որ երբեմն դամ
ձեր սրպիսութիւնը իմանամ :

— Այո , պարոն երբ որ կ'ուզէք , բոլոր օրը տունս կ'աշխատիմ ,

— Ուրեմն , ժամը երկուքէն մինչև չորս եթէ դամ :

— Չիս պիտի դտնէք միշտ :

— Ինչ անուն պիտի հարցընեմ :

— Նիշէթ : Այս թէև իմ բուն անունս չէ , բայց այսպէս կը կո-
չեն զիս , և այս կատուի անուամբ աւելի ծանօթ եմ քան իմ ճշմա-
րիտ անուամբ :

Վիսթավ Նիշէթի ձեռքը համբուրեց , որն որ վաղց դճնապա-
նէն բանալին ուղեւու և ուրախ , զուարթ իւր հինգ աստիճաններէն
ցածկուտելով վեր ելաւ :

Վիսթավ երկրորդ օրը իսկ եկաւ Նիշէթը տեսնելու , որ զլխարկ
մը յօրինելու կ'ըզբաղէր բաց պատուհանին դիմաց նստած , որուն
վրայ վեհապէս կը փթթէր ատջի օրուան վարդենին :

Նիշէթ Էօթէն Սիւի Ռիկօլէթին շափ պահանջում չունէր առա-
քինութեան վրայ , այլ աւելի մարդասէր էր : Տարփանքներ ունե-
ցած էր , թէև ոչ այնքան շատ , բայց վերջապէս ունեցած էր :

Վիսթավէն բան մը չպահեց , որն որ այս խոստովանութիւնը ըն-
շով , ըստ ինքնիրեն , « Որովհետև ուրիշները յաջողոր են , ինչ
իրաւամբ ես պիտի ձախողիմ : »

Նիշէթ գեղալէմ՝ աղջիկ մ'էր , բաց չէր գիտեր թէ ինչ կ'ուզէ :
Սյն ժամանակին՝ կարծես թէ կնիսն մը ձկն տակ թուչունի մը
միտքն էր : Թատրոն , զիւղ և Վանքանք Կը Պարբէնեք ըստած եր-
զը կը սիրէր : Բան մը կար միայն որ չէր սիրեր կ'ըսէր , այն էր
երկարատեւ լուրջ սիրաբանութիւնները : Սէրը թէև քաղցրահաճոյ
իւր մը կը խոստովանէր , բայց զան շրջագեղեստներու հետ բազդա-
տելով , կ'ըսէր թէ ստէս փոխել պէտք էր :

— Շատ աղէկ, ըստ Արևսթավ անոր, զքեզ ուզածիդ պէս պիտի սիրեմ, այսինքն այն օրը երբ զգուիս ինձմէ պիտի քաշուիմ:

— Եկուր սակարկութիւն մ'ընենք, պատասխանեց Նիշէթ իւր քաղցր ձայնով և զինքը նշանաւոր ընող այն պզտի ձևերով՝ որչափ ժամանակ որ այս վարդենին դիմանայ սիրենք զիրար, թէպէտե կիր կայ մէջը, բայց խօսք կու տամ որ ամեն անտու զան ուռողեմ:

Եյս դաշինքը թէև տարօրինակ թուեցաւ Արևսթավին, սակայն վաւերացուց:

Ուստի Նիշէթ իւր սիրուհին ըլլալէն ՚ի վեր վեց ամիս անցեր էր և տակաւին վարդենին չէր թողնած: Եւ Նիշէթ վերոյիշեալ համաբանութեան պայմանաժամին հաճութեամբ կ'ըստասէր:

Եյս ալ ըսենք որ Արևսթավ օրէ օր այնպէս կը սուքնար իւր սիրուհւոյն որ խիտ պիտի վշտանար եթէ վարդենին թառամն լով Նիշէթին հետ ըրած սակարկութիւնը ըստ պայմանի վերջացընելու հարկադրուէր:

Եյսու ամենայնիւ, այս կիրով այրած տունին երկայնակէյրութեանը վրայ զարմանքն կը տանէր, ուստի օր մը Նիշէթի տունը երթալու համար երբ Մատրէէնի վաճառանոցէն կ'անցնէր, ծաղկի փունջ մը գնելու համար՝ վարդենեաց այն թաղուհին ծախող կնիւն զինոց կայնելով ըսաւ.

— Կը յիշէք օր մը ասկէց վեց ամիս առաջ այն վարդենին որ փոքրահասակ աղջկան մը հետ կը սարկակէիք և որուն ես նուիրեցի զան:

— Եյո պարոն, սյանասօխանեց կինը Արևսթավը ճանչնալով:

— Գիտէք որ դեռ կը դիմանայ:

— Ուրեմն ինչո՞ւ այն պզտի կինը այն ատենէն ՚ի վեր չորս հաս յար և նմանը ծախու առաւ ինձմէ, ըսելով թէ առջինը թողնած էր:

Արևսթավ իսկոյն ամեն բան հասկըցաւ: Նիշէթ զինքը ապահովեցընելու համար որ վարդենին չէր թողներ, ամեն անգամուն որ կ'սկսէր տերևաթափ ըլլալ, ուրիշ մը տեղը կը գնէր: Ուստի չորս անգամ այս ճարտիկութիւնը բանեցուցած էր և Արևսթավ չէր զխամ:

Նիշէթ այնքան կը սիրէր իր սիրահարը որ կը դողար անորմէ բաժնուելու խորհրդէն:

Արևսթավ Նիշէթի սիրոյ այս ապացոյցը լսելուն պէս անմիջապէս անոր տունը վազելով վիզը պլլուեցաւ: Նիշէթ ճամարտութիւնը խոստովանեցաւ, և այն օրէն ՚ի վեր հազիւ իրարմէ կը բաժնուէին:

Արևսթավ այս սրարայան Էտմոնի պատմեց, և ասիկայ խնդրեց բարեկամէն որ իր կենակցուհւոյն հետ զինքը ծանօթացընէ, որուն համար շուտ մը անձնուէր համակրութիւն մը զգաց, համակրութիւն մը՝ որ Նիշէթ ալ իր կողմէն անոր նուիրեց:

Ե

Էտմոն ստէպ կու գար ժամերով երիտասարդուհւոյն հետ կը խօսակցէր իր Աստօ փողոցի տան մէջ, զոր Արևսթավ օրէ օր շքեղալի զարդերով կը պճնէր: Նիշէթ անդադար կ'աշխատէր, և աշխատութեան արդիւնքը տեսնելու համար՝ զլուխը մէյ մը աջ, մէյ մը ձախ կողմը կը ծռէր, ինչպէս հովուհին գետին եզերքը կայնած՝ քնքուշ շարժումներով ջրին մէջ իւր գէմքը կը նկատէ: Իւր շիկադոյն գանգրապեղ մազերը, սքանչելի ծաղկեայ թիւլէ դտակներուն տակ պսակ մը կը յօրինէին զլխուն վրայ, զոր Արևսթավ շատ կը սիրէր, և մանաւոր խնամ մը կը տանէր այս խարսեղագեղ ու վարդազոյն զլխուն վրայ:

Տիկին տը Բէրէօ աղէկ դիտէր որ այս մտերմութիւնը մշտապէս չպիտի ըլլար, բայց Արևսթավի Նիշէթի վրայ ունեցած անկեղծիկ սէրը ճանչնալով, ուզեց անտակ մը սուրբ պաշտպանողութեամբ այս ասարիական ցոյցը սրբազործել, զոր երիտասարդուհին որդւոյն ընկերջը նուիրած էր, և այսպէսով մանաւանդ Արևսթավէն Էտմոնի

վրայ ունեցած սերտ բարեկամութեանը համար իւր երախտադիտութիւնը յայտնել :

Տիկին տը Բէրէօ խիստ անարատ կին մը ըլլալով, կանխակալ կարծիքներէ ազատ էր, ուստի երկու երեք անգամ Տօմօնի յարաբերութիւնները միշտ անմտանալ ձեւացընելով՝ երիտասարդուհի մտերմօրէն իր տունը ընդունեց, այնպէս որ Նիշէթ՝ տիկին տը Բէրէօի վարուց բոլոր փափկութիւնը ըմբռնելով, այն աստիճան սէր կապեց անոր վրայ, որ ինքզինքը կրակն իսկ ձգելու յանձնառու պիտի ըլլար ՚ի հարկին :

— Ի՞նչ ըրիր այս առտու, ըսաւ տիկին տը Բէրէօ իւր որդւոյն երբ սա ձեռքը պահնելով մանկական սովորութեանը համեմատ մօրը ոտից ներքեւ բարձի մը վրայ նստաւ :

— Ոչինչ, բարի մայրս, Ախսթալին հետ թուռ եկանք :

— Ինչո՞ւ չեկաւ զիս տեսնելու :

— Կօտօ փողոցը դնաց, բայց աս իրիկուն զինքը պիտի տեսնենք :

— Ի՞նչ կայ, աւելցուց տիկին տը Բէրէօ, խուճապեալ գէմք մ'ունիս :

— Ամեն բան կը գուշակես, սիրելի մայրիկս :

— Ի՞նչ եղար ուրեմն :

— Ո՛հ, հանգիստ եղիր, վտանդ մը չկայ, պարզ գէպք մը միայն :

— Պատմէ՛ ինձ ատիկայ :

Տիկին տը Բէրէօ ձեռագործը առնելով պատրաստուեցաւ մտիկ ընելու : Եւ Էտմօն առաւօտեան պատահարը մի առ մի պատմեց :

— Այդ գեռատի օրիորդը սիրուն է, հարցուց տիկին տը Բէրէօ :

— Աբանչի՛ն :

— Խարտեաշ է՞ :

— Չէ, թխադէմ :

— Երբ քեզ ճանչնայ, պիտի պաշտէ :

— Ուսկից գիտես ատիկա, սիրելի մայր իմ :

— Հա՛, եթէ կրնայ թող չսիրէ իմ Էտմօնս . . . Բայց զաւակս, անխոհեմութիւն չընես, հասկըցար :

— Ի՞նչ անխոհեմութիւն կ'ուզես որ ընեմ :

— Գիտեմ ես : Սիրահարները միշտ անխոհեմ կ'ըլլան :

— Բայց ես, սիրելի մայր իմ, դեռ չեմ սիրահարած :

— Սակայն նոյն ճամբուն վրայ կը գտնուիս :

— Եւ եթէ սիրահարիմ պիտի բարկանամ ինձի դէմ :

— Արնամ բանի մը համար քեզի բարկանալ, սիրելի Էտմօնս, եթէ կը սիրես այդ աղջիկը ու այն ալ քեզ կը սիրէ և եթէ պատուաւոր ընտանիքէ է, իւր հօրմէն կը խնդրես զան՝ որուն համար անշուշտ խիստ պիտի զմայլի, և ան ատեն մէկի տեղ երկու զաւակ պիտի ունենամ : Միայն թէ այն երկուքէն մէկը միշտ առստել պիտի սիրեմ :

— Ինչպէս լաւ կը կարգադրես այդ ամենը :

— Այս ամենը միթէ կարելի չէ՛ : Իրօք, ես հօրդ հետ առանց ծանօթութիւն ունենալու ամուսնացայ. դու ալ կրնաս քեզի հաճելի եղող օրիորդի մը հետ ամուսնանալ :

— Ի՞նչ բարի ես, մայր իմ :

— Բայց ամեն ինչ ծայրէ ՚ի ծայր պիտի պատմես ինձ :

— Երբէք քեզմէ բան մը պահած եմ :

— Հիմա ի՞նչ պիտի ընես :

— Վաղը պարոն Տըվօի տունը պիտի ներկայիմ :

— Ի՞նչ առթիւ :

— Այն առթիւ թէ հիւանդ եմ, և խորհրդակցութիւն մը կ'ուզեմ ընել :

Այս խօսքին վրայ տիկին տը Բէրէօ երևութապէս գունատեցաւ :

— Ի՞նչ ունիս, մայր իմ, հարցուց Էտմօն :

— Ոչինչ, զաւակս, ոչինչ : Միայն թէ կը փափաքէի որ ուրիշ պատճառ մը գտնէիր :

— Ինչո՞ւ :

— Գիտես թէ որչափ աւելորդապաշտ եմ :

— Մի վախնար, բարի մայր իմ, ես շատ աղէկ, առողջ եմ :

Տիկին տը Բէրէօ արտասուալից աչօք որդւոյն ողջագուրեցաւ :

— Ահա հիմա կ'սկսիս լալ . . . ըսաւ Էտմօն անոր առջև ծըն-

կան վրայ դալով և ձեռքերը իւր ձեռաց մէջ առնելով : Ինչո՞ւ
կու լաս : Մի՞թէ վշտացուցի քեզ :

— Չեմ լար , սիրելիս : Քու ամուսնութեանդ վրայ խորհելով՝
յանկարծ մտքիս մէջ գաղտնիք մը ծնաւ թէ կինդ ինչպէ՞ շատ պի-
տի սիրես . ահա ասոր համար է որ կը տրտմիմ :

— Աղէկ զիտես , մայր իմ , որ այդ բնաւ չպիտի ըլլայ :

— Ատիկա մը ըսեր , զաւակս : Բայց ինչ տեսակ երջանկութիւն
կ'ուզէ թող ըլլայ , միայն թէ դու բարեբաստ ըլլաս , ահա այս է
Աստուծմէն բոլոր խնդրածս :

Սակայն այս խորհուրդը չէր իրօք որ տիկին տը Բէրէօի աշ-
քերը լեցուց , քանզի եթէ այս ըլլար , պէտք էր որդւոյն ըրած
պատմութեան սկիզբէն անմիջապէս յուզուիլ :

Ինչ երկիւղ ուրեմն պաշարեց յանկարծ դեռահասակ մօր սիրտը :

Ուստի այս տրտմալի վայրկեանը իր զաւկին մտքընել տալու
համար կրցածն ըրաւ : Չեռագործին սուղեն անցաւ ու կեղծ զուար-
թութեամբ մը խօսակցութեան նիւթը փոխեց :

Բայց Էտմօն որ մօրը բնաւորութիւնը լաւ կը ճանչէր , տեսաւ
որ այս զուարթութիւնը շինծու էր և հասկըցաւ որ նոյն միջոցին
ուրիշ վարանում մը անոր միտքը կը վրդովէր :

Իրիկունը տիկին տը Բէրէօ՝ Աիւսթավը մէկդի առնելով ըսաւ .

— Ջանս՛ որ Էտմօն վաղը պարտն Տրվօի տունը շիրթայ :

9

Աիւսթավ բոլոր իրիկունը տիկին տը Բէրէօի տունը անցուց :

Ատիկա աղաչեց որդւոյն որ երթայ գիւղ մը փնտռէ և այսպէս
վայրկեան մը հեռացուց զան , քանզի Տոմօնի հետ առանձին մնալ
կը բաղձար :

— Ուրեմն Էտմօն ամեն ինչ պատմեց ձեզ , հարցուց Աիւսթավ
իր բարեկամին մօրը :

— Այո՛ :

— Եւ բնաւ որ վաղը Պ. Տրվօի տունը պիտի երթայ :

— Այո՛ , և այս բանս կ'ուզեմ արգիլել :

— Ես ալ արդէն ուզեցի արգիլել , անշուշտ միևնոյն պատճառ-
ներուն համար :

— Ինչ բարեսիրտ ես , Աիւսթավ , ըսաւ նորաստի մայրը ձեռքը
Տոմօնի երկնզրնելով , և ես ինչ բարեբաստ եմ որ զաւակս քեզի
պէս ընկեր մը ունի : Ար հասկընաս թէ այս այցելութիւնը որքան
կը խռովէ զիս : Գիտես որ Պ. տը Բէրէօ կուրծքի հիւանդու-
թեամբ մեռաւ , և Էտմօնի ծնանելէն ՚ի վեր կը գողամ որ զաւակս
ալ այս հիւանդութեան ենթակայ չըլլայ , որ կ'ըսեն թէ մասան-
գական է : Գիտես ինչ կերպով զան մեծցուցի , մինչև այս օր ինչ
սիրով անոր վրայ հսկեցի , և անոր զիրբմբանելի մտքէն հօրը
մահուան պատճառը միշտ պահել ջանացի : Ար վախճամ որ այդ
բժիշկը ամեն բան չիմացրնէ , և կամ իւր դրած կանոններէն Էտ-
մօն չըուշակէ թէ ուստի է ան թուլութիւնը , մտասիտհութիւնը ,
այն յաճախակի անձկութիւնները , զորոնք տակաւին չկրցայ նուա-
ձել , և որ ամուսնոյս հիւանդութեան առաջին նշաններն էին :

— Բայց , տիկին , ձեր բժիշկը մի՞թէ չհանդարտեցուց զձեզ Էտ-
մօնի առողջութեան վրայ :

— Էտմօն երբ հաղիւ վեց տարեկան կար , իմ բժիշկս ըսաւ որ մը .
«Այս տղուն կուրծքին վրայ աղէկ ինձամ տարէք :» Այն օրէն ՚ի
վեր տեսնելով թէ այս խորհուրդը ինչ աստիճան ազդեցութիւն ը-
րաւ իմ վրայ , ալ բնաւ խօսքը չբացաւ :

— Քանզի տեսած է որ ամեն վտանգ անհետացած է : Հարկաւ ,
տիկին , ձեր անդուլ խնամքներով այդ ախտին սկզբունքը ջնջած էք ,
եթէ երբէք այդպիսի սկզբունք մը կար : Երեք տարի գպրողը որ
ցանգ միտանող էինք , այդ ձեր երկնչած նշաններէն և ոչ մին տե-
սայ . և հինգ տարի է որ գպրողէն մեկնեցանք և միշտ իւր բարե-
կամն եմ , անոր հիւանդ ըլլալուն վրայ կասկած մը չեմ ունեցած
բնաւ :

— Սակայն հիմա ըսիր թէ մի և նոյն պատճառներով դու ալ կ'ուզէիր արգիլել Էտմոնը որ Պ. Տրվօի տունը չերթայ :

— Չեր մայրական սարսափները կը ճանչնամ, տիկին, և եթէ տ'ըող ջապէս չեմ մասնակցիր, գիտեմ սակայն որ Էտմոն տկար կազմուածք մ'ունի, և որովհետեւ ինք չըրտէր այդ տկարութիւնը, չէի ուզեր որ օտար մը զան իրեն յայտնէ : Այս Պ. Տրվօն թէև սքանչելի աղջիկ մը ա՛նի, կրնայ ըլլալ որ թանձրամիտ մէկը ըլլայ՝ ու շիտիկ շիտակ՝ թէ ճշմարիտ մտօք, կամ թէ յաճատորդ մ'աւելի ունենալու գիտաւորութեամբ Էտմոնին ըսէ . Շատ հիւանդ ես :

Եւ Էտմոն իւր սովորական գիւրազգայութեամբ՝ այս խօսքը չարաչար ըմբռնելով առանց որ և իցէ տկարութիւն մը ունենալու գուցէ հիւանդանայ : Աստի, տիկին, առանց ձեր երկիրդները ունենալու ձեզի համարիտ էի :

— Շնորհակալ եմ, Ախօթավ, կ'ուզես զիս ապահով ցընել, բայց այս երկիրդները, ստոյգ եմ որ դու ալ կ'ընդունիս, քանզի որդւոյս վրայ հայրական հսկողութիւն մ'ունիս . այն կէտին որ իմ ազդեցութիւնս պիտի դադրէր քուկը սկսաւ, և քու շնորհիւդ է, որ Էտմոն իւր հասակակիցներուն պակասութիւններէն և սովորութիւններէն իսկ և ոչ մին ունի . ոչ թուղթ կը խաղայ, ոչ ծուխ կը քաշէ, ոչ զինի կը խմէ և ոչ զիշերները ուշ կը պառկի : Այս ամենը քեզ կը պարտաւորիմ, աւելորդ է ըսել, թէ ինչ երախտագիտութիւն կը դիզեմ սրտիս յատակը :

— Գիտէք արդեօք, տիկին, թէ ինչ մոգական բառ կը գործածեմ Էտմոնը ֆլաստակար բաներէ զգուշացընելու համար :

- Չէ :
- Բաւական է որ ըսեմ. «Ատիկա մօրդ վիշտ կը պատճառէ :»
- Աւրեմն զիս շատ կը սիրէ :
- Աւրջին աստիճան :

— Սիրո՞ւն զաւակ, մըմուսայ տիկին տը Բէրէօ, ես ալ զինքը կը սիրեմ : Միայն թէ ինք ուրիշ տեղ ալ կրնայ զրօսանք գտնել, իսկ ես՝ միայն իր քով : Հոն ուր որ չէ՛նա, հողիս ինձմէ հեռի է . քսան տարի է մի միայն իրմով ապրեցայ : Աստի կընաս մա՛նա՛ :

քե՛լ իմ երկիրը թէ մի գուցէ հօրը հիւանդութենէն ունենայ, որն որ մեռած ատեն երսուն տարուան անգամ չկար :

— Ձեզի ստուգելու համար, տիկին, թէ որչափ ունայն տեղը կը տառապիք, հրաման տուէք որ խրատ մը տամ :

- Ըսէ՛, սիրելի Ախօթավ :
- Էտմոնի վրայ երբէք ձեր բժշկին հարցում ըրած էք :
- Ոչ երբէք :
- Աւրեմն, եթէ ես ձեր տեղը ըլլամ, պիտի թողում որ վաղը Պ. Տրվօի տունը երթայ, և իրիկունը պիտի երթամ այդ բժիշկէն ճշմարտութիւնը իմանալու :

— Հասցա եթէ իմ երկրայութիւններս ստուգէ : . . . Ո՛հ, չէ, լաւագոյն է որ այս տարակուսին մէջ մնամ, քանզի այդ ճշմարտութիւնը զիս պիտի սպաննէ : Այն աստիճան կասկածներս սարսափելի են, որ եթէ վաղը Էտմոն հիւանդանայ, պիտի չհամարձակիմ իմ բժիշկս իսկ կանչելու, վախնալով որ իւր արուեստին պաղարիւնութեամբը իմ արդէն տարակուսածս ինձ չյայտնէ :

— Աւրեմն, տիկին, կրցածս պիտի ընեմ որ Էտմոն Պ. Տրվօի տունը չերթայ :

- Շնորհակալ եմ :
- Խօսք չեմ տար յաջողելու, քանզի կարծեմ որ այս ատուան զիսուածը անթերի զլուխ հանելու հաստատ որոշում ըրած է :
- Բայց միշտ աշխատէ :

Պահ մը ետք Էտմոն ներս մտաւ, մօրը ինդրած գիրքը հետը բերելով : Այնպէս կայտառ երեոյթ մ'ունէր, որ այս դարձը իւր քացակայութեան ժամանակ եղած խօսակցութիւնը տուտ կը հանէր կարծես :

- Վաղեցիք, ըսաւ մայրը :
- Այո՛ :
- Շունչդ կտրեր է :
- Ամենէն, սիրելի մայր իմ :
- Վաղելը քեզ չփեսէր :
- Չէ : Ահա գիրքդ :

— Շնորհակալ եմ, սիրելի զաւակ :

Տիկին տը Բէրէօ որդւոյն ձեռքերը բռնելով ձակատը համբու-
րեց :

— Ձեռքերդ կրակի պէս տաք են, ըսաւ :

— Միշտ այսպէս են :

— Ցաւ մը չունիմ :

— Երբէք այսքան աղէկ եղած չունիմ, սակէ զատ, զիտես, մայր
իմ, որ բնաւ հիւանդացած ալ չիմ :

Կիւսթավի հետ ունեցած խօսակցութենէն ետքը, հարկ չէ ը-
սել թէ տիկին տը Բէրէօ ինչ անձկութեամբ իւր որդին կը հարցու-
փորձէր :

— Ես ալ լսիսա շուտ կը խոսովիմ, մտածեյ. և աչքերը Էտ-
մօնի վրայ պնդած՝ ուշադրութեամբ անոր նայուածքը, գոյնը ու
չնչառութիւնը քննեյ :

Էտմօն հանդարտ և ուրախ էր, թէ և քիչ մը սովորեց :

Կիւսթավ տիկին տը Բէրէօի հետ նայուածք մը փոխանակեց և
սա ժպիտով մը պատասխան տուաւ որ կը նշանակէր .

«Իրաւունք ունիս : Կը սխալիմ անշուշտ :»

Ժամը սասնակէին Տօմօն մեկնելու հրաման խնդրելով ըսաւ Էտ-
մօնին ,

— Քեզի ծանր խօսելիք ունիմ :

— Վաղը եկուր :

— Բայց զիս տեսնելէդ առաջ չպիտի մեկնիս :

— Չէ : Միայն թէ կանուխ գաս :

— Կէս օրին պիտի գամ :

— Արեմն, կէս օրին քեզ պիտի սպասեմ :

Երկրորդ օրը ժամը իննին Էտմօն տնէն մեկնեցաւ, Կիւսթավի
համար հետեւալ տուտակը թողլով ծառային .

«Սիրելի բարեկամս, երէկ իրիկուն մօրս զիբքը փնտուելու գա-
ցած ժամանակս, Պ. Տըվօի տունը վազեցի և զունագանուհւոյն
«հարցուցի թէ ժամը քանիին մարդ կընդունի, պատասխանեց թէ
«իննէն մինչև կէս օր, և երբեքն մինչև հինգ : Մինչև գալը գործ

«մը չունիմ, ուստի կ'երթամ Պ. Տըվօն տեսնելու, և կէս օրէն
«ետքը բոլոր օրը քուկդ եմ :

«Գուր կը հասկընաս անհամբերութեանս պատճառը :

Էտմօն Պաղ փողօցը զարկաւ, բոլոր ձամբան ինքնին հարցընելով
թէ արդեօք բժշկին տունը երթալու դրդիչը իւր կեղծ բարուրանայ
տակէն չպիտի երևէր :

«Ինչ պիտի ըսեմ, կը մտածեր, երբ հարցընէ թէ ինչ հիւանդու-
թիւն ունիս : Խեղքիս փշածը, այսինքն, թէ զլուխ կը ցաւի,
ջղային տկարութիւն ունիմ, երբեմն կը հազամ. ասոր վրայ բը-
ժիշկը դեղ պիտի տայ ու առողջապահական կանոններ պիտի դնէ
իմ վրայ, ու ես ամեն օր պիտի դամ ու ըսեմ թէ քիչ մը աղէկ
եմ : Այս ըսելով զան պիտի փազարչեմ ու իր բարեկամութիւնը
դիւրութեամբ ձեռք պիտի անցընեմ :»

Սակայն Էտմօն՝ այս տեսակ պատահարներու տակաւին վարժ չըլ-
լալով, քիչ մը յուզուած էր :

Օրիորդ Տըվօի դեղը, վայելչութիւնը, շնորհը ու մանկամար-
դութիւնը իւր երեւակայութեան վրայ արագ ու քաղցր տպաւո-
րութիւն մ'ըրած էին : Բօլի և Վէրթէրի պէս դժուարակնձիւ և
զուցէ անհնարին սիրոյ մը մէջ՝ այն քաղցր խլրտումը կը փափաքէր
զանեղ՝ որուն իւր սիրտը կը կարօտէր. մանաւանդ թէ դիւրահեշտ
սէրերը մերժած էին իրեն այս խնդրածը :

Էտմօն այս զպացածը Կիւսթավին ըսած չէր, քանզի այնպիսի
խորհուրդներ կան որ մտերիմ բարեկամներու իսկ դժուարաւ
կը հաղորդուին . Էտմօն սէրը աւելի խտեղանիւն մէջ կ'որոնէր,
քան թէ իրականին, աւելի յուսոյ քան թէ ստուգութեան, առա-
ւել երազի մէջ քան թէ վայելման : Ահիւր իրեն համար բանաս-
անդական բնայիր մ'էր, որ հոգւոյն լուրթեանը մէջ միամտու-
թեամբ կ'ամփոփէր և իւր ցնորքներով կը պճնէր :

Ուստի նորատի աղջկան մը սէրը միայն կրնար այս քաղցրութեան
ճաշակը տալ իրեն : Ար մնար գիտնալ թէ Անթօնին պիտի սիրէր
զինքը. այսու ամենայնիւ սիրահարուելու ամեն կարևոր հանգամանք-

ները կ'ըզգար սրտին մէջ : Սիրոյ մէջ իւր սիրածը, նոյն ինքն սէրն էր :
 Երկու համակրութիւններ արդէն իր սիրաը կը լեցնէին, մայրը
 և Ալութավ . բայց հիմակ զգաց որ այս երկու համակրութիւնները
 երբորդով մը լիանալու կարօտ էին, որմէ բնաւ նախանձելու տե-
 ղի չունէին, քանզի այս ետքինը մի և նոյն ծագմանէ չէր :

Է

Արդէն ըսինք թէ երկար առեմէ 'ի վեր Էսմոնի սրտին մէջ նո-
 րանշան փափաք մը ծագած էր՝ սակայն տակաւին չէր սիրած,
 քանզի իւր սիրոյ անարատ խունկը ամփոփելու համար, յստակ ա-
 նօթ մը պէտք էր : Շատ երիտասարդուհիներ, նորէն կը կրկնենք,
 աչքին առջևէն անցած էին թէպէտ, բայց անոնցմէ և ոչ մէկը Ան-
 թմոնի պէս արագ տպաւորութիւն ըրած էր իւր մտքին վրայ :
 Վիւրազորով պատանուոյն համար, այս արագութիւնը ներզործուն
 էր :

Արդ, Էսմոն Լիլ փողոցը հասնելով, բնական յուզմամբ մը բժըշ-
 կին դուռը դարկաւ : Ծառայ մ'եկաւ զան բանալու :

— Պ. Տրվօ, հարցուց Էսմոն :

— Խորհրդակցութիւն կ'ընէ, պատասխանեց ծառան, բայց եթէ
 կ'ուզէք քիչ մը սրահը սպասել, կու դամ ձեզ իմաց տալու երբ
 որ Պ. բժիշկը կարենայ ընդունիլ :

Էսմոն ցուրտ դահլիճ մը մտաւ, որն որ Ալայրութեան ձևով
 կահաւորուած էր և որուն գորշ մեծ դռներուն վրայ Պուշէի կռա-
 ծոյ տախտակներուն նման՝ տախտակներ կախուած էին : Ժամացոյց մը
 որ Սոկրատի փոխինգ խմած պատկերը կը ներկայացընէր, առիւծի
 ձանկերով շաշանակներ, Սփինքսի գլուխներով թիկնաթոռներ, Պէ-

լիզէրի, Էոմբրոսի, Իպոօկրատի և ասոնց նման նկարներ՝ որոնք
 Արգարսէրքուսի ընծաները կը մերժէին, հրոյ պահպանակ մը, ձե-
 աագործ բարձեր՝ զորոնք անշուշտ օրիորդ Տրվօի աշխատութիւնը ե-
 զած պիտի ըլլային, զիրքերով ծածկուած աշտանակի բազմոց մը,
 երկու պատահաններու մէջ տեղը քծու մը, ուրիշ մ'ալ երկու դրան
 մէջ տեղը՝ որուն վրայ երկու մեծ վարդապոյն խեցիներ և ճանձա-
 հաւեր՝ կեղծեալ ծառի մը տերևին վրայ յարգապատած կային, իսկ
 միւսին վրայ յախճապակոյ կոյս մը՝ Ապոլոն և իւր քոյրերը կը ներ-
 կայացընէին, վերջապէս վարդանկար Օպիւսօնի օլմոց մը Էսմոնի
 դանուած սրահին կարասիքը կը կազմէին :

Ինչպէս որ կը տեսնուի, ասիկայ ասանդական կարասիք մ'էր :

Այս սրահին մէջ խաղաղութիւն կը տիրէր, ուր մտնողը իսկոյն
 պիտի գուշակէր թէ ծանրաբարոյ անձանց միայն հիւրնկալու էր,
 իբր թէ անկէջ մեկնողները մեծութեան և գիտութեան միջնորոտ մը
 կը թողուին :

Պահ մը Էսմոն յուսաց որ գուցէ Անթոնին պատահաւք կամ
 հետաքրքրութեամբ դար, բայց ոչ ձայն լսեց և ոչ մէկը տեսաւ :

Սակայն համոզուեցաւ որ իւր աջ ու ձախ կողմը գտնուած գունե-
 բուն երկուքին մէկը, երիտասարդուհոյն սենեակը կը տանէր, և
 թէ այս միջոցին ինքն հոն ըլլալու էր :

«Չգիտէր, կը մտածէր Էսմոն՝ որ երէկ իւր ետևէն երթողն այս
 օր առչափ մօտն ըլլայ :»

Բայց կը սխալէր, քանզի Անթոնին որ առջի օրը Էսմոնի իրենց
 սուներ մտնելը տեսած էր և չէր տարակուսեր թէ իրենց վրայ տե-
 ղեկութիւն հարցուցած շրջայ զուսպանուհոյն հետ խօսեցած ժա-
 մանակ, Անթոնին, կ'ըսենք այն միջոցէն հօրը սուներ ներկայացող
 անձանց ամենուն նկարագրութիւնը ընել կու տար : Առտի հազիւ
 թէ երկու վայրկեան եղեր էր Էսմոնին հոն ըլլալը որ օրիորդ Տր-
 վօ արդէն իմանալով զբան փականքին՝ ծակէն ստուղեց իր կասկածը :

«Ինչ ընելու կու գայ հոս արդեօք այս երիտասարդը,» կը մտա-
 ծէր ինքնովին, և քանի մ'անգամ գուռը բանալու բաղձամբ մը զգաց,
 որպէս զի տեսնէ թէ իւր ներկայութիւնը ինչ ազդեցութիւն պիտի
 բնէր, բայց դարձեալ չհամարձակեցաւ :

Էամօն տասը վայրիեան սպասելէն ետքը , ծառան եկաւ իմաց տալու որ Պ. Տրվօ.առ.անձին էր :

Էամօն բժշկին սենեակը անցաւ , ուր մեծ գրասեղան մը կար . մատենագարան մը , Իպոսկրատի կիսարձան մը , երկրագունտ մը վիրաբուժութեան գործիներով լեցուն սեղան մը , երկու ամբուսներ , կաշիէ գրուագեալ թիկնաթուղի մը՝ որուն վրայ նստած էր Պ. Տրվօ , անպէտ թղթերով լի սակառ. մը , ծիրանեփայտ կշռոց մը , մի և նոյն փայտէ երկու ամաններ և ժամացոյցի բարձիկ մը ,

Գրասեղանին վրայ շատ մը նամակներ ցիր ու ցան կային :

Պ. Տրվօ երկայն գիշերազգեստ մը հագեր էր , որուն վերջին ճարմանդին վրայ Լէդէնի շքանշանին ժապաւէնը կը տեսնուէր :

Էամօնի մտած ժամանակ բժիշկը գիր կը գրէր : Նորեկը նստեցուց , աջ սրունքը ձախին վրայ անցուց , ձեռքերէն մին ծնկան վրայ դրաւ և միւսովը ակնոցը տեղաւորելով Էամօնը ողջունեց պահ մը զան գլտելէն յետոյ , և ըսաւ :

— Պարոն , ի՞նչ բանի կրնամ ձեզ օգտակար ըլլալ :

— Պարոն , յարեց Էամօն քիչ մը շփոթած , ձեզմէն ճանչցուելու պատիւը չունիմ :

— Իրօք , զձեզ բնաւ չեմ տեսած :

— Բայց եթէ դուք զիս չէք ճանչնար , ձեր մեծ համբաւը ինձ ծանօթ է , և ահա անոր համար հոս կը ներկայիմ :

Պ. Տրվօ խոնարհութիւն ընելով ըսաւ .

— Ի՞նչ բանի վրայ է :

— Խիստ պարզ է , պարոն , հիւանդ եմ և չեմ կրնար որոշել թէ հիւանդութեանս պատճառը ի՞նչ է և ո՞ր կողմն է :

Բժիշկը իւր նոր յաճախորդը ուշադրութեամբ մը զննեց ու ըսաւ ,

— Ստամոքսի տկարութիւն ունիք :

— Երբեմն :

— Գլխի՞ :

— Ըն ալ երբեմն երբեմն :

Էամօն ըստ գիպաց , կամ միայն պատասխանելու համար կը պատասխանէր , իսկ Պ. Տրվօ զան շարունակ կը քննէր :

Այս միջոցիս հետաքրքիր Անթօնին ականջը հօրը սենեկին դրան փակցուցած էր , որպէս զի հոն աեղի խօսակցութիւնը մտիկ ընէ , անօգուտ փորձ , քանզի բան մը չլսեց :

— Չեռքերնիդ ինձ տուէք , կրկնեց բժիշկը :

Էամօն ձեռնոցը հանելով ձեռքը Պ. Տրվօի երկնցուց : Իսկ երբ կը մտածէր թէ բժիշկը այս խորհրդակցութեան կարեւորութիւն կուտայ , չէր կրնար ծիծաղը բռնել :

— Մեծ հիւանդութիւններ ունեցած էք երբէք , հարցուց բժիշկը :

— Մ'չ , պարոն :

— Հարբուխ կ'ըլլա՞ք երբեմն :

— Կը հազամ :

— Ստէպ ծարաւ կ'ըզգա՞ք :

— Այո , պատասխանեց իսկոյն Էամօն , զմայլելով որ զոնէ միանդամ ճիշտ տեղեկութիւն մը կուտար , որն որ աննշան բան մը կը թուէր իրեն :

— Կանոնաւոր կեանք մը կը վարէք :

— Այո՞ , պարոն :

— Շատ աղէկ կ'ընէք : Ծնողքնիդ գեռ կենդանի են :

— Չէ , պարոն , հայրս մեռած է :

— Գիտէք ինչ հիւանդութեամբ :

— Երեք տարու էի երբ նա մեռաւ :

— Անոր մահուան պարագաններէն և ոչ մէկը չէք յիշեր :

— Ամենին :

— Մայրենիդ անոր վրայ խօսք մ'ըսած չէ՞ ձեզ :

— Ընդհակառակը , այս բանս միշտ պահած է ինձմէ , զիս շատ սիրելուն համար չուզէր վշտացնել :

— Հրաման կու տո՞ք որ քննութիւն մ'ընեմ , ըսաւ Պ. Տրվօ ոտք ելնելով :

— Յօժարակամ , պատասխանեց Էամօն :

— Հաճեցէք ուրեմն , զգեստնիդ , փողպատնիդ ու բաձկոնիդ հանելու :

Էամօն հնազանդեցաւ : Ան ատեն Պ. Տրվօ Էամօնի շապիկը մէկդի

ընե լով, երկու երեք անգամ կու բծքին զարկաւ, և պահ մը ականջը կանակին գնելով՝ շնչառութիւնը մտիկ ըրաւ:

— Գունե ընկդ երբեմն կը վրդովի, հարցուց բժիշկը:

— Այո՛:

— Եւ երբեմն սաստիկ քրտնած կ'արթննաք, իբր թէ երկար շրջագայութիւն մ'ըրած ըլլայիք, այնպէս չէ:

— Ստոյգ է:

— Արիւն թքնել ունիք:

— Երկու երեք անգամ:

— Սրտի ցան:

— Գրեթէ ամեն անգամուն որ կ'արթննամ:

— Մայրե ընկդ այդ պզտի տկարութիւններուն վրայ տեղեկութիւն ունի՞:

— Չէ, զանոնք անտեղի կարծելով իրեն բան մը չեմ ըսեր, քանզի եթէ զիտնայ՝ կը ստպնայի:

— Իրօք ալ, յարեց Պ. Տըվօն, վտանգ մը չեմ տեսներ, այսինքն թէ ամեն երիտասարդներուն ունեցածը դու ք ալ ունիք, և ոչ տեղի: Միթէ ձեր վիճակը կ'ստիպէ՞ Բարիկ մնալու, հարցուց պահ մը լռութենէ ետքը:

— Ամենին:

— Հարստութիւն ունիք:

— Այո՛:

— Աւրեմն ճամբորդութիւն մ'ըրէք, մանաւանդ հարաւային կողմը: Երիտասարդութեան ուղեորութիւնները մարդուս մարմնը ու միտքը կը կազդուրեն:

— Միթէ՞ առիկայ անհրաժեշտ է:

— Չէ, լոկ խրատ մ'է, բայց խրատ մը որ դարմանի արժողութիւնը ունի:

— Որովհետեւ բոլոր գուարձութիւններս ու բարեկամներս Բարիկ են, աւելի կ'ընտրեմ հոս մնալ:

— Կեցիք ուրեմն, բայց դրելու կանոնադրութեանս հետեցէք:

Բժշկին գրած ժամանակը էտմն անոր նայելով կ'ըսէր իւրովի,

«Պէտք է որ այս բարի Պ. Տըվօն իւր խորհրդակցութենէն բան մը շահի»: Եւ երբ այս վերջինը գեղադիրը սուաւ իրեն՝ Էտմոն ըսաւ անոր,

— Միտք ունիմ, տօքթօր, ստէպ զալու ձեր օգտակար խրատները ընդունելու: Այս առաջին այցելութեան համար կ'աւանդամ հարցընել թէ ի՞նչ է պարտքս: Հաճեցէք զիս իբր հին ծուխ մը նկատել և հրաման տալ որ հասցէս հոս թողլով, յաճախ դամ ձեզ անսնմ: Վ'ուզեմ որ մեր յարաբերութիւնները օր մը բարեկամութեան փոխուին:

Պ. Տըվօ երիտասարդին հասցէտունը առնելով դրասեղանին վրայ դրաւ:

— Երբ որ կ'ուզէք եկէք, ըսաւ վերջին նայուած մ'ալ պնդելով

Պ. աը Բէրէօի վրայ:

Էտմոն ամեն կողմ նայելով հեռացաւ, բայց չկրցաւ Անթոնին տեսնել: Սակայն տանը մէջ մուտք ունենալով՝ իւր փափաքը կատարուեց էր:

Երբ առիկայ դուռը գոցեց, օրիորդ Տըվօ հօրը սենեակը մտաւ:

— Նախաճաշի չես դար, հայր, ըսաւ, զան համբուրելով:

— Այո՛, աղջիկս:

— Խորհրդակցութիւն կ'ընէիր:

— Այո՛:

— Իմ ծանօթներէս մէկս մը հետ:

— Չէ:

— Ի՞նչ է այս թուղթը, ըսաւ Էտմոնի հասցէտունը առնելով:

— Ասկէց մեկնող երիտասարդինն է:

— Պ. Էտմոն աը Բէրէօ, Թրուա Փրէր փողոցը, թիւ 3, ըսաւ բարձրաձայն և իբր անտարբերութեամբ զան կարգալով: Յետոյ, հիւանդ է այս պարոնը, աւելցուց:

— Այո՛:

— Ի՞նչ ունի:

— Հայրը կուրծքի հիւանդութեամբ մտած ըլլալու է, հաստտի եմ և ինքն ալ քիչ ատենէն երբորք աստիճանի թօքսխա պիտի ունենայ, եթէ չուրի:

— Խեղճ պատանի, միմուայ Անթոնին հասցէտունը սեղանին վրայ դնելով :

— Հիմակ երթանք նախաճաշելու, սիրուն զաւակ, քանզի անօթութենէս կը մեռնիմ, ըսաւ բժիշկը, որ դրասեղանին վրայի թուղթերը կարդադրեր լմնցուցեր էր :

Ը

— Երրորդ աստիճանի թորակաւ, ըսաւ Անթոնին սեղան նստելով՝ ասիկա միթէ վտանգաւոր հիւանդութիւն է, հայր իմ :

— Եթէ ինքզինքը լաւ խնամէ երեք տարի կ'ապրի, իսկ եթէ ոչ երկու, պատասխանեց բժիշկը :

— Եւ ինք զիտէ ասիկա :

— Բարեբաղդաբար, ո՛չ : Այս ախտէն բռնուող մը չեմ տեսած ես, որ իր հիւանդութեան վրայ կասկածի :

Այս պատասխանին վրայ Անթոնին բոլորովին մտախոհ ու արտում երեցաւ . բժշկին այս սլարդ խօսքերը, աւելի խորին դրոշմեցին Էտմոնի յիշատակը իւր մտքին մէջ, որ թերեւ երեք ամսուան յարատեւ սիրաբանութիւններէ ետք՝ սոյն աղոյցութիւնը չկրէր :

Նախաճաշէն ետքը, բժիշկը իր հիւանդները տեսնելու մեկնեցաւ . և օրիորդ Տըվօ՝ իւր պտտաւ ինամակալուհւոյն հետ սենեակը մտաւ որն որ Քէնէլ-օրէնէ զգեալէ առնելով, սկսաւ առ ջի երեսը կարգաւ :

Անթոնին պատահանին դիմաց նստաւ՝ որուն վանդակը թէև իջած էր, բայց երբեմն գլուխը երկնցընելով՝ անոր ճեղքերէն՝ փողոցին մէջ ակնարկ մը կը նետէր :

Ազնեղործութիւն մը ձեռքը առած՝ որն որ իւր անդործ մատուրներէն ստէպ ծնկին վրայ կ'իյնար՝ միտքը զանազան նորանոր խոր-

հուրդներու մէջ կը տատանէր, առանց իր հանապազօրեայ սովորութեանց մտադրութիւն ընելու :

Էտմոն չէր տարակուսեր անշուշտ, թէ իւր այցելութիւնը ինչ թախծալի մտահոգութեան մէջ ձգեր էր բժշկին աղջիկը, մտահոգութիւն սր երիտասարդուհւոյն զիւրազգայութեան ասպնոցն էր :

Եւ իրօք ալ քիչ կը գտնուէր ասոր պէս անմեղ արարած մը որ միանդամայն սրտի ամեն նրբութիւնները այսպէս արագութեամբ ըմբռնէր : Մարդու հոգին շատ անգամ իւր տառապանքներէն սովորութիւններ կը քաղէ : Այսպէս Անթոնին՝ որ երկու տարիէ 'ի վեր մայրը կորսնցուցած էր, և այս կորստեան համար այն աստիճան աստիկ վիշտ զգացեր էր որ քիչ մնաց պիտի մեռնէր՝ այն ժամանակէն 'ի վեր այլոց տառապանացը վրայ սկսաւ աւելի կարեկցութիւն ցուցնել :

Ասկէ զան, այս մահը սրտին մէջ դատարկ տեղ մը թողուցեր էր որ բան մը չէր կրցեր զան լեցընել, ոչ իսկ հօրը վրայ ունեցած կաթողին սէրը, և ոչ այն նոր դաղափաբները որ իւր տարեկից աղջկանց մտքին մէջ ծնունդ կ'առնուն, և որոնք զարնանային առաջին տերևներու կը նմանին, որք իրենց պայծառ գալարութեամբը ձմեռուան ընդարմացած ճիւղերը կը ծածկեն :

Արդ, Էտմոնի հիւանդութիւնը նորատի աղջկան վիշտը յարոյց, որն որ զաւկի մը՝ մօր մահուան վրայ զգացած ցաւէն՝ զիւրութեամբ մօր մը՝ որ դուրս կորստեան վիշտը մակաբերեց :

Միայն թէ կ'ըսէր ինքնիրեն, «Որդին սիրտանայ և հրճուանայ ապագայ մը և այն ամեն հեշտութիւնները ունի իր առջին, որ մօր մը սիրտը այնուհետև չկրնար բաղձալ :»

Եւ այն ատեն ընականաբար, այն երիտասարդին մօրը վրայ կը մտածէր, որ Պ. Տըվօի տունէն անկասկած մեկնելով իւր մօտալուս վախճանին կը դիմէր :

Խեղճ կնկան յուսահատութիւնը աչքին առջև կը բերէր, և Էտմոնի խաղաղ ու ծիծաղերես դէմքին՝ և առջի օրը իւր վրայ յստած այն խոշոր ու կապուտակ աչուրներուն տեղ, ցուրտ ամպոյն ու վախտ գլուխ մը՝ նուազեալ ու ամոյն աչուրներ կը ներկայացընէր անդապար մտքին մէջ, և շարունակ կը կրկնէր, «Խեղճ պատանի :»

Արդ՝ երբ նորատի ազջիկ մը այս կարեկցական խօսքը արտասանէ՝ յայտնի է որ սիրաբը՝ երևակայութեանը խիստ հպած է և շատ անգամ այս հառաչանայ առարկան մէկէն միւսին անցնելու չուշանար :

«Արդեօք քանի տարեկան կայ, կը մտածէր, քսանեւերկու կամ շատ շատ քսանեւերեք, և քսանեւ հինգին կամ քսանեւ վեցին բնութիւնը անոր գոյութեան վախճան որոշած է . . . և ինք չգիտէր ասիկայ, ինդութեամբ, և իւր կենաց վրայ աներկիւզ, հոս կու գար անշուշտ, ուր ահա իւր մահուան վճիռը կը լսէ, քանզի հարկաւ ուշ կամ անագան ինքն ալ այս գառն ճշմարտութիւնը պիտի իմանայ :

«Հոս կու գար իմանունս սորվելու և պահ մը դիս տեսնելու, և չէր երկբայեր, աւաղ, որ այս շարժառիթը քանի գուժաբեր պիտի ըլլար իրեն :

«Եղիլելի մայրն ալ անշուշտ չգիտէր անոր վիճակը, և զակին վրայ կը ցնծայ ու կը սիրայ :

«Տարաբաղդ կին, այս բանս իրեն իմացընէր բարեգործութիւն մը պիտի ըլլայ, քանզի մտաւուս ցաւ մը առաջուց սովորութիւն ընելը, զրեթէ զան մեղմացընէ է :

«Եթէ հօրս ըսածը զրէի իրեն, գուցէ դեռ ժամանակ իսկ ըլլայ զան ազատելու :

«Ո՛հ, եթէ այդ պատանուոյն քոյրը ըլլայի, ինչպէս պիտի ինամէի զինքը, իւր ամենափոքր կամահաճութիւններն անգամ ինչպէս սիրով պիտի կատարէի, և Աստուծոյ իրեն շնորհելու այն կարճատե տարիները ինչպէս պիտի քաղցրացընէի :

«Ավ գիտէ, գուցէ ամենաթշուառ վիճակ մը ունենայ, գուցէ մայրը լքմէ առաջ մեռնելով՝ ինք բարեկամ մը, ազգական մը, կին մը չպիտի ունենայ իւր քովը աչքերը գոցելու :

«Աստուած իմ, ինչ փութր է այս մտածութիւնը, և ինչու այնպիսի մարդու մը զաւակն եմ, որ այլոց հիւանդութեամբ ու մահուամբ իւր ապրուստը կը շահի : Հայրս ինչ անխուղ ու ցուրտ աչքով կը նայի այս ամենը : Գիտութիւնը ինչպէս անտարբեր ու անկարեկիր կ'ընէ մարդս, և նա ինչպէս հանգարտութեամբ կ'ըսէր ինձի «Երկու տարի ունի միայն ապրելու» : Ո՛հ, մեք՝ կանայքս ինչանյա-

ջող բժիշկներ պիտի ըլլայինք, բայց այս գիտութիւնը ինչի կը ծառայէ երբ բնութեան չկրնար յաղթել :

«Սակայն ինձ կը թուի թէ սէրն ու բարոյական խնամները կրնան առողջութիւն պարգևել այն անձանց, որք նիւթեղէն գարմաններով չեն բժշկուիր :

«Ասկէ զատ, ես ալ այս Պ. Կտմոն տը Բէրէօի վրայ կը խղճամ, բայց գուցէ իր հիւանդութեան բուն պատճառը ինքն է, գուցէ անառակ մ'է, որ ինքզինքը գիշերները կերուխումի ու խաղի տալով կանցընէ, ինչպէս հայրս կ'ըսէ թէ՝ երիտասարդներուն շատերը այս տեսակ են :

«Ո՛հ, չէ, շարունակեց Անթոնին, պահ մը մտածելէ յետոյ, անառակի մը դէմքը չկրէր նա, կերպարանաց վրայ իդական քաղցրութիւն մը կը փայլի, աչուրները սիրուն և յանկուցիչ են : Ա՛րեսեն թէ այս հիւանդութիւնը՝ ակտաժէաներուն սրտին ու մտքին վրայ մեծ ազդեցութիւն ունի, և թէ ասոնք միւս մարդիկներէ աւելի զգայուն, վիպասանական և վշտակից կ'ըլլան : Անշուշտ սպրեւելու խիտ քիչ ժամանակ ունենալուն համար՝ այնպէս արագ կենցաղական զգայութեանց մ.ջ կ'ընկղմին :

«Ես ալ կ'ուզեմ քննել այս հիւանդութիւնը և երբ Պ. տը Բէրէօ գայ, քանզի վստահ եմ որ պիտի դայ, աղէկ մը զան նկատելով պիտի հասկրնամ : Կարելի է որ հայրս սխալի. բայց ես չեմ գիտեր ինչու համոզուած եմ թէ չպիտի սխալիմ :»

Անթոնին այս խորհրդածութիւններով կը վարակէր, երբ մէկ կողմէն շշուկ մը լսեց : Այս շշուկը ուրիշ բան չէր, բայց եթէ տիկին Անթոնիէ՛ր իւր գովելի սովորութեանը համեմատ պատմութեան առջի երեսին վրայ քննադատով, զիրքը ձեռքէն վար գլորեր էր :

Երկու տարի էր (քանզի տիկին Անթոնիէր տիկին Տըվօի մեռնելէն 'ի վեր պաշտօնի մտած էր Անթոնինի քով) որ յարգելի փոքր ամեն օր նախաճաշէն ետքը, Անթոնինի սենեակը դալով՝ ամառը պատուհանին քով իսկ ձմեռը կրակին մօտ նստած՝ Բէնէլուօրէն հի դիտելու կ'սկսէր կարգալ. բայց երբէք այն տեղէն աւելի առաջ չէր գացած՝ ուր ձիւ կօզլին, Կուսնարի գինեպանը, իւր պանդոկը

մտնող օտարականին՝ ծարած ճամբորդներու սփոփել՝ հետեւալ երկկարդեան երզը կ'երդէ :

Երբ յին էր վանդակին մէջ է ,
Չհաւորէն գինի ուր պէտք է :

որն որ , ինչպէս ամեն մարդ գիտէ՝ վիպասանութեան երկրորդ է- ջին վրայ կը գտնուի , ուսիկց կը յայտնուի թէ տիկին Անժելիք ընթերցասիրութեան մեծ ճաշակ չունէր :

Ամեն անգամուն որ այս երկու տողերուն կը հասնէր , սաստիկ քուն մը կօխելով վրան գիրքը վար կ'իյնար , և ասիկա անհրա- ժեշտ էր : Ուստի Անթոնին , որ այս ամենօրեայ մտափնջ վարժած էր , գիրքը գետնին տեսած ժամանակ՝ ժպտելով մ'ըստ .

— Ա՛հ , ահա Անժելիք որ Բէնէլ-օրէնի տղային յիսուներկրորդ տողը կը կարգայ :»

Սովորաբար Անթոնին , որ լուծենէ ու առանձնութենէ կը սարսափէր , երբ այս անկուսը տեղի ունենար , խիղջն ելնելով խնամակալուհին կ'արթնցընէր ու կ'սկսէր հետը շարժուիլ , որ- պէս զի քունը փախցընէ . բայց այս օր Անթոնին լուսադոյն կը հա- մարէր խորհիլ , ուստի զբքին վրայ անգամ մը նայելէն ետք , ա- ռանց տեղէն իսկ շարժելու , ձեռագործը առնելով իր մասած ու թեանց մէջ նորէն ընկղմեցաւ :

Բայց տիկին Անժելիք , որ սոյն օրը ամեն անգամի պէս խորունկ չէր քնանար , աչքերը բացաւ , շփեց , չորս զին նայեցաւ , Բէնէլ- օրէնի տղայի գետնէն վերցուց , գոցեց և կրակարանին վրայ դրաւ առանց միտք ընելու զոնէ յիսուներեքերորդ տողը կարդալու : տես- նելու համար թէ օտարականը ինչ կը պատասխանէ գինեպանին , ետքը ձեռքերը խաչաձև ստամոքսին վրայ դնելով , ձախ ճկոյթը աջին վրայ դարձուց , և հետեւալ բառը արտասանեց .

— Քնացայ :

— Այո՛ , իմ բարի Անժելիքս , քնացար բաւ Անթոնին , և եթէ կը բաղձաս կրնաս դեռ ևս քնանալ :

— Չէ՛ :

— Կարգա՛ւ ուրիմն :

— Ի՛նչ կ'ուզես որ կարդամ :

— Բէնէլ-օրէնի տղայի կարգա :

— Լմնցուցի :

— Այսինքն , ըստ Անթոնին ժպտելով , երկու տարի ամեն օր յիսուն երկու տող կարդացածդ վրայէ վրայ գնելով , ընդ ամենը գրե- թէ երեսուն վեց հազար տող պիտի ընէ եթէ աղէկ կը հաշուեմ , որ սոյն հատորին մէջ այնքան տող չպարունակէր . բայց զժբաղ- դարար , միշտ առջի յիսուներկու տողերն են որ կը կարգաս :

— Հոգ չէ , պատասխանեց տիկին Անժելիք , միշտ ժամանակ կայ վերջը տեսնելու :

Գրականութիւնը այս աչքով նկատող անձի մը՝ ի՛նչ պատասխան կը մնայ :

Անոր համար Անթոնին պատասխան չտուաւ , բայց իւր տրտում խորհուրդները ցրուելու համար , որ իւր սաստիկ սրտայուզութենէն մտքին առջև կու գային , ուզեց բան մ'ընել կամ խօսք մը խօսել տալ խնամակալուհուն :

Անթոնին չէր գիտեր թէ ի՛նչ ընէ . իւր ռիտքը էտմանի անուան վրայ կաշկանդուած էր :

Քանզի մեր գիւցազունը թէև ակամայ՝ սակայն անմիջապէս անոր սրտին գիմելով՝ յանդէտս երիտասարդուհուն արդահատութիւնը շարժեր էր , և անոր սրտին մէջ այն գաղտնախորհուրդ գոնեբէն մէկէն մտեր էր , որ իւր տարեկից կնիկները միշտ պատրաստ են բանալու :

Հասանական է , որ առջի իրիկուան պատահարէն ետք , եթէ էտմոն բարեկազմ , առողջ ու մեծահասակ պատանի մ'եղած ըլ- լար , Անթոնինի մտքին ու սրտին մէջ այնքան շուտ ճամբայ չէր գտներ , ու իւր առաջին այցելութենէն երկու ժամ ետք՝ նորատի օրիորդին խորհրդածութեանց ու արտմութեան առարկան չէր ըլլար :

Ուստի Անթոնին այս անսովոր մտատանջութիւնը՝ կարծեց թէ դուրս ելնելով ու քայլելով կրնար քիչ մը փարատել :

— Բարի Անձէլիքս, ըսաւ ոտքի վրայ ելնելով, երթանք պտըտինք :

— Ճշմարիտ որ օղբ գեղեցիկ է, ըսաւ տիկին Անձէլիք, ես ալ կ'ուզեմ :

Եւ ինքն ալ ըստ կարգի ելաւ :

— Ըսէ ինձ, սիրելի Անձէլիք, ըսաւ Անթօնին, գրեթէ առանց իմանալու որ այս հարցումը կ'ընէր, կուրծքի հիւանդութիւն ունեցողներ ճանչցած ես երբեք :

— Ինչո՞ւ :

— Ոչինչ : Ետքը կ'ըսեմ ինչու :

— Այո, ճանչցած եմ :

— Միթէ՞ ամենքն ալ կը մեռնէին :

— Ո՛հ, չէ : Աին մը կը ճանչնամ որմէ բոլոր բժիշկները յոյսերնին կտրած էին, և նա հիմա քեզի և ինծի պէս առողջ է :

— Եւ ինչ ըրաւ այս բանին համար :

— Երկու տարի Հարաւային կողմերը անցուց :

— Ատիկա միշտ յաջող պարման մ'է՞ :

— Չէ, բայց երբեմն :

— Աւրեմն պէտք է որ մեկնի, մըմնջեց Անթօնին :

— Ինչ կ'ըսես, հարցուց Անձէլիք :

— Կ'ըսեմ թէ, իմ սիրելի Անձէլիքս, պատասխանեց Անթօնին կարմրելով, երթայիր քովի սենեկէն վերարկուս բերելիք :

Հազիւ թէ տիկին Անձէլիք կուսակը դարձուց, որ գեղանի աղջիկը վրդովեալ սրտին զրգմանը անսալով, թերթ մը թուղթ առաւ և շտապաւ հետևեալ տողը գրեց .

«Հարաւային կողմը դացեք :»

Յետոյ թուղթը ծալլեց, կնքեց և Էամօն տը Բէրէօի հասցէն գրելով վրան՝ շուտ մը նամակը ծոցը պահեց նոյն միջոցին, որ տիկին Անձէլիք վերարկուով և փեղոյրով երեցաւ :

Անթօնին կը կարծէր թէ Էամօնը փրկելու միջոցը գտած էր : Կը մտածէր թէ այս պարզ տողով միայն երիտասարդը պիտի հասկընար թէ որչափ սնհրածեշտ է այս ճամբորդութիւնը ու պիտի

մեկնէր, և տիկին Անձէլիքը բարեկամուհւոյն պէս գէր ու առոյգ պիտի վերագառնար : Եւ սրտին բոլոր ամբութիւնը ոչ ապաքէն այս նամակին վրայ կը փայլէր : Այրիկեան մ'իսկ չտարակուսեցաւ թէ երիտասարդի մը զիր գրելը անպատեհ ըլլայ : Տիկին Անձէլիքի սորվեցուցած այս պարմանը զինքը յուսադրելով՝ իւր տխուր խորհրդածութեանց դուռը բացաւ, ուստի ինամակալուհին գրկելով ըսաւ .

— Երթանք, բարի Անձէլիքս, այս գեղազուարճ օրը վայելե՞նք : Անթօնին մեկնելու պատրաստ էր, տիկին Անձէլիք բողբոլին սևեր հագած՝ ձեռնոցները կը դնէր :

Երկու կիները վար իջան :

Երբ փողոցը մտան, Անթօնին աչքերը ասդին անդին ժուռ կ'ածէր թղթատուն մի տեսնելու . շատ շանցած մէկ հատ մը տեսաւ, և իսկոյն նամակը ծոցէն հանելով՝ զիմացէն անցած ասենին տիկին մէջ նետեց :

— Որո՞ւ է այդ նամակը, հարցուց տիկին Անձէլիք :

— Տելֆինի կը գրեմ, որ բաւական օրէ 'ի վեր չեկաւ զիս տեսնելու :

Տելֆին օրիորդ Տըվօի դպրոցական ընկերուհի մ'էր :

Այս առաջին սուսն էր որ Անթօնինի բերնէն ելաւ, և սակայն չզղջաց, ասոր հակառակ կը պանծար, իբր թէ բարեգործութիւն մ'ըրած ըլլար :

Եւ իրօք ալ բարեգործութիւն չէր. այս բանիս ապացոյց նոյն օրը բոլոր՝ Անթօնին սովորականէն աւելի զուարթ անցուց :

Երջանիկ հասակ, ուր սիրաբ սուղ միջոցի մը մէջ ուրախութենէ արամութեան կը փոխադրուի : . . . Գարնանային այն օրերուն կը նմանի, որ առաւօտուն անձրևով կ'սկսին ու իրիկուան գէմ՝ երիտասարդուհիք կրնան դաշտերուն մէջ վազվաւաւ, իբր թէ տարիէ մը 'ի վեր անձրև եկած չըլլար :

Թ

Այս միջոցին, Կիւսթավ Էտմոնի տունը եկաւ, ու անոր նա- մակը միայն գտնելով, ըսաւ իւրովի. «Ա՛րեւի թէ այս այսպէս պէտք էր ըլլալ անպատճառ» և անոր գալուն սպասեց:

Էտմոն ուրախ, զուարթ տուն մտաւ, ձեռքին մէջ Պ. Տըվօի գեղազիլը ոլորելով՝ որնոր անգամ մ'ալ իսկ չէր կարգացած:

— Է՛Տ . . . ըսաւ խստութեամբ մը Կիւսթավ զան տեսնելով, և այս այցելութեան համար կրած վրդովումը ծածկել չկարենա- նալով:

— Է՛Տ, Ի՛նչ, հարցուց Էտմոն խնդալով: Ինչո՞ւ այդպէս շփո- թեք ես:

— Պ. Տըվօն տեսա՞ր, շարունակեց Կիւսթավ բարեկամին ձայ- նէն քիչ մը ոգի առնելով:

— Բնականաբար, որովհետեւ անոր համար զուրս ելայ:

— Ի՛նչ ըսաւ:

— Ի՛նչ կ'ուզես որ բռէ: Ահա սա թուղթը տուաւ:

Կիւսթավ շուտ մ'առաւ զան ու կարգալով տեսաւ որ անկարե-ւոր հիւանդութեանց համար արուած կանոն մը կը պարունակէր. ուստի շունչ առաւ:

— Երթանք նախաճաշելու, ըսաւ, մայրդ մեզ կ'սպասէ:

— Երթանք, բայց գու. Ի՛նչ ունէիր ինձ ըսելու, որ պատուի-րեցիր թէ քեզ տեսնելէս առաջ չմեկնիմ:

Կիւսթավ շփոթեցաւ:

— Քեզի ընթրիքի պիտի հրաւիրէի, ըսաւ ըստ դիպաց:

— Ո՛ր:

— Նիշէթի տունը:

— Այո՞ Օ՛ր:

— Այո՞ օր:

— Յօժարակամ կ'ընդունիմ, այս է ամենը:

— Այո՞:

— Ուստի Նիշէթի տունը պիտի ընթրենք:

— Ուրեմն, նախաճաշէն անմիջապէս ետքը, երթամ իմաց տա- մը պիտի երթանք:

Երկու երիտասարդները տիկին ար Բէրէօի քով դացին:

— Պ. Տըվօի տունը պիտի երթայ՞, ըսաւ այս վերջինը համա- յուկ մը Կիւսթավին:

— Արդէն դացեր է, պատասխանեց Տօմոն:

— Ո՛Տ, Աստուած իմ, միմնջեց նորատի մայրը:

— Սրտեղնիդ հանդարտ բռնեցէք, տիկին, Էտմոն վախնալու- քան մը չունի:

— Ի՛նչ ըսեր է բժիշկը:

— Խորոված միս ու Պօրտոյի դինի պատուիրեր է, ըսաւ Կիւս- թավ ժպտելով, և այս այնպիսի մարդու մը պատուէրն է որ պա- տուիրել միայն դիտէ:

— Շնորհակալ եմ, բարեկամս, ըսաւ տիկին ար Բէրէօ ոիրաւ առած, ու Կիւսթավին ձեռքը սեղմեց:

— Ի՛նչ կը փոխաք, գոչեց Էտմոն մօրը ու բարեկամին մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը ակնարկելով, հայէ՛, մայր իմ, այս օր Կիւսթավ Ի՛նչ զուարճալի կերպարան մ'ունի:

— Մօրդ կը հարցընէի, ըսաւ Կիւսթավ, եթէ կ'ուզէ որ զքեզ հետ տանիմ ընթրելու:

— Եւ ես ալ կը պատասխանէի Կիւսթավին թէ քու ամեն զուար- ճութեանցդ սիրով կը յօժարիմ, յաւելցուց տիկին ար Բէրէօ որդ-ւոյն զլուխը երկու ձեռաց մէջ առնելով և բոլոր ուժով զան համբուրելով:

Արդ ամենքն ապահոված՝ Էտմոնի Պ. Տըվօի տունը ըրած այ- ցելութեան վրայ աներկիւզ կրնային խօսակցիլ, ուստի մայրն ինք- նին աղաչեց որդին, որ ամեն ինչ պատմէ, որնոր Էտմոն մեծ հա- ճութեամբ ընդունեց, քանզի յանչափս կը փափաքէր Անթօնինի վրայ խօսել:

Նախաճաշէն յետոյ, Կիւսթավ՝ Էտմոն մօրը հետ առանձին թող-

լով՝ Նիշէթի տունը վազեց, որ ըստ սովորութեան պատուհանին քով նստած կ'աշխատէր :

Էտմօն այսօր մեզի հետ պիտի ընթերէ, ըսաւ ներս մտնելով :

— Ինչու առաջուց չիմացուցիր, ըսաւ Նիշէթ քիչ մը սրդողած, լաւ ընթերք մը չպիտի գտնէ :

— Հոգ մ'ընէր, պատասխանեց Վիւթավ թարփուհւոյն դեղապանձ զլուխը բռնելով ու երկու այտերէն համբուրելով՝ հիմա կ'երթամ ընթերքը կը զրկեմ : Գու միայն ամանները, սնակները, անձեռոցները ու արծաթեղէնները պատրաստէ : Այս ամենը ունիս այնպէս չէ՞ : Ասկէ զատ Էտմօնի համար ալ երկու կտոր կողիկ պէտք է :

— Այդ ամենը, միթէ պէտք եղածէն իսկ աւելին չունիմ, ըսաւ դեղանի աղջիկը ըստ կարգի Վիւթավը համբուրելով : Ոչ ապաքէն քու շնորհիւ աշխարհի ամենէ բարեբաստիկ կիներն եմ :

Եթէ մէկը ուզէր նորատի, ազատ, երջանիկ ու անկախ սիրոյ տեսարանը տեսնել, Նիշէթի դուռը բանալով պէտք էր պահ մը նկատել թէ իւր երկու ձիւնաթոյր ձեռքերն ինչպէս փաթթուած էր իւր սիրած անձին վիզը :

— Այսպէս ժամը վեցին ամեն ինչ պատրաստ պիտի ըլլայ . . . աւելցուց Վիւթավը երթալով :

— Հանդարտ եղիք, բայց քու զրկելիքդ ալ շուտ զրկէ :

Վիւթավ վար իջաւ : Փողոցին մէջ ետին դարձաւ և սիրուհւոյն խարտեաշ զլուխը տեսաւ, որ պատուհանին վրայի ծաղկանց շարքին մէջէն կը ժպտէր իրեն :

Ուտեստ ծախողի մը խանութը մտաւ ու պէտք եղածը ապսպրեց : Ետքը ժամը հինգին գնաց Էտմօնը առնելու, որ նստէր մօրը ընթերքացանութիւն կ'ընէր առջի իրիկուան փնտած զբքին մէջ : Քանի մը վայրկեանէն երկու երիտասարդները գէպ 'ի Կօսօ փողոցը ուղևորեցան :

Ընթերքը Նիշէթի սենեկին մէջ պատրաստ գտան :

Օղը պայծառ էր, բայց պատուհանէն արեւուն ճառագայթները ներս թափանցելով՝ բիւրեղեայ անօթներուն ու ձերմակ սփռոցին վրայ կը բեկրեկէին : Երեք մանկամարդներուն շուրջը ամեն ինչ

թէ և պարզ՝ բայց զուարթ, համեստ՝ բայց սքանչելի էր . երիտասարդական, զարնանային, սիրոյ ու առուգութեան անուշարու թիւն մը կը ծաւալէր այս պղտի սենեկին մէջ :

Բայց պիտի ըսէք թէ Վիւթավ հարուստ էր : Ինչո՞ւ ուրեմն իւր սիրուհին այն անշուք տան մէջ թողուցեր էր, ու իւր հարստութեան և աստիճանին համեմատ աւելի ընդարձակ բնակարան մը չէր վարձած :

Որուն ես ալ պիտի պատասխանեմ թէ ճիշդ անոր համար որ Վիւթավ հարուստ էր, կը սիրէր իւր սիրուհին ու կը սիրուէր անորմէ, զան իւր գտած տեղը թողուցեր էր, միայն կարևոր պէտքերը անոր շոյալելով :

Այսպէս, Նիշէթ իւր տարեկան երեք հարիւր ֆրանքնոց պղտի բնակութեան մէջ, այն ամեն պիտոյքները ունէր՝ որոնցմէ շատ կնիկներ իրենց փառաւոր բնակարաններու մէջ զուրկ են : Չե՞րք միշտ բաւական ստակ ունէր :

Ասկէ զատ պարզասէր ըլլալուն, խիստ քիչ կը վատնէր, բայց ձերմեղէններու ու զգեստներու առատութիւն ունէր, որ ինքնին կը յարգարէր շատ վայելուչ կերպով : Եթէ շատ գոհար չունէր այն էր թէ չէր փափաքած, և եթէ տակաւին աշխատութիւնը ձեռքէ չէր թողած, այն էր թէ սրտային հաշուով մը միշտ աշխատիլ ուզած էր :

Թէ և Վիւթավ իւր տարփաւորը ըլլալուն պէս, ուզեր էր Նիշէթը տունէն հանել և ընկուզափայտի կարասեաց տեղ՝ վարդափայտի կարասիներ, մէրինօ շալերու տեղ՝ Հնդկաստանի քաշմիր ու աշխատութեան տեղ՝ ծուլութիւն փոխանակել . բայց Նիշէթ այս փոփոխութեան հաճութիւն չտալով ըսած էր Վիւթավին .

«Եթէ զիս իմ անձիս համար կը սիրես, հոս սիրէ՞ : Թող որ այն ամենը միայն ընդունիմ քեզմէ՝ ինչ որ չեմ կրնար մերժել, և ինչ որ քու շոյալութեան ու բարեկեցութեան սովորութիւններդ կը հարկադրեն զքեզ ամեն տեղ գտնելու : Ես հոս երջանիկ եմ ու քիչ բանով ամեն ուզածս ունիմ : Այս պղտի բնակարանին մէջ քու կենակցութիւնդ եմ, ուրիշ աւելի փառաւոր տան մը մէջ ուր շատ ստակ ծախք պիտի ընես, հասարակաց կիւն մը պիտի ըլլամ : Ամեն օր

եկուր զիս տեսնելու, ահա իմ բոլոր բաղձանքս և թող ինձ այն սնափառութիւնը որ կարենամք սեղու թէ շահու համար չէ որ զքեզ կը սիրեմ:

Վիւսթավ Նիշէթի խօսքերուն ճշգրտութիւնը ըմբռնելով, բերկրութեամբ ընդունեց այս պայմանը, քանզի հասկըցաւ թէ իւր սիրուհին բարեխրատ ու զիւրագորով ոգի մը կը կրէր: Ուստի ալ ևս չպնդեց, հապա միայն ուզեց որ Նիշէթի բոլոր պիտոյքները ու ճաշակները զոհացընելով՝ զան Բարիզի ամենէ երջանկաւէտ կիճն ընէ, և ստոյգ ալ եղաւ:

Եթէ տեսնէիր առաւօտուն անոր կանուխ արթննալը, կրակարանին վրայի հայիլին ժպտիլը, պատուհանը բանալը, ծաղիկներուն ջուր տալը, հաղուիլը, խոպոպիքները շինելը, քանզի Նիշէթի մաղերը իւր մեծ պջրանքն էին, իւր պզտի սենեկին ամեն խորշերը երթալը և վերջապէս անուխն վրայ նստելով աշխատիլը, պիտի կարծէիր թէ թուչուն մ'էր իւր վանդակին մէջ:

Նիշէթ ընթերցում ալ կ'ընէր, բայց ոչ երբէք այն շուայտ ընթերցանութիւնները որ սովորաբար խենէշ կանայք կ'ընեն: Ասիկա ընտիր հեղինակութիւններ միայն կը կարգար, և այս բանիս մէջ Վիւսթավ զինքը կ'առաջնորդէր, որ ընտիր և մաքուր ճաշակ մ'ունէր:

Վիւսթավի չեկած իրիկունները կարգալով կ'անցընէր, բայց կարգալու ժամանակ անպատճառ կ'ուզէր բան մ'ուտել, ուստի շարունակ շաքարեղէն կը նետէր բերանը, զորոնք Վիւսթավ կը հայթայթէր իրեն:

Գրեթէ ամեն անգամ Վիւսթավ շաքարանուշ ու սառած շագանակ կը բերէր հետը, որոնք Նիշէթի երկու անժուժկալութիւններն էին և որչափ իւր ընթերցումն յուզուէր՝ այնչափ աւելի կ'ուտէր: Փշէփէփէ « Պեքըլէթի կարդացած ատեն տուփ մը շաքարախառն պտուղ կերած էր:

Նիշէթ ամեն բան կ'ըմբռնէր ու անոնց վրայ կը խօսէր: Թէև սխալ ուղղագրութեամբ, սակայն սքանչելի ոճով նամակներ կը գրէր: Ուր կ'երթար Նիշէթ ինքն ալ չէր գիտեր: Իւր ամենէ լաւ

գիտցածը այն էր՝ թէ Վիւսթավ ազնիւ սիրտ մ'ունէր և թէ ինքը զան խանդալատանօք կը սիրէր, բայց անկէց անդին չէր հեռատեսէր. իւր ապագան Վիւսթավի զինքը տեսնելու եկած ժամն էր:

Նիշէթ ոչ հայր ունէր, ոչ մայր և ոչ ընտանիք: Ասոնք ամենքն ալ իւր աշակերտութեան ժամանակ մեռած էին, և այն դերձակուհին որուն քով կ'աշխատէր զան առաջին գործաւորուհի ընելով՝ իւր սունը պահեց:

Սակայն որ մը Նիշէթ ուզեց ազատ ըլլալ. սղտիկ սենեակ մը վարձեց և նոյն օրէն ՚ի վեր տեսարանը առանձին չէր երևնար: Եթէ մէկը Նիշէթի այն ժամանակուան վարմանց վրայ ճիշտ տեղեկութիւններ ուզէր ստանալ, Լատին փողոցը ըմպելեաց ժողովետղի մը մէջ ուսանողէ մը կընար զիրութեամբ հասկընալ: Բայց ինքը անցեալը կը մոռնար, կամ դէթ Վիւսթավի սիրահարեղէն ՚ի վեր ամեն ջանք կ'ընէր զան մոռնալու, և ստուգիւ ալ ինչ յանցանք ունէր խեղճ աղջիկը՝ եթէ Տօմօն յառաջադոյն իրեն պատահելու բարեբաղդութիւնը չէր ունեցած:

Ասկէ զատ, Վիւսթավ բնաւ անորմէ հաշիւ չէր փնտեր, քանզի անցեալը իրեն չէր պատկաներ, իսկ ներկային վրայ ապահով էր:

Մանաւանդ թէ ինքն ալ անորմէ աւելի չէր մտածեր ապագային վրայ: Սակայն երբ հաւանականութեանց վրայ խորհելու ըլլար կ'ըսէր ինքնիրեն «Երբ ամուսնանամ ան ատեն կը թողում միայն Նիշէթը, բայց և այնպէս կը բարւոքեմ իւր վիճակը որ բոլորովին հանդիստ կեանք մը վարէ:»

Ուստի երկուքն ալ զիրար աներկիւղ, անսասան, ուրախ ու վստահ սիրով մը կը սիրէին:

Նիշէթի՝ Վիւսթավի վրայ ունեցած սիրոյն մէջ յարզ ու երախտագիտութիւն կար. իսկ Տօմօնի՝ իւր տարփուհւոյն վրայ կըրած զգացման մէջ՝ քաղցր պաշտպանութիւն մը և արդար սնափառութիւն: Նիշէթ ինքզինքը խիստ բարեբաղդ կը համարէր այսպիսի ազնիւ բնաւորութեան մը հանդիպելուն. և Վիւսթավ մեծ երջանկութիւն կը սեպէր իւր սիրար այսպէս բարեխրամար տեղ մը զետեղելուն:

Ախրսթավ կ'ուզէր որ Էտմօն ալ Նիշէթի պէս աղջիկ մը դսնէ, որուն և Էտմօն ալ կը փափաքէր, բայց իր գիւցաղնուհւոյն համարձակ բնաւորութեանը զուգահաւասար անձ մը անմիջապէս միևնոյն միջնորդարին մէջ գտնելը դժուար է: Ահա ինչու համար, անպաճոյճ բնակարանի մը մէջ Տօմօնի սիրուհին անոր բարեկամը կ'ընդունէր:

Նոյն օրը Նիշէթ բեհեգեայ կատոյտ, նորը ու թափանցիկ շրջազգեստ մը հագեր էր: Այս հանդերձը՝ որուն թեւերը մինչև արմուկները կը հասնէին, այնպէս վայելուչ կերպով շինուած էր, որ երիտասարդուհւոյն բազկայ ու կուրծքին գեղափայլապատկութիւնը կը տեսնուէր: Գլուխը իւր սովորական պղտի գտակներէն մին գրեթէ՝ ու վիզը աւանդական թաւշեայ ժայռաւէն մը կը կրէր:

— Բարի լոյս, Էտմօն, ըսա՛ւ անոր բազկայը մէջ ցատկելով ու զան համբուրելով:

— Բարի լոյս, սիրուն պղտիկս, այս օր մեզի հացկերոյթ մը կու տաս:

— Եւ ի՞նչ հացկերոյթ: Եթէ մինակ ուտելի ութ օրուան կերակուր պիտի ունենայի:

— Ըսածս ընել տուի՛ր, հարցոց Ախրսթավ:

— Էտմօնի համար երկու կողիկները, այո՛:

— Ինչու համար այդ երկու կողիկները, հարցոց տը Բէրէօ ծիծաղելով:

— Քանզի խորված միս ուտելու պատուէր ունիս: Ար տեսնես ինչպէս բժշկիդ կանոնադրութիւնը ճշտիւ կը գործադրեմ, որ զուարդէն մոռցեր ես:

— Միթէ Էտմօն հիւանդ է, հարցոց ցաւակցութեամբ մը Նիշէթ:

— Չէ, պատասխանեց Ախրսթավ, ասիկայ իրեն պատահած անցքի մը յարաբերութիւն ունի, որն որ իրեն խորված միս կերցընելով կ'ուզեմ յիշել ապա երբ որ մոռնայ:

— Այդ պատմութիւնը ինձ պիտի պատմես:

— Երբ սեղան նստինք:

— Նստինք ուրեմն, քանզի ամեն ինչ պատրաստ է:

Իբրբեք երեք կոչնականներուն քով ուրիշ սեղան մ'ալ կար, որուն վրայ գրուած էին կերակուրները, սնակներ, շիշեր և այն ամեն կարևոր իրերը՝ որ ձեռքի տակ ունենալու է երբ մէկը առանց սպասուորի ընթրէ:

— Նայինք, ըսաւ Նիշէթ, եբբ ուտելու սկսան, մտիկ կ'ընեմ: Էտմօն կէտ աւ կէտ Անթօնիին հետ ունեցած դիպուածը պատմեց:

— Ո՛հ, բայց պատմութիւնը խիստ զգայական է, ըսաւ Նիշէթ:

— Այո՛, վրայ բերաւ Էտմօն, բայց արդէն կ'սկսիմ վճառել և չեմ գիտեր թէ ի՞նչ ընեմ գիւցաղնուհւոյն նորէն տեսնելու համար:

— Եւ սակայն խիստ դիւրին է, ըսաւ Նիշէթ, քանի որ տանը մէջ մուտք ունիս, շարունակ դոս մինչև որ օր մը իրեն հանդիպիս:

— Բայց եթէ զան տեսնեմ իսկ, միշտ մէկու մը ներկայութեանը պիտի ըլլայ:

— Թո՛ղ ըլլայ: Միթէ բերնի տեղ աչքեր չկան: Երբ անգամ մը ձեր նայուածները մէկ մէկու ըսեն թէ զիրար կը սիրեն, է՛հ բոլոր աշխարհի կամաց հակառակ՝ բերնով ըսելու միջոցը պիտի գտնէք:

— Գժրազգարար, սիրելի Նիշէթ, ըսաւ Ախրսթավ գու կը կարծես թէ օրիորդ Անթօնիին քեզի պէս ազատ է: Գիցուք թէ Էտմօն ու Անթօնիին սիրուին ու խօսակցին, բայց միշտ իրենց սիրոյն միջևը հայր մը պիտի ըլլայ:

— Լաւ ուրեմն, եթէ Էտմօն սիրահարած է, օրիորդ Անթօնիինը թող իր հօրմէն խնդրէ, քանզի մեր բարեկամը խիստ պարկեշտ ու զգայուն ըլլալուն զիտեմ որ գժուար ու մեծածախ սէրեր ունենալ չուզէր, և այս բանս եթէ Սպանիոյ մէջ գիւրբին է զործադրելը բայց Գաղղոյ մէջ խիստ դժուար: Ուստի Էտմօնի, առաքիլի Էտմօնի սէրը բարի դիտաւորութիւն միայն կրնայ ունենալ:

— Իրաւունք ունի, ըսաւ Էտմօն ժպտելով, բայց և այնպէս շատ զգայուն ըլլալուս համար կուզէի այս ամենութեան իբր յառաջաբան՝ քիչ մը սիրաբանութիւն ընել: Ար ստիկամ ամենուն պէս նօտարի մը ու օժտի մէջ սեղը կարողուելու: Գիտեմ որ վերջապէս այդ-

պէս պիտի լմենայ, բայց հոն հասնելու համար ուրիշներու բռնած ճամբէն աւելի նոսանշան ու տարբեր ճամբայ մը կ'ուզէի հետեիլ:

— Այսինքն Պօղ և Վերդինէի երկրորդ տպագրութիւն մը, ըստ Նիշէթ:

— Ճիշտ այդպէս, դրապէտ կին, պատասխանեց Էտմոն ինքն ալ ժպտելով, սակայն ՚ի բաց առեալ Սէն-Թէրանի ալէկոծութիւնը:

— Է՛հ, ես ալ կին եմ, ըստ Նիշէթ, և ինչ որ ալ ըսէ Աիւսթալ՝ որ կը կարծէ թէ մենք պճնուհիքս՝ ազնուատոհմ օրիորդի մը սիրտը չենք կրնար ճանչնալ, եթէ կ'ուզես, Էտմոն, քեզ խրատ տամ. քանզի ես ընդ հակառակը կը հաստատեմ թէ ամեն կանայք սրտով իրար կը նմանին, անշուշտ եթէ ունենան սիրտ մը:

— Ա՛րնդունիմ խրատներդ, բարի Նիշէթս, ըստ Էտմոն, ձեռքը համբուրելով, քանզի չկայ կին մը որ քուկինէդ ազնիւ սիրտ մ'ունենայ:

- Շատ աղէկ: Կը լսես, Աիւսթալ:
- Եւ կը դուլեմ, վրայ բերաւ Տօմոն:
- Արդ, սիրելի Նիշէթս, հիմա որ զիտես թէ դէպքերը ինչ վիճակի մէջ են, ի՞նչ կը խրատես:
- Այս օր ի՞նչ է, հարցուց Նիշէթ:
- Շարժ:
- Է՛հ . . . ըստ Նիշէթ:
- Է՛հ, ի՞նչ:
- Չեն գուշակեր:
- Չէ:
- Վաղը կիրակի է:
- Այո՛:
- Անթոնինի պէս նորատի օրիորդները ի՞նչ կ'ընեն կիրակի

օրը:

- Գիտեմ ես:
- Պատարազի կ'երթան. և աշխարհիս բոլոր վիպասանութեանց մէջ սիրահարները ո՛ր կը տեսնուին իրենց սիրուհեաց հետ. Եկե՛

զեցին: Ուստի իմ սիրելի Էտմոն, վաղը առտու Սէն-Թօմաս-ա՛ւ՛քէնի եկեղեցի գնա՛, որ Լիլ փողոցի ամենէն մօտն է. անտարակոյս օրիորդ Տրվոն պիտի տեսնես հոն, որ շուտ մը պիտի հասկընայ թէ եկեղեցի երթալուդ պատճառը իրմէն սիրուելու համար Աստուծոյ աղաչել է: Ամէն կիւրակէ գնա՛ եկեղեցի, և երբ Պ. Տրվոի տունը վերադառնաս աղջիկը քու վրայ խորհելու ժամանակ ունեցած պիտի ըլլայ, ինչպէս որ քու տարիքդ, քու հասակադ, քու աչքերովդ երիտասարդի վրայ կը խորհին, այնպէս որ իրեն հետ խօսեցած օրդ, ըսելիքներդ երկար ատենէ ՚ի վեր արդէն ըսած պիտի ըլլաս: Եսքը . . .

- Նիշէթ վարանեցաւ:
- Չեն շարունակեր, ըստ Էտմոն:
- Երբ նայիս որ օրիորդ Անթոնինը շեռ սիրեր, ի՞նչ պիտի ընես, յարեց Նիշէթ, և այս խօսքը ըսած ժամանակ որոշ կը տեսնուէր որ մտքէն անցածը չէր յայտներ:
- Հօրը տունը ալ չեմ երթար:
- Կը խոստանաս:
- Կը խոստանամ. բայց ինչո՞ւ այդ խոստումները:
- Քանզի գուցէ մնափառութենէ շարժեալ՝ խնդրես անորմէ ինչ որ սիրով միայն պահանջելու է, և առանց զան սիրելու իւր տարփաւորը ըլլալու աշխատիս: Ատիկա դէ՛լ բան է, Էտմոն, քանզի անոր բոլոր կեանքը քու հաճութեանդ զոհել է:
- Հանգարտ եղիք, Նիշէթ, ես կարծածէ՛դ աւելի պարկեշտ եմ:
- Ան ատեն իմ պաշտպանութեանս վրայ կրնաս վստահիլ. քանզի կը հասկընաս որ միայն պարկեշտ սէրերու կրնամ ծառայել, կրկնեց Նիշէթ ծիծաղելով:
- Կրնաս ուրեմն ինձ ծառայել:
- Անշուշտ:
- Ի՞նչպէս:
- Օրիորդ Անթոնին գլխարկ ու գդակ կը հագնի, այնպէս չէ՛:
- Հարկաւ:

— Լաւ , պիտի տեսնես թէ նորեւոյ ծախող Նիշէթ ինչ միծ
օգնութիւն պիտի ընէ քեզ , և թէ քիչ մը ետքը քեզի ըրածէն ինչ
պէս շնորհակալ պիտի ըլլաս :

Ժ

Արդարև , պէտք էր Անթոնիին պէս աղնիւ , զգաստ ու անմեղ
անձ մը ըլլալ , անձանթ երիտասարդի մը այնպիսի նամակ գրելու
համար , ինչպէս որ նա գրած էր Էտմոնի : Նախ պէտք էր երևակա-
յել որ Էտմոն կրնար ծածուկ համակրութեամբ մը միջամուխ ըլլալ
այն ամեն խորհրդածութեանց՝ որ առտուքնէ ՚ի վեր իւր միտքը կը
պրտորէին և հօրը յայտնած հիւանդութեան տեղեկութիւն ունենալ՝
որուն համար կը տաղնապէր . վերջապէս անկարելիութիւն մը պարտ
էր ընդունել : Բայց նա առանց իրաւաբանելու իբր իւր խորհրդոցը
կարևոր իր մը գրած էր այն նամակը , կամ լաւ ես այն տողը : Ասի-
կա պարզմտութենէ ալ վեր էր , ամենայն կատարելութեամբ տղա-
յութիւն մ'էր :

Գծրազգաբար այս տղայութենէն շատ հետեանք կրնար ծագիլ ,
զոր օրինորդ Տրփօ չէր նախատեսած :

Նախ Էտմոն կրնար այս անուան ազգարարութիւնը՝ զան թեւա-
գրող զղացումը չճանչնալով իբր անվայել կատակ մը նկատել . երկ-
րորդ եթէ Պ. տը Բէրէօ կ'ասկածէր նամակին ուսկից գալը , Պ. Տրփօի
իւր ազնւան ըրած յայտնութիւնը չզիտնալով՝ ՚ի նպատա իւր նորա-
ծին սիրոյն պիտի թարգմանէր զան . վերջապէս եթէ նամակը Ան-
թոնիին գրած մտքով կարդալով իւր հիւանդութեան ծանրութիւնը
իմանար և շատ մեկնելու կարևորութիւնը զգար , ոչ ապաքէն Ան-
թոնիին գործածած միջոցը խիստ անհետեւ թէ պիտի սեպուէր , որն

որ Էտմոնի սիրոյն համար այս բանս պէտք էր կրցածին չափ պահել
անորմէ :

Երիտասարդուհւոյն մարէն այս պատահականութեանց և ոչ մին
կ'անցնէր : Գարձեալ կը կրկնեմ , որ Անթոնիին ճշմարիտ տղայ մ'ըլ-
լալով նորածին սրտի ամենայն անխորհրդութեամբ գործեր էր :

Սակայն երբ իրիկունը իւր սենեակը առաձնացաւ , աղջկանց այն
յատուկ եղած արագ զգացողութեամբ , ըսաւ ինքնին , « Այս պահուս
Պ. տը Բէրէօ նամակս ընդունած պիտի ըլլայ » և ստուկայ իւր ըրա-
ծէն :

Յանկարծ միտքը շրջեցրնելով , ՚ի սկզբն խիստ պարզ երեցած
իրողութիւնը մէկէն ՚ի մէկ արգիլեալ պատուէր մը , նորատի աղջ-
կան մը անձանթ պատանւոյ գրած նամակ մը տեսաւ միայն ու իս-
կոյն այս թեթևամտութենէն ծագելիք հեռեանքները չափազանցեց :

« Ինչ պիտի խորհի իմ վրաս , կ'ըսէր ինքնիրեն : Գուցէ պիտի
կարծէ թէ հարաւային կողմը ճամբորդութիւն ընելու գիտաւորու-
թեամբ ինձ հետեւելու կը հրաւիրեմ զինքն ալ : Գուցէ պիտի կարծէ
թէ վախնալով որ զինքը չսիրեմ կը հրամայեմ որ մեկնի : Գուցէ
պիտի կարծէ որ ուրիշ մը կը սիրեմ , վերջապէս այն ամեն բաները
պիտի կարծէ որոնք բնաւ գոյութիւն չունին , որովհետեւ հայրս ըսաւ
թէ իւր հիւանդութեանը վրայ ծանօթութիւն չունի , ուստի անկարե-
լի է որ այս նամակը ճիշտ ըմբռնէ : »

Այս ամեն խորհուրդներու մէջ տատանելով պահ մը իսկ չտա-
րակուսեցաւ որ Էտմոն շուտ մը չգուշակէ թէ նամակը որմէն եկած
ըլլայ ,

« Ինչո՞ւ այս նամակս գրէի , կը շարունակէր : Է՛հ Ատտուած իմ , զիս
սիրող այս երիտասարդը փրկելու համար գրեցի , բայց ո՞վ ըսաւ որ
կը սիրէ զիս , Ո՞վ : Տարօրինակ բան մը որ ներսի զիս կ'զգամ , ձայն
մը որ կ'անցողք մը անոր անունը ինձ կու տայ : Ինչո՞ւ ուրեմն ինձ
պիտի հետեւէր , ինչո՞ւ այս առտու հոս պիտի գար և ես ինչո՞ւ իրեն
պիտի գրէի , եթէ գոնէ իմ արգէն կրած համակրութիւնս ինքն ալ
չզգար : »

Անթոնիին մտատանջութեանց վրայ թող մեր ընթերցողները

չզարմանան : Առջի օրուան դէպքը մէկէն 'ի մէկ իւր կենաց միաձայն ներդաշնակութիւնը ընդմիջեր էր :

Տակաւին չէ թէ միայն մէկը իրեն սիրոյ խօսք մը չէր ուղղած , այլ նաև իւր կինը ըլլալն ու սիրելու հակամիտութիւն ունենալն իսկ ցարդ աննշմարելի էր մնացած : Հետևապէս Էտմօն առաջինն էր , թէև առանց խօսելու՝ այս տարփական յայտարարութիւնը իրեն ընդողը :

Իրօք ալ կնոջ մը ետևէն երթալը , անոր անունը հարցընելը և անմիջապէս երկրորդ օրը անոր ընտանեաց ներկայանալու միջոց մը գտնելը , միթէ սիրոյ կատարեալ խոստովանութիւն մը չհամարուիր : Եւ ապա այս նկրտած ջանքերէն եթէ ցաւազին դէպք մը ծագի , ոչ ապաքէն խիստ բնական է որ վիսպական ու գորովալիք երիտասարդուհին՝ ինչպէս որ են սովորաբար ամեն երիտասարդուհիք դպրոցէն ելած ատեննին , այս դէպքը՝ որուն առարկան ինքն է՝ իւր մտածութեանց յարատև զբաղանքը ընէ : Մանաւանդ թէ Անթօնին իւր նամակագրական անխոհեմութեան դժնդակ հետևութիւնները մտածելով՝ նախ սարսափեցաւ , բայց յետոյ ոչ միայն կամաց կամաց վարժեցաւ այս բանիս , այլ նաև նամակը գրելուն վրայ նոյն իսկ անոր հետևութեանց համար սքանչացաւ :

Ո՛ւր կը գտնուի տասնևվեց տարեկան աղջիկ մը , որ իւր կեանքը մէկէն 'ի մէկ վիսպասանական զուգութիւն մը ընդունելուն վրայ չհիանայ :

Ուստի այսպէս ըսելով քնացաւ . « Ի՞նչ պիտի ընէ նամակս առած ատեն : Արջապէս անշուշտ բան մը պիտի ընէ , ո՛հ որչափ կը փափաքէի որ շուտ վաղը ըլլար : »

Պոստեր էր արդէն որ Էտմօն երկու երեք տարի միայն ունէր ապրելու և այս պատճառաւ էր որ նոյն գիրը զրած էր անոր :

Երիտասարդուհեաց սիրտը ակննակիտ բիւրեղ մ'է , իւր հազարաւոր անկիւնաւոր երեսներուն վրայ իր առջևէն անցած հազարաւոր իրերը կը բեկբեկին առանց մէկուն դրոշմը պահելու : . . .

Արդ Անթօնին ծիծաղելով քնացաւ , իւր կանթեղն իսկ մարելաւ մտնալով : Առաւօտեան ժամը երկուքին տիկին Անթէլիք , որ գոր-

ծունեայ կին մ'էր արթնալով եկաւ նայելու թէ ինչո՞ւ համար Անթօնին մինչև այն ժամը կանթեղը վառած կը պահէր ու զան փչեց :

Իսկ Էտմօն՝ արթուն կը հսկէր , բայց երջանիկ կը հսկէր ինչպէս որ Անթօնին երջանիկ կը քնանար :

Նիշէթի տունը Կիւսթավի հետ ըրած ընթրիքէն ետքը , կառք մը բռնելով , երեք բարեկամները մայիս ամսուան նոյն շքեղ իրիկունը Շանգ-Էլիզէ պտըտելու գացեր էին ու անկէջ ալ Պուլսօնի անտառը : Նիշէթ Կիւսթավի ուսին վրայ պառկած՝ Էտմօն կառքին առջևը նստած՝ տարփուհոյն սղօտի ոտուրները կը դիտէր , զորոնք առջևի բարձրուն մը բրկնցուցեր էր :

Գեռատի կինը ու Կիւսթավ ցած ձայնով այն բառերը իրարու հետ կը փոխանակէին զորս առանց լսելու կը գուշակէ մարդ , և իրիկուան քաղցր սիւքը ծաղիկներու անուշահոտութեան և թուշուններու երգերուն հետ կը տանի :

Նոյն միջոցին Էտմօն Անթօնինի վրայ կը խորհէր , և կ'ըսէր թէ օր մը Աստուծոյ ողորմութեամբը կրնար ինքն ալ զան իւր բազկաց մէջ գրկել , ինչպէս Կիւսթավ Նիշէթը , և թէ իւր բարեկամին պէս գուցէ անորմէ ալ աւելի երջանիկ ըլլար :

Երկու ժամ շրջադայութենէ ետքը , Կիւսթավ ու Նիշէթ տուներնին թողուց և իւր բարեկամին « Վաղը տեսնուինք » ըսելէն ետքը՝ մօրը տունը մտաւ :

— Հազիւ թէ ոտքը սանդուխին առաջին կոխարանին վրայ գրեր էր , դռնապանը Անթօնինի նամակը տուաւ իրեն :

Էտմօն զան բացաւ առանց կասկածելու թէ որմէն կու գայ և ինչ կը պարունակէ :

Ուստի երեք անգամ՝ այս խորհրդաւոր ազգարարութիւնը կարգաց առանց հասկընալու :

« Հարաւ դացէք . » կը կրկնէր անդադար ու բառերը կը մանրակտէր , որպէս զի անոնց բուն միտքը ըմբռնէ , ինչ կը նշանակէ ասիկա :

Էտմօն այսպէս հայլիին դիմացը առանց փեղոյրն իսկ հանելու՝ Անթօնինի նամակին վրայ կը խորհրդածէր :

Օրիորդին անունը դեռ միտքը չէր եկած . ասիկա մտքին մէկ հանդամանքն է , որ առանց իւր խիտա մօտն եղածը զիւրու թեամբ գտնելու միշտ հեռուները կ'երթայ կը վնասէ . սակայն այս նամակը նշանակողը գարձեալ օրիորդ Տըվօի անունն էր միայն , որ բոլոր օրը Էտմոնի միտքը դրսեւան էր ; այսպէս պատանին տեսակ մը դառանցման ներքե՛ , քանի մ'անգամ ձեռքը բռնած թուղթը սկսեց թռկոյնել , իբր թէ անունը դեռինը ձգելու համար :

Այս միջոցին իւր գուռը զարկին :
 — Մտիւր , ըսաւ առանց դառնալու՝ կարծելով թէ իր սպասուածըն էր որ սենեկին մէջ բան մը վնասուելու կու գար :

— Այդպէս ուշադրութեամբ ինչ կը կարդաս , սիրելի զաւակս , ըսաւ տիկինն ար Բէրէօ գլուխը որդւոյն ուսին վրայ գնելով :

— Ա՛հ , բարի մայր իմ , ըսաւ Էտմոն , ներէ , չէի դիտեր որ գուռը զարնողը դու ես , նամակ մը կը կարդամ որ զիս կ'ապշեցնէ , քանզի չեմ գիտեր թէ ո՛ւսկից կու գայ և ինչ կը նշանակէ : Եթէ կրնաս ինձ բացատրել , մեծ շնորհով թե՛նք մը պիտի ազատես զիս :

— Նայինք , ըսաւ տիկինն ար Բէրէօ :
 Էտմոն նամակը մօրը երկիցուց : Հազիւ թէ տիկինը կարդացնոյն տողը , որ երեսին գոյնը նետեց : Այս գունաստութիւնը Էտմոնի աչքէն չսրծաւ :

— Ինչ եղար , մայր իմ , գոչեց :
 — Ոչինչ , թոթովեց տիկինն ար Բէրէօ , ժպտելու փորձ մ'ընելով , ոչինչ , սիրելի զաւակս , քանի մ'ատենէ 'ի վեր այս յանկարծական գունաստութեանց ենթակայ եմ . արիւնս է որ սիրտս կ'ելլէ :

— Պէտք է որ խնամուիս :
 — Ա՛հ , բան մը չէ . հանդարտ եղիւր :
 Տիկինն ար Բէրէօ ճգամբ կը ժպտէր , բայց վերջապէս կը ժըպտէր :

— Կարդացի՛ր նամակը , յարեց Էտմոն , այս ժպտէն խարուելով :
 — Այո՛ :

— Բան մը հասկըցա՛ր :
 Տիկինն ար Բէրէօ ուղեց պատասխանել , բայց աչքերէն հոսած յորդառատ արցունքներէն արդիւրեւելով՝ աթոռի մը վրայ ինկաւ ու թաշկինակովը երեսը գոցեց :

— Ատուած իմ , ինչ ունիս , մայր իմ , գոչեց Էտմոն տիկինն ար Բէրէօի առջև ծնրագրելով : Երկնից համար խօսէ ինչ եղար : Հիւանդ ես . միթէ դժբաղդութիւն մը ունի՛նք :

— Չէ՛ , պաշտելի զաւակս , չէ , պատասխանեց սյարկեշտ կինը ջղաձգութեամբ որդին գրկելով , բան մը չկայ : Բայց գիտես քանի խենթ եմ և ինչ շուտ կը խռովիմ : Ուշ է . . . Տունը գալի՛ք շտեսայ : . . . Ասիցայ որ բան մը չպատահի քեզ : . . . Սովորաբար իրիկուան տունը եկած ժամանակդ , զիս համբուրելու կու դաս , այս իրիկուն մոռցար : Ասիցայ որ վիշտ մը , ցաւ մը չունենաւ և եկայ ստուգելու : Ահա իմ դորսովոյ այս անտեղի յուզմունքներն են արտասուացայ շարժառիթը : Գրկէ զիս , շարունակեց տիկինն ար Բէրէօ աչքերը սրբելով ու խաղաղ երևոյթ մ'առնել ջանալով . գրկէ զիս և ալ ատոր վրայ չխօսինք : Իսկ այդ նամակին գալով . . .

— Ինչուս պէտք այդ նամակը :
 — Այդ նամակը կ'ուզե՛ս որ ըսեմ ուսկից է :
 — Ըսէ՛ , բարի մայր իմ , ըսէ :
 — Օրիորդ Տըվօն :
 — Ուսկից գիտես :
 Տիկինն ար Բէրէօ նոր ջանք մը կ'ընէր չլալու :
 — Խիտա պարզ իրողութիւն մ'է , կրկնեց կեղծ ժպտով մը , օրիորդ Տըվօ կը սիրէ զքեզ :
 — Օրիորդ Տըվօ կը սիրէ զիս , կ'ըսես :
 — Այո՛ :
 — Բացատրէ ատիկա , բարի մայր իմ :
 — Ամբ եթէ չսիրէր , շարունակեց տիկինն ար Բէրէօ , քու վրայ կը դորսովի : Այս առտու Պ . Տըվօի տունը գացիր , ինքզինքդ հիւանդ կեղծելով :

Տիկին տը Բէրէօ այնպէս փղձկած էր որ կանկ առաւ :

— Այո՛ , պատասխանեց Էտմոն :

— Եւ որովհետեւ հիւանդ չես , բժիշկը չդիտնալով ինչ ըսէ : Ճամբորդութիւն հրամայեց : Այնպէս շքսի՛ր , շարունակեց տիկին տը Բէրէօ այնպէս ձայնով մը որ կ'աշխատէր անտարբեր ձևացը նեղ :

— Այո՛ :

— Եւ հետաքրքիր օրիորդ Տըվօ , ինչպէս են ամեն երիտասարդուհիք , այդ խօսակցութիւնը լսելով , ստոյգ հիւանդ կարծած պիտի ըլլայ քեզ , և բարի զգացմամբ զրդեալ այդ նամակը դրած է , մտածելով որ քու բժշկութիւնդ հօրը հրամայած ճամբորդութեան կախում ունի :

— Ստոյգ է , բարի մայր իմ , և դու գուշակեցիր որ ես մինակս բնաւ չպիտի կրնայի դտնել : Գիտես որ Անթոնիին այս ըրածը մեծ բարութիւն մ'է : Հրեշտակի սիրտ կը կրէ այդ աղջիկը . իմ վրաս կը մտածէ . կը տեսնես : Ա՛հ , պիտի տեսնեմ զան ու շնորհակալ պիտի ըլլամ : Պիտի սիրէ զիս , տեսնելու ես , և դու քովդ երկու զաւակ պիտի ունենաս , ու երեքնին միատեղ խիստ երջանիկ պիտի ըլլանք : Բայց դու անորմէ չպիտի նախանձիս , այնպէս չէ :

— Չէ , զաւակս , չէ : Սակայն եթէ զոհողութիւն մը խնդրէի՛ քեզմէ :

— Ի՞նչ , մայր իմ :

— Եթէ ըսէի քեզ , « Էտմոն , թող այդ աղջիկը , և մի փորձէր զինքն ու հայրը տեսնելու : » Եթէ այս բանս խնդրէի քեզմէն ոչ բանաւոր պատճառաւ , այլ կամահաճութեամբ միայն , խնդիրքս պիտի կատարէիր միթէ :

— Այո՛ , մայր իմ , քանզի գիտեմ որ թէև չյայտնես ալ , անշուշտ զօրաւոր պատճառ մ'ունենալու ես :

— Է՛հ . ուրեմն . . . :

— Է՛հ , ինչ :

— Ահա , այս իրիկուն քիչ մը խենթ եմ , ըսածս չեմ գիտեր : Գու կը սիրես այդ աղջիկը և կենացդ բարօրութիւնը զուցէ այդ

սէրէն կախում ունի , և ես կու գամ իմ նախանձս այդ սիրոյն մէջտեղը նետելու : Ներէ՛ , սիրելի զաւակս , ներէ՛ ինձ :

— Քեզ ներե՛մ , սիրելի մայր , միթէ՛ իմ վրայ ունեցած ամբաւ սիրոյդ համար : Եւ սաիկայ յանցանք է մօր մը համար :

— Բանի մը պէտք չունին այս իրիկուն , բան մը չեն ուզեր . . . ըսաւ տիկին տը Բէրէօ որպէս զի խօսակցութեան նիւթը փոխէ ու եթէ կարելի էր միտքը այն խորհուրդներէն շրջեցընէ , որոնք չարաչար կը տաղնապէին զինքը :

— Շնորհակալ եմ , սիրելի մայր իմ , քեզ տեսայ , ալ բանի մը պէտք չունիմ :

— Ուրեմն գիշեր բարի , լաւ քուն մը քաջէ՛ :

Եւ այս խօսքերուն մէջն ալ արցունք կար :

Տիկին տը Բէրէօ երկու երեք անգամ որդւոյն ժպտելէն ետքը իր սենեակը գնաց :

« Ի՞նչ ունի մայրս այս իրիկուն » ըսաւ Էտմոն ինքնիրեն : Ետքը տասներորդ անգամ մ'ալ օրիորդ Տըվօի նամակը կարդալով « Անթոնի » մըմնջեց նամակը շրթանց դպցընելով : Երիտասարդին արտասանած այս անուան մէջ սիրալաւ սրտի մը բոլոր խոստմունքները կը պարունակուէին :

« Ատուած իմ , թող քու կամքդ ըլլայ , ըսաւ տիկին տը Բէրէօ անկողնոյն զիմաց ծնկան վրայ ինալով , և սրտաշունչ հառաչանքներով ձեռքերն իրար կցեց . բայց քու սուրբ կամքդ մեզի համար փրկաւէտ ըլլայ :

Իեղճ կինը , մայրական այն գիւթական բնազդմամբ սոյն նամակը կարդալով բոլոր ճշմարտութիւնը իմացեր էր :

Թող անոնք՝ որոնց համար անհաւանական կը թուի այս , իրենց մօրը հարցընեն , եթէ զան ունենալու բարեբաղուութիւնը ունին տալու ին :

ԺԱ.

«Բանի՛ քաղցր ու սուրբ է յոյսը, Աստուածային բարերարութեան ամեն նաւաբեկութեանց մէջ նետած՝ այն տախտակն է, որուն նաւաբեկեալը կրնայ միշտ վայրկեան մը սլլլուիլ և պահ մը դեռ ևս իւր կենաց վրայ ակնկալութիւն ունենալ. յոյսը կ'ըսեմ սրտին այն վերջին ու անհասնում ստակն է, որով մեր մարդկային խեղճ ընաւորութիւնը իւր վերջին յուղմունքը կը գնէ:

Տիկին տը Բէրէօ՝ այն ելեկտրական ազդ մամբ որ մօր մը սիրտը որդւոյն սրտին հետ անբաժանելի կերպով կը կապակցէ, իբր թէ երկու սիրտ իրարու քով բաբախէին, շուտ մը հասկըցաւ որ այս նամակին տակ աղէտք մը կը ծածկուէր, և վայրկենի մը մէջ իւր երկկողը սառու դութեան փոխուեցաւ:

Անթօնիսի ազդարարութիւնը կարգալէն ՚ի վեր առանց գիտնալու բերնին եկածը ըսեր էր որդւոյն:

Իւր բոլոր տաղնայն այն էր թէ Կամօնի մտքէն հեռացրէր այն օխտեր կանխազուգումները որոնցմով ինքն պաշարուած էր, և այս բանիս համար ինչպէս որ տեսանք դժուարութիւն չկար, քանզի Կամօն մօրը նախահոգութեան շնորհիւ իր հիւանդութեան վրայ ընաւ կասկած չունէր: Աւստի տիկին տը Բէրէօ իր գաւակը ուրախ թողլով ինք այն մայրական վիշտերով վարակեալ սենեակը առանձնացաւ՝ որոնց յախտենական ու աստուածային ախպարն է սուրբ Վոյս Մարիամ: Խեղճ կիներ երկար ժամանակ լալէն յետոյ, ծնկան վրայ դալով աղօթեց, ետքը ելաւ ու նստաւ աչքերը գետինը սնդած, ձեռուրները իրար կցած և մերթ ընդ մերթ Աստուած իմ, Աստուած իմ խօսքերը միայն մըմնջելով՝ որոնք վշտագնութեան առաջին ներշնչած բառերն են, իբր թէ ախմայ Անոր կը գիմէր որ ամեն միսիթարութեանց աղբիւրն է:

Ապա չկրնալով այսպէս կենալ, կանթեզը առաւ և ոտքին մատը-

ներուն վրայ անշշուկ մինչև որդւոյն սենեկին դուռը գնաց ու պարզունակին ծակէն ներս նայեցաւ: Կարծէր թէ անոր մօտենալով քիչ մը վիշտերը կ'ամոքէին: Անասեն տեսաւ իւր որդին որ սենեկին մէջ վեր վար ձեմնլով ինքն ալ մեղմաձայն կը մենախօսէր սրտին քաղցր ու յորդաւատ տպաւորութիւնները դուրս զեղլով:

«Այդ սիրասուն օրիորդէն սիրուիլը ինչ բարեբաստութիւն է, կը մըմնար Կամօն: Նորատի աղջկան մը սուրբ սիրոյն մէջ քանի հեշտութիւններ ըլլալու են: Եւ ասիկայ պիտի սիրէ գիս, մայրս, իմ բարի մայրս ըսաւ որն որ իմ վրայ ընաւ չսխալիր:»

Եւ Կամօն սոնքալով մը ինքզինքը կը նայէր, քանզի այն անձը որ իւր սիրուած ըլլալը կ'ըզպայ միշտ կը սիպայ իր վրայ: Տիկին տը Բէրէօ թէ և որդւոյն ըսածը չլսեց, բայց գուշակելով՝ ըսաւ իւրովի. «Ձառակա երջանիկ է. հետեապէս անկարելի է որ Աստուածային արդարութիւնը ու ողորմածութիւնը թողու որ որդւոյս դժբաղդութիւն մը պատահի:» Խեղճ մօր համար քայլ մը միայն մնացեր էր:

Ան ատեն սենեակը քաշուելով արցունքները սրբեց, և որդւոյն բերկրապատար պատկերը աչացը առջև՝ իւր թաղածալի խորհուրդները սկսան տակաւ տակաւ նուաղիլ, ինչպէս առաւօտեան առջի ճառագայթներուն տղու մը գիշերային սարսափելի ցնորքները խկոյն կ'անհետին:

Տիկին տը Բէրէօ պահ մը Աստուծոյ հետ իրաւարանեց, եթէ կարելի է այսպէս բացատրել, այսինքն իւր անստերիւր վարքը առաջ բերաւ, իւր որդիական զօրովը, ամուսնական անձուիրութիւնը որդւոյն վրայ ունեցած սէրը, որուն հոգին՝ իր հոգւոյն մի կայծօն էր շինուած, և սկսաւ համոզուիլ որ ճակատագիրը չէր կրնար ապագային համար այնքան բարեպաշտութեամբ գիլուած սուրբ բաները ջնջել, որոնք Աստուծոյ օրհնուած էին մինչև այն ատեն:

Այս մտածութիւնները այնպէս գինքը սփոփեցին, որ գրեթէ սկսաւ հարցընել թէ ինչո՞ւ համար լացեր էր և խնդալով իւր ազգայամոտութեան վրայ, վերջապէս ինքն ալ համոզուեցաւ որ նա-

մակին վրայօք որդոյն իւր բսածնեքը ճշմարիտ էին : Իրօք ալ կրնար այնպէս ըլլալ , և որովհետեւ այս կարծիքն ալ միւսին պէս մտքին մէջ յանկարծ ծներ էր , ինչու նոյն գիւրու թեամբ այս ալ չպիտի ընդունէր :

Պէտք է ըսել նաև որ տիկին տը Բէրէօ այն ուղղափառ սրտեւրէն մին էր , որ Աստուծոյ արդարութեանը վրայ վստահ՝ կամչնար հաւատալու որ Նախախնամութիւնը զինքը երկար ժամանակ առանց պատճառի պատժէր . մանաւանդ թէ փոփոխութիւն մ'ալ չէր տեսներ . որդին սովորականէն աւելի գուարթ էր , կը սիրէր ու հարկաւ կը սիրուէր ալ , կեանքը ամեն կողմէ կը ժպտէր անոր ու խիստ աւողջ ալ էր :

— Ուստի ինչ հարկ կար իրր իրականութիւն ընդունիլ այն յաւիտենական երկխոյններէն մին , որք մայրական մտքի անդուլ զբաղմունքն են . նա մանաւանդ լաւադոյն չէր հաւտալը թէ Էտմօն՝ Անթմինի վրայ խորհելէն 'ի վեր , տիկին տը Բէրէօ՝ որ որդոյն սիրտը անբաժան իրեն սեպհականելու վարժած էր՝ տեսակ մը նորածին նախանձէ գրդեալ ամեն ինչ կը նսեմացընէր իր աչքին :

Անշուշտ այս մտածումը լաւադոյն էր , և Աստուած ալ թողուց որ այսպէս հաւատայ . ուստի խեղճ մայրը վերջին անգամ մ'ալ աչքերը սրբելով . «Ա՛հ , ինչ խենթ էի» ըսաւ :

Տիկին տը Բէրէօ հոգի առած անկողին մտաւ , այսու ամենայնիւ չկրցաւ աչք գոցել : Միայն թէ խորհուրդները ուրիշ ուղղութիւն մ'առնելով , ապագային վրայ մտածելու տեղ անցելոյն մէջ իջաւ , և այն ատեն սկսան աչքերէն այն քաղցր արցունքները վազիլ , որք երջանիկ յիշատակներու բոլորամենն են և որոնք միշտ հօգոյն խորը կը գտնուին , ինչպէս կէս օր ժամանակ բոցակէզ արեգական ներքէ՝ հրատապ խօտին յատակը գեռ ցող կը գտնուի :

Իսկ Էտմօն՝ նախ Անթմինի վրայ երկար մտածելէն յետոյ՝ մօրը անցելոյն վրայ գործուց յիշողութիւնը և երբ իւր քաղցր յոյսերը ապագային համար հիմնելու վրայ էր , յանկարծ մօրը լացը միտքը ինկաւ :

«Ի՞նչ մայրս , ըսաւ ինքնիրեն , այս իրիկուն վիշտ մ'ունէր , ու

ես իրր անձնասէր , իրր ճշմարիտ սիրահար թողուցի որ խուցը քաշուի առանց իր անհանգստութեան վրայ խռովելու : Ա՛հ , այս ըրածս խիստ գէշ է :»

Ուստի ինքն ալ Էտմօն կանթեղը առաւ , և ոտից ծայրերուն վրայ մինչև տիկին տը Բէրէօի սենեակը քալեց . երբ հոն հասաւ ականջ դրաւ , և գրան ծակէն լոյս մը տեսնելով , կամայուկ մը զարկաւ :

Տիկին տը Բէրէօ նոյն ժամուն իւր գրան զարնուիլը լսելով՝ ճիշտ ճ'արձակեց , բայց Էտմօն իսկոյն ներս նետուելով ըսաւ .

— Մի վախնար , բարի մայր իմ , ես եմ , քեզ տեսնելու կու գամ :

— Գեռ չըպտկեր ես , սիրելի զաւակ , գոչեց տիկին տը Բէրէօ , միթէ հիւանդ ես :

— Ո՛հ , չէ , մայր իմ , անհոգ եղիւր . բայց ուզեցի պտկելէս առաջ զալ անդամ մը հարցընել թէ իրիկուան վշտերդ գեռ կը տեսնէ :

— Շնորհակալ եմ , սիրուն զաւակ , իմ ցառս որուն բացատրութիւնը առի քեզ , տեսար որ ուրիշ բան չէր բայց եթէ լսկ ցնորք մը :

— Աւելի աղէկ , մայր , քանզի ես ալ հօրով ուրախ եմ :

— Գու սիրահարած ես ու Անթմինի վրայ կը մտածես :

— Այո՛ , իսկ գու որ մինչև առաւօտեան ժամը երկուքը չես քնանար , որո՞ վրայ կը մտածես :

— Գու , քու երիտասարդութեանդ , քու ապագայիդ վրայ :

— Իմ երջանկութեանս որ քեզ կը պարտաւորիմ :

— Բայց որ ալ հիմակ ինձմէ կատում չունի :

— Այո՛ , մայր իմ , միշտ քեզմէ կախում ունի , քանզի ամեն երազներուս մասնակից ես :

— Կ'երազես դու ուրեմն :

— Երկու ժամէ 'ի վեր :

— Եւ ինչ են երազածներդ :

— Քաղցր ու անդորր ապագայ , կատարեալ երջանկութիւն մը

կնոջ, մօր ու բարեկամի մը մէջ տեղը՝ անոնց եռապատիկ սիրոյն համապատասխանելով: Երիտասարդ եմ, տղեղ չեմ, այնպէս չէ՞, մայր իմ, ըսաւ Էամօն ժպտելով, քանզի քեզ կը նմանիմ քիչ մը. հարուստ ենք և կ'զգամ որ վերջապէս կը սիրեմ Անթօնինը, ուստի երբ վստահ ըլլամ որ ինքն ալ զիս քիչ մը կը սիրէ, կրնամ իր հօրմէն խնդրել որն որ բնաւ իրաւունք չպիտի ունենայ մերժելու: Չմեռը Բարիկ կ'անցընենք, ամառը Լուառի՝ այն բանաստեղծական ու զգայական սիրոյ գետին օփանցը վրայ, և երջանիկ կ'ըլլանք որչափ կարելի է մարդկային արարածները ըլլան: Ի՞նչ կ'ըսես ասոր, մայր:

Տիկին աը Բէրէօ ժպտալիք՝ որդւոյն նայելով ըսաւ.

— Քու սիրոյդ վրայ խօսած ժամանակդ միթէ՞ այդ ամենը չըսի քեզ նախ և առաջ:

— Քանզի, մայր իմ, իմ ամեն մտածութեանցս սրտակիցն ես: Բան մը չեմ պահեր քեզմէ. ուստի ճշմարիտ սը վաղուրնէ պիտի սկսիմ ձեռքէս եկածը ընել որպէս զի Անթօնինը խենթի պէս սիրահարցընեմ որդւոյդ:

— Ատիկա չպիտի ուշանայ:

— Նիշէթ միջոց մը սորվեցուց ինձ:

— Ա՛հ, Նիշէթ ալ այդ դաւին մէջ մատ ունի՞:

— Այո, քաղցրիկ մայր իմ, ազնիւ ու բարի սիրտ մ'ունի այդ Նիշէթը:

Երկու ժամի չափ Էամօն ու տիկին աը Բէրէօ անցելոյն, ներկային ու ապագային վրայ խօսակցեցան, մայրը արմուկին կռթրնած՝ որդին անկողնոյն ոտրին վրայ նստած՝ երկուքն ալ իրենց դաղափարներով գեռատի, իրենց գորովոյ վրայ վստահ:

Երբ առտօտեան ժամը չորսին Էամօն սենեակը քաշուեցաւ, տիկին աը Բէրէօ անդամն մ'ալ «Ի՞նչ խենթ էի» կրկնելով՝ անտերկիւղ ու անմտատանջ քնայաւ:

Էամօն թէև ուշ քնացեր էր, բայց ժամը ու թին արդէն ելնելով Աէն-Թօմաս-ա՛ւ Ե. քէնի եկեղեցւոյն ճամբան կը բռնէր:

ԺԲ

Էամօն երբ Աէն-Թօմաս-ա՛ւ Ե. քէնի եկեղեցին հասաւ, բազմութիւնը արդէն կ'սկսէր խոնիլ, որոնց մէջ մտաւ ինքն ալ Անթօնինը փնտռելու. սակայն չմոռցաւ նաև որ սուրբ տեղ մը կը գտնուի և ջերմեռանդութեամբ երեսը խաչակնքելէն ետքը՝ եկեղեցւոյն միջավայրը զիմաց:

Մտքին ու սրտին մէջ, Անթօնինի ու Աստուծոյ անունը, սէրն ու հաւատքը զիբութեամբ կը միանային, ինչպէս միևնոյն կրակարանի երկու բոցեր, միևնոյն հիւթէ երկու բուրմունքներ իրարու շաղախտան կը զուգարորին:

Անթօնինի աթուր եկեղեցւոյն մէջ տիկին Անթէլիքի աթուրին քովը գրուած էր. բայց Անթօնին որ եկեղեցի կու գար աղօթելու և չէ թէ անսնուելու համար, որնոր արեւուն ելած ժամանակը կու գար՝ այն միջոցին որ աղօթքը բնութեան մէջ աղատ անջրպետ մ'ունի, այն միջոցին որ դեռ կը քանան նոքա որ բնաւ չեն աղօթեր, Անթօնին կ'ըսենք, միշտ մասնաւոր խորաններու առջև կը ծնրագրէր, ուր քահանայք շատ անգամ կանթելի լուսով պաշտօն կը մատուցանեն հինգ կամ վեց հաւատացեալներու ներկայութեանը միայն: Այս պարագայիս վրայ խորհրդածութիւն մ'ալ պատշաճ կը համարինք:

Առտօտեան ժամասացութիւնը՝ եթէ այսպէս կարելի է բացատրել օրուան շքեղաշուք ու խոնկերու քաղցրապարար բուրմունքներով լի պատարագէն աւելի քրիստոնէական ու գրախիչ երեոյթ մ'ունի: Ըստ մեզ կատարաւթեան մնացորդ մը կը տեսնուի այն ոսկեճաճանջ հանդէսներուն մէջ՝ որ այն Աստուծոյն նուիրուած են՝ որուն Որդին աշխարհ եկաւ համեստութիւն ու խոնարհութիւն սորվեցընելու մեզ: Արօնական այն մեծափառ հանդէսներուն ներկայ գտնուելու տեղ՝ ուր սրբատան ամեն ճոխութիւնները կ'երևին, սաճաբը ծաղկներով ու

լուսով կը լեցուի և արծաթագլեաց դռնապան մը երթեկեկելով իւր գեղարդեան շրջանաւոր թնփրկնով մտացոյ աւփոփումը կը շփոթէ՝ առաւօտուն կանուխ դռները բայցուած ժամանակ, Էամօնի մտած եկեղեցիին պէս եկեղեցի մը մտիր և այն կիսամթութեան ու լուսթեան մէջէն՝ որ Աստուծոյ տան մէջ միշտ պէտք է թաղաւորէ, քիչ մ'առաջ անը նկարագրած այն անպաճոյճ խորաններէն մէկուն դիմէ : Հոն պիտի տեսնես պարզազգեստ քահանայ մը, չորս հինգ անձինք ծնրագրած, ծուր գիր դու ալ, և եկեղեցւոյն այն նսեմաստուեր անկեան մէջ Աստուած աւելի մեծ ու վեհապատ պիտի երևի քեզ, քան թէ մտադարդ ու ոսկեհուռ աւազ խորանին վրայ : Ան ատեն անարդել միտք այն առաջին քրիստոնէից պիտի երթայ, որք Հռոմայ դեսնափոր տեղուանքը նոր Աստուծոյ կը ծառայէին օրհնելով ու երգելով :

Պիտի հասկընաս ան ատեն սուրբ ու սփոփիչ դաղանիքները քրիստոնէական հաւատոյ, որ իբր վիթխարի ծառ մը երկրի աղեաց մէջէն ելած՝ իւր դօրաւոր ձիւղերով զինքը ճնշել ուզող ժայռը խորտակեց և որուն շուրթին սակ այսօր երախտապէտ սերունդները կը նստին : Արչափ ալ բարի եկեղեցի մը մաննես, միշտ լաւազոյն դուրս պիտի ելլես, մտիր ուրեմն :

Շատ անգամ ըստած է թէ գիւղին եկեղեցիները հաւատքի յայտարարութեան ամենապարզ ու միանգամայն ամենէ Աստուածահաճոյներն են : Ասիկայ իրաւացի է : Գեղջկային եկեղեցին որուն զանգակատունը ամեն խրճիթնեքու յարկաց վրայ կը նայի, իբր մայրական նայուած մը իւր որդւոց վրայ տարածեալ՝ որուն խեցեղէն ժամացոյցը աշխատութեան ժամը կը հնչէ, սղոց խողացած վայրին ու մեռելոց գերեզմանատան մէջտեղը՝ կենաց իբր զգալի օրինակ մը դրուած՝ այսինքն իբր հասնելու ու միանգամայն հասած նպատակ մը, գեղջկային եկեղեցին, կը կրկնենք, քաղցր ու մթիթարիչ տեսարան մ'է : Հոն կը մկրտուի մանուկը, հոն կ'ընդունի առաջին հաղորդութիւնը, հոն կ'ամբասնանայ, հոն կու գայ վերջապէս խնդրելու այն յետին աղօթքը երբ Աստուած առ ինքն կոչէ զան :

Աստի բոլոր կենսաբան հոն է, մէկ դռնէն կը մտնէ, միւսէն կ'ել-

լէ : Երանի՛ անոնց որք իրենց գիւղի զանգատունը երբէք աչքէ չեն կորսնցուցած :

Բարիք այսպէս չէ, ընկերութիւնը շարունակ զքեզ Աստուծմէ հեռացընել կ'աշխատի, չես գիտեր թէ ո՞ր մկրտուած ես, չես ճանչնար թէ մը քահանան տուած է առաջին հաղորդութիւնդ, ու եթէ կը ճանչնաս իսկ ալ չես տեսեր, քսանի չափ փողոցներ կը փոխես, ո՞ր եկեղեցին որ ըլլայ կ'ամբասնանաս և որ և իցէ քահանայէ մը վերջին օժու՛մ կ'ընդունիս :

Անոր համար նկատելու արժանի է թէ ինչ մասնաւոր պայծառութիւն ունին այն անձանց դրուածները որք զեզի մը մէջ ծնած՝ ու իրենց առջի քսան տարիները հոն անցուցած են : Երեկոյ զղացումներն ու միտքը անջինջ անուշահասութիւն մը կը պահեն, որն որ թիւմի հոտի, երիտասարդութեան ու դարնան անշէջ կայծի մը կը նմանի : Քաղաքացի դրապետները ամեն ինչ ընկերութեան վրայ կը յարեն, իսկ զեղացի դրապետները ամեն ինչ Աստուծոյ վրայ կը դարձնեն : Զանգակատունը, անշուք հանդէսները, դաշտային աշխատութիւնը, տունը մտնող երկրագործին միաձայն երգը, նուէրնեքով ու տուսախներով շրջապատուած Սուրբ Առսին արձանը ժողովրդապետին անցած ժամանակ ամենէն ողջունուիլը, բոլոր այս սովորութիւնները իրենց յիշատակութեան մէջ անմուաց են, քանզի իրենց ապագան ու անցեալն է :

Պարսպ վայրկեան մը ունենալնուն պէս կ'երթան այն ամեն յիշածնին տեսնելու և արտասուտից աչօք սուրբ Գանիէլի կամ սուրբ Սերաստիանոսի կոշտ պատկերի մը դիմաց կը կենան, այս տեսարանը Բարիպետի մը ծիծաղը կը շարժէ, քանզի նա խողալ յուզմունքներ միայն կը տեսնէ ասոր մէջ : Բայց զեղացին իւր բոլոր մանկութիւնը այս պատկերին մէջ կը գտնէ, որնոր դարուն յառաջագիմութեանց հակառակ, ուրիշ եկեղեցիազոյնէ մը չէ յաջորդուած : Այն ամենուն ծաղրելի երեցած առարկաները քանի բանաստեղծական են : Ես կ'սպայտ ծաղիկներով պղտի դաւաթ մ'ունիմ, որուն մէջ չորս տարեկան եզած ատենս կաթ կը խմէի և որուն վրայ յիտունէն աւելի եղբերորդութիւններ ըրած եմ, որոնք թէև չեմ գրած

բայց անոր վրայի նկարուած կապոյտ ծաղիկներուն պէս կապուած են այն գաւաթին հետ :

Երանի դարձեալ անոնց , որ գիրք մը գրած ժամանակնին կրնան իրենց ծննդեան գիւղը նկարագրել և իրենց սենեակէն երբեմն քաղաքացոյ մը խոշոր կօշկաց ձայնը լսել , որ իրենց պարսիմատ և երկրի լուրեր կը բերէ :

Կարճ խօսքով , կրնաք հարցընել շատ ճամբորդութիւն ընող անձանց , ամենքն ալ պիտի ըսեն թէ իրենց ուղևորութեան մէջ միշտ ճանձախուտ ու գծնիկաւոր պղտի գիւղ մը պատահած են , ուր փափաքած են կենալ իրենց կեանքը՝ այն դէպ ՚ի Աստուած ուղևորութիւնը վերջացընելու համար :

Էտմօն եկեղեցւոյն մէջ քանի մը վայրկեան կենալէն ետքը տիկին Անժէլիքի ընկերակցութեամբ Անթօնինի մասնէլը տեսաւ : Յանկարծ սկսաւ սիրտը բարախել և որչափ ալ կը տենչար երիտասարդուհւոյն աչքին զարնելու , սակայն դարձեալ կը վախնար որ խիստ շուտ չտեսնուի : Աւստի սիւնի մը ետին պահուեցաւ :

Օրիորդ Տրլօ առանց զան տեսնելու առջևէն անցաւ և գնաց եկեղեցւոյն ներսը , մատուռին մէջ ծնրադրելու , ուր պաշտօն կը մատուցուէր :

Պատարագը հազիւ սկսուած էր :

Անթօնին երեսը խաչակնքելով , աղօթագիրքը բացաւ ու սկսեց կարդալ : Էտմօն երկկուղած պատանի մ'ըլլալուն չուզեց օրիորդ Տրլօի ջերմեռանդութիւնը վրդովել . իւր փափաքն էր միայն անորմէ տեսնուիլ ու այսպէսով յայտնել թէ ամեն միջոց կը փնտռէ անոր հանդիպելու : Աւստի բնաւ չարժում մը չըրաւ անոր միտքը շրջելու , այլ անոր ծնրագրած աթոռին մերձենալով երիտասարդուհւոյն առջև կամ ըստ ետեւ պշուցեալ մնաց :

Անթօնին առջի անգամուրնէ առելի չքնաղ կ'երևէր իրեն : Քանի մ'անգամ կամ անգամ մը միայն այս բաւական է , սիրահարած են երիտասարդուհւոյ մը և Էտմօնի կացութեան մէջ զոնուած են , այսինքն նիւթապէս կէս քայլ հեռի սիրուհիէդ , իսկ բարոյապէս հարիւրաւոր մղոններ : Այսպէս սիրահարեր էր Էտմօն Ան-

թօնինի , ներսէն ձայն մը իրեն կը շնչէր թէ բժշկին աղջկանը բոլորովին անտարբեր չէր , թէ կարելի էր որ օր մը անոր ամուսինը ըլլար և թէ նա հողուով մարմնով իրեն վերաբերէր . նախորդիմացն էր արդ , իրեն նամակ գրողն էր , անորմէ տեսնուելու համար բաւական էր բազկին ծայրը անդամ մը դպչիլ կամ ականջին խօսք մը միայն զուրցել և սակայն չէր ընել քանզի կը գողար որ չտեսնուի այն տղուն պէս՝ որ յանցանք կը գործէ և մօրը յանդիմանութենէն խոյս կու տայ :³

Կրնար յուսալ որ ժամանակ անցնելէն ու քանի մը պայմաններ լմնալէն ետքը , աթոռին վրայ հակող այս գեղաղէշ մարմինը , գրքին էջերը թղթատող այն քնքուշ ձեռքերը , այն խոշոր սևորակ աչուրները որ բառերը կը կարգային , զորոնք բերնովը կ'արտասանէր ու սիրտը կը հասկընար , այս ամենը անխտիր ու աներկրայ իրը պիտի ըլլային , և թէ սոյն ժամուն Անթօնինի ներկայութիւնը թէև սրտին մէջ ամեն զգացում կը գրգռէր , սակայն դարձեալ չէր համարձակեր խօսք մ'ուղղել անոր և շատ վարանելէ ետք անոր շրջագրեստին եզրը միայն ոտքին ծայրովը գպչելու կը բաւականար :

Սակայն բաղդը , այն տարփածուներու աստուածը երկչոտ Էտմօնի օգնութեան հասաւ :

Անթօնին դալէն ՚ի վեր ծնրագրած կեցեր էր : Այս կերպով այն աթոռը ուր պիտի նստէր պարապ մնացեր էր , որուն վրայ Էտմօն երկու ձեռքերը կռթներ էր , քանզի ինքն ալ ծնրագրած էր :

Բայց մեր գիւցաղը այնպէս պշուցեալ էր որ երբ Հաւատամքը սկսուելով ամեն մարդ նստաւ , ինքը այս բանս չգիտեց , այնպէս որ Անթօնին որ չէր գիտեր թէ ետին մէկը կայ , նստած ժամանակ գլուխը մէկու մը ձեռքերուն զարնելը զգաց :

Ան ատեն «Ներեցէք» ըսելով ետին զարձաւ և երբ Էտմօնը ճանչցաւ չկրցաւ փոքրիկ ճիչ մը զսպել :

— Ինչ ունին , հարցոց տիկին Անժէլիք , որ զգոնութեամբ իւր աղօթագրքին մէջ ընկղմած էր :

— Աշինչ, պատասխանեց Անթոնին, նստելու ատենս մէկ կողմն
ցաւցուցի։

Տիկին Անժէլիք ինքն ալ նստելով իւր աղօթքը մըմնջելու շա-
րունակեց։

Մարդիկ կան որ համոզմամբ կ'աղօթեն, ասոնց աղօթքը սրտովին
է։ Աւրիշներ ալ կան որ սովորութեամբ կ'աղօթեն, ասոնցը բե-
րանացի է։

Տիկին Անժէլիք այս ետքիններէն էր։

Անթոնինի ճիշդ Էտմոնի հայեցական զարմացումը ցրուեց։

«Տեսաւ զիս, կ'ըսէր իւրովի։ Միայն թէ իմ ներկայութիւնս
հոս զինքը չարգողեցընէ։ Ա՛հ, եթէ կարենայի պատմել իրեն բոլոր
սրտիս զգացումները, բոլոր այս զիշերուան խորհրդածութիւններս =
Եթէ կարենայի իրեն հասկըցընել որ մայրս արդէն կը սիրէ զինքը
և իրենին տեղը պիտի բռնէ, եթէ համարձակէի խօստովանիլ որ
երկու օրէ 'ի վեր իւր յիշատակը մտքես չելլէր։ Բայց երբէք
չպիտի հաւատայ որ սիրտս երկու օրուան մէջ այնքան ճամբայ
ըրած ըլլայ։ Ասկէ զատ խնամակալուհին քովն է, անոր զիմաց ե-
թէ Անթոնինի խօսիմ զան կը վտանգեմ և սակայն պէտք է որ
խօսիմ։»

Իր կողմէն Անթոնին ալ այս կ'ըսէր։

«Հոն է նա։ Ինչպէս կ'ըցաւ հոս զայլ գիտնալ։ Վերջապէս
բաղդը չէ որ զինք կ'առաջնորդէ, այլ ինձի, միայն ինձի համար
կու գայ։ Միթէ արդէն կը սիրէ՞ զիս։ Նամակս ընդունեցան։ Ար-
դեօք եկեղեցիէն ելնելու ժամանակնիս ինչ պիտի ընէ. ինձ խօ-
սելու պիտի համարձակի։ Կը յուսամ որ զիս ջճանհալու պիտի
զարնէ, և սակայն իրաւունք ունինամակիս բացատրութիւնը ինչպե-
տու։ Գիտե՞ որ ես գրած եմ։ Միայն թէ տիկին Անժէլիք բան մը
չնշմարէր։ Բնչ գունատ է . . . :»

Իրօք ալ, Էտմոն որ առատօտեան ժամը չորսին պառկեք և ու-
թին ելեր էր, սովորականէն աւելի սովորին էր։

Անթոնին շատ կը փափաքէր անգամ մ'ալ գառնալ, քանզի
կ'զգար որ Էտմոնի նայուածքը զինքը կը լափէր, սակայն չէր հա-

մարձակեր թնտասլու, քանզի զիտէր որ Էտմոն իւր բոլոր շարժ-
մանցը պիտի միանար։

Այս երկու արարածները մի և նոյն մտքով, միևնոյն նպատակի
կը հետեւէին, երկուքն ալ սրտերնին կ'ուզէին բանալ, բայց և այն-
պէս երկուքն ալ իրարմէ խոյս կու ապին, մէկը ակամածութեամբ,
միւրը ամօթխածութեամբ։

Աէրը սցապէս աննկարագրելի ու անտեսանելի իրերով կազմուած
է, ինչպէս հոսն ու երգը որ կը շնչենք ու կը լսենք թէև, սա-
կայն չենք կարող զանոնք ըմբռնել կամ լուծանել։

Պատարագը լմնցեր էր ու դեռ Անթոնին տեղէն չէր շարժեր,
այնպէս որ տիկին Անժէլիք գիբքը գոցելով ըսաւ։

— Ի՛հ, չէ՛նք երթար։

«Արդեօք իմ վրայ կը մտածէ՞» կը հարցընէր Էտմոն իւրովի։
Անթոնին երթալու ժամանակ կողմնակի նայուած մ'արձակեց,
Էտմոնը շտեսաւ, բայց լսեց զան։

«Հօրս տունը պիտի գոյ այսօր արդեօք» կ'ըսէր ինքնիրեն։

Երբ Անթոնին եկեղեցիէն մեկնելու ատեն ձեռքը օրհնած ջրոյ
անօթին տարաւ, տեսաւ որ Էտմոն իւր ելնելու հակառակ դռնէն
դուրս կ'ելնէր։

«Այս ըրածը շատ աղէկ է» մտածեց։

Անթոնինի սիրտը Էտմոնի որ և իցէ ըրածին վրայ կը փութար
երակտապէտ ըլլալու։

Իսկ նա, այն սիրոյ սիրահարը, ուզածն ունէր, իւր ըրած
յառաջագիմութիւնը քիչ մարդիկ երկու օրուան մէջ կրնային ը-
նել։

Բարեբաղդարը չէր գիտեր թէ ինչ բանի կը պարտաւորէր այս.
Անթոնին երբ եկեղեցիէն մեկնեցաւ, տեսաւ որ Էտմոն քան քայլ
իրմէ առաջ իւր ուղին կը բռնէր։

Տիկին Անժէլիք իբր երկիւղած ջերմեռանդուհի մը կը քալէր
առանց խօսք մ'արտասանելու, որ մի գուցէ ներկայ դառնաւ
աստուածային պաշտաման շնորհքը կորսնցընելու վտանգին մէջ ըլ-
լայ։

Նոյն միջոցին որ Անթոնին տունը պիտի մտնէր, Էտմոն ետին դարձաւ և առջի օրուան ընդունած նամակը շրթերուն մօտեցուց :

Օրիորդ Տըվօ կարմրեցաւ ու աչերը դետին խոնարհեցոց :

«Ինքն է դրողը, ըսաւ իւրովի մեր դիւցազնը, և ինչ որ ալ ըլլայ իւր նամակէն շնորհակալ պիտի ըլլամ. բայց ի՞նչպէս խօսիմ հետը :»

Տասը վայրկեան էր որ Անթոնին անհետացեր էր, և տակաւին Էտմոն հոն կը կենար աչքերը այն տեղ պնդած՝ ուր նորա փափկիկ օտուրները դպած էին :

Անթոնին սենեակը մտաւ, և ուզեց պատուհանը կայնիլ, բայց վանդակապատը վեր ելած ու պատուհանն ալ բաց ըլլալուն, վախցաւ որ երկտասարդը զինքը չտեսնէ որնոր կը պատրաստուէր Լիլ փողոցէն մեկնելու՝ երբ մեղմիկ ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն.

— Արդէն սկսեր ես հիանալ, գեղանի տարփաւոր :

Էտմոն ետին դառնալով Նիշէթը տեսաւ, որ նորաձևութեան խաւաքարտ մը ունէր ձեռքը :

— Գու հոն ես, Նիշէթ, ըսաւ :

— Այո՛, ես հոս եմ, քու վրագ դբաղելու խօսք չտուի՛, մուսացկոտ :

— Եւ արդէն կ'սկսին :

— Այո՛ :

— Ինչ պիտի ընես հիմա :

— Օրիորդ Տըվօի տունը պիտի երթամ :

— Ինչ պատրուակաւ :

— Թէ իրեն փեղոյր ու գտակ կը շինեմ :

— Եւ եթէ չընդունի քեզ :

— Անհոգ եղիւր պիտի ընդունի :

— Ինչ երջանիկ ես, պիտի տեսնես զան :

— Եւ դու տեսնո՞ր միթէ :

— Տեսայ :

— Պատարազի՞ն :

— Այո՛ :

— Ահա բոլոր օրուան համար քեզ երջանկութիւն :

— Գոնէ :

— Եւ որո՞ւ կը պարտաւորիս :

— Նորա :

— Ապաշնորհ, հասաւ ինծի, որ եկեղեցի երթալու խորհուրդ տուի քեզ :

— Ճիշտ է, սիրելի Նիշէթս :

— Հիմակ, մնաս բարև ուրեմն :

— Այսպէս, ճշմարտիւ երթալու ես :

— Կը տեսնես :

— Եւ իմ վրայօք պիտի խօսին անոր :

— Անշուշտ :

— Զգուշացիր :

— Մի վախնար. կանանց սիրտը կը ճանչնամ : Կ'ուզեմ որ երջանիկ ըլլաս, և երջանկութիւնդ ինձ պարտաւորիս : Ամեն ինչ իմ վրայ թող և այս օր ժամը երկուքին եկուր զիս տեսնելու. շատ բաներ պիտի ունենամ քեզ պատմելու :

— Անխոհեմութեամբ չդործես :

— Կ'երթամ, վախկոտ. ժամը երկուքին կը տեսնուինք :

— Վստահ եղիր :

Նիշէթ շնորհագեղ վայելչութեամբ սալարկին վրայէն ցաթկելով, Պ. Տըվօի տունը մտաւ, գեռ ևս երկու երեք անգամ Էտմոնի ժպտելէն ետքը :

ԺԳ

Թէև Նիշէթ գիտէր որ օրիորդ Տըվօի տունը ներկայանալու համար խիստ կանուխ էր, սակայն խորհելով թէ նոյն օրը կիրակի

էր, ամառ ու օդը պայծառ՝ կրնար Անթոնին հօրը հետ դիպր
երթալ, քանզի Նիշէթ այն հինօրեայ սովորութիւնը միշտ կ'ըն-
դունէր, որ ամեն մարդ կիրակի օրը պէտք է գիւղ երթայ, ը-
սեր էր ինքնիրեն թէ այսօրուան ընել կրցածը վաղուան պէտք չէ
թողուլ:

Աւտի յարդեայ դեղեցիկ փեղցը մը գլուխը դրեր, ուսմիբէն
Բէպէի կոչուած ցփսի մը ուսը առեր և խաւքարտին մէջ իւր
մատուրներուն հանձարները լեցընելով՝ Աիլ փողոցը զարկեր էր,
ուր Էտմոնի ալ պատահեցաւ:

Երբ Նիշէթ ներկայացաւ, օրիորդ Տրվօ հօրը սենեակն էր,
զոր ամեն առտու կ'երթար համբուրելու անոր աշխատութեան միջո-
ցին:

— Օրիորդ, ըսաւ տիկին Անժէլիք ներս մտնելով, մէկը քեզ
կը խնդրէ:

- Ինչպէս կը կոչուի, հարցուց Անթոնին:
- Ըսաւ թէ չեւ ճանչնար զինքը, խաւքարտ մը ունի ձեռքը:
- Նորելուկ ծախող մը պիտի ըլլայ, ըսաւ Պ. Տրվօ. գնա ա-
մառուան պիտոյքներդ գնէ:

Պ. Տրվօ աղջիկը համբուրելէն ետքը դրելու սկսաւ, երկու տա-
րիէ ՚ի վեր էր որ գրքի մը վրայ կ'աշխատէր, որն որ բժշկականու-
թեան կենսայ ճշմարիտ կայանին վրայ լոյս պիտի տար:

- Անթոնին իւր սենեակը վաղեց:
- Ո՞ր է զիս խնդրող անձը, ըսաւ:
- Նախասենեակին մէջ կ'ըսպասէ, պատասխանեց տիկին Անժէ-
լիք:

- Ներս մտցուր:
- Նիշէթ ներս մտաւ:
- Օրիորդ Տրվօ այս հրաշագեղ զէմքը տեսնելուն չկրցաւ զար-
մանքը բռնել, ակնրն զարմանք մը՝ որ մեր բարեկամուհւոյն ան-
հաճոյ չթուեցաւ:

- Օրիորդ Տրվօն գո՞ր էք, հարցուց Նիշէթ:
- Ես եմ, սրտասխանեց Անթոնին:

Տիկին Անժէլիք սրուն պաշտօնն էր Անթոնինէ քայլ մը չհեռա-
նալ, կայնած ու ձեռքերը փորին վրայ իրար միացուցած ամեն ինչ
մտիկ կ'ընէր. քանզի տիկին Անժէլիք գէր էր և ամեն գէր կա-
նանց պէս, փորը գուրս ձգտելով անոր վրայ ձեռքերը հանդէ-
ցընել:

Նիշէթ շատ կը փափաքէր այս հանդիսականը հեռացընել զոր նախ
գէր զուշակած, քանզի աղէկ կը հասկընար որ օրիորդ Տրվօ ա-
նոր դիմաց չպիտի համարձակէր իւր միտքը յայտնելու:

— Օրիորդ, յարեց Նիշէթ, գգակներ, գլխու շրջանակներ և
ասղնեգործութիւններ քեզ ցուցընելու կու դամ:

— Նայինք, նայինք, ըսաւ Անթոնին նստելով և աչքերը խա-
ւաքարտին վրայ գնելով՝ զոր Նիշէթ աթոռի մը վրայ դրեր բա-
նալու կը պատրաստուէր:

- Ահա ամենէ նորելակներն, վրայ բերաւ Նիշէթ:
- Միթէ Պապ փողոցի, Բըզի-Սէն-Թօմասի խանութէն կու դամ:
- Չէ, օրիորդ, պատասխանեց Նիշէթ՝ որ հասկը ցաւ թէ խնա-
մահալուհին հեռացընելու առիթը կը մտնեար՝ եթէ ինչպէս որ
չէր տարակուսեր օրիորդ Տրվօ Էտմոնի անունը սորվելու հետա-
քրքրութիւնը ունեցեր էր. խանութի մէջ չեմ, այլ տունս կ'աշ-
խատիմ և քեզի ծանօթ անձերու կողմէ զրկուած եմ, որոնք իմ
ծուխերս են. տիկին աը Բէրէօի կողմէն կու դամ:

- Ա՛հ, կը ճանչնաս տիկին տը Բէրէօն, ըսաւ Անթոնին զար-
մացական ուրախութեամբ մը:
- Ո՛հ, շատ կը ճանչնամ, ամենէ լաւագոյն յաճախորդուհինե-
րէս մէկն է:

- Եւ ինքը՞ սուտ իմ հասցէս:
- Նոյն ինքն:
- Չարմանալի՞ է:
- Ինչո՞ւ, օրիորդ:
- Իմ բարի Անժէլիքս, ըսաւ անասնն Անթոնին անմիջապէս
Նիշէթի սրտասխանելու տեղ ինամակալուհւոյն ուղղելով խօսքը 9
կը հաճին ծառայութիւն մ'ընել ինձ որ գու միայն կարող ես:

— Ի՞նչ :

— Վարդաշեմ դերձակուհուհոյ տունը դնա՛ւ և ըսէ որ իրեն ապս-
պրած կապոյտ շրջազգեստիս տեղ, վարդապոյն մը շինէ եթէ տա-
կաւին ժամանակ կայ այս փոփոխութեան :

— Ա՛րթամ, ըսաւ բարի տիկինը որ խիստ հեռու էր կասկա-
ծելէն թէ ինչո՞ւ Անթոնին յանկարծ վարդապոյնը կապոյտէն լաւ
կը դասէր :

— Քիչ մը հեռու է, վրայ բերաւ Անթոնին, բայց առանց քե-
զի սեղան չենք նստիր :

Ա՛րեւի թէ այս վերջին խօսքը տիկին Անժէլիքը փաղաքշեց՝ որ
ցփսին ու փեղցըրը դնելով մեկնեցաւ :

— Արնայի ծառան խրիել, ըսաւ կամաց մը Անթոնին, բայց կը
վախնամ որ անսպասեհութիւն մը չդործէ :

— Իրաւունք ունիս :

— Գոգակ կը սիրես, տիկին Անժէլիք :

— Ինչո՞ւ :

— Ար սիրեն :

— Այո՛, կը սիրեմ :

— Բաւական է :

«Գոգակ մը պիտի ընծայէ ինձ, կ'ըսէր ինքնիրեն խնամակալու-
հին վար իջնելու ժամանակ, միայն թէ շտապոյն ժապաւէններով
ընտրէր :»

«Անունը իր ազգեցութիւնը ըրաւ, կ'ըսէր Նիշէթ իւրովի. ա-
մեն բան աղէկ կ'երթայ : Այս պղտիկը սքանչելի է :

Այս միջոցին Նիշէթ խաւաքարտը բացեր էր :

— Նստիր, ըսաւ Անթոնին, աւելի հանդիստ կ'ըլլաս :

Եւ օրիորդ Տըլօ աթոռը Նիշէթի աթոռին մօտեցընելով խա-
ւաքարտը ծնդացը վրայ առաւ :

— Քանի որ վարդի գոյնը կը սիրես, օրիորդ, ըսաւ Նիշէթ,
ահա գիշերային վարդապոյն պղտի գոգակներ որ խիստ սքանչելի են :

— Այսպէս, տիկին աը Բէրէօի ալ դո՛ւն կը ծախես, յարեց
Անթոնին :

«Ահա հասանք» մտածեց Նիշէթ :

— Այո՛, օրիորդ, պատասխանեց :

— Տիկին աը Բէրէօ քանի՞ տարեկան կայ :

— Երեսունինը տարեկան է. դեռ նորատի կ'ըսուի, վրայ բե-
րաւ Նիշէթ բնական կերպով մը, մանաւանդ երբ մտածես թէ
քսաներեք տարեկան որդի մը ունի :

— Ա՛հ, որդի մը ունի՞, ըսաւ Անթոնին Նիշէթի իրեն տուած
դղակը ուշադրութեամբ նայիլ ձեացընելով :

— Այո՛, կրկնեց Նիշէթ, որդի մը ունի որ սքանչելի, քաղցր
ուշիմ պատանի մ'է և մայրը կը սիրէ :

— Ար ճանչնաս զան, հարցուց Անթոնին որուն ձայնը սկսեր
էր գողգոլալ :

— Անշուշտ, տիկին աը Բէրէօի տունը զան ստէպ կը տեսնեմ :

— Այս պղտի գոգակը բաւական յարմար կը դտնեմ, ըսաւ Ան-
թոնին խօսակցութիւնը փոխել կերպելով :

— Վուզէն փորձել, կրկնեց Նիշէթ ու ոտքի վրայ ելնելով պատ-
րաստուեցաւ գոգակը Անթոնինի զլուխը դնել :

— Յօժարակամ :

— Հրաշապէս կը վայլէ, յարեց Նիշէթ հայլին մէջ օրիորդ
Տըլօի գլխուն վրայ գոգակին ըրած ազգեցութիւնը տեսնելով :

— Քանի կ'արժէ :

— Ո՛հ, խիստ քիչ, երբ ընտրութիւնդ ընես ան ատեն գնոյն
վրայ կը խօսինք :

Անթոնին գոգակը հանեց, մէկ կողմ գրաւ և տեղը նստելով
ըսաւ .

— Ուրիշ ի՞նչ ունիս ցուցընելու :

Եւ սկսան խաւաքարտին մէջ նորէն որոնել :

Նիշէթ կ'ըզգուշանար Էտմոնի խօսքը նորէն ինք բանալու, մա-
նաւանդ թէ աղէկ գիտէր որ Անթոնին այս հոգը իր վրայ պիտի
առնէր, որն սը չուշացաւ :

— Կարծեմ որ հայրս կը ճանչնայ այդ Պ. Էտմոն աը Բէրէօն,
յարեց Անթոնին :

— Էտմօն, որդարև Էտմօն կը կոչուի: Միթէ իւր մկրտութեան անունը տուի, հարցուց Նիշէթ:

— Չէ, բայց հօրս դահլիճին մէջ հիմա կը յիշեմ որ անոր հասցէտունը դայ, պատասխանեց Անթօնին շառաղիւսով:

— Իրօք, հայրէդ խորհրդակցութիւն խնդրելու եկաւ: Քիչ մը հիւանդ էր, և մայրը այնքան շուտ կը խռովի որ ուզեց զան ապահովցնել:

— Եւ մայրը հանդարտած է հիմա:

— Կատարեալաբէս, ըսաւ Նիշէթ, որ բան մ'ըսելու համար այսպէս կը խօսէր և Էտմօնի այցելութեան բուն պատճառը չգիտաւ կը ձեռքընէր:

— Ինչ՞ ինչ, մտածեց Անթօնին, բան մը չտարակուսիր: Ս

Ետքը յաւելցուց բարձր ձայնով.

— Երէկ եկաւ:

— Այս առաւօտ ալ չեկաւ, հարցուց Նիշէթ:

— Չէ:

— Աղէկ զիտե՞ս, օրիորդ:

— Շատ աղէկ զիտեմ, ըսաւ Անթօնին կարմրելով: Միթէ դաւուր էր:

— Ձան հիմակ փողոցին մէջ տեսնել կարծեցի:

Անթօնին չպատասխանեց ու աչքերը խոնարհեցուց:

Նիշէթ զան մինչև վերջին ծայր կը մղէր:

— Քիչ մը առաջ հոս եղող տիկնոջ համար՝ որ դերձակուհւոյս անունը դրկեցի՝ զգալի մը կ'ուզէի յարեց օրիորդ Տըվօ:

— Այս տեսակ:

Եւ Նիշէթ նոր զգալի մը ցուցուց:

— Այո, այսպէս թող ըլլայ:

— Ատոր նմանը տիկին տը Բէրէօի ծախեցի:

Անթօնին չպատասխանեց. արդէն կը վախնար որ Էտմօնի վրայ շատ խօսեցած չըլլար և սակայն չէր ալ տարակուսեր որ Նիշէթ այնքան հոգ ունենայ խմանալու թէ ինք անոր վրայ ինչ կը մտածէր կամ կ'ըսէր:

Սորելուկ ծախողը այս դժուշութիւնը հասկըցաւ, բայց միտքը գրաւ որ անմեղ աղջիկը նորէն խօսելու տայ:

— Այո, ըսաւ, նոյն իսկ իւր որդին ընտրեց այս զգալը: Այնքան ճաշակ ունի: Երևակայէ, օրիորդ, որ մօրը վրայ այնպէս հոգ կը տանի ինչպէս եղբայր մը քրոջ, էրիկ մը կնկան վրայ: Ա՛հ, երջանիկ ըլլալու արժանի է և սակայն . . .

— Եւ սակայն, կրկնեց Անթօնին:

— Եւ սակայն, աւելցուց Նիշէթ, երկու երեք օրէ ՚ի վեր չեմ գիտեր ինչ ունի, բայց տխուր և կասկածոտ կ'երևի: Յայտնի է որ մտքին մէջ խորհուրդ մը ունի: Երէկ մայրը այս բանիս վրայ կը խօսէր ինձ: Մայրը շատ կը սիրէ զիս, խիստ պղտիկութեանս մէջ ճանչնալուն բոլոր իւր զգացումները ինձ կը պատմէ:

— Եւ զիտէ որդւոյն տրամութեան պատճառը, հարցուց Անթօնին աստիճանորձ մը մատնեցուն մէջ սահեցընելով և սոյն աստիճանորձին վրայ աւելի ուշադրութիւն ընել ձեռքընելով քան թէ ըսած խօսքին:

— Այո, օրիորդ. ո՛հ, որդին բան մը չպահէր իրմէ:

— Ի՞նչ ունի ուրեմն:

— Կարգուիլ կ'ուզէ:

— Ինչո՞ւ ուրեմն չկարգուիր:

Հարկ է՝ ըսել թէ Անթօնինի սիրտը այս խօսակցութեան սկիզբէն ՚ի վեր կը բարախէր, որուն մէջ անընդհատիկ կը նետուէր, միշտ մտածելով թէ անխօսեմութիւն էր անձանթ կնկան մը հետ այսպէս խօսելը, որնոր որչափ ալ չաշխատէր իւր զաղտնիքը պիտի իմանար:

Բայց Անթօնին ճշմարտիւ կրնա՞ր երկնչիլ զգացում մը յայտնելու որ ինքն իսկ չէր հասկընար: Իսկ Նիշէթի Էտմօնի կողմէն դաւը դուշակելու համար, այնպէս պարզամիտ էր որ եթէ զան իրեն ըսելու անգամ ըլլային, դարձեալ հաւատալու պիտի վարանէր:

— Չկարգուիր, շարունակեց Նիշէթ, քանզի չգիտէր թէ իւր սիրած երիտասարդուհին իրեն կը սիրէ:

— Հետը երբէք խօսեցած չէ:

— Երբէք, զան տեսած է միայն :

— Եւ տեսնելով միայն սիրած է :

— Այո՛, ասիկա անհաւատալի է, այնպէս չէ՛, օրիորդ, բայց կ'երևի թէ այնպէս գեղանի, շնորհալի, քաղցր ու համեստ է այդ աղջիկը, որ զան մէկ տեսնելով բաւական է բոլոր կեանքը անոր նուիրել :

Նիշէթ կը վախնար թէ շատ հեռուն գացած չըլլար :

— Ահա, օրիորդ, աւելցուց սաստկութեամբ մը, ահա պղտիկ օձիքներ պարզ վաւանիկներ մը որ երիտասարդուհւոյ խիստ յարմար են :

— Այո՛, այո՛, թոթովեց Անթօնին, այս օձիքը խիստ սիրուն է . . . կ'աւնում զան :

— Ուստի այս երկու դգակները աւ օձիքը . . . ըսաւ Նիշէթ, որ կ'ոզէր օրիորդ Տըվօի ժամանակ տալ, որպէս զի յուզմունքը փարատէ :

— Այո, պատասխանեց Անթօնին առանց դիտնալութէ ինչկ'ըսէ :

Նիշէթ ոտքի վրայ ելաւ :

Եթէ Անթօնին չքաշուէր, պիտի ըսէր անոր :

«Ե՛հ, ալ Էտմօնի վրայ չես խօսիր :

Նիշէթ որ աչքերը անոր վրայէ չէր հեռացըներ, հասկըցաւ անոր մտաբէն անցածը, բայց չմտնուելու համար անգամ մ'ալ թողուց որ Պ. ալ Բէրէօի վրայօք խօսակցութիւնը բժշկին աղջիկը սկսի :

— Ուրիշ բան մը չեն ուզեր, օրիորդ, հարցուց Նիշէթ խաւաքարալ գոցելով :

— Զէ, շնորհակալ եմ, պատասխանեց Անթօնին :

Նիշէթ կրակարանին վրայէն ձեռնոցները առնելով սկսաւ դանդաղօրէն հագնիլ, որպէս զի Անթօնինի ժամանակ տայ Էտմօնի խօսակցութիւնը նորոգելու :

Անթօնին 'ի գուր կը փնտռէր :

Ալ տարակոյս չմնաց որ Էտմօնի սիրահարած անձը ինքն էր և խիստ կ'ախորժէր այս բանս ըսելու, բայց և այնպէս անոր վրայ կցկցանքով

նորէն խօսելու չէր համարձակել : Քանի ժամանակը անցնէր, այնքան դժուարութիւններ կը դանէր Նիշէթի հետ այն խօսքը բանալու առանց դոնէ անոր զարմանքն չգրգռելու :

— Ուրեմն օրիորդ, կը մեկնիմ, ըսաւ Նիշէթ ձեռնոցները հագնելէն ետքը, և կը յուսամ սր յաճախորդութիւնդ կը շարունակես :

— Ո՛ւր կը բնակիս, հարցուց Անթօնին :

Նիշէթ իր հասցէն տուաւ :

— Կեցիր վճարեմ, ըսաւ օրիորդ Տըվօ :

— Հոյ չէ, օրիորդ, ասոնց համար ուրիշ անգամ կը վճարես :

Նիշէթ դէպ 'ի գուր յառաջացաւ :

Անթօնին անոր հեռանալը տեսնելով լաւագոյն համարեց ահամայ բան մը ըսել, քան թէ Էտմօնի վրայ չխօսիլ :

Այն վայրկեանին որ Նիշէթ ձեռքը բանալիին տարաւ, Անթօնին վարանելով մը «Օրիորդ» կանչեց : Եւ կարմրելով աչքերը խորհարհեցուց, քանզի չէր դիտեր թէ ինչ պիտի աւելցընէր :

— Բան մ'ունիմ ինձ ըսելու, օրիորդ, հարցուց Նիշէթ :

— Այո՛, դոցէ՛ գուր :

Նիշէթ հնազանդեցաւ :

— Իմ ըսելիքս խիստ զարմանալի պիտի թուի, բայց ճշմարիտը այդ Պ. Էտմօն ալ Բէրէօի վրայ կարեկցութիւն մը կ'ըզամ :

Նիշէթ բերանը բացաւ խօսելու :

— Ար բացատրեմ խօսքս, ըսաւ Անթօնին, բան մը կայ սր հայրս և ես միայն դիտենք :

— Ինչ կայ ուրեմն :

— Պ. Էտմօն իր կարծածէն շատ աւելի հիւանդ է : Քանի որ զինքը կը ճանչնաս, հասկըցուր որ խնամուի . . . որ մեկնի, չէ՛, չմեկնի, բայց լաւ հոգ տանի իր անձին և ստէպ գայ հայրս տեսնելու, որ իւր որդւոյն պէս պիտի խնամէ : Ար հասկընանս, այնպէս չէ՛, օրիորդ, թէ ինչու այս պատանուոյն վրայ կը կարեկցիմ՝ այն ատենէն 'ի վեր երբ իմացայ թէ իւր առողջութիւնը վտանգի մէջ է . . .

Նիշէթ որ այս խոստովանութեան բնաւ չէր սպասեր և Էտմօնը եղբօր պէս կը սիրէր, խիստ գունատեցաւ :

- Ըսածդ ճշմարիտ է, օրիորդ :
- Շատ ճշմարիտ :
- Եւ Պ. Կամօն Տիւմանդ է :
- Վստանդաւոր :
- Ուրեմն Վիսթավ չէր սխալեր . . . մըմնջեց Նիշէթ :
- Ինչ կ'ըսես, հարցուց Անթօնին :
- Ա'ըսեմ թէ, պատասխանեց Նիշէթ առանց իւր յուզումը կարենալ ծածկելու՝ դուն հրեշտակ մ'ես և չեմ գարմանար ալ որ էտմօն դքեզ այնքան սիրէ :
- Ինչ կը նշանակէ ատիկա . . . գոչեց Անթօնին :
- Ատիկա կը նշանակէ, օրիորդ, որ ալ կեղծելու հարկ չկայ, Պ. տը Բէրէօի սիրած աղջիկը դու ես և թէ դու ալ գուցէ առանց իմանալու կը սիրես զան, բայց ասիկա օրիորդ մեր երկուքնիս մէջ դադանիք մ'է և կ'երդեւում որ մէկու մը չսիրի յայտնեմ : Օր մը այս ամենը կը բացատրեմ քեզ և պիտի տեսնես թէ իմ՝ ըրածիս քիչ մը երախտագիտութիւն կը պարտաւորիս : Մտածէ, օրիորդ, որ Կամօն Տիւմանդ է, ամենափոքրիկ յաւ մը կրնայ իր հիւանդութիւնը սաստիկացնել և թէ իր երջանկութիւնը ու կեանքը քու ձեռացդ մէջն են :
- Անթօնին շփոթեցաւ այս խոստովանութենէն, որ Նիշէթ իր յուզման մէջ չէր կրցեր զգալ . բայց շուտ մը իւր հողոյն բոլոր ամբօթութեամբ պատասխանեց, և իբր թէ առանց բացատրութեան գուշակեր էր թէ այնպիսի սրտի մը հետ էր յարաբերութիւնը՝ որ իրենին խիստ համաձայն էր :
- Այս հիւանդութեան վրայ բան մը մի ըսեր մօրը : Առանց անիկա իմանալու գուցէ պիտի բժշկուի որդին :
- Այս բանիս համար քու սէրդ բաւական է, օրիորդ, և երբ իմանայ որ զինք կը սիրես խիստ երջանիկ պիտի ըլլայ :
- Բայց չըսի . . .
- Լուռութիւն, ըսաւ Նիշէթ մէկը կու գայ :
- Իրօք ատիկին Ամէլլիքն էր որ Անթօնին սենեկին դռուը կը բանար :
- Այսպէս, օրիորդ, ըսաւ Նիշէթ, իմ հասցէս ունիս, և եթէ բանի մը պէտք ունենաս, բաւ մը միայն կրնաս գրել ու ես իսկոյն կու գամ :

Անթօնին որ չէր կրնար խօսք մը դանել, գլխու նշանով մը պատասխանեց :

Նիշէթ ողջունելով մեկնեցաւ :

— Վարդապոյն շրջապատող պիտի ունենաս, ըսաւ ատիկին Անթէլլիք Անթօնինի :

— Լաւ, կրկնեց այս վերջինը, ահա քեզի համար դրակ մը, սիրելի Ամէլլիք, կը հաւնին :

— Ճիշտ ուզածիս պէս շտապոյն ժապտէններով է : Ա՛հ սիրուն զաւակ, ինչ բարի ես իմ վրայ մտածելուդ :

Եւ ատիկին Ամէլլիք շնորհակալութեան նշան Անթօնինը համբուրեց :



Նիշէթ առաօտուն Անթօնինի տունը ներկայացած ժամանակ, ամենեւին չէր տարակուսեր որ իւր այցելութիւնը այս տխուր ելքը ունենար : Աստա՜հ և ուրախ կու գար իմանալու թէ Կամօն սիրուելու բարեբաղդութիւնը ունէր, արդ վշտաբեկ և յուզուած կը դառնար լսելով որ խեղճ պատանոյն կեանքը վտանդի մէջ էր :

Նիշէթ սարսափած էր : Հիւանդութիւնը, երկիւղը, տրամուլթիւնը այնչափ անընդունակ էին իր սովորութեանցը, որ շուտ մը միտքը օրիորդ Տըվօի ըսածներէն չարաչար յափշտակուելով, կը մտածէր թէ ինչ պատասխան պիտի տար Կամօնի երբ ժամը երկուքին լուր առնելու գար : Անգամ մը խոյս տալու փափաք ունեցաւ :

Ամեն ինչ սև գոյն կ'առնուին իր աչքին և բան մը չէր ուզեր ըսել կամ ընել այս գտուն եղելութիւնը Վիսթավի իմացընէն և անոր խորհուրդ հարցընէն առաջ :

Հետևապէս օրիորդ Տըվօի իբեհն հաղորդած աղետալի գէպէն տա՛կա ին բոլորովին վրդոված, հետևեալ նամակը Տօմնի գրեց .

»Սիրելի Ախւթաւ, այս նամակը առնելուդ պէս զիս տեսնե-
 »նելու եկուր . մեր խեղճ բարեկամը Էտմօն բոլոր զինքը սիրողնե-
 »ներուն մեծ կարօտութիւն ունի : Ար յիշես որ ստէպ արտում կը
 »տեսնէի զքեզ ու պատճառը կը հարցընէի . և դու կը պատասխա-
 »նէիր թէ բարեկամիդ առողջութեան վրայ երկիւղ ունէիր , թէ
 »երբեմն անոր հազալը կը լսէիր , թէ հայրը երեսուն տարեկան մե-
 »ուած էր , և քանի Էտմօն նոյն տարիքին մտենար , այնքան քու
 »երկիւղը կը սաստկանար : Ի՛հ , սիրելի բարեկամս , քու կանխազ-
 »գեցութիւններդ քեզ խաբած չէին : Էտմօն Պ. այլ Բէրէօի հիւան-
 »դութեամբ արտաժէտեալ է . օրիորդ Անթօնին ըսաւ ինձ , որնոր
 »իր հօրմէն իմացած է : Ուղեցի անմիջապէս այս բանս քեզ իմացը-
 »նել , որպէս զի շուտ մը զան փրկելու միջոցները մտածենք թէ կա-
 »րելի է : Օրիորդ Տրվօ այս պոյժը ինձ տալէն ՚ի վեր սիրտս ճմլուած
 »է , դժուարաւ կը շնչեմ և այս նամակը գրելու ատենս կ'արտա-
 »սուեմ : Էտմօն ժամը երկուքին տունս պիտի գայ , եկուր պէտք ե-
 »ղածը կարգադրէ , քանզի կը սոսկամ որ առանց քեզ տեսնելու
 »վրդովումն չպիտի կրնամ ծածկել իրմէ : Ասկէ զատ աս պղտի Ան-
 »թօնին հրեշտակ մ'է . վստահ եմ որ կը սիրէ մեր բարեկամը ու
 »համոզուած եմ որ Էտմօնի հիւանդութիւնը և Պ. Տրվօի յայտնու-
 »թենէն սրտին մէջ ծագած համակրութիւնը այս սէրը բորբոքելու
 »նպատակն է : Ահա իմ չուոյս հետեանքը , որ ինչպէս զիտես բա-
 »րի գիտաւորութեամբ ըրի , բայց հիմակ կը ցաւիմ ընելուս : Եթէ
 »քու տեղը ըլլայի , պիտի երթայի Պ. Տրվօի ու ըսէի որ անպատ-
 »ճաւ պէտք է որ աղատէ Էտմօն : Խեղճ պատանին գեռ անկողին ին-
 »կած չէ , գեռ բանի մը վրայ կասկած չունի , դուցէ տակաւին ժա-
 »մանակ ունինք զան փրկելու : Գիտես որ բարեկամիդ համար ինչ որ
 »պէտք է կ'ընեմ :

»ՆԻՇԷԹ : «

Նիշէթ այս նամակը ծալլեց , կնքեց ու պատանին վրայ Ախւթավի
 հասցէն դնելէն ետքը գոնապանուհւոյն քով իջնելով ըսաւ .

«Շուտ այս նամակը նշանակեալ հասցէին ղրկէ , և ըսէ որ պա-
 տասխանի մը սպասէ :»

Գոնապանուհին նամակը բանբերի մը յանձնեց «ը Ախւթավի տու-
 նը դնաց :

Այս միջոցին , Էտմօն մօրը տունը երթալու տեղ : որ ուշ պառկե-
 լուն համար տակաւին կը քնանար անշուշտ , նախ ըստ բաղդին քա-
 լեց խորհուրդներով , սիրով ու ակնկալութեամբ լի :

Այսպէս վայրկեան մը թուամբին վրայ թափառելէն ետքը , մեքե-
 նայարար բարեկամին տունը դիմեր էր , որպէս զի առջի իրիկուան
 ընդունած նամակը անոր ցուցընելով՝ զգացած երջանկութիւնը հա-
 ղորդէ :

Ախւթաւ հոն չէր , բայց ծառան որ Էտմօնը կը ճանչնար և զի-
 տէր թէ Էտմօն իւր տիրոջ տունը իւր յատուկ տանը պէս էր , աղա-
 չեց որ սպասէ , վստահեցընելով որ Ախւթաւ չպիտի ուշանար վե-
 րադառնալու :

Էտմօն որ ուրիշ բան մը չունէր ընելու , հոն մնաց և բազմոցի մը
 վրայ պառկելով իւր երջանկաւէտ ու բազմազուարճ մտածութեանց
 մէջ ընկղմեցաւ :

Հազիւ կէս ժամ էր իր հոն ըլլալը , երբ «նիշէթ բանբերը՝ հա-
 սաւ :

— Պ. Տօմոն հոս չէ , պատասխանեց ծառան բանբերին , նամակը
 թող տուր :

— Չէ , ըսաւ այս մարդը , պատասխանի մը պիտի սպասեմ :

— Ուրեմն սպասէ :

Բանբերը նստաւ : Բայց քառորդ մը անցնելէն ետքը սկսաւ նեղ-
 սրտիլ : Ուստի ոտքի վրայ ելաւ ու կերակրոյ սրահին մէջ պտրտելով
 ըսաւ .

— Եթէ ամեն դացած տեղերս այսքան սպասել հարկ ըլլար , միւս
 անգամ զիս դռները անկարելի պիտի ըլլար :

— Ի՞նչ ընեմ , բարեկամ , ըսաւ ծառան , տէրս հոս չէ , հետե-
 ւաբար չեմ կրնար նամակդ իրեն տալ :

Մարդը քիչ մ'ալ համբերելէն ետքը , սկսաւ նորէն մրմնջել .

— Գոնապանուհին պատուիրեց որ առանց պատասխանի չդառ-
 նամ :

— Տուր նամակը , ըսաւ ծառան սիրտը թափելով :

— Տեսար որ տէրդ ներսն է , ըսաւ բանրերը նամակը տալով :

Ծառան ուսերը թոթովեց չպատասխանեց . նամակը ձեռքը կտանձնի եղած սենեակը մտաւ :

— Նայեցէք , պարոն Էամօն , ըսաւ երիտասարդին որուն հետ շատ տեսնուելուն ընտանեացած էր :

— Ինչ կ'ուզես , բարի Իլիէրս , հարցուց տը Բէրէօ :

— Պարոնին համար նամակ մը բերեր են և մարդը առանց պատասխանը առնելու չուզէր երթալ և կ'աղաղակէ թէ չկրնար ժամանակ կորսնցընել :

— Ինչ կ'ուզես որ ընեմ :

— Գուք որ Պ. Աիւսթափի բարեկամն էք ու բոլոր իր գործերուն ծանօթ , դուցէ կրնաք զիտնալ թէ ինչ է և սրտասխանն ալ տալ , այս մարդը զիս կը ձանձրացընէ սեղանատան միջ : Եւ այս ըսելով Իլիէր նամակը Էամօնի կը յանձնէր որ հասցէն նայելով ըսաւ .

— Հա՛ , Նիշէթէն է : Ինչ ունի արդեօք Աիւսթափին ըսելու : Անշուշտ այս առաւօտ Անթօնիին ու իր մէջ անցածը կը պատմէ : Աւերջապէս ինծի համար գաղտնիք չկայ . պատասխանն ալ կու տամ :

Այս ըսելով Էամօն նամակին կնիքը պատուեց ու սկսաւ կարդալ :

Երբ նամակին վերջին բառին հասաւ , հայլիկ մը մէջ նայեցաւ . մահուան պէս դունատ էր :

— Ինչ ըսելու է , հարցուց ծառան :

— Ըսէ թէ շատ աղէկ , Պ. Աիւսթափ Տօմոն նամակադրին տունը պիտի երթայ :

Էամօն ձեռքը ձակատը տարաւ . պաղ քրտինքով ողորուած էր և երկու խոշոր արցունքներ աչքերէն վար ինկան :

Իւր բոլոր խորհուրդները այս երկու արցունքին մէջ էին :

— Խեղճ մայր իմ . . . մրմնաց :

Եւ նամակը զրպանը գրաւ : Ալ ևս պէտք չունէր զան կարգաւոր , քանզի գոյ սորվեր էր :

Աստեն զլիարկը առաւ , և խնթի պէս վար իջնելով սկսաւ հոն հոս քայլել անզոյշ և անմտադիր :

Յանկարծ կանկ առաւ ուր ըլլալը նայելու համար :

Ծառուղի ճամբուն վրայ էր :

Մարդիկ կ'անցնէին ծիծաղելով . պահ մը զանոնք նկատեց , ետքը դէպ 'ի կօսօ փողոցը գիմեցով Նիշէթի տունը գնաց , որնոր խեղճ երիտասարդին աժդոնութիւնը տեսնելով սարսուփեցաւ :

— Աիւսթափի տունը մէկը զրկեր էիր , ըսաւ Էամօն յուզեալ ձայնիւ ու հրատապ ձեռքը անոր ներկայացուց :

— Այո՛ , պատասխանեց Նիշէթ գուշակելով թէ դժբաղդութիւն մը պատահած էր :

— Աիւսթափ հոն չէր , բարի Նիշէթս , և ես բացի նամակը : Նիշէթ կսկծալի ձայն մը արձակելով երեսը ձեռացը մէջ գոցեց :

— Ինչ ըրի Աստուած իմ . . . գոչեց ծնկան վրայ իյնալով :

— Ինչ որ պէտք էր ընել ըրիր , Նիշէթ : Այս նամակը հրեշտակի մը զրուածն է : Պէտք էր որ ուշ կամ անագան ճշմարտութիւնը իմանայի : Ալ չխօսինք ասոր վրայ : Եկայ իմ վրայ ունեցած քաղցը և սուրբ սիրոյդ համար շնորհակալ ըլլալու և սրտախրելու որ այս ամենուն վրայ մօրս խօսք մը չընես , քանզի կը մեռնի :

Այս խորհուրդը Էամօնի աչքերը նորէն արտաստօք լեցուց :

— Ես որ այնքան երջանիկ էի . . . մրմնաց : Անթօնիներ տեսա՛ր , ըսաւ բարձր ձայնով Նիշէթին :

— Այո՛ , պատասխանեց Նիշէթ աչքերը սրբելով :

— Ի՞նչ իմացուց քեզ այս բանս :

— Այո՛ :

— Յուզուած էր :

— Ի՞նչու յուզուած :

— Խեղճ տղայ : Ար սիրէ զիս տաքեմն քիչ մը :

— Ար սիրէ , Էամօն , և գուցէ 'ի դուր կը խռովինք :

Էամօն տխրութեամբ ժպտեցաւ : Այս ժպտակն կը յայտնուէր որ ինքզինքը պատապարտեալ կը ձանձնար :

— Հնորհակալ եմ, բարի Նիշէթս, շնորհակալ եմ. . . ըսաւ :
Այս միջոցին Կիւսթավ ներս մտաւ, որնոր այս դէպքերուն վրայ տեղեկութիւն չունէր :

— Տնէն կու գամ, ըսաւ Էտմոնին, ըսին թէ իմ հասցէովս նամակ մը առերես :

— Ճիշտ է, ըսաւ Էտմոն, ահաւասիկ : Ներէ զան բանալուս, քանզի դու ինձմէ աւելի պիտի վշտանաս :

Եւ նոյն միջոցին Էտմոն Նիշէթի նամակը Կիւսթավի տուտաւ :

— Աստուած այսպէս կ'ուզէր . . . մրուաց Կիւսթավ աչքերը երկինք վերցընելով և Էտմոնի ըսելու բառ մը չզղանալով :

— Այո՛, Աստուած կ'ուզէր, կրկնեց Էտմոն, բայց Աստուծմէ այն բանին համար միայն կը տրտնջամ որ զձեզ երկուքդ այս գործին մէջ խառնեց, զձեզ իմ բարեկամներս այնքան ուրախ, զուարթ ու առողջ : Ձեզ շատ պիտի ձանձրացընեմ :

— Ինչ կ'ըսես, Էտմոն, գոչեց Կիւսթավ :

— Ո՛հ, այդպէս մի խօսիր, վրայ բերաւ Նիշէթ :

— Ա՛հ իմ սիրելի բարեկամներս, ըսաւ Էտմոն երկտասարդուհւոյն ու երկտասարդին զբուխը բազկացը մէջ առնելով ու համբոյրներով ծածկելով, ա՛հ իմ բարեկամներս խիտա թշուառ եմ : . .

Եւ այս ըսելով, ուժամափ ամոռի մը վրայ ինկաւ ջերմ արտասուքներ հեղեղի պէս աչքերէն վազցընելով :

ԺԵ

Նիշէթ աւ Կիւսթավ առանց խօսք մ'ըսելու Էտմոնի ձեռքերը բռնեցին, քանզի երկուքն ալ հասկըցան որ յոյսն ու մխիթարութիւնը անօգուտ էին :

— Օ՛հ, մարդ ըլլանք, ըսաւ յանկարծ Էտմոն ռաբ ելլելով ու մեկնելու պատրաստուելով :

— Ա՛ւր կ'երթաս, հարցուց Կիւսթավ :

— Երթամ մայրս անտելու ու հետընակաճաշելու, պատասխանեց ար Բէրէօ՝ այնպիսի ցած ձայնով մը որ անսարբերութիւն ցուցնել կը ջանար : Ետքը պիտի տեսնուի՛նք :

— Անշուշտ :

— Ուրեմն ի կրկին տեսութիւն. մնաս բարեսու, բարի Նիշէթս, ըսաւ Էտմոն զան համբուրելով, անգամ մ'ալ շնորհակալ եմ քու երկիւտան հացկերոյթէդ . . . երբեմն կը կրկնենք զան դարձեալ :

Կիւսթավ մինչև դուռը Էտմոնի ընկերացաւ : Բարեկամին հանդարտութիւնը զինքը կը զարհուրեցընէր :

— Չըլլայ որ անխոհեմութիւն մը գործես, ըսաւ անորմէ բաժնուելով :

— Ինչ անխոհեմութիւն կ'ուզես որ ընեմ, ընելու ժամանակը չէ, պատասխանեց Էտմոն ժպտելով :

— Քաջութիւն, բարեկամ, քաջութիւն :

— Ունիմ. ինչո՞ւ պիտի յուսահատիմ : Մարդիկ երբեմն կրնան սխալիլ այնպէս չէ, և Աստուած միշտ բարի է : Օ՛հ, դեռ ամեն բան ըմբոցած չէ : Էտմոն գորովանօք Կիւսթավի ձեռքը սեղմելով վար իջաւ :

— Մեզ վստահացընելու և չվշտացընելու համար է որ այսպէս կը խօսի, ըսաւ Կիւսթավ Նիշէթին՝ դուռը դոցելէն ետքը, բայց մահճը հողոյն մէջ կը կրէ, կը անտես : Ասիկայ սոսկալի է, ինչո՞ւ այն նամակը գրելիլ ինձ :

— Կրնայի այս բանս մտքէս անցընել : Մի յանդիմանէր զիս Կիւսթավ, արդէն չարաչար կը տառասլիմ :

Եւ Նիշէթ իր արտաստալի բառերն ընդ նորէն կը սրբէր :

— Նայինք, ըսաւ Կիւսթավ, սուս յոյսերով չպարարինք, իրերուն գէշ կողմը նկատենք և եթէ սխալեր ենք, աւելի աղէկ : Էտմոն չորոհ հինգ տարի ունի միայն ապրելու :

— Ի՞նչ Էտմոն, մրմուաց Նիշէթ :

— Է՛հ, պէտք է որ այս չորս կամ՝ հինգ տարիները երջանկութեամբ անցընէ և այս երջանկութիւնը հաստատելը ինձ կը վերաբերի : Գանգիլ Նիշէթ, եթէ Էտմոնի մեծ սքոյլը զգամ որ ամենափոքր

իսկ մեղադրանաց արժանի եմ, անմիջապէս ինքզինքս կ'սպաննեմ: Օր
բիրոյ Տրիօ Տօրը հետ առանձին կը բնակի:

- 2է, խնամակալուհի մը ունի հետը:
- Հոգ չէ:
- Կ'ուզեն զան տեսնել:
- Այո:
- Ինչո՞ւ համար:
- Որոշումն ըրած եմ:

Կիւսթավ Կիշէթը համբուրելով մեկնեցաւ: Երբ ծառուղւոյն
անկիւնը անհետացաւ, Կիշէթ ցփսիւն առնելով Վասրէնի եկեղե-
ցին դնաց, ծնկան վրայ եկաւ և մտմ մը վառեց. ասոր վրայ քիչ
մը հանգարած տուն վերագարձաւ:

Այս միջոցին Էտմօն մօրը տունը հասեր էր, որ քունէն նոր ար-
թնցած առջի գիշերուան յուզմունքները բոլորովին մոռնալով ըստ
սովորութեան ժպիտով ու համբոյրով մ'ընդունեց որդին:

Էտմօն խիստ ճգանց հակառակ չէր կրնար նուաճել իւր արտմու-
թիւնը և այն դժնդակ մտածումները, որոնց մէջ առաւօտեան նա-
մակը գինքը նետեր էր:

Երկու երեք անգամ տիկին տը Բէրէօ հարցափորձեց: Որդւոյն
թողճութիւնը սիրոյ առաջին տաղտապանաց կու տար:

Ո՛հ, երբ սիրտը յուսալու սկսի, այնուհետև խիստ դժուարաւ կը
տարակուսի, և հոգւոյ այն յաճախակի յետաշրջումներէն միով Էտ-
մօնի մօր առջի գիշերուան սոսկալի կանխազգացումներէն ետքը՝ ու-
նեցած երկխոսները կարծես թէ բոլորովին ջնջուեր էին Աստուծոյ
վրայ գրած վստահութեամբը:

Էտմօն նախաճաշի ժամանակ կրցածին չափ ինքզինքը զուարթ ցու-
ցընելու աշխատեցաւ, Կիշէթի հանդիպելը, անոր հետ ժամադրու-
թիւնը մօրը պատմեց, և ապա սենեակը քաշուեցաւ:

Ան ատեն, այսպէս ըսելու համար իր անձին գիմաց նստաւ և գլու-
խը երկու ձեռաց մէջ սկսաւ մտածել:

«Ինչ զարմանալի բան է կեանքը, կ'ըսէր: Օր մը, Էտմոյ մը աշ-
խարհ կու գայ, իւր երիտասարդ ծնողքը ուրախութեամբ ու խնամով

կը պաշարեն զան . . . իբր բարիք մը կ'ընդունին և իրենց երկու
սրտից անսանելի բարախումները կը սիրեն անոր վրայ: Իւր աշ-
քերը լոյսին կը բացուին, հոգին կենաց և համայն բնութիւնը անոր
համար կ'սկսի: Մայրական նայուած մը նորածին մանկան կը հե-
տևի ու կը քննէ. անոր ամենափոքր ցաւերուն վրայ կը խռովի,
իբր մատաղ ծաղիկ մը կը պաշտպանէ որ նոյնպէս միշտ լուսոյ,
ստուերի ու ջրոյ բովանդակութեան կը կարօտի: Չան այնպէս մը կը
մեծցընեն իբր թէ յախտենական ըլլար. սիրտը զգացումներով կը
լեցընեն, միայրը դիտութիւններով ու այսպէս կը զարգանայ: Եւ
այն դարուն համար որ տոյն տղան մարդ պիտի ըլլայ՝ ակնկալու-
թիւններ կը հիմնեն: Ամեն ասպարէզ կը պարզեն անոր առջև,
իւր յօժարութիւնները, վերագտնանքները ու բարեկամութիւնները
կը հետազօտեն: Անոր համար յարաբերութիւններ կ'ստեղծեն, յա-
ռաջագիմութեանը վրայ կը պարծին ու Աստուծոյ կը դո՛հանան:
Աւերջապէս քսան տարու կ'ըլլայ ու քմիքալով կը նայի կենաց
վրայ, որնոր լի հրապուրանօք կ'երևի իրեն. իւր միտքը կը դատէ,
աչքը ամեն հորիզոն կը խորաչափէ, սիրտը կը սիրէ: Ըստ կարգի
ինքն ալ իր վրայ կը յուսայ, մեծ ու բարի գործերու կարող կ'ըզ-
գայ ինքզինքը, իւր շուրջը եզոզներուն երջանկութիւն կու տայ ինչ-
պէս որ երբեմն անոնցմէ ընդունած էր: Ամեն վեհ փառասիրտ թիւնները
կ'արթնան մտքին մէջ, կը ժպտի ապագային, վերջապէս երջա-
նիկ է. ծնողքը սիրով ու խնամով աւարտած գործերնուն վրայ
կը խայտան, և օր մը կը անունն որ այս աղան թողբերուն մէջ ե-
լունդ մը ունի, որ զան անհրաժեշտ պիտի մոռցնէ թէ քիչ ա-
տենէն իւր զխակին հետ մէկտեղ բոլոր իւր անցեալը, անգունին
յոյսերը ու բարօրութիւնը չորս տախտակի մէջ ամփոփուելով հո-
գին մէջ սխալ նետուին, թէ այնուհետև ոչ ինք իւր սիրածները
պիտի տեսնէ և ոչ զինքը սիրողները իրեն պիտի տեսնեն և երի-
տասարդ, աշխոյժ, բարեբաօտիկ, սիրուն և սիրելի արարած մը
իրենց զրկաց մէջ սեղմելու տեղ ծնողքը՝ անոր անուանադրով շի-
րիմ մը միայն պիտի ունենան որպէս զի հոն երթան աղօթեն:

«Ո՛հ, ասիկա սոսկալի է . . . Եւ այն տղան էս էմ»:

«Այսպէս կ'ապրիմ, կը տեսնեմ, կ'ըզամ, կը մտածեմ, կը սիրեմ. բնութեան ամեն իր իմ մէջս հայլի մը կամ արձագանք մը ունի և քիչ ատենէն աչքերս ալ բան մը չպիտի տեսնեն, մարմինս անկենդան պիտի ըլլայ, զլուխս անզղայ նիւթ մը, սիրտս որ այժմ անուան մը համար կը բարախէ, պիտի մեռնի և սէրս մուրցուած ու կորսուած բան մը պիտի ըլլայ: Եւ ոչ մէկը պիտի իմանայ թէ աշխարհիս մէջ պարտաւ տեղ մը կայ և ուրիշ մարդիկ պիտի գան որ պիտի տեսնեն, պիտի զղան, մտածեն, սիրեն ու ինծի պէս մեռնին: . . .

«Այս ասորիքին մէջ սովորաբար ուրախ ու անհոգ կեանք մը կ'անցընեն. անցեալը կարճ է, ապագան յաւերժական կը թուի. . . օրերը առանց հաշուելու կը սահին, սիրտը յուսով ձոխ է: Եւ ես, ես որ աղգարարուած եմ հիմակ, ես, որ հեռեւաբար երկու անգամ պիտի մեռնիմ, ամեն առտու պիտի ըսեմ, Միթէ՞ այս իրիկուան համար է. ամեն իրիկուն պիտի ըսեմ, Միթէ՞ վաղուան համար է և ապա օր մը մայրս ձիւ մը պիտի արձակէ որ ես չպիտի լսեմ, ու ամեն բան պիտի լմնայ: . . .

«Քահանայ մը՝ որու ձայնը չպիտի արթնցընէ զիս բարձիւ վրայ պիտի աղօթէ. մարդիկ զիս՝ վերջին, անձուկ ու ցուրտ անկողնոյս մէջ պիտի պառկեցընեն, և վայրկեան մը պիտի դայ որ դագաղիս մէջ աւելի հանդարտ պիտի կենամ, քան այսօր բոլոր աշխարհ առջևս ունենալով: Մարմինս միենոյնը պիտի ըլլայ, քիչ մ'աւելի վատուած, քիչ մ'աւելի գունաւոր. ահա բոլորը, բայց երկրային բաները ալ անոր վրայ իշխանութիւն չպիտի ունենան, և հոգիս Աստուծոյ քով պիտի երթայ, կ'ըսեն:

«Եւ ինչ որ ալ ընեմ, այս այսպէս պիտի ըլլայ:

«Եւ սակայն կը սիրեմ. . . նախ մայրս՝ որ բոլոր իւր կեանքը յօծարութեամբ կու տայ, բայց չկրնար իմն ապահովեցընել. Վիսթամ՝ որ այսօր այս հիւանդութիւնս կ'ընդունէր զիս երջանիկ ընելու համար. Անթօնին՝ որ երեք օր է միայն տեսնել և որ արդէն իւր սիրոյն ու զթութեան ցոյցը տուաւ. Նիշէթ՝ այն բարեօրու աղջիկը որ անկեղծօրէն պիտի լայ իմ վրայ. և այս ամե-

նուն հակառակ ճամբուս մէջտեղը պիտի կենամ ու իմ ծանօթներս իրենցը առանց ինծի պիտի շարունակեն: . . .

«Եւ ես, որ կու լայի սաւեւ մտածելով թէ օր մը մայրս պիտի մեռնէր: . . . Օրհնեալ ըլլաս Աստուած իմ, որ այս վիշտը ինձ կը խնայես:»

Էտմօն այս խորհրդածութիւններէն՝ որոնցմէ ակամայ կ'ախորժէր սիրտը ճմլած, ելաւ ու վայրկեան մը սենեկին մէջ պտտելով պատահանին քով գնաց, վարագոյրը բացաւ և փողոցին անցորդները դիտեց, ետքը Անթօնինի անուր արտասանելով, սեղանին քով եկաւ, նստաւ, զլուխը ձախ ձեռքին կոթնոց և մեքենայապէս սկսաւ օրիորդ Տըլօլի գրել:

«Անթօնին, կարծեմ թէ այս առտուընէ՞ ՚ի վեր աւելի կը սիրեմ՝ «զքեզ: Եկեղեցոյ մէջ անուշտ ինծի համար աղաչեցիր Աստուծոյ: «Այս որչափ անցքեր երեք օրուան մէջ: Ի՞նչ ընեմ հիմակ: Ար մեկ-«նիմ քանի որ դու խրատեցիր: Մեկնիլ: Եւ ուր երթամ: Հարաւա-«յին կողմերը մթնոլորտ մը փնտռելու որպէս զի քանի մ'ամիս աւելի ասրիմ: Հիւանդ ըլլալս մօրս յայտնեմ: Քեզմէ հեռանամ: Օտարներու քով տանիմ իմ տրամութիւնս, ձանձրոյթս ու հիւանդ-«դութիւնս: Նոր երկնքի մը տակ, պանդոկի սենեկին մէջ կեանքս «վերջացընեմ: Մահուան խարդախութիւն ընեմ, և ինչո՞ւ համար:

«Եւ սակայն, եթէ Աստուած և դու ուզէք, կրնամ տակաւին եր-«ջանիկ ըլլալ, և այն աղետալի լուրը որ այս առտու իմացայ կրնայ «ինձ բարօրութիւն սլատձառել: Այ՛ն արարած մը որ երեք տարի «երջանիկ ըլլալուն վրայ վստահ ըլլայ: Ես կրնամ: Սիրած կնիկի մը «հետ երեք տարի անցընել, յաւիտենականութիւն է: Եթէ քեզի «գայի, Անթօնին ու ըսէի «Քիչ ժամանակ ունիմ ապրելու, բայց քեզ «ամէ կախում ունի որ սոյն ժամանակը բարեբաստ կամ չարաբաստիկ «օրհնեալ կամ անիծեալ ըլլայ: Ձոհէ՛ անձգ, կինս եղիբ և այն քա-«նի մը տարիները որ դեռ Աստուած պիտի շնորհէ ինձ, ինչ որ մարդ «մը իւր սիրած կնկան համար կրնայ ընել, ստեղծել ու երազել, ես «պիտի ընեմ, ստեղծեմ ու երազեմ քեզի համար, ինծի ընելու ցո՞»

«Տողութիւնդ կենացս հետ պիտի վերջանայ . քանզի երբ ես մեռնիմ
 «Ղու ազատ պիտի ըլլաս և դեռ նորահասակ՝ իմ հետս սկսած երջան-
 «կութիւնդ նոր ամուսնոյ մը հետ պիտի կրնաս շարունակել : Մօրդ
 «հոգւոյն համար որ մեռած է , իմ մօրս համար որ իմ մա-
 «հուամբս պիտի մեռնի , իմն եղիր , Անթօնին , և երբ Աստուած զիս
 «հիբեն կոչէ , քու ինձ տուած մխիթարութեանդ համար երախտագէտ
 «հոգւով իրեն պիտի երթամ : Ըրէ ասկիա , Անթօնին , ու օր մը պիտի
 «կրնաս ըսել . — Բարեգործութիւն մը ըրի : Թշուառ մը կար , որ
 «առանց ինձի հայհոյելով ու նզովելով պիտի մեռնէր և իմ՝ շնոր-
 «հօքս , իմ սիրոյս շնորհօք ցաւելով այլ ոչ անիծելով բաժնուեցաւ
 «կեանքէն :

«Պիտի տեսնես Անթօնին թէ ասկիա ապաղային համար ինչ քաղցր
 «մտածութիւն պիտի ըլլայ քեզ և ինչպէս ըրածիդ վրայ պիտի հպար-
 «տանաս : Ետքը ո՞վ գիտէ :»

Էտմօն այս սկսած խօսքը չշարունակեց , գրիչը ձեռքէն ինկաւ :

Չարմանալի՛ բան , յուսալու գաղափարը կը լքանէր զինքը :

Յետոյ այս գրածը կարդաց ու պահ մը խորհելէն ետեւ , կտոր կտոր
 ըրաւ զան ու կրակարանը նետեց :

«Ինչ անմիտ եմ , գօչեց , միթէ մեկնելու խորհուրդը չտուաւ
 ինձ : Ինչ իրաւամբ պիտի խնդրեմ այդ պղտիկէն որ իւր առողջ
 ջութիւնը իմ հիւանդութեանս ու կեանքը մահուանս հետ միացընէ :
 Ինչ իրաւամբ գիտի մը պիտի տամ իրեն իբր ամուսին : Ինչ իրա-
 ւամբ իւր նորափթիթ ու գեղեցիկ օրերը՝ շիրմի վրայ նետուած
 ծաղկներու պէս պիտի յափշտակեմ : Մանաւանդ թէ կը սի-
 բէ՞ զիս , կրնայ սիրել որուն ձեռնոցը տալու ժամանակս խօսք մը
 ուղղած եմ , ու միայն երկու անգամ զիս տեսած է : Իւր գթու-
 թեան մէկ խլրտումէն պէտք է որ խարուիմ : Օ՛ն , խենթ էի , ա-
 նիծեալ , խիստ անիծեալ մէկն եմ :»

Եւ Էտմօնի գլուխը երկու ձեռքով մէջ ինկաւ :

«Ի՛՛հ , կրկնեց պահ մը ետքը , եթէ անորմէ սիրուելու իրաւունք
 չունիմ , բայց արտօնութիւն ունիմ զան տեսնելու , սիրելու և իս

րեն հասկը ցընելու որ զինքը տեսած օրէս ՚ի վեր իւր մտածմուն-
 քը իմ մտածմանս հետ միացուցած եմ : Աննացս մնացեալ օրերը
 իւր երջանկութեան համար կ'ուզեմ գործածել : Ասյ այն մար-
 դուն որ Անթօնինէ սիրուելով զան չպիտի երջանկացընէ : Երթամ
 Պ . Տըվօն դանեմ , ամեն բան բացատրեմ , բոլոր ճշմարտութիւնը
 խոստովանիմ ու խնդրեմ որ զիս իւր տունը որդւոյն պէս ընդու-
 նի : Անթօնինի ալ աղաչեմ որ զիս եղբօրը պէս սիրէ . այսպէսով
 իւր առաջին զղացմանց ամիփութիլը կը տեսնեմ : Այսուհետեւ ոչ
 իբր կին մը այլ իբր տղայ մը պիտի սիրեմ զան : Մտալուս մահս
 պիտի ձերացընէ զիս իւր աչացը ու խրատներս մտիկ պիտի ընէ :
 Աէրս գրեթէ հայրական պիտի ըլլայ : Իւր ամուսինը երբ ինչ ըլ-
 լալս գիտնայ չպիտի նախանձի ինձմէ : Այո՛ , այս լաւագոյն է ,
 չպիտի կարգուիմ , ու մահուանս վիշտը անոնց միայն կրել պիտի
 տամ , որ բնութիւնը իմ քովս դրած է : Այս կերպով մայրս վեր-
 ջին տարիներէս չպիտի զրկեմ , բոլորովին իբր պիտի ըլլամ ու
 իւր բաղկացը մէջ քնանամ :»

Էտմօն այսպէս կը մտախոհէր , այնքան իւր խորտակեալ սիրտը
 ճարակ մը դանելու պէտք ունէր . ետքը գօրս ելաւ Պ . Տըվօն տես-
 նելու համար , բայց շիտակը աւելի Անթօնինի պատահելու յու-
 սով :

Այս միջոցին Վիսթավ Լիլ փողոցը հասեր էր , բոլոր ճամբան
 մտածելով թէ ինչ առթիւ կրնար Անթօնինի հետ խօսիլ :

«Բայց վերջապէս , ըսաւ , պէտք է որ իրեն խօսիմ և ըստ իմ
 կարծեաց , ազատախօս միջոցները լաւագոյններն են : Էտմօնի բա-
 րորութեան համար է խնդիրը :»

ԺԶ

Վիւսթավ Լիլ փողոցը հասնելով՝ Պ. Տըվօի դուռը զարկաւ :
— Հաճէ՛, ըսաւ դուռը եկող բացող ծառային, օրիորդ Տը-
վօի իմաց տալու որ մէկը զինքը սրահը կ'սպասէ :

Վիւսթավ այս խօսքը այնպէս հաստատ ձայնով մ'արտասանեց,
որ ծառան հնազանդութեամբ միայն պատասխան տուաւ :

Ուստի Վիւսթավ մեր ծանօթ սրահը մտաւ, ուր Անթօնին ալ
մէկ սրահէն երեցաւ :

— Գուք էք զիս խնդրողը, պարոն, ըսաւ Տօմոնի զարմաց-
մամբ :

— Այո՛, օրիորդ, պատասխանեց Վիւսթավ, կ'աղաչեմ նաև որ
սենեակնուդ դուռը գոցէք, քանզի ձեզի ըսելիքս միայն դուք ըսել
պէտք էք :

Այս կերպ լեզու մը պիտի զարմացընէր անշուշտ երիտասար-
դուհին, եթէ իրեն հետ խօսողը աղերսալի ձայնով մը չըսէր դու-
ռը գոցելու : Ուստի հնազանդելով եկաւ նստաւ ու ըսաւ .

— Չեզ մտիկ կ'ընեմ, պարոն :

— Օրիորդ, աւելցուց ան ատեն Վիւսթավ, նորահասակ, դե-
զանի ու պատուաւոր մարդու մը աղջիկն էք . վստահ, բարի ո-
գիթած սիրտ մը ունենալու էք : Առանց ուզելու մեծ աղէտի մը
պատճառ եղաք :

— Ձիս կը սոսկացընէք, դուչեց Անթօնին, որ Վիւսթավի յուզ-
մունքէն բան մը չէր հասկընար և դեռ չէր ճանչցած իւր խօսա-
կիցը, թէ և իրաւ խիստ անշուարեւի կերպով Կտմօնի թեք տեսած
էք զան :

— Երէկ նորատի աղջիկ մը հոս եկաւ զգակներ ու ասղնեղոր-
ծութիւններ ձեզ ցուցընելու :

— չիշդ է :

— Պ. տը Բէրէօի վրայ խօսք բացաւ :
— Այդ ալ ճիշտ է, պարոն, պատասխանեց Անթօնին կար-
մրելով :

— Ո՛հ, ինձ հետ աներկիւղ խօսեցէք, օրիորդ, քանզի պար-
ծենալով կ'ըսեմ թէ ինձմէ աւելի համարձակ սիրտ մը չկայ աշ-
խարհիս մէջ : Արդ նոյն երիտասարդուհւոյն Պ. Տըվօի՛ Պ. տը Բէ-
րէօի համար ըսածը խոստովանեցաք, այսինքն թէ մահացու հի-
ւանդութիւն մը ունի : Ուստի, օրիորդ, նոյն երիտասարդուհին որ
կը ճանչնամ, այս ամենը գրով ինձ յայտնեց, քանզի գիտէ որ Կտ-
մօնը եղբօր պէս կը սիրեմ և նամակը Կտմօնի ձեռքը ինկաւ :

— Ողորմելին, դուչեց Անթօնին :

— Այո՛, ողորմելի, իրօք խիստ ողորմելի, օրիորդ, քանզի այս
մահուան մարդաբուժիչը բոլոր իր ակնկալութեանց, համակրու-
թեանց, իր երազած երջանկութեան կործանումն է . քանզի Կտ-
մօն կը սիրէր զձեզ, օրիորդ, քանզի կը սիրէ զձեզ և հիմակ
պիտի ստիպուի լուսթիւն հրամայել իւր սրտին և սիրաւ որ չպի-
տի լուէ, կուրծքին մէջ ջախջախուելով զան ժամանակէն առաջ
պիտի սպաննէ : Ուստի, օրիորդ, կու դամ ձեզի համարձակապէս,
պարկեշտութեամբ, պարզապէս ըսելու թէ . Մէկը կայ որ կը սի-
րէ զձեզ և երիտասարդ պիտի մեռնի, այս անձը մայր մը ունի
որ անոր կեանքով ու երջանկութեամբ միայն կ'ապրի : Միթէ՞
սրտերնիդ բաւական ուժեղ է այս մարդուն պահապան հրեշտակը
ըլլալու, մինչև մահուան ժամը ձեր սիրով ու խնամով շրջապա-
տելու և ձեր ակամայ ըրած յանցանքն ուղղելու . կամ թէ պէտք
է որ մեկնի ու երթայ անկիւն մը իւր կեանքը վերջացընէ, ա-
ռանց ուրիշ միթարութիւն մը ունենալու բայց միայն ձեր յի-
շտակը . քանզի վստահ եմ որ հիմակ մօրը սէրը միայն չբաւէր
անոր :

Կան զգացումներ որ մեկնութեան պէտք չունին :
Ուստի զանց կ'ընենք նկարագրելու թէ Անթօնին ինչպէս զգա-
ծուեցաւ այս պարզ ու եզակի յայտնութենէն : Վայրկենի մը
մէջ կին եղաւ ու սիրոյ, անձնութիւնութեան ու վեհանքութեան թե-

լերը սրտին մէջ սկսան ուժգնակի թրթռալ և Աիւսթալի առաջարկած վեհ գործին յանձնառու ըլլալու յորդորեցին զինքը :

— Պարոն, ըսաւ Տօմնի լուրջ ձայնով մը ու ոտքի վրայ ելլանելով, երդում կ'ընէք որ բոլոր ձեր ըսածները ճշմարիտ են :

— Կ'երդնում, օրիորդ :

— Աստա՜հ էք որ Պ. տը Բէրէօի կինը ըլլալով, զան երջանահացնելու համար ինչ որ մարդկայէս կարելի է ընել ըրած պիտի ըլլամ, որչափ ժամանակ որ երկինք իրեն կեանք չնորհէ :

— Աստա՜հ եմ :

— Ուրեմն, պարոն, կը սիրեմ Պ. տը Բէրէօն. որչափ որ նա կենդանի է իրմէ զատ ուրիշի մը չպիտի ըլլամ. տուէք իրեն այս մատանին որ մօրս յիշատակն է, իբր զրաւ ըրած երգմանս :

Աիւսթալ Անթօնիի զիմաց ծնկան վրայ ինկաւ ու ձեռունները համբուրելով արաստուօք թըջեց :

— Գացէք, պարոն, ըսաւ Աիւսթալին, Պ. տը Բէրէօի քով վերադարձէք, ես կ'երթամ ամուսնոյս համար արթմելու :

Այս ըսելով, Անթօնի՛ն՝ զունատ, վեհ, զեղանի, երիտասարդութեամբ, սիրով ու գեղեցկութեամբ շողջողուն՝ զուր բանտարկում սենեակը մտաւ :

Աիւսթալ սանդուղներէն չորս տու չորս իջաւ :

— Ազնիւ սիրտ, կը կրկնէր անզգար. խեղճ Կամօն, զոնէ ուրախութիւն մը պատճառեմ իրեն :

Գրան քով Աիւսթալ բարեկամին պատահեցաւ, որնոր ինչպէս տեսանք Պ. Տրվօի կ'ուզէր այցելութիւն ընել :

— Ար սիրէ գրեղ, գոչեց Աիւսթալ. . . Ուրիշի հետ բնաւ չպիտի ամուսնանայ : Ահա իւր մատանին : Այսօրունէ նշանուած էք : Յուսն, բարեկամն, յուսն : . .

Եւ Կամօնի բազկացը մէջ ինկաւ :

Կամօն ուրախութենէն գրեթէ կը հեղձամղձկէր :

— Տեսար զան, հարցուց :

— Այո :

— Եւ կը սիրէ զիս :

— Այո :

— Եւ կը հաւանի ինձ հետ ամուսնանալու :

— Այո, այո, կ'ըսեմ :

— Ահ, Աիւսթալ, չէի կարծեր թէ մէկ օրուան մէջ մարդս միանգամայն այսքան երջանիկ ու ապերջանիկ կարենայ ըլլալ :

Եւ այս ըսելով, Կամօն նորէն կը համբուրէր բարեկամը :

— Հնա՛, սա պարոնները խենթ ըլլալու են, ըսաւ զէր պարոն մը որ այս տեսարանը կը գիտէր, և չէր կրնար հասկընալ թէ ինչ պատահաւոր փողոցին մէջ պահուելով, կ'ստիպեն որ ուրիշները սալայարակէն վար իջնեն :

ԺԷ

Կամօն կ'ուզէր օրիորդ Տրվօի տունը երթալով՝ ոտքերուն իյնալ և ըսել թէ այս զոհոլութենէն առաջ զինքը որչափ կը սիրէր և թէ հիմակ իւր սէրը քանի տուաւ կրկնապատկած էր. բայց Աիւսթալ արզիլեց :

— Նիշէթ օրիորդ Տրվօի հետ ծանօթութիւն ունի, ըսաւ, երթանք անոր տունը, Անթօնիի նամակ մը գրէ ու նա կը տանի :

— Իրաւունք ունիս, ըսաւ Կամօն : Շուտ երթանք :

Ու քայլը շտապեց :

Կամօն այնքան կը բերկրէր Անթօնին իբր ըլլալու խորհրդին վրայ որ առաւօտեան աղետալի յայտնութիւնը կարծես թէ սուտ կ'եղնէր : Բան մը միայն կը յիշէր, այն էր թէ Անթօնի զինքը կը սիրէր, իսկ կինը պիտի ըլլար և անոր զրկած մատանին անզգար շրթանցը կը տանէր :

— Գեղեցիկ է, այնպէս չէ, կ'ըսէր Աիւսթալին : Չօրս օր առաջ ով կը կարծէր երբ այս սալայարկին վրայ անոր կը հեռէինք, թէ այսօր արդէն մինչև հոս պիտի հասնէմ : Օհ, եթէ Աստուած երկար

տարիներ չհնորհէր ինձ, յաւելցուց ծիծաղելով՝ երջանկութեան նախընծայ պատրաստութիւնները կը փութացընէ, որ միշտ հաշիւա գտած կ'ըլլամ: Ասկէ զատ ի՞նչ է կեանքը, բայց եթէ տառապանաց, կռիւներու, ակնկալութեանց ու անթիւ պատրեալ ցնորքներու մէջ քանի մ'օր երջանկութիւն: Նախախնամութիւնը՝ կը ժպտի ինձ՝ որ այս առտու անիծեալ կարծուած էի: Անթոնին գիտէ որ նորահասակ պիտի մեռնիմ, և իւր սիրովն ու գթութեամբը պիտի հեռացընէ ինձմէ ամեն վիշտ: Երջանիկ օրերս միայն պիտի ապրիմ, և երբ որոշեալ սահմանին հասնիմ, անցելոյս մէջ՝ հասարակ տեղութեամբ՝ երկու գոյու թեանց երջանկութիւնը պիտի դանձմ: Բարեբաստութիւնը միթէ՞ ապրած օրերուն մէջն է: Չէ, սիրով, բարեկամութեամբ ու Աստուծոյ մեզի շնորհած ամեն միթարութեանց մէջն է: Երբէք թշուառ եղած եմ ես: Մայրս կը սիրէ, կը սաշտէ զիս, դու կը սիրես, Անթոնին կը սիրէ: Կայ վաթսուէն տարեկան մարդ մը որ անցեալ օրերը զուճարելով, իմինիս հաւատար գումար մը կարող ըլլայ գտնել: Չէ, կը տեսնես, Ախաթավ, որ չկարծածէս աւելի երջանիկ եմ:

Այսպէս խօսելով, Էտմոն կը ժպտէր ու սիրապէս կը ճեմէր:

Ի՞նչ է ուրեմն այն բառը, որ սէր կը կոչուի, և մահը ծիծաղադէմ նայել տալու՝ ու մէկ վայրկեանի մէջ յուսահատութիւնը ակնկալութեան և տրամութիւնը ուրախութեան փոխելու զօրութիւնը ունի: Ախաթավ Էտմոնի ձեռքերը բռնած էր:

— Շատ գոհ եմ քեզ այսպէս տեսնելուս, կ'ըսէր, յուսա բարեկամս, յուսա: Գոցե այդ Պ. Տրյօն խաբուած է ու օր մը պիտի տեսնենք որ այս սխալանքը իր աղջկանը հետ ամուսնութիւնը շտապելու ծառայած պիտի ըլլայ միայն:

Էտմոն պատասխան չտուաւ: Մինչև այն կէտ Ախաթավի հետ ակնկալելու կը համարձակէր արդեօք: Չէ: Ասկէ զատ դիւրմբունելի զգայմամբ մը որ չենք աշխատիր նկարագրելու, կը կարծէր մահուան դէմ՝ որնոր զինքը այնքան երջանկացուցեր էր՝ ապերախտութիւնը նեղ թէ անոր սեպհականութիւնը ըլլալը ու անոր փոխաբէն մը պարտաւորիլը դադրէր մտածելէ:

Ասիկայ աւելորդապաշտութիւն էր, բայց չէ՞ որ սէրը ամեն աւել

լորդապաշտութեանց, ամեն կարծիքներու ու երազներու հայրն է: Երկու բարեկամները Նիշէթի տունը հասան:

Էտմոնի առաջին գործն եղաւ դեռատի աղջկան վիզը նետուիլ:

— Բարի Նիշէթս, գոչեց, Անթոնին կը սիրէ զիս ու իմ հետս պիտի ամուսնանայ: Ահա իւր մատանին, այս ամենը Ախաթավ կարգադրեց: Շուտ թուղթ ու մեղան տուր, որ անոր նամակ գրեմ:

Նիշէթ իր սիրահարը կը գիտէր, որն որ աչք ըրաւ թէ այս ամենը ճշմարիտ էին ու թէ Էտմոն խենթեցած չէր:

Նիշէթ զմայլեցաւ երիտասարդը այս մտային հանդամանաց վրայ տեսնելով և գրելու պիտոյքները տուաւ անոր:

— Նիշէթ, ըսաւ Էտմոն նստելով ինձ ծառայութիւն մը պիտի ընես:

- Հաճութեամբ:
- Այս գրելու նամակս Անթոնինի պիտի տանիս ու ես հոս պատասխանին պիտի սպասեմ:
- Ուրեմն երթամ հագուիմ, ըսաւ Նիշէթ:
- Եւ քովի սենեակը անցաւ պատրաստուելու համար, որուն ետեւէն գնաց նաև Ախաթավ: Էտմոն սկսաւ գրել:

«Օրիորդ, Անթոնին, այս լսածէս ետքը ի՞նչ անուն կրնամ տալ քեզ: Միթէ՞ ակնածութեանս մէջ ամիփուիմ, կամ թէ կը հրամայես որ բոլոր զգացումներս արտայայտեմ: Այսպէս ուրեմն, դու՝ գեղանի բարեբաստիկ, դու՝ որ չորս օրէ՛ի վեր միայն զկը ճանչնամ ու դեռ խօսած չեմ հետդ, դու որ վերջապէս ամենէ արժանաւոր ամուսնոց մէջէն մէկը կրնաս ընտրել. զիս սիրելու կը հաւանիս ու հօրդ դատապարտածին վրայ գութ կը ցուցցնես: . . . Ո՛հ, օրհնեալ ըլլայ այն մահը որ զիս քեզ կը մտօնեցընէ: Շնորհակալ եմ, Անթոնին, բոլոր այս երջանկութեան համար որ քեզ կը պարտաւորիմ: . . . Այս առտու Ախաթավի քեզ ըսածը, ինձ շնորհած երանութիւնդ վայրկեան մը մտախորհած էի ես ալ, բայց ընաւ չպիտի համարձակէի այս զոհոցութիւնը քեզմէ խնդրել: Եւ ահա բարեկամիս առաջին խօս-

«քերուսն» կը հաւանին իմ կինս ըլլալ ու քու օրերով զեղուն
ճապաղան իմ սահմանեալ ապաղայի միացընել: . . .

«Չուզեցիր վճատու թեան մէջ լքանել հողի մը, որ քու վրայ
ամիսն կը յուսայ և ինչ որ քիչ մը ետքը սէրէ շարժեալ ուրի-
շի համար պիտի ընէիր, քաղցրագորով սիրող ինձ համար ը-
նել կը բարեհաճի: Ինչ բարութիւն, ինչ վեհանձնութիւն է
ճայս, Անթօնին, և Աստուած որչափ անարդար եղած պիտի ըլլայ
եթէ օր մը ասոր փոխարէն չլարձատրէ քեզ: Բայց մնացեալ
ճակատեալ օրերս երախտագիտութիւնս յայտնելու կ'ուզեմ գոր-
ծածել: Արեւի է որ աշխարհիս մէջ աւելի երջանիկ կանայք
ճղտնուին, բայց քեզմէ առաւել պաշտուած մը ոչ երբէք: Քու
ճհնազանդ ու անձնուէր գերին պիտի ըլլամ: Աստուած հրամայեց
գոր քեզ տեսնեմ, ինք անօրինեց այս պատահածը. քանզի ուրիշ
ճինչ կերպով կրնամ բողոքել այս քիչ մը ժամանակուան մէջ
ճինձ չնորհած բարերաստութիւնը: Դու մայր չունիս, Անթօնին,
ճիմ մայրս քուկը պիտի ըլլայ: Տեսնես թէ ինչ բարի է, ու որ-
ճչափ պիտի սիրէ զքեզ, գրեթէ ինձի չափ:

«Քու հայրը իմն պիտի ըլլայ, սիրով ու խնամով զան պիտի
ճշրջապատենք ու իւր յօժարութիւնները ու սովորութիւնները պիտի
ճզգուենք: Ասիկա զարձեալ իմ կողմանէս անձնասիրութիւն պի-
ճտի ըլլայ, քանզի օր մը իրմէ պէտք պիտի ունենամ կեանքս եր-
ճկարելու համար, որպէս զի քեզ քիչ մը աւելի տեսնեմ: . . .

«Եթէ գիտնայիր որչափ կը սիրեմ զքեզ, Անթօնին: . . .
ճՈ՛հ, թող որ այս նամակիս մէջ հողուցս ամեն բերկրութիւնը ու
ճհիացումը թափեմ:

«Սովորաբար երկար ժամանակէ մը ետքը սիրուած կնկան մը՝
ճիւր զարթուցած զգացմանց վրայ խոստովանութիւն կ'ընեն: Նա-
ճխանանամային արկած մը մեր առաջին պատահարէն չորս օր ետ-
ճքը հրաման կու տայ համարձակ քեզ խօսելու: Աստի մտիկ ըրէ
ճինձ:

«Այս առտու երբ իմացայ զիս ոտնանող ախտը, երկինք ու
ճկեանքը կ'անիծէի, և հիմակ որ քեզմէն սիրուելը կը ճանչնամ

«Թէ և այն ախտը դեռ կը գոյանայ, թէ և հօրդ գուշակածը բնա-
ճչէ այլափոխած, բայց սիրտս ամենէ ուրախ սիրտերուն անգամ
ճձայնատու կ'ըլլայ: Արչափ կ'անիծէի կեանքը, արդ այնչափ կը
ճսիրեմ: Քու մէկ բառը բոլոր թաղծութիւններս ցրուեց: Յաւի-
ճտենահանութիւնը հողուցս մէջ կ'զգամ: Բնութեան մէջ ձայն մը
ճչկայ որ չլսեմ ու չհասկընամ. կարծես թէ կեդրոնն եմ ես ուր
ճկու դան խմբուելու Աստուծոյ բոլոր բարեգործութիւնները: Ար
ճինդամ ու կու լամ. կ'ուզեմ առանձին, ճակատս հովին բաց
ճդաշտերուն մէջ թափառիլ և ճառերուն, ամպերուն, ճաղիկնե-
ճրուն ու հորիզոններուն պոռալ. — Չէք զիտեր. . . Անթօնին
ճղիս կը սիրէ: . . . :

«Երբ կը մտածեմ թէ կան մարդիկներ որ քու անունդ կ'ար-
ճտասանեն առանց զխոնարու թէ այս անունը որչափ անձնուիրու-
ճթիւն, անմեղութիւն, ուրախութիւն, երիտասարդութիւն ու սէր
ճկը բովանդակէ: . . .

«Քանի՛ զեղեցիկ է կեանքը, քանի՛ բարի է Աստուած: Միթէ՛
ճաշխարհիս մէջ աւելի նուիրական ու վեհ բան կայ, բայց եթէ
ճերկու նորատի սրտերու միացումը, որոնց անցեալը այն ժամա-
ճնակէն կ'սկսի երբ մէկ մէկու համար կը խորհէին ու ապազան
ճմիատեղ անցընելու միջոցնուն մէջն է: . . . Այս երկու սրտերն
ճմերիններն են, և ասիկա մէկ ժամէ 'ի վեր:

«Միթէ այսպէս աղէկ հասկցեր եմ պատասխանդ:

«Ար գրեմ ու չեմ մտածեր նամակս վերջացընելու: Բառերը
ճզրչիս տակ կը խոնին և սակայն անկարելի կը թուի զարձեալ
ճբոլոր զգացածս քեզ յայտնելու:

«Մտածէ որ առաջին կինն ես որ սիրած եմ. . . և թէ գիտ-
ճնայիր քանի՛ զեղանի ես Անթօնին:

«Անցեալ օր երբ ետևէդ կու գայի, դաղտնի ձայն մը կ'ըսէր
ճինձ թէ կեանքս քեզի պիտի միանար: Դու ալ կանխազգացում
ճմը չունէիր թէ ապաղսյիդ մէջ գեր մը պիտի խաղամ: Միթէ՛
ճձեռնոցդ դիտմամբ թողուցիր զետինը: Եթէ կարենայիր զան
ճքեզ առած ատենս սրտիս բարախումը տեսնել: Արմրեցար զան

«ընդունելու ատենդ : Ո՛վ կը համարձակի հիմա դադարի համա-
«կրթութեանց օրինադրութիւնը ուրանալու :

«Գեռ ևս ի՞նչ ըսեմ քեզ, Անթօնին : Հոգիս կը զեղու :

«Հիմակ ի՞նչ պէտք եմ ընել : Միթէ՞ հրաման կայ ինձ քեզ տեսնե-
«լու, վայրկեան մը նայելու և ըսելու «Այս հրեշտակը իմն է :»

«Կ'ուզես որ հօրդ հետ տեսնուիմ, թէ չէ մայրս խեղճայ անոր հա-
«ւանութիւնը խնդրէ, որուն այնքան պէտք ունինք և որուն համաք
«ես կը առչորիմ : . . .

«Ատեն ատեն կըկասկածիմ թէ Կիւսթավի ինձ ըսածը ճշմարիտ ըլլայ :
«Կը վախնամ որ ցուրտ իրականութիւնը չըսէ ինձ. Երազ է տեսածդ,
«Անթօնին քեզ չսիրէր, քու վրայ չմտածէր իսկ : Ա՛հ եթէ այս բանս
«ըլլար, կեանքս որչափ երկար պիտի թուէր : . . .

— Ի՛՛հ, ըսաւ Նիշէթ ներս մտնելով, դեռ կը գընն :

— Այնքան ըսելիքներ ունիմ . . . պատասխանեց Էտմօն :

— Եւ բոլոր այդ ըսելիքներդ վերջանալու մօտ չե՞ն :

— Այո՛, բարի Նիշէթ, վերջացուցի :

— Օրիորդ Տըվօի բան մը պիտի չըսեմ :

— Չէ՛, մինակ նամակը պիտի տաս :

Այս ըսելով Էտմօն նամակը ծալեց ու կնքեց :

— Քեզ հոս պիտի գտնեմ, ըսաւ Նիշէթ նամակը առնելով :

— Այո՛, Կիւսթավի հետ կ'սպասենք :

Նիշէթ իւր բարեկամներէն հրաման առնելով բժիշկին տունը
զնաց, Անթօնին դեռ բոլորովին յուզուած էր Կիւսթավի ու իր մէջ
անցած եղելութենէն :

Զուր տեղը տիկին Անժէլիք հարցումներ ըրած էր, Անթօնին բան
մը չուզեր էր ըսել և բարի կէնը բռնադատուած էր վերջապէս ֆէյ-
«լօբի՛նի գլեկին ընթերցումով քնանալու :

«Կարծեմ թէ պարտքս կատարեցի, կ'ըսէր իւրովի նորաաի օրիոր-
«դը : Աղէկ կ'զգամ որ օր մը պիտի սիրեմ Էտմօնը, եթէ արդէն իսկ
չեմ սիրեր, բայց ի՞նչ պիտի ըսէ հայրս :

Անթօնին այս խորհրդածութեանց վրայ էր երբ Նիշէթ ներս մտաւ :

Տիկին Անժէլիք անոր մանեւ ըսանքն ընդոտ արթնցաւ :

— Պ. տը Բէրէօի կողմէն կու գաս, եղաւ Անթօնինի առաջին
խօսքը :

— Այո՛, օրիորդ, պատասխանեց Նիշէթ :

— Ի՞նչ է այդ Պ. տը Բէրէօն, հարցուց տիկին Անժէլիք աչքերը
շփշփելով :

— Ամուսինս է, պատասխանեց օրիորդ Տըվօ :

— Յիսուս Քրիստոս, գոչեց խնամակալուհին, օրիորդին նայելով,
խենթեցա՛ր :

— Ամենևին, սիրելի տիկին Անժէլիքս, պատասխանեց Անթօնին
որ ժամէ մը ՚ի վեր հասկըցեր էր թէ ալ ևս տղայ մը չէ, ուստի և
չէր ուզեր իւր զգացումները ծածկելով զանոնք նախատել : Ի՞նչ
կ'ըսէ շարունակեց Նիշէթի ուղղելով :

— Այս նամակը սուսաւ քեզի համար, օրիորդ :

Եւ նոյն միջոցին Նիշէթ տեսնելով որ ալ ևս գաղտնի գործե-
լու հարկ չկար, Էտմօնի նամակը բժշկին աղջկանը անցուց :

— Բայց պիտի բացատրէք ինձ ի՞նչ կը նշանակէ այդ ամենը,
հարցուց տիկին Անժէլիք զիբքը գոցելով :

— Ասիկա կը նշանակէ, պատասխանեց Անթօնին, որ արդէն նա-
մակը բացեր էր, թէ Պ. տը Բէրէօ զիս կը սիրէ, թէ ես ալ
զան կը սիրեմ ու հեաը պիտի կարդուիմ :

— Եւ պարոն հայրերնիդ հրաման սուսած է այդ թղթակցու-
թեան :

— Հայրս դեռ բան մը չգիտեր :

— Ան ատեն իմ պարտքս է իմացնել :

— Անոգուտ է, քանզի մէկ սպահէն ես պիտի երթամ իմաց
տալու :

Անթօնին սկստ նամակը կարդալ և Նիշէթ որ զան կը քննէր տե-
սաւ որ ձեռքերը կը գողգոյային ու այստեղ կը շառագոյնէին : Օ-
րիորդ Տըվօի սիրտը ուժղին կը բարխէր :

Երբեմն կանկ առնելով կ'ըսէր «Որչափ կը սիրէ զիս» ու դար-
ձեալ կը շարունակէր :

— Ի՞նչ բանի կը ծառայեմ ես հոս, կ'ըսէր ինքնիրեն տիկին
Անժէլիք : Բան մը չեն ըսեր ինձ ու բան մը չեմ տեսներ :

— Թող տիկին ար Բէրէօ բարեհաճի վաղը գալ հայրս տեսնելու, ըսաւ Անթօնին Նիշէթի: Ես կանխաւ կը ծանուցանեմ: Գունեսս, օրիորդ, այս ամենուն պատճառը, աւելցոց օրիորդ Տըլօ, որ չէր տարակուսեր թէ Նիշէթ այս ամեն անցքերուն տեղեակ ըլլայ:

— Միթէ ցաւել պէտք եմ, օրիորդ, հարցոց Նիշէթ:
— Չէ, կրկնեց Անթօնին, քանզի բնաւ չպիտի մոռնամ որ դուն ես ինձ այս նամակը բերողը: Տեսածներդ Պ. ար Բէրէօի պատմէ, նաև ըսէ թէ քեզմէ զատուելով հօրս դահլիճը մտայ:

Այս ըսաւ և Անթօնին Էտմօնի նամակը շրջազգեստին տակը պահելով սենեկէն դուրս ելաւ Պ. Տըլօի քով երթալու:

— Հայր իմ, բարի հայր իմ, ըսաւ բժիշկին ծնկացը վրայ նստելով, ծանր խօսելիքներ ունիմ քեզ,

— Ձիս դող կը հանես, դոչեց ծիծաղելով, այդ տարիքով ծանր խօսելիքներ . . . Ի՞նչ է ուրեմն:

— Հայր իմ, կրկնեց Անթօնին լուրջ ձայնով մը մէկը կը սիրեմ:

— Մէկը կը սիրես . . . կրկնեց Պ. Տըլօ այս յառաջարանէն քիչ մը զարմացած:

— Այո՛, մէկը որ զիս կը սիրէ, և կու դամ քեզ իմաց տալու որ մայրը վաղը պիտի գայ զիս քեզմէ խնդրելու:

Բժիշկը ճշմարիտ զարմացմամբ մը աղջկան երեսը նայեցաւ:

— Եւ դուն մինակդ այդ ամենը կարգադրեցիր:

— Այո՛, հայր իմ:

— Ո՞վ է այդ երիտասարդը, քանզի կը յուսամ որ սիրածդ երիտասարդ մ'է: Անունը տուր նայիմ և եթէ արժանի է կին ունենալու այն՝ որ ամեն օր շնորհակալ կ'ըլլամ Աստուծմէ ինձ աղջիկ տալուն, ան ասեն խնդիրքդ կը կատարուի:

— Պ. Էտմօն ար Բէրէօն է, հայր իմ:

— Պ. Էտմօն ար Բէրէօ . . . չեմ ճանչնար այդ անունը, ըսաւ բժիշկը, որ Էտմօնի այցելութիւնը արդէն մոռցեր էր:

— Շատ մոռացիտես, հայր իմ, ըսաւ Անթօնին ձեռքը երկնցընելով ու հասցէտուն մը ցուցընելով:

— Այն պատանին որ երկու օր առաջ խորհրդակցութիւն մը ընելու եկաւ, հարցոց Պ. Տըլօ հիւանդին հասցէտունը ճանչնալով:

— Նոյն ինքն, հայր իմ:

— Եւ քեզ կը սիրէ:

— Այո՛:

— Շատ ատենէ՛ ՚ի վեր:

— Ձիս տեսնելէն ՚ի վեր:

— Եւ ե՞րբ տեսաւ:

— Չորս օր առաջ:

— Հարկաւ դու ալ կը սիրես զան:

— Որչափ որ նա կը սիրէ զիս:

— Այն ատենէն ՚ի վեր:

— Այո՛, հայր իմ:

— Ձաւակս, դու խենթեցեր ես:

— Կ'երդնում հայր իմ, որ խելքս բոլորովին զլուխս է:

— Աղէկ գիտնաս որ Պ. ար Բէրէօի կինը չես կրնար ըլլալ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ Պ. ար Բէրէօ երեք տարիէն առաջ պիտի մեռնի, և ես զիտեմ այդ բանը. հետևապէս չեմ կրնար աղջիկս այն պիտի մէկու մը առլ որ երեք տարիէն իւր հիւանդութեամբ ախտաժէտեալ զաւակներով այրի պիտի ձգէ: Ըսէ ինձ թէ այս ասմենը տղայութիւն է և ալ չխօսինք ասոր վրայ:

— Ասկէ արեւի ճշմարիտ խօսք չկայ, հայր իմ, ըսաւ Անթօնին, և ճիշտ նոյն պատճառին համար կը սիրեմ Պ. ար Բէրէօն որ դուն կ'ուզես զիս արդիւել զան առնելու:

— Չեմ կրնար հասկընալ:

— Եւ սակայն խիտ պարզ է, հայր իմ: Պ. ար Բէրէօ զիս կը սիրէ: Քեզի պէս զիտեմ որ շատ շատ երեք տարի ունի ասորելու և կ'ուզեմ իւր կինը ըլլալ որպէս զի այս վերջին երեք տարիները երջանիկ անցընէ:

— Եւ կը կարծես թէ պիտի հաւանիմ այդ զոհողութեան:

— Պէտք է որ հաւանիս, հայր իմ:

Պ. Տըվօ չէ թէ միայն Անթօնիին իրեն հետ այս կերպով խօսիլը չէր տեսած բնաւ, այլ նաև երբէք չէր կատարածեր որ կրնար այսպէս հաստատամտութիւն ցուցնել իւր հօրը:

— Պէտք է մի, ըսաւ, և ինչո՞ւ:

— Քանզի մէկ ժամ է որ նշանուած եմ հետը: Նայէ, հայր իմ, շարունակեց աղջիկը ձեռքը ցուցնելով, մօրս մասնին ալ չեմ կրեր, անոր տուի զան, երդում ընելով որ երբէք ուրիշի մը չպիտի ըլլամ: Թամանակ չկայ կորսնցընելու, հայր իմ, քանզի այնպիսի մէկը կը սիրեմ որ միայն երեք սարի ունի իւր կնկանը հետ անցընելու:

— Եւ երեք օրուան մէջ կարգադրեցի՞ր այս ամենը:

— Հինգ վայրկեանի մէջ, հայր իմ:

— Եւ վայրկեան մը կրցար հաւտալ որ այդ ամուսնութեան պիտի հաւանիմ:

— Գիտէի որ պիտի հակառակիս, անոր համար մատնիս տուի և երգում ըրի:

— Գոնէ որչափ որ ես կենդանի եմ, Պ. ալ Բէրէօի կինը չպիտի ըլլաս երբէք:

— Մօրս շերմին վրայ ըրի այս երգումը, պատասխանեց Անթօնին:

— Խենթութիւնը ուխտագրութեան չհամարուիր ու դուն խենթ ես: Չեմ կրնար թողուլ որ վիպասանական զգայութեամբ մը կենացդ դժբաղդութիւն պատճառող միութիւն մը հաստատես: Ամեն բանէ առաջ քու երջանկութիւնդ պէտք է: Ես քեզմէ աւելի խելք և լաւազոյն նախատեսութիւն ունիմ, հաւատա՞ ինձ, զտախ, թող այդ Պ. ալ Բէրէօն և ապաղաղ այդպէս զբաւի մի գներ, որուն համար պատասխանատու եմ Աստուծոյ առջև: Արդ Աստուծոյ հրամանաւ ես որ ուրիշ մարդոց չտեսածը կը տեսնեմ, կ'ուզեմ որ այս տխուր գիտութիւնս դոնէ որդւոյս երջանկութեան ծառայէ: Ուրեմն ալ այդ խօսքը մի ըներ: Եթէ այսօրու ընէ մինչև ութ օր զաղափարներդ թող չտաս վանք մը կը գնեմ զքեզ:

— Ասիկա վերջին խօսքդ է, հայր իմ:

— Այո՛:

— Որչափ ալ ըսեմ որ իմ, Պ. ալ Բէրէօի ու իւր մօրը երջանկութիւնը այս միութենէն կատում ունի, միշտ պիտի հակառակիս:

— Նախ իրաւախոհութեամբ, ետքը՝ յաւելցուց Պ. Տըվօ քիչ մը խիստ ձայնով՝ այն ամեն միջոցներով որ հայրական իրաւունքներս թող կու տան ինձ եթէ իրաւախոհութիւնը չբաւէ:

— Այդպէս վաղը պիտի ըսես այդ մօրը. «Աղջկանս ձեռքը կը մերժեմ որդւոյդ, քանզի մահացու հիւանդութիւն մ'ունի»:

— Այդպէս չպիտի ըսեմ, բայց նաև լաւ կը համարիմ այդ խօսքն ալ ըսել, քան թէ այդ ամուսնութեան հաւանիլ, որ ինձի համար գրեթէ մեղք մ'է: Եթէ մայր ու իմ տեղս ըլլայիր դուն ալ ինձի պէս պիտի ընէիր:

— Բան մը չկրնար այդ որոշումը փոխել:

— Ոչինչ:

— Մնաս բարով, հայր իմ:

Այս ըսելով, Անթօնին բժիշկը կը համբուրէր:

— Պիտի մտածես, այնպէս չէ. . . ըսաւ Պ. Տըվօ:

— Այո՛, հայր իմ, և ինչ որ ալ ըլլայ մտածութեանցս հետեանքը, քեզ պիտի իմացընեմ:

Անթօնին իւր սենեակը մտնելէն առաջ ուր կը գտնուէր տիկին Անժէլէք, զարդարուելու խուցը մտաւ, այն ցփսին ու փեղտըրը գրաւ որ Ետմօն առաջին անգամ տեսած օրը հագեր էր և աղէկ մը ստուգելէն ետքը որ մէկը զինքը չտեսներ ու չըսեր, նախատեսելին դուռը բացաւ և սանդուղէն իջաւ:

Փողոցը հասնելով, կառք մը մտաւ որ նոյն պահուն կ'անցնէր և ըսաւ կառապանին:

— Թրուա Ֆրէր փողոցը, թիւ 3:

ԺԸ

— Տիկին տը Բէրէօ կրնայ մարդ ընդունիլ, Հարցուց Անթոնին գուռը բացող ծառային :

— Այո՛, օրիորդ :

— Քովը մարդ կայ :

— Չէ :

— Բարեհաճէ ուրեմն օրիորդ Անթոնին Տըվօն ծանուցանելու :

Սպասուորը բժշկին աղջիկը սրահը հրամայընելով՝ տիկին տը Բէրէօի գտնուած դահլիճին գուռը բացաւ :

Հաղիւ թէ տիկինը սոյն անուան արտասանուիլը լսեց, ոտքի վրայ ելաւ ու Անթոնինի դիմաց վաղելով ըստ .

— Բժիշկ Տըվօի աղջիկն էս, օրիորդ . . .

— Այո՛, տիկին, պատասխանեց Անթոնին :

— Եւ մինակ եկար Հոս :

— Բողբոզին մինակ :

— Ի՞նչ կայ ուրեմն, սիրուն զաւակ, Հարցուց Կամօնի մայրը, ի՞նչ պէս կրնայ ըլլալ . . .

— Այն կայ, տիկին . . . ըստ Անթոնին տիկին տը Բէրէօն Համբուրելով որ պարզապէս ու Համարձակութեամբ կու գամ ձեզի Հարցընել եթէ կ'ուզէք մայրս ըլլալ :

— Եթէ կ'ուզեմ . . . անշուշտ, սիրելի պզտիկս, մանաւանդ թէ խիստ բերկրութեամբ կ'ընդունիմ :

Այս ըսելով տիկին տը Բէրէօ Անթոնինը իւր դահլիճը տարաւ, վերաբրկուն ու ցփսին Հանելով քովը նստեցուց ու ըստ .

— Նայինք, սիրուն աղջիկս, պատմէ նայինք ի՞նչ ունիս :

Եւ տիկին տը Բէրէօ Հետաքրքրութեամբ նորատի այցելուհին կը նկատէր՝ որ քանի մ'օրէ 'ի վեր իւր որդւոյն մտատանջութեան առարկան եղեր էր :

— Պ. տը Բէրէօ Հոս չէ՞, Հարցուց Անթոնին :

— Չէ՛, բայց Հիմա պիտի գայ :

— Այս առտուընէ 'ի վեր զան տեսա՞ք, տիկին :

— Այո՛ :

— Բան մը չըսա՞ւ իմ վրայօք :

— Ոչինչ, բայց եթէ քեզ կը սիրէ, այս չէ՞ ուղածդ : Եւ դուն ալ զան կը սիրես՞ քիչ մը :

— Եթէ չսիրէի Հոս կու դայի՞ Հիմակ, տիկին, և կը ինդրէի՞ ձեզ մէն որ մայրս ըլլայիք, եթէ իւր կինը ըլլալու որոշում չընէի : Այո՛, տիկին, կը սիրեմ, և քանի որ իւր երջանկութիւնը ինձմէ կախում ունի, կ'ուզեմ որ երջանիկ ըլլայ :

— Սիրատուն աղջիկ, ի՞նչ կրնամ ընել քեզ Համար որ որդիս կը սիրես : Ըսէ ինձ և ինչ որ ալ ըլլայ կ'ընեմ :

— Իմ վրաս խօսեցա՞ւ ձեզ :

— Անդադար . և ես, քեզ զեղեցիկ կը կարծէի, այլ ոչ իրականութեան չափ : Բայց, սիրուն զաւակ, ըսէ նայիմ, ի՞նչպէս կրնայ ըլլալ որ մինակ տունս դաս առանց Հօրդ կամ խնամակալու Հօղդ ընկերակցութեան :

— Խիստ պարզ է ասիկա, տիկին, ձեր որդւոյն կինն ըլլալ խոստացած եմ :

— Ե՞րբ ատիկա :

— Այս առտու :

— Տեսա՞ր զան :

— Չէ՛, բայց իր բարեկամներէն մին տեսայ :

— Արեւթամ :

— Այո՛, այդ է : Պ. Արեւթամ ըստ ինձ որ Կամօն . . . որ Պ. տը Բէրէօ, յարեց Անթոնին կարմրելով, ինձ Հետ ամուսնանալով միայն կրնար երջանիկ ըլլալ, ուստի երդում ըրի որ իբր պիտի ըլլամ, և մօրս մատնին իրեն զրկեցի, որ ձեզի նման, տիկին, սուրբ կին մ'էր :

— Այդ անցքերուն վրայ տեղեկութիւն չունիմ :

— Ի՞նչ բանի կը ծառայէ իւր զգացումները զանդաղեցընելը : Չե՞ր

որդին կը սիրէ զիս, իր ինչ ըլլալը զիտեմ, ես զան կը սիրեմ իմ ինչ ըլլալը զիտէ : . . . Ինչո՞ւ անմիջապէս իրարու չմիանանք, ինչո՞ւ իւր երջանկութիւնը կամաւ յայտնեցնենք : Արած մը կայ որ կ'ըսէ : « Լաւ է ուշ քան բնաւ : » Ես մէկ հատ մը զիտեմ որ աւելի ճշմարիտ է « Լաւ է շուտ քան ուշ : »

— Պաշտելի զաւակ . . . մըմուաց տիկին տը Բէրէօ այս միամիտ համարձակութենէն սիրտը շարժած :

— Ան ատեն, շարունակեց Անթօնին, լուր դրկեցի Պ. տը Բէրէօի որ վաղը իսկ կրնայիք դալ զիս հօրմէս ինչդեղ, և հօրս դաճիճը մտայ որպէս զի այս կարգադրութիւնս անոր իմաց տամ :

— Ինչ ըսաւ Պ. Տըվօ :

— Ըսաւ թէ ինեմ եմ, թէ անկարելի է որ մէկը չորս օրէ 'ի վեր տեսած ու հետը չխօսեցած իսկ անձի մը սիրահարի և խնդրածս բացարձակապէս մերժեց, աւելցրնելով թէ՛ եթէ ըսածիս վրայ յամառիմ զիս վանք կը դնէ :

— Ան ոտեն :

— Ան ատեն, ինչպէս որ երդում ըրած էի հաստատ մտքով զան բռնելու, յաւելցուց Անթօնին լուրջ ձայնով մը, և աշխարհիս մէջ բան մը չպիտի կրնայ արդիւնէլ զիս սրտիս այն դաղտնի ձայնին հնազանդելու, վերարկուս ու փեղոյրս առնելով, չլուուելու համար ոտքիս մատուններուն վրայէն սանդուխէն վար իջայ, կտոք մը մտայ և եկայ ձեզ ըսելու տիկին, զորն որ կը կրկնեմ թէ « Ա՛ռ զէք մայրս ըլլալ : »

Այս ըսելով, Անթօնին երկրորդ անգամ տիկին տը Բէրէօն համբուրեց :

— Այսպէս ուրեմն, ըսաւ այս վերջինը, հայրդ ո՞ր ըլլալիք չգիտեր :

— Բայց եթէ ինձ հրաման տար հոս կենալու, իրեն իմաց կու տամ :

— Ան ատեն կու գայ զքեզ կը տանէ :

— Չէ, տիկին, ըսաւ Անթօնին :

— Կը կարծես :

— Վստահ եմ : Կը ճանչնամ հայրս : Նախ քիչ մը պիտի պոռայ, բայց վերջապէս ամեն ուղածս պիտի կատարէ :

— Յակայն այդ ըրածդ ծանր է :

— Ինչո՞ւ :

— Այդպէս հօրդ անէն փախչի՛լ . . .

— Ձեր տունը գալու համար : Ինչ զէշտութիւն կայ հոս : Եւ ձեր տունն ալ իր տանը պէս ապահով չեմ :

— Ինչ հրեշտակ պիտի ունենայ որդիս :

— Եւ ինչ բարեբաստիկ պիտի ըլլանք ամենքնիս միասին :

Անթօնին ու տիկին տը Բէրէօ իրբ տասը տարուան ճանչուրներ արդէն կը սիրէին զիրար :

— Հիմա հօրս զիր մը գրեմ, ըսաւ օրիորդ Տըվօ :

— Նայինք, զաւակս, պատասխանեց տիկին տը Բէրէօ Անթօնինի ձեռքերը խանդաղատասօք բռնելով, քիչ մը մտածենք. հայրդ խիտ իրաւամբ այդ զործածած միջոցիդ դէմ կրնայ սրբողիլ : Լսի՛ նամակ մը այնպիսի ծանրակշիւ ինչդի համար շատ քիչ է :

— Ինչ ընենք ուրեմն :

— Եթէ իմխրատներուս ուզես հետեիլ, կը յուսամ այս ամենը կարգադրել :

— Խօսեցէք, տիկին, խօսեցէք :

— Հիմակ Պ. Տըվօի տունը կ'երթանք. ես կ'ըսեմ թէ քեզ իրեն կը տանիմ ու որդւոյս համար կնութեան կը խնդրեմ : Անտան կը տեսնէ թէ գիտաւորութիւնդ ալ տղայութիւն մը չէ : Իմ և Լամօնի վիճակը կը ճանչցրնեմ իրեն, որմէ վնաս մը չգար և ամեն բան աղէկ կ'երթայ :

— Երթանք, ըսաւ Անթօնին իւր վերարկուն ու փեղոյրը դնելով :

Նոյն միջոցին որ երկու կանայք դաճիճէն կը մեկնէին, ծառան դուռը բանալով Պ. Տըվօն իմաց տուաւ :

Բժիշկը ներս մտաւ : Եւր դուռատութիւնը սրտին սաստիկ տաղանապը կը յայանէր. բայց աղջիկը տեսնելուն պէս իսկոյն դէմքը քիչ մը ամոքեցաւ :

— Մեծ անհանգստութիւն պատճառեցիր ինձ, Անթոնին . . . եղաւ իր առաջին խօսքը :

Եւ իրօք Պ. Տրլօ այնպէս քրտնած ու լքեալ էր, որ գետնը չիյնալու համար ստիպուեցաւ կարասիի մը կռ թնիլ : Անթոնին անոր քով վազելով վիզը պլլուեցաւ :

— Զիս մեռած կարծեցի՞ր, բարի հայրիկ . . . ըսաւ ժպտելով :

— Այդ բնասորութեանդ վրայ կարելի՞ է կարծիք մը հիմնել, ըսաւ Պ. Տրլօ : Եթէ հոս չգտնէի քեզ, չեմ գիտեր ո՞ւր պիտի երթայի : Ներեցէք վրդովմանս, տիկին, յաւելցուց տիկին ար Բէրէօի կողմը դառնալով, վրդովում մը որ մոռցընել կու տայ իմ յարգանքս նախ ձեզ մատուցանել. բայց մայր էք և կը հասկընաք թէ ինչ վիշտ կը պատճառէ զաւկի մ'անբերեոյթ ըլլալը :

— Նստեցէք, աօքթօր, յարեց տիկին ար Բէրէօ : Ձեր տունը գալու վրայ էինք, բայց որովհետեւ դուշակեցիք թէ աղջկինիդ լի՛ տունս է և եկաք, ուստի հոս կընանք խօսակցել :

— Այսպէս, ըսաւ Անթոնին ժպտելով և հօրը դիտարկն ու գաւազանը սենեկին մէկ անկիւնը տանելով, անմիջապէս ենթադրեցիր թէ տիկին ար Բէրէօի տունն եմ :

— Այդ էր իմ միակ ակնկալութիւնս, պատասխանեց բժիշկը իւր քրտնալիւր ճակատը սրբելով :

— Ի՞նչ տաք ես, խեղճ հայրիկ, ըսաւ Անթոնին : Նայէ ինչ գէշ բան է մէկու մը՝ իւր երգումը ոտնակոխ ընել տալ ուզելը :

Եւ նոյն միջոցին նորաստի աղջիկը հօրը ոտիցը տակ նստելով կամաց մը կ'ըսէր .

— Պ. ար Բէրէօի հիւանդութեան վրայ բառ մը չըսես, հայր իմ, եթէ ոչ այս անգամ ալ աղջիկ չես ունենար :

— Ի՛՛հ, աօքթօր, ըսաւ Էամօնի մայրը, այս աղնիւ զաւկին մայրը ըլլալու բարեբաստութիւնը պիտի մերժէք ինձ :

— Ի՞նչ ըսաւ տիկին Անթէլիք երբ զիս տունը չգտաւ, հարցուց Անթոնին ծիծաղելով քանզի չէր ուզեր որ տիկին ար Բէրէօ վայրկեան մ'ալ կասկածէր իւր հօրը մերժման բուն պատճառը :

— Երեք անգամ նուաղեցաւ և արտասուածոր թողուցի զան :

Նարմիր ժաղաւեններով գդակի մը, վարդապոյն շրջազգեստի մը ու նորեւուկ ծախող աղջկան մը վրայ կը խօսէր : Այս ըսածնքէն բան մը չըմբռնեցի ու հոս վազեցի :

— Այս ամենը կը բացատրեմ քեզ :

— Հաստատապէս կը սիրէս ուրեմն այդ պատանին, հարցուց Պ. Տրլօ աղջիկը ծնոյնցը վրայ առնելով :

Եւ բժշկին իւր աղջկան տուած համբոյրներուն մէջ խաղացած անհանգստութեան մը բերկրալի գորովը կ'երևէր :

— Կը տեսնես, հայր իմ, քանի որ անոր համար քեզ վշտացնելու գիշաց, որ մինչև հիմակ բնաւ ըրած չէի և որ եթէ այս հաւանութիւնը տաս ալ ևս երբէք չպիտի պատահի : Երբ որոշումս քեզ յայտնեցի ինչու չհատուայիր ինձ, այն ժաւննակ այս չէր ըլլար :

— Նայինք, աօքթօր, ըսաւ տիկին տը Բէրէօ աղերսելով, հաւանութիւն տուէք : Այս երկու տղաները իրար կը սիրեն, թող ուրեմն միմեան : . . . Դուք որդի մը ուես աղջկի մ'աւելի պիտի ունենանք, ահա այս է ամենը :

Խեղճ Պ. Տրլօն այնքան սարսափած էր թէ մի գուցէ իւր աղջիկը որուն բորբոքեալ եւանդը կը ճանչնար ինքզինքը սպաննած ըլլար, որ երբ զան նորէն տեսաւ այնչափ բերկրեցաւ, որ այնուհետեւ ալ բան մը մերժելու զօրութիւն չմնաց իր վրան :

— Քանի որ Անթոնին կ'ուզէ, ըսաւ, քանի որ երգումը բաժնէ, քանի որ իմ սիրոյս տեղ ձերինը ինքզինու եկած է, թող իր որոշածին պէս ըլլայ :

— Իբաւունք չունի՞, մայր իմ, ձեզ ըսելու, գոչեց Անթոնին տիկին տը Բէրէօի ուղղելով խօսքը՝ որ հայրս ամեն մարդկանց լաւազոյնն է :

Տիկին ար Բէրէօ բժշկին ձեռքը բռնելով իր շրթանցը տարաւ :

— Որդւոյս հանգստութիւնը ձեզ կը պարտաւորեմ, ըսաւ, արտասուելիւր աչօք ու երբէք չպիտի մոռնամ :

Այս ըսելու ատեն Էամօն ներս մտաւ և իւր առջին ներկայացած տեսարանին վրայ ապշած կեցաւ :

— Գրկէ աներդ , ըսաւ տիկին տը Բէրէօ , ամեն ինչ կարգա-
դրուած է :

— Էամօն բժշկին բազկացը մէջ նետուեցաւ , ետքը Անթօնինի
երթալով ըսաւ .

— Այս առաջին անգամն է որ կը խօսիմ քեզ հետ , և արդէն
իրաւունք ունիմ իմ սէրս յայտնելու :

— Միթէ չգրեցիր ինձ այդ , ըսաւ Անթօնին նամակը ցուցնե-
լով և ձեռքը իր նշանածին երկնցընելով :

— Տօբթօր , ըսաւ կամացուկ մը տիկին տը Բէրէօ Գ. Տըվօի մօ-
տենալով , չէք գիտեր ձեր հաւանութիւնը որչափ կ'ուրախացընէ
զիս : Ար հաւատաք , որ մինչև այսօրս կը վախնայի թէ Էամօն ալ
հօրը պէս կուրծքի հիւանդութեան ենթակայ եղած չըլլայ : . . .
Բայց մինչդեռ դուք բժիշկ ըլլալով , ձեր աղջկը անոր կուտաք
ըսել է թէ երկիւղ մը չկայ : Ահա ինձի համար դեղեցիկ օր
մը :

— Իրօք , երկիւղ չկայ , տիկին , պատասխանեց Գ. Տըվօ : Ետ-
քը կամաց մը յաւելցուց ինքնիրեն խօսելով .

— Հիմա պէտք է որ զան ազատեմ : Մեր ամենուս երջանկու-
թիւնը այս պատանուոյն կենաց վրայ է : Բնութեան ու իմ մէջս
կուխ մը պիտի ըլլայ . բայց դուցէ Աստուած օգնէ ինձ :

ԺԹ

Արդ ամուսնութեան արարողութիւնը Սէն-Թօմաս տ'Աքէն եկե-
ղեցւոյն մէջ տեղի ունեցաւ :

Մեծ բազմութիւն կար : Տիկին տը Բէրէօ երբէք կենաց վրայ այն-
քան վստահութիւն չէր ունեցած : Եւ իրօք այն օրէն 'ի վեր կը կար-
ծէր թէ որդւոյն համար ալ ևս վտանգ մը չէր մնացած :

Փողոցի դատարկաստուհիք իրենց մէջ կը զրուցէին :

« Ինչ գեղեցիկ է նոր հարսը » կ'ըսէր մէկը և իրաւունք ալ ունէր .
քանզի Անթօնին սիրասուն , յուզեալ , իր ըրածին վրայ սիգացած , ա-
մուսնէն ընդունելու անձանօթ երջանկութիւնը խորհեցելով , գուշա-
կուած ազգական մոռնալով , իր նորատի գեղոյն ամենայն պայծառու-
թեամբ կը փայլէր :

Էամօնի ձեռքը չէր թողուր , որ անդադար իրեն կը ժպտէր :

« Փեսան ինչ գունատ է » կ'ըսէր ուրիշ մը , անշուշտ յուզուած
ըլլալու է :

— Յուզմունքը այդքան չգունատեր , կը կրկնէր գէր մայր մը , ես
երբ կարգուեցայ խիստ յուզուած էի , բայց ճշմարիտ որ զոյնս տեղն
էր : Աղէկ նայեցէք , հիւանդ ըլլալու է այս մանչը :

— Խեղճ պատանի . . . կ'ըսէր երրորդ մը :

— Մեղք . . . երկուքն ալ սիրուն են :

Նիշէթ այս ամենը կը լսէր , քանզի ինչպէս որ կը կարծուի այս
հանգէսին ներկայ ըլլալով՝ լսածներէն սիրտը կը փղձկէր :

« Քանի՛ շնորհակալ եմ Աստուծոյ , կը մտածէր , որ Ախաթալի
համար այս տեսակ խօսքեր չեն կրնար ըսել »

Եւ իր բարեկամին համար կ'աղօթէր , քանի որ սիրահարին հա-
մար աղօթելու հարկ չկար :

Ամուսնութեան արարողութիւնը լմնալով՝ տիկին տը Բէրէօի տունը
դացին , ուր քանի մը բարեկամներ հրաւիրուած ըլլալով՝ նոյն օրը
խնդակցութիւններով ու անտակ տեսակ երանութիւններ մաղթելով
անցաւ :

Նիշէթ միայն կը պակտէր այս հանդէսին և սակայն տիկին տը Բէ-
րէօ նախ անոր վրայ մտածած էր . Էամօնի մայրը անոր իր որդւոյն
համար բոլոր ըրածը իմացեր էր և կը կարծէր ապերախտութիւն
մ'ընել զան այս երջանկութեան չկանչելով , որուն մէկ մասը իրեն
կը պարտաւորէին : Բայց Նիշէթ ոչ միայն զգայուն այլ և խիստ
մտացի աղջիկ մ'ըլլալուն՝ տիկին տը Բէրէօի հրաւերը մերժած էր :

Ախաթալ այս մերժման նրբութիւնը հասկնալով՝ իր սիրուհոյն
խօսք տուաւ օրուան մնացեալ մասը իր հետ անցընելու :

Իրիկունը Անթունին և Էտմոն իրենց բնակարանը քաշուեցան որ տրիկին տը Բէրէօսի տան վրայ վարձած էին, և տնիկն տը Բէրէօ անգամ մ'ալ իւր սիրտը Աստուծոյ ոտից ներքև դնելէն ետքը պատկեցաւ :

Իսոց եղաւ թէ ամառը զիւղը անցրնեն. բայց Պ. Տըվօ որուն համար փեսին առողջութիւնը յարասե ուսում մը եղեր էր, ըսաւ աղջկանը .

— Ըսէ որ Փարիզ կ'ուզես նստիլ, որպէս զի Էտմոն միշտ աչք'ս առ ջն ունենալով կարենամ հանդարտ քննել զան : Նայինք թէ աշնան պիտի պարտաորիս Իտալիա երթալու հաճոյք մը ջուցրնել :

— Հայր իմ, հարցոյց Անթունին, Էրբ պիտի զիտնանք թէ Էտմոն պիտի կարենայ փրկուիլ :

— Եթէ յաջողիմ, պատասխանեց Պ. Տըվօ, մէկ տարիէն Էտմոն վտանգէ զերծ պիտի ըլլայ :

Ուստի որոշուեցաւ որ Փարիզ կենան և Պ. Տըվօ գործի սկսաւ Գիւսթափի և իւր աղջկան օգնութեամբ : Էտմոնի բժշկութիւնը բոլոր իւր շուրջը եղողներուն զբաղմունքն եղած էր, բայց 'ի իւր մօրմէն որ այն անսահման վտահոթութեամբ որ Աստուած ստեպ ծնողաց կ'ը չնորհէ, իւր առջի երկիր գնորուն վրայ կը ծիծաղէր և ամեն գիշեր օրուան քաղցր իրականութեան մէջ կը քնանար :

Իսկ Էտմոն չէր տարակուսեր թէ այլքան խնամքներու առարկան եղած ըլլար : Իւր կեանքը երկու կամ երեք տարուան համար կարգադրեր էր և անկէ անդին չէր նայեր : Իւր միակ հոգն էր իր զիտցածը մօրմէն սլահել ու կրցածին չափ իր կնիանը զան մոռցընել տալ :

Տեսած էք երբէք այնպիսի անձինք որ կուրծքի հիւանդութիւն ունենալին զիտնան : Գիտած էք թէ երկարակիաց անձանց կեանքը ասոնց համար ինչ անձանօթ երնոյթներ ունի : Ասոնց աչաց՝ որոնց վրայ մահտան նախազգացութեամբ, Աստուած արդէն իւր յարեանտկանութեան մէկ մասը դրոշմած է, էակները և նիւթերը մնանաւ որ քանաստեղծական լոյս մը ունին : Ասոնք աւելի հոգ-

ւով քան թէ մարմնով կը տեսնեն : Ասոնց զգայութիւնները ելեկտրական վայրկեանականութիւն մը ունին : Իրողութիւն մը՝ որուն մանրամասն պարագաներն ետքը ուրիշները կը յուզուին, ասոնք անմիջապէս առաջին ատուութեամբ կ'փղծկին : Կարծես թէ ասոնց հոգին կուրծքնուն մէջ սղմուելով՝ հանապաղ բարձրանալու կը հակի և թէ այն բարձրութիւններէն՝ ուր կը հասնի կրնայ որոշել այն ամենը՝ որ ոսմկն աչքէն կը խուսափի : Հոգինն մարմիննէն աւելի բարձր կ'ապրի, ուրկից կը հեռեի իրենց մահտան զիրութիւնը. քանզի երբ վերին ժամը հնչէ, իրենց զոյւթեան աննիւթ մասը երկար ատենէ 'ի վեր իր մարմնական պատանէն քաղուած ըլլալով՝ սուանց ձգանց, առանց վշտի կը բաժնուի անորմէ որ իր ծանր հաղուստ մը կը թողու զան : Ինչպէս որ արդէն ըսինք, ապրելու սահաւաղոյն ժամանակ ունենալով աւելի շուտ ապրելու կարողութիւնը ունին : Այն ամեն հիւանդութիւններէն որ Աստուած մարդուս ընկերները ըրած է, և որ ամեն մէկ քայլերուն ուժերնիս կը պակսեցրնեն, ամենէ քաղցրն, հիւանդին, բանաստեղծականը և համակրականը յայտնի է որ այս է : Այս է միայն որ ուղղակի սոցիոլոգիան մը ունի հոգոյն վրայ. միւսները նիւթական դառամութիւններ են միայն, ասիկա հոգոյն աննիւթականութեան մէկ ապայոյցն է, որնոր բանաստեղծներ ծնած է :

Անոնք որ այս հիւանդութեամբ փտածէտեալ են, Միլըվուայի հիւանդին պէս, որ ուրիշ մէկը չէր բայց եթէ նոյն ինքն Միլըվուա, յարատե պէտք մը ունին բնութեան՝ կենաց այն առաջին աղբիւրին մօտնալու : Ասոնց համար ծառերը մանաւոր շուք մը ունին, թուռնները ձայն մը՝ որ իրենք միայն կը հասկընան, արևը տաքութիւն մը որ ուրիշ մարդոց անձանօթ է : Սովորաբար սյարզ իրողութիւն մը՝ ասոնք աստուածային բարիք կը համարին : Ղերջապէս դէմքերնին իրենց մտաց թախիժ բանաստեղծութիւնը կ'զգենու : Ուրիշներուն իրենց համար զացած գութը՝ ասոնց տառապանքն է : Սովորաբար ներդաւիտ կ'ըլլան, քանզի Աստուծոյ խիստ մօտ են : Բնութիւնը ասոնց զօրութիւն տուած ըլլալով որ

իրենց կեանք ներշնչող զգացումները ֆիզիոլոգիայի միտ անդամարտագրեն, իրենց տաղանդը յանկարծ հանձարի կը փոխուի, թաքուն ծաղիկ մը աներկայթ համեմանի թին պէս խնկարկեալ աստղի ճառագայթի մը սովոյն ու թափանցիկ երանգով կը ներկուի: Մտիկ ըրէք Պելլենի, Մելլուա կարդացէք և մէկին երաժշտութեան ու միւսին ոտանաւորներուն մէջ այն անսահմանելի, աղիօզորժ ու քաղցրանուագ զգացումը պիտի զանէք, որ իրենց բոլոր կեանքն եղած էր:

Աղէկ զգալով թէ ազադան արգիլուած է իրենց, անդադար անցելոյն վրայ կը խօսին: Իրենց ճամբան լուսաւորող ճառագայթը մինչև այն ժամանակը կը գոհաւորէ, ուր տակաւին իրենց խնայականութիւնը չէր բացուած տեսածնին ամիսփելու և ետքը յիշատակութիւն ընելու: Այս ամենը կը յիշեն ակամայ՝ և որովհետև իրենց յիշողութիւնը սրտերնէն է: Իրենց պատին միացած բանասանդուութիւնը այնպէս մեծ, այնպէս ընդունակ է որոնց մահը երբ իմացուի, մահուան արեւտալի ու ծիրացեալ դաղափարը մտքի շարձեր: Երբ լսուի թէ՛ Այս ինչը թոքախտէն մեռած է, զան մտքերսուն սող թէև ցուրտ քայց աւելի քնոյ դիրքին քան թէ գերեզնի անշարժութեան մէջ կը ներկայացընենք: Մաքին մէջ պատկերը չայլափոխիր, և ընտասարդութեան հիանալի զօրութիւն որ մահուանէ անդին իսկ կ'ապրիս:

Ուստի հիները դեռատի մեռնողներու համար մեծ յարգ ունէին, անոնց համար կըրէին թէ աստուծոյ սիրելիներն են, անոնց գերեզմանները հարսանեկան անկողնոյ մը պէս ծաղիկներով կը զարդարէին և իրենց երջանիկ ժամբուն մէջ յօժարակամ անոնց վրայ կը մտածէին: Այս նորահասակ ու բուականները իրենց մտաց մէջ կը շօշէին այն ճերմակ ամպերուն պէս, որ ամառնային կապոյտ երկնքի մը տակ կը սրանան առանց զան նսեմացընելու: Մենք ալ այս հիներէն ժառանգած ըլլալով երբ մեր աներևութացած բարեկամները մտքերնիս քերենք, անոնց վրայ մեր յիշատակութիւնը աւելի կամաւ կը դադարի որ մահը առանց ծերութեան՝ այն առաջին պատանքին սպասելու գիրենք յափշտակած է: Ասոնց համար թափած արցունքնիս իրենց

պէս նորատի են, և խիստ հաղուագիւտ է որ քառասուն տարին անցնող մարդ մը, որ քսան տարեկան բարեկամի մը վրայ կու լայ, մնացողներուն թշուառութիւնը մտածելով չըսէ որ մը, «Երանի անոր որ իր երևակայութեան օրբանին մէջ մեռած է»:

Ա երջակէս Աստուծոյ ամենէ մեծ պարգևն է որ թոքախտացեալները սիրել զիտեն:

Ով որ ալ ըլլայ իրենց սիրոյն աւարկան, ուրիշներէն աւելի կը սիրեն: Անկան մէջ բանաստեղծին փնտուածը և Աստուծոյ դրածը կը դանեն: Սէրերնին հիացմամբ ու երախտադիտութեամբ խառն է, որն որ կրնայ իրենց հետ մեռնիլ բայց երբէք չծերանար: Բնութիւնը անսովոր զօրութիւն մը կու տայ անոնց սիրելու, որն որ ստէպ իրենց մահը կը փութացընէ, քանզի կրակը կրակարանին համար խիստ մեծ զալով զան կ'սպառէ: Այն աղբիւրը՝ որմէ ծառանին կը յաղեցնեն իրենց ջուր տալու ատեն կը խղէ: Բայց մինչև որ մահը զիրենք սառեցընէ, իրենց ընտրած սիրելոյն ձեռքը վերջին ճնշմամբ մը սեղմելու կը ջանան: Ա երջակէս այնպէս կը սիրեն ինչպէս որ բոլոր կանայք կը փափարին սիրուելու: Իրենց սէրը յաւերժական յիշատակ մը կը ըլլայ. քանզի ցրտանալու ժամանակ չունենալով այն թուականը շատուիլ երբէք որ էրիկ մարդիկը միշտ անտարբերութեամբ կը նկատէ իւր պաշտած կինը: Աշխարհէս կը մեկնին այն մտքով որ իրենց սէրը անփոփոխ պիտի մնար: Իրենց հոգւոյն մէկ երազին մէջ կը քնանան:

Գարնանային գեղեցիկ օրուան մը պէս երկերու ծաղիկներու ու մրմունջներու մէջ կը ջնջուին, առանց անանելու իրենց աներևորուն թափելը և ձմեռուան շնչոյ տակ իրենց անուշաբուրութեանց մարիլը:

Ահա այս կերպով կը սիրէր Էտմոն Անթոնի:

Քանի հրապուրելի էր այն միտանդ արցուցած առաջին ժամանակները, աշխարհք մոռցած անորմէ մոռցուած և յանչափս զիրար սիրելով:

Ընթերցողը կը յիշէ թէ Անթոնիին եկեղեցին տեսած ժամանակ ինչ ակնկալութիւններ ծագած էին Էտմոնի սրտին մէջ «Արարելի է որ օր մը իմն ըլլայ» ըսեր էր: Այն օրը ահա եկեր էր, Անթոնին իրն

էր : Այն ժամանակ տակաւին չէր գիտեր դէպ ՚ի ինչ ճակատադիր
կը քալէր , հիմակ կը ճառնար և սիրոյն մէկ վայրկ'նս կան կորուստը
իւր երջանկութենէ գողտ թիւն մը կը համարէր :

«Անիկա իմն է , կ'ըսէր , բայց ես ալ ինն եմ մինչև որ մահը գայ :»

Եւ բոլոր իւր խորհուրդներով , զօրութիւնով ու սրտով կը սիրէր
Անթոնինը : Բոլոր անձը այս չքնաղ մանկան համար էր , զան տես-
նելով գլխէն մինչև ոտքերը կը սարսուար : Երբ նա մտնէր , անոր
շարժումները աչքէն չէր հեռացրներ , սիրաբար կուրծքին մէջ կը խայ-
տար , բիւրանը կընդբացուէր իբր երգելու համար , նորատի գողա-
փառներ կը զարթնէին իր մէջ , որոնց սուրբ զեղզիզանաց արձագան-
քը թռչի մէջ գանձած ուրախ ու ճուրղալի շիկահաւներու ձայնին
պէս կը լսէր : Իւր կնկան ամեն ինչ իրեն համար շահատէր էր և հողին
անդադար զան կը ցոլար : Բունի մը պէս քաղցր ու փափուկ սենեակ
մը շինել տուաւ անոր համար , որուն մէջ կը փափաքէր ընդհանուր
քնութիւնը ամփոփել : Պատելը ու ձեղձը մտաբանողէն տակ կոր-
սուած էին , ոտքը՝ դաշտաց երկայն խոտերուն պէս թաւառ գորգին
մէջ կը խորասուցէր : Այս անուշահոտ վանդակին չորս անկիւնները
թուշուռ մը կընար թաշիւ առանց թնեքը փնտրելու վաւանդին : Բոլոր
կարտիները մտաբանայ էին և լօրի պէս կը մարձէին , ճիւղթի
չափ բաց տախտակ մը չէր գտնուեր բոլոր սենեկին մէջ և տասպա-
տակները մեծամեծ քնական անհոտ գոյնզգոյն ու զեղեցկաճաշակ ծա-
ղիկներով շրջապատուած էին :

— Արովհետեւ զիղը չես ուզեր երթալ , կ'ըսէր Էտմոն կնկանը ,
կ'ուզեմ որ պէզըր ոտքիդ գայ , ոչ միայն ամառը այլ նաև ձմե-
ռը :

Ժամերով մեր երկու սիրահարները այս հովանաւոր սենեկին մէջ
կը գոցուէին , որուն իջած վանդակներէն ու զոյց պատահաններէն
կ'իտաշաւիղ մը ներս կը սփռէր յունիսի վերջալուսոյ նման :

Էտմոն չէր ուզեր որ օտար ձեռք մը Անթոնինի շրջազգեստին
իսկ գայլի :

— Արշափ ես կենդանի եմ , կ'ըսէր , և ոչ մէկը , սենեկապանու-
հի մ'անդամ քովդ չպիտի մտնես : Եսկա նախանձ չէ , այլ

ինքնասիրութիւն : Ինձ կը թուի թէ այլոց շօշափումը անուշահո-
տութենէդ մաս մը պիտի յափշտակէ :

Նաև Էտմոն կնկան հետ դուրս ելած ժամանակ կը փափաքէր
որ զան մինչև կառքը դրկացը մէջ տանէր , որպէս զի նորա ոտ-
քերը գետինը չըպչին : Վրցածին չափ զան ծածկելով կը քողար-
կէր այն զեղեցկութիւնը՝ որ միայն իրեն ծանօթ էր ու այնպէս ալ
պէտք էր ըլլալ :

Կառքին մէջ մանուկի մը պէս կը պառկեցընէր զան ու երբ
կառապանը իրենց կը հարցընէր թէ ո՞ր պիտի երթան .

«Գաշտերուն մէջ» կը սրտառխտանէին :

Այս շրջադայութիւնները իրիկունները կ'ըլլային : Մինչև առա-
ւօտեան ժամը երկուք այսպէս կը մնային ու աշխարհ իրենցն էր :
Երբեմն Էտմոն Անթոնինի «Երգէ» կ'ըսէր , և երբը լմնալէն ա-
ռաջ նորատի կնկան շրթերուն վրայէն համբոյրով մը կը քաղէր
զան :

Վերջապէս տուն կը մանկին : Էտմոն ան ատեն իւր կենը
քնոյ համար կը զարդարէր : Իրիկուն մը , երբ այս վերջինը կը
քնանար ինք դուրս ելաւ , ծաղկավաճառու հւոյն տունը որչափ վարդ
որ կար գնեց և տերեւաթափ ընելով Անթոնինի անկողնոյն վրայ
սփռեց զանոնք : Երբ նա արթնցաւ ծաղիկներով ծածկուած էր :

Էտմոն չէր գիտեր թէ ինչ հարէր : Իւր կնկան համար քսան
ստրուկի տեղ կը բռնէր : Անոր քնացած ատեն ժամերով զան
նկատելով կ'ըսէր ինքնիւրեն .

«Այս ամենը իմն է : Այս մարմինը ու զեղեցկութիւնը ինձ կը
պատկանին : Այս մատղաշ ու բարեկազմ կուրծքը որ առաւօտե-
ան քամիէ շարժած տերեւի մը պէս կը խլրտի , այս Միլօի Աստ-
ղիկին նման սպիտակափայլ ու կրորակ ուտերը , այս քնափակ ա-
չուրները՝ որոնք արթնցած ժամանակ զիս պիտի վնտուեն , այս մար-
դարտի արկղի մը պէս՝ կ'իտաբաց բերանը , այս երկայն սև մազե-
րը որ եպենոտեայ ալիքի մը պէս կը դալարին , այս ամենը իմն են ,
միայն : . . . Ինձմէ առաջ և ոչ մէկը իմ ըսածներս ըսած է»

այս հրաշագեղ էակին : Մէկ հատ միայն մարդու անուն կը ճանչնայ , այն է իմն : Ինչմով միայն կ'ապրի , իրմով միայն կ'ապրիմ : Ուր կը գտնուի ասկէց մեծ բարեբաստութիւն , ասկէց կատարեալ երջանկութիւն , ասկէց հաստատ հիացումն . . . :

Եւ այս Էտմօն , որ իւր զաղափարներուն մինչև զառ 'ի վարը կը հետևէր , կ'ըսէր երբեմն ինքնիրեն .

«Եւ օր մը այս ամեն երջանկութիւնը պէտք է որ թողում : . . . Ինչ պիտի ըլլայ այն ատեն : Արդեօք իմ յիշատակիս հաւատարիմ պիտի մնայ , կամ թէ այն սիրոյ տենչը որ անխոհմարար իւր հոգւոյն մէջ կը հեղում , մինչև այն աստիճան պիտի նուաճէ զան , որ ուրիշի մը քով զիս մոռնայ : . . . Սարսափելի խորհուրդ , ուրիշ մարդ մը պիտի վայելէ այս կինը ինչպէս ես կը վայելեմ . ինծի ըսած խօսքերը անոր ալ պիտի ըսէ : . . . Իւր զեղեցկութեան ճոխութիւններուն վրայ ուրիշ ամուսին մը պիտի զմայլէ , ինչպէս ես այս միջոցին : . . . Անթօնին արթնցած ժամանակ դէմք մը պիտի փնտռէ որ իմն պիտի չըլլայ , ձեռքերը ձեռք մը պիտի սեղմեն որ իմն պիտի չըլլայ , մինչգեռ ես գունատ ու ապականեալ թաց երկրին տակ իրմէ մոռցուած պիտի քնանամ : Անունս պարտք մը միայն պիտի յիշեցընէ անոր , ու անգամ մը ըստ դիպաց պիտի գայ պսակ մը նետելու ու լքեալ շիրմիս այցելութիւն մ'ընելու : Ասիկա անկարելի է . և սակայն հաւանական ճշմարտութիւն է , քանզի սիրտը այսպէս է , երբ սիրելոյն յիշատակը իր մէջ ցաւ մը յարուցանէ այնուհետև կ'սկսի զան մոռնալ : Իւ սասկայ երեք տարիէն պիտի ըլլայ , գուցէ ալ երկու : Իրկու տարի որ երկու վայրկեաններու պէս պիտի անցնին : Ինչո՞ւ երբ այս աղէտալի լուրը լսեցի , ինչո՞ւ առանց առջնայեղու չփախայ , ինչո՞ւ բարեբաստութիւն մը սկսեցի , որուն վախճանին չպիտի հասնիմ և որնոր նզովքներու ու արտատուաց մէջ զիս պիտի մեռցընէ : . . . Ուր գտնեմ մէկը որ զիս ապրեցընէ , որ իւր առոյգ ու բերրի արիւնը իմինիս մէջ վազցընէ : . . . Այնչափ մարդիկ կան որք 'ի զուր կ'ապրին . . . »

Եւ երբ Էտմօն այս կը մտածէր , կուրծքը կը զարնէր ու յանկարծ Անթօնինը արթնցընելով կ'ըսէր .

«Արհնէ ինձ որ կը սիրես զիս , և թէ մեռիմ կամ ապրիմ , իմ յիշատակիս ու սիրոյս հաւատարիմ պիտի մնաս :

Նորատի կինը ամուսնոյն բազկացը մէջ կը նետուէր և այս տրբամութիւնն ալ կ'երթար միանալու այն ամեն տրամութեանց հետ՝ որ կնկան մը շնչին տակ մարած են : Իսկ Անթօնին երջանիկ էր որչափ կրնայ մարդկային արարած մը ըլլալ :

Կարգուելէն 'ի վեր' կը կարծէր թէ հոգին նոր մթնոլորտի մը մէջ կը բնակի ու անծանօթ հոտերով լեցուն՝ իրեն համար շինուած միայն նոր օդ մը կը ծծէ : Այս յարատև սէրը , որուն առարկան եղած էր և որուն քիչ ատեն էր որ ծանօթացեր էր , իւր բոլոր էութիւնը՝ կենաց բոբոքեալ բղետներուն կը բանար : Բարոյապէս այն բարեկենդանութեան վիճակին մէջն էր , որ կ'ըզգայ մէկը երբ Արևելեան բաղնիքի մը մէջէն՝ արդէն տաք՝ անուշահոտ կլիմայի մը տակ անցնելով՝ ականջին ուղիղ ներդաշնակութիւն մը կու գայ : Անանքը ամպի մը պէս Անթօնինը կը մղէր :

Իւր շուրջը ամեն ինչ քաղցր , հեշտ ու լուսաւոր էր : Կարապի մը պէս երկու կապուտակներու մէջ կը սահէր և երբ երբեք էրկանը պէս ապագային վրայ զարհուրէր , հայրը կ'ըսէր իրեն ,

«Յուսա՛ , ամեն ինչ աղէկ կ'երթայ :»

Բայց այս տխրալի մտածութիւնները խիստ քիչ անգամ մտքին կու գային , քանզի իւր կենանքը ուրախութեան գոլորշիի մը մէջ կը լողար այն վարդապոյն մշուշներու նման , որ յառաւօտեան դաշտներուն վրայ կ'իջնան և ժամանակ մը ամենէ մօտ հորիզոններն իսկ կը քօղարկեն :

Ի

կը կարծէք որ մարդ մը կարենայ ըսել .

«Այսչափ ժամանակ ունիմ ապրելու, կարելի եղածին չափ երջանիկ անցընեմ զան, որպէս զի երբ մահճը գայ համբերատար զոհ մը գտնէ, որնոր ժպտելով իշնայ :» Չէ՛, քանզի այսպէս գիրուած թեամբ եղած զոհողութեան մը հաւատալը՝ մարդկային բնութիւնը ուրանալ է : Մարդս երբէք չզիջանիր իւր ակնկալութեանց չափ դնելու : Ուստի ինչպէս որ նշանակեցինք, օր կար որ Էտմօն երբ իւր մօտալուտ ապագան մտածէր, որուն թէև իւր երջանկութիւնը կը պարտաւորէր, բայց օր ըստ օրէ նուազելով անցելոյն մէջ կ'իջնար՝ կուրծքը զարնելով մազերը կը փետէր : . . . Քսան անգամ միտք ըրեր էր երթալ Պ. Տրվօն գտնել ու ըսել անոր . «Փրկէ զիս» բայց միշտ կը սոսկար որ բժիշկը «Անկարելի է» չպատահանէր իրեն : Քանզի այն ատենէն ՚ի վեր որ ճշմարտութիւնը իմացաւ, Էտմօն մկաւ իր անձը քննել ու գիտել այն նշանները, որոնք մինչև ցարդ անսես մնացեր էին իրեն՝ բայց հիմակ բոլորովին լուրջ կերպարան կ'առնուին : Այն քնհատութիւնները, այն վայրկենական քրտինքները, այն յանկարծական տագուորութիւնները, այն մշտատև ծարաւները, այն արիւն թքնելները որ պղտի յուզմունքէ յառաջ կու գային, այն անձկութիւնները, այն մտածութիւնները, այն թուլութիւնները, այս ամենը պատճառ մ'ունէին, և այս ճգնաժամերէն մէն մին իւր կենաց մէկ կտորը կը յափշտակէր ամեն անգամ որ վրայ հասնէր : Երբեմն իւր մօրմէն պահածը մտածելով որ վտանգ մը չկար և թէ ոչինչ բանի մը համար պէտք չէր զան խռովել, հիմակ անորմէ կը պահէր որպէս զի այս յայտնութեամբ իւր զուկին հիւանդութեան սարսափելի գաղտնեաց միջամուխ չըլլայ : Ասիէ զատ՝ մայրն իւր անսահման վստահութեամբը կը շողար, այնպէս որ երբ Անթօնիի հետ գուրս ելչ

լէր, զան տեսնողը աւելի քոյրը կը կարծէր քան թէ զըբանչը : Կարծես թէ որչափ ծերանար Աստուած անոր տարիները կը նուազեցընէր : Անթօնին իւր էրկանը չհամարձակածը ինք կ'ընէր . գրեթէ ամեն օր Պ. Տրվօն կը հարցափորձէր և ասիկա իւր հիւանդին վրայ աղջկան միջնորդութեամբ գործելով՝ տակաւին չէր ըսեր թէ ալ յուսահատելու ժամանակն է :

Հինգ ամիս այսպէս անցան և Էտմօն սիրով ու սարսափով խառն կեանք մը վարեց : Այս ժամանակին վերջը սկսաւ ետին նայիլ ու ըսել . «Հինգ ամիս ապրեցայ, այսինքն ապագայիս մէկ քառորդը» :

Աշունը հասաւ :

— Իրիկը նիս տար, ըսաւ Պ. Տրվօն իւր աղջկանը, և գրածներս ճշգրտութեամբ կատարել տուր իրեն ու ամեն ութ օր իր վրայ տեղեկութիւն զրկէ ինձ : Մարտին որոշակի ամեն բան պիտի յայտնուի :

Էտմօն և Անթօնին տիկինը Բէրէօն ընկերակցութեամբ մեկնեցան : Անթօնիի ուզածը Էտմօն ալ կ'ուզէր . Էտմօնի ուզածը տիկինը տը Բէրէօն ալ կ'ուզէր :

Կիւսթավ կը փափաքէր իր բարեկամին հետ ընկերանալ, բայց չէր կրնար նիշէթն ալ մեկտեղ առնուլ և անորմէ հեռանալն ալ խիստ դժուար կը թուէր : Ասիէ զատ Էտմօն Անթօնինը ունէր, որով իւր բարեկամութեան մեծ կարօտութիւն չէր մնար : Ուստի Կիւսթավ Բարիկ մնաց խոտանալով Էտմօնի ստէպ գրելու՝ յանձնարարութիւն մը որ այս ալ իր կողմէն բարեկամին խոստացաւ :

Մեր ընթերցողները գիւրաւ պիտի հասկընան թէ ինչո՞ւ քայլ առ քայլ մեր գլխաւոր գիւցազնին կը հետեւինք : Ըստ մեզ բոլոր կարեկցութիւն անոր վրայ է : Ասայժմ իւր շուրջը եղողներուն պատմութիւնը՝ որոյ նախանկար պատկերները այս գիրքը կը լրացընեն՝ շահաւոր հանդամանք մը չընծայէր : Կիւսթավ միշտ կը սիրէ նիշէթը՝ որմէ ինքն ալ կը սիրուի . Պ. Տրվօն ամեն օր ժամը տասնմեկէն մինչև երեք իր հիւանդները տեսնելու կ'երթայ . տիկին Անթէլիք Քէնիլ-Երնիլի Գլէկին յիտուներկուրորդ առկէն անցնելով՝ Ամի Բօպարի ու Թրէզիլէանի խօսակցութեան վայրը հասնելու յաջո

զեր է. տիկին տը Բէրէօ միշտ իւր որդւով ու իւր որդւոյն համար կը շնչէ :

— Կ'ուզէի Իտալիա ճամբորդութիւն մ'ընել, ըսաւ Անթօնին որ չէր ուզեր հասկըցընել թէ Նիս սիտի ըլլար իւր ուղևորութեան վախճանը. քանզի Նիս իւր անբուժելի հիւանդութեանց ըրած ասպնջականութեան համար գրեթէ սոսկալի անուն մը եղած է. — և երեքն ալ անմիջապէս մեկնեցան :

Նիս ամեն կողմանէ պատսպարուած ըլլալուն, հետևապէս վաւտախառնութիւնը անթափանցելի է : Միշտ հաւասար օդ մը կը շնչես հոն : Մթնոլորտը գրեթէ այն գաղջ խոնաութիւնը ունի, որ Կրուպէր թոքախտութեան համար պատուիրած է :

Երբ հոն հասան Անթօնին օդը այնքան քաղցր ու դիրքը այնքան հաճելի գտնալ կեղծեց որ չուզեց աւելի առաջ երթալ :

— Շատ լաւ, հոս կենանք, ըսաւ տիկին տը Բէրէօ առանց այս նախամեծարութեան պատճառը իմանալու :

— Ուրեմն ամեն ինչ լմնցած է, ըսաւ Էտմօն իր կնկանը, ալ յոյս չկայ և հայրդ զիս հոս կը դրկէ որպէս զի քիչ մ'աւելի ուշ մեռնիմ :

— Ընդհակառակը, բարեկամ, ըսաւ նորատի կինը իւր էրկան բազկաց մէջ նետուելով, հայրս յուսով լի է : Զքեզ ինձ յանձնեց. կեանքդ իմ զգօնութեանս վստահէ, և մեր առջև դեռ երկար տարիներ պիտի ունենանք :

Էտմօն պղտիկ տուն մը վարձեց քաղքէն հեռու, որնոր քիչ մը հիւանդանոցի կը նմանի : Այս տունը որ բլրոյ մը պատկից էր, առաւօտեան արեգական դէմ՝ իւր կանաչ վանդակապատնեքը կը բացուէին : Իր չորս դին յստակ ու քաղցր բուրմունքներ լի էին և հովանաւոր ու նարնջապատ ուղի մը գեղապէս դէպ 'ի Վար գետը կը տարածուէր՝ այն հեղասահ գետը, որ իւր աղբիւրը Ալպեան գետերէն առնելով՝ կ'երթայ Միջերկրականին մէջ թափուելու՝ Նիսէն կէս մղոն հեռի :

Հարաւային այն գեղատարած գետերը տեսնողը՝ որք թափանցիկ՝ այն երկնից կապուտակին պէս՝ որուն պատկերը կը ցոլացընեն և

ամառնային սիւդին եղերքներէ յափշտակած ծաղիկները իրենց մեղմ՝ ընթացքով կը տարուբերեն՝ հնոց պիցաբանութեան՝ և վարդասարդերու պուրակներուն տակ ու ժայռերու հովասուն զառ 'ի վարին մէջ եղած՝ նոցա գետերու և առուակներու բանաստեղծական նշանտուքին վերահասու կ'ըլլայ :

Անթօնին կը ջանար կտրելի եղածին չափ կեանքը բանաստեղծական երեցընել Էտմօնի, հօրմէն խնդրեց որ ամուսնոյն համար դործածուելու ամեն բժշկական միջոցները սորվեցընէ իրեն, առանց սակայն այս վերջինը հասկընալու որ կը խնամուէր :

Արդ՝ ամեն առտու, արշալոյսը ծաղիլուն պէս Էտմօն և Անթօնին ձի կը հեծնէին ու գետեղերքը կը պտրտէին, ետքը տիկին տը Բէրէօի քով կու գային՝ որ ասոնցմէ աւելի ուշ արթննալու սովորութիւն ունենալով՝ անկողնին մէջէն բլրին սարին վրայ արևին ծագիլը կը տեսնէր :

Այս արևին շրջադայութիւնը հիւանդին հաճութիւն տալէն զատ ուրիշ նպատակ մ'ունէր : Այսինքն զան յոգնեցընելով իւր յօրինաւածութիւնը բնութեան ամենէ անհրաժեշտ երկու պիտոյից՝ քուրի և անօթութեան պիտի վարժեցընէր :

Գիշերը միշտ կանթեղ մը կը վառէր՝ որն որ ձեղունէն կախուած լոկ գիշերային կանթեղ մը կ'երևէր, ասիկա արծաթեայ պղտի կոնք մը կը տարցընէր՝ ուրիէց բեկնեայ խէժով և մումով խառնուած աննշմարելի գոլորշի մը դուրս կ'ընէր և օդը մաքրելով Էտմօնի հանգիստ քուն մը կու տար : Իւր կերակուրներն նաև առողջարար էին :

Այսպէս Էտմօն ամեն բանէ առողջութիւն պիտի քաղէր, իւր հաճութեանց, կերակրոց և նոյն իսկ հանգստեան մէջ. և եթէ այս ամենը չյաջողէր, երիտասարդութիւնը, բնութիւնը և գերազոյն միջոցները մնացեալը պիտի կատարէին :

Սակայն Անթօնին խնամքները իր աչքէն չէին պրծէր, ուստի իւր սէրը օրէ օր կը կրկնապատկէր :

— Խեղճ աղջիկ, կ'ըսէր անոր, տխուր կեանք մ'անցընել կու

տամ քեզ, բայց մեր ապաղայ երջանկութիւնն է որ կը սերմանես
և եթէ յաջողիս սիրոյ և ցնծութեան առատ հունձ մը սիրտի ժող-
վենք օր մը:

Այս ախնկալութեամբ Անթոնինի աչքերը արտասուօք կը թանա-
լին ու երկուքն ալ խոստմնալիբ համբոյրով մ'իբար կը փարէին:
Անշուշտ ինծի պէս դուք ալ նկատեցիք, որ հիւանդները 'ի վեր-
ջոյ տեսակ մը մափառութիւն կ'ստանան իրենց հիւանդութեան վրայ
զան ունենալնուն, կրեւնուն և աղէտից գիշարուն մը կարենալ ըլ-
լալնուն համար կը հպարտանան: Ասիկա հիւանդութեան մէկ հա-
տուցումն է որ իւր զոհերուն կ'ընէ, թողունք զան իրենց քանդի
մեծ բան մը չէ: Սոյն հոստանքը Էտմոնի՝ Սիւսթավի գրած նա-
մակներուն մէջն ալ պիտի գտնէք, որ կը նշանակենք իւր վիճա-
կին վրայ աւելի տեղեկութիւն տալու համար. քանզի ուղղակի ե-
րիտասարդին ինքնական տպաւորութեանցը հետ յարաբերութիւն կ'ու-
նենանք:

«Սիրելի Սիւսթավ, կը գրէր Պ. տը Բէրէօ, Նիս հասանք =
Ամեն ինչ կենաց և մահուան երևոյթ ունի հոս: Տարօրինակ բան,
որ պայծառագեղ, քաղցրաստիլ ու հոսաւէտ քաղաք մը՝ բնու-
թեան շօշափելի ժայտը՝ այսպէս վշտաց ու մահուան ընծայուած
ըլլայ: Նիս իւր հիւրընկալած հիւանդութեան ճշգրիտ պատկերն
է: Այո՛, ճիշդ նոյն քաղցր մելամաղձութիւնն, նոյն փափկութիւ-
նը և նոյն հայեցումովի արձուգութիւնն է՝ որ ամեն անոնց վրայ
կ'երեկի՝ որք ինծի պէս կու գան իրմէ սիտիանք մը ինդրելու: Իր-
մէ քիչ մը հեռի՛ բերրի ու կորովի կենաց յայտարար՝ զօրաւոր
ու առատ գալարի մը ժայռերէն կը բղխի օր իւր մէջ շքեղու-
նիր: Սեր կենցաղավարութիւնը խիստ պարզ է հոս: Այլ թողում
որ Անթոնին իր սրտին ու հօրը խրատներուն համաձայն զիս ինա-
մէ: Գիցուք թէ իւր տուած խնամներէն օգուտ մը կը քաղեմ,
կամ թէ ես քիչ մը կ'աճաղարեմ յուսալու, բայց ինձ կը թուի
թէ հիմա աւելի զիւրութեամբ գոյութեան կը տեսնամ: Փարիզ ե-
ղածիս չափ գունատ չեմ հիմակ, և այն սխառ քնհատութիւններս

քիչ մը դադրեցան: Իմ անստուգութեանցս մէջ արևի ճառագայթ
մը կը սպրդի:

«Անանկ բաներ կան որ դուն մինակդ չես հասկընար, դու որ
այդ լայն ուսերովդ ամեն երկիրներու օդով կրնաս սնանիլ, բայց
ես քեզ պիտի բացատրեմ, քանզի ասոնք իմ ցաւիս սիտիանք-
ներն են: Յայտնապէս ամեն ինչ տարբեր երևոյթով կը տեսնեմ:
Սէրը, ծագիկները, երկինքը ու ամեն Աստուածային արարչագոր-
ծութիւնները՝ որոնցմէ անմիջապէս մեկնելու երկիւզը ունիմ, հիմակ
իմ աչքիս այնպէս չեն երևար՝ ինչպէս ուրիշ անդամ, երբ կը
կարծէի թէ երկար տարիներ զանոնք պիտի վայելեմ: Բնական
տուններնիս պզտիկ բլրի մը կ'աթնած է, որուն մէջ խորամէջներ
ու նկահասակ ծառեր լի են: Ստեպ արևը խիստ տաք եղած ժա-
մանակ՝ փորձելու համար թէ դեռևս կրնամ յոյսութեան դէմ մա-
քաւիլ, որուն տակ կը նուաճին ամենէ հօգբներն իսկ, ճակատս
բաց այս պզտի անապատին մէջ կը մոլորիմ ու հնետեղի ամեն աղ-
մուկները ու բղխումները կը քաղեմ: Առանձին լեռան մը հովա-
սուն խոռոջին մէջ մանելով, կը նստիմ ու կ'աւանդ կ'աւանդ ճակ-
տիս քրտինքին սառիլը կ'ըզամ: Անտեն կը հարցընեմ ինքնին
թէ «Այս ըրածս արդիօք վնաս մը կը բերէ», և կ'ըսեմ՝ «Եթէ
հետեանք մը չունենայ, բսիլ է թէ տակաւին բոլորովին դատա-
պարտուած չեմ»: Ահացս դէմ գծուարութիւններ յարուցանելով
ապրելու կը վարժուիմ, ես սր պէտք եմ բոլոր ժամանակս զան
պահպանելու համար անցրել: Ատեն ատեն կը կարծեմ թէ բնու-
թիւնը միայն կրնայ բժշկել այն հիւանդութիւնները, որ իրմէ կու
գան, ուստի կը վազեմ, ձի կը հեծնեմ, և ուղածիս չափ կ'ու-
տեմ ու կը խմեմ, ապա ինքզինքս քննելով կը տեսնեմ որ ստուա-
պանքս չէ սատկացեր, և գուցէ աւելի նուազած իսկ կը գտնեմ:

«Ինչ երջանիկ պիտի ըլլամ այսպէս սիրելով ու սիրուելով ե-
թէ ապրիմ: Եթէ գիտնայիր ինչ հրեշտակ մը գրեր է Աստուած
ճամբուս վրայ: . . . Ահա ինչո՞ւ համար ստեպ կը վախնամ թէ
կեանքս խիստ կարճ չըլլայ: «Երկինք այսպիսի ընկեր մը շնորհած
է ինձ, կ'ըսեմ ստեպ, քանզի իր ամենամեծ գթութեամբը հա-
»

կըցած է որ հոգին՝ առջևս ունեցած այն կարճ ժամանակներուն մէջ համակիր սրտի մը մէջ ծորելու պէտք պիտի ունենայ » :

«Ա՛հ, որչափ կ'ուզէի Անթօնիի համար ապրիլ : . . . Հոգւոյս մէջ գորովոյ անհասնում աղբիւր մը կայ : Եթէ հարիւր տարի իսկ ապրիմ իր քովը, դարձեալ բաւական ժամանակ չպիտի ունենամ սէրս անոր յայտնելու :

«Ձորս դիս կը տեսնեմ՝ առողջ ու ինձ տարեկից կարգուած մարդիկներ, որք անտեղի զբաղմունքներով կեանքերնին կ'անցընեն, նորատի ու զեղանի կանանց էրիկներ՝ որ ոմանք փառասէր, ոմանք խաղամոլ և ոմանք ալ ասոնցմէ վատթարագոյն՝ լաւ կը համարին բան մը չընել քան թէ իրենց կանանց ոտքին ներքև նստիլ : Եւ սակայն կեանքը սիրած կնկան մը նուիրելէ զատ՝ ուրիշ ինչ աւելի քաղցրագոյն իրի մը կրնայ գործածուիլ : . . . Ամեն ինչ այն Աստուծոյ իրենց շնորհած արարածին տալու տեղ, անդադար անորմէ հեռանալ կը ջանան : Առոնք միթէ կը կարծեն որ իրենց հոգւոյն բովանդակ գիրքը մէկ կամ երկու տարիի մէջ կարգացած են, որուն ամեն մէկ երեսը, ամեն մէկ բառը սքանչելիք մ'է : . . .

Ինչ աղէկ պիտի հասկընային կենաց բարօրութիւնը այս պարոնները՝ եթէ ինծի պէս անոնց ալ ճակատագիրը օր մը մօտալուտ վախճան մը յուցընելով ըսէր : «Մինչև հոն պիտի երթաք : . . . »

«Անթօնիը սիրելէս՝ ի վեր, մայրս առաւել կը սիրեմ, քանզի կը հասկընամ այն մեծ զոհողութիւնը՝ որ ըրած է իւր անձը բուրովին ինձ նուիրելով : Հայրս մեռած ատեն սիւ կրնար զան արգելել՝ որ այն տարիքով նորէն չկարգուի և իրեն անծանօթ մնացած սիրոյ մէջ այն հրճուանքները չփնտռէ՝ որ միմիայն իւր զաւկին վրայ ուղեց գտնել, և որոնց համար ինձ կը թուի թէ ամեն ինչ թողուլ պէտք է : Երբ Ես մեռնիմ, Անթօնի մօրս օրինակին պիտի հետեւի : Այն սէրը որուն մէջ երկու քնիս ալ ամեն ինչ կը մոռնանք մէկուն մահուանէ ետքը դեռ անփոփոխ պիտի մնայ : Սոսկալի՛ կասկած : Բայց Անթօնիին՝ իմ յիշատակիս հաւատարիմ մնալու համար երգում մը խնդրելը մեծ պահանջում մը պիտի ըլլայ, այնպէս չէ, մանաւանդ թէ իրեն համար խղճի տագնապ մը պի-

տի ըլլայ երբ իւր երգումը ոտնակոխ ընէ : . . . Ընդհակառակը բան մը միայն կը խնդրեմ : Աստուծակ, այս զգաստ աղջկան երջանկութիւնը, ինչ կերպ կ'ուզէ թող ըլլայ, որնոր իւր ծաղկափթիթ երիտասարդութիւնը և նորատի սէրը ինձ տաւա : Երբ ես մեռնիմ, կրնայ ուրիշ մը զան սիրել և նա ուրիշի մը, բայց նորա առաջին տպաւորութեանց զանձը և ոչ մէկը ինծի պէս պիտի կարենայ ժողվել ու հոգւոյ փոխադարձութեան առաջին դադարները անոր յայտնել, և վստահ եմ որ նա ստէպ պիտի յիշէ իմ անունս նոյն իսկ երկրորդ սիրոյ մը ամենէ երջանիկ վայրկեաններուն մէջ :

«Գու անոր բարեկամը պիտի մնաս, այնպէս չէ. զան պիտի հսկես և իմ հանգչած տեղս այցելութեան դալու սովորութիւնը շարունակել պիտի տաս անոր : քանզի շատ անգամ թէև ապագան կ'երազեմ, բայց դեռ չեմ կրնար յուսալ և ցուրտ իրականութիւնը միշտ հորիզոնին վրայ ինձ կ'երևի : Յիշէ, կիսթավ, որ զքեզեզ բօրս պէս կը սիրեմ և դու պէտք ես զան քրօջգ պէս խնամիլ : Եթէ երբէք խաբուի դու պիտի սլաշտպանես զան, այնպէս չէ, և զան վշտացընող մարդը պիտի սպաննես : . . . »

«Ինչո՞ւ այս ամենուն վրայ կը մտածեմ :

«Քանի մ'անձինք ուզեցին մեր հետ բարեկամութիւն հաստատել, բայց ես ընդդիմացայ : Ինչի՞ կը ծառայեն այն բարեկամութիւնները որ երկար տևողութիւն մը չպիտի ունենան և որ միայն կենաց վիշտը կ'աւելցնեն : Ինչ պէտք են այն ռամկական յարաբերութիւնները՝ որ ինծի պէս մահուան ու սիրոյ յարատև գաղափարներով զբաղած մարդու մը՝ չեն կրնար ոչ միթիթարութիւն մը ըլլալ և ոչ իսկ զուարճութիւն մը :

Ուրիշ և սատրինջ խաղալով անցընեմ իրիկուններս՝ ես որ կ'ուզեմ երկու տարուան մէջ այնքան երջանկութիւն ունենալ, որչափ ուրիշ մը յիսուն տարուան մէջ, ես որ մայրս, կինս, քեզի պէս բարեկամ մը ունիմ սիրելու, և այս բանիս համար սահմանեալ ժամանակ մը կայ առջիս :

«Գեռ տարի կը հաշուեմ, ետքը օրերը պիտի համրեմ ու ետքը

վայրկեանները . . . Տօրս պէս : Խեղճ մարդը , որչափ տաղապանք կրած է , քանզի նա ինծի պէս չէր սիրեր : Բայց արգեօք մահուան ժամուն այս սէրը ինծի համար միտթարութիւն մը պիտի ըլլայ թէ տարակոյս մը և անցեալ երջանկութիւնս զիս աւելի վշտացնել չպիտի տայ ապագայէն զրկուելու համար :

«Որչափ կը ձանձրացնեմ քեզ անդադար իմ վրայօք խօսելով : . . . Ներէ այս ըսածիս , բարեկամ , հանդարտ եղիք , քու վրայ չեմ կասկածիր , դու իմ ներքին խորհուրդներու մտերիմը :

«Միտքդ բեր ինչ երջանիկ ու խաղաղ կեանք պիտի վարէիք եթէ Պ. Տրփօ զիս ազատէր : Անոյ հասարակ շրջանին մէջ երջանկութիւնը երկարելը՝ որ վայրկեան մը միայն կը յուսամ , երկրի մէջ արքայութիւն մը չպիտի ըլլայ : Երեք սիրոյ հովանեաց տակ դնել սիրտս : . . . Աղօթէ ինձ համար , Ախօթով , աղօթէ : . . .

«Նամակդ սակաւ մի բներ , 'Նիշէթին' այն խարտեաշ ճիւղին վրայ խօսէ ինձ : Միշտ կը սիրեն զան , նա կը սիրէ քեզ , խեղճ Նիշէթ . . . որչափ կու լար այն օրը որ քեզի գրած նամակը ձեռքս ինկաւ : . . . Այս նամակին կը պարտաւորիմ բոլոր բարեբաստութիւնս : . . . Գրկէ զան իմ կողմէ , և բտ որ կերպասներ ու գօտիներ պիտի զրկեմ իրեն՝ որ տեսակ մը մաքրանքներ Արևելքէն բերելով հոս կը ծախեն :

«Անթօնին եղբայրական համբոյր մը կը զրկէ քեզ այս նամակին մէջ չորս ծալուած :»

Անթօնին ալ հօրը կը զրէր .

«Բարի հայր իմ ,

«Քանի մ'օրէ 'ի վեր 'Նիս հասանք : Տիկին տը Բէրէօ զիս միշտ իր զաւկին պէս կը սիրէ , և ես քանի որ քովէ գ հեռացեր եմ կը տեսնեմ թէ առաջուանէ աւելի կը սիրեմ զքեզ , եթէ այս կարելի է : Երջանիկ , խիստ երջանիկ եմ հայր իմ , ուստի մի զղջար բրածիդ , յիշէ միայն թէ քեզմէ կախում ունի սր բարեբաստու-

թիւնս երկարատե ըլլայ : Թող Էտմօն ապրի ու ամեն ինչ աղէկ պիտի երթայ . քանզի եթէ իրեն գժբաղգութիւն մը պատահի , ճշմարիտը չեմ գիտեր ինչ պիտի ըլլամ :

«Պատուէրներուդ և ոչ մէկը զանց կ'ընեմ , և եթէ չեմ սխաշիր սակաւ ինչ բարեբուժ կը նշմարեմ իր վրայ :

«Ամենևին չես կրնար մակարերել թէ ինչ գորովալի է Էտմօնի իմ վրայ ունեցած սէրը , որուն սրբազանները չեմ համարձակիր քեզ պատմել վախճանով որ չնախանձիս , իմ բարի ու հազուագիւտ հայրս . բայց գիտցիր թէ անկարելի է որ կին մը ինծի չափ սիրուած ըլլայ :

«Ա՛րեան թէ բժիշկները ամեն բան կը բացատրեն : Դու որ բժիշկ ես բացատրէ ինձ երկանս համար ունեցած զգացումս : Ապահով անձնուիրութիւն մ'է , որ քիչ մը մայրական սիրոյ պէտք է նմանի : Ինձ կը թուի թէ մայրս զիս այնպէս կը սիրէր ինչպէս ես Էտմօն : Ասիկա անշուշտ անկէց կը հետևի որ թէև ես կին մը՝ բայց անորմէ աւելի զօրաւոր ըլլալով , նա իմ պաշտպանութեանս կը կարօտի : Իր հիւանդութիւնը տարօրինակ զգացումներ կը յարուցանէ իմ մէջս : Աստուծմէ բան մը միայն կը խնդրեմ , այն թէ նա բժշկուի . քանզի մեր երջանկութիւնը այս բժշկութեան մէջն է : Ուստի այս բանիս համար կըցածս կ'ընեմ : Է՛հ , երբ ամբողջ օր մը տկարութիւն մը չունենայ , երբ վայրկեանական բժշկութիւն մը կատարեալ առողջութեան բոլոր երեոյթներով տեղի կ'ունենայ , նախանձտի պէս կ'ըլլամ : Կարծես թէ այն ժամանակ աւելի հիւանդ կ'ուզեմ տեսնել զինքը , որպէս զի առաւել իմն ըլլայ : Արգեօք սէրը ինքնին ամենամեծ անձնասիրութիւն մ'է :

«Ինձ դէմ չես բարկանար ամուսինս այսչափ սիրելուս , այնպէս չէ : Յիշէ որչափ կը սիրէիր դու մայրս :»

Անթօնին Էտմօնի համար կրած զգացումները չէր կրնար հօրը մանրամասն պատմել : Իր երիտասարդական ամօթխածութեամբ կը հասկընար որ տեսակ մը գորովներ՝ առանց նախանձ գրգռելու՝ գորովներու ոմանց մտերիմները չէին կրնար լրլալ : Այս գրածը արդէն շատ իսկ էր :

Բայց մենք առանց վախճալու կրնանք ընդունիլ այս դեռափթիթ, բանաստեղծական, զգայուն ու թախիժ սիրոյ խոստովանութիւնը՝ որ քրոջ մը սիրոյ պէս անձնուէր ու մօր մը հսկողութեան պէս արթուն էր։ Հետաքրքրական տեսարան մ'էր այս դեռատի, դեղեցիկ ու առոյգ կնկան սէրը քննել որ քայլ առ քայլ սիրած մարդուն հետեւելով, իւր սիրոյն ինքնասէր մասը կը յայտնէր և ինքնին կ'ըսէր. «Այս մարդուն մէջ իմ երջանկութիւնս է որ կ'ապրի, երբ նա մունի, իմ երջանկութիւնս, ուժս, երիտասարդութիւնս, զեղեցիկութիւնս, զազափարնեքս ու սէքս պիտի անշնչանան։ Նա անօթն է, որուն մէջ դրած եմ սիրտս, որ խիստ ծանրանալուն չէ ի կրնար միակ կրել։ Երբ անօթը խորտակուի, սիրտս վար կ'յնալով տիղմ մը միայն պիտի ըլլայ։»

Երբեմն Անթօնին կ'ըսէր իւրովի. «Ինչ պիտի ըլլար կեանքը ինձի առանց Էտմօնի։ Ծառեր ու տուներ տեսնելու շարունակել, ինձ դէմ անդուծ երկնի մը ու ապագայիս զանձը յափշտակող երկրի մը մէջտեղը ինքնաշարժ մեքենայի մը պէս ապրիլ, առանց զղալու շօշափել, առանց տեսնելու նայիլ, առանց հասկընալու լսել, ահա սէրէն որբայած կեանքը։ Երկրորդ անգամ սիրել, ասիկա անկարելի է։ Սիրտը երկու սէր չլինար պարունակել, առջինը կորուսած ժամանակ կը խորտակուի։ Ան ատեն ինչ օգուտ ունի ապրիլը և ինչո՞ւ ոչնչութիւնը մեր սիրածին համար ընդունինք և մեզի համար ոչ։ Ինչո՞ւ հաւատարմութիւնը մինչև 'ի դերեզման չշարունակենք և ինչո՞ւ կենդանւոյն հետ նշանուած ըլլալով մոռելոյն հետ ալ չըլլանք։ Ինչ ցնորական երկիւղ կրնայ պաշարել այն անձը՝ որ իւր պաշտելոյն դիակին վրայ հող թափելը կը տեսնէ։ Մահուան նախընթաց ցաւը և ինչ է անիկա։ Անձնասպանութեան պատահանք. Աստուած որ բղջախօհ կնկան կը ներէ, կրնայ հաւատարիմ կին մը պատժել՝ որ մինչև Աստուածային ատեանը իւր ամուսնոյն ետևէն կ'երթայ։ Յոյսը։ Յոյսը այն յաւերժական կոչուած ծաղիկը գերեզմաններու վրայ նորէն չձաղկիր։

«Եթէ ամեն ճգանցս հակառակ Էտմօն մունի, ես ալ իր հետը պիտի մունիմ»։

«Բայց հայրս, որչարմեքի հայրս ինչ պիտի ըլլայ անատեն . . . Այո, Աստուած միշտ յուսահատեցող իրաւունք մը կու տայ կենաց յարելու։ Իրկանս ցուցըցած հաւատարմութիւնս հօրս դէմ յանցանք մը պիտի սեպուի։»

«Աստուած իմ, կ'ըսէր անատեն Անթօնին ծնկան վրայ գալով, քանի որ այսքան բարերաստութիւն ու կեանք մէկ մարդու մը վրայ խարխեալ են պահպանել զան մեզ։»

Եւ իբր թէ Աստուած աճապարած ըլլար գեղանի աղջիկը վատահացընելու, նոյն ժամանակը հօրմէն նամակ մը ընդունեցաւ հետեւալ կերպով.

«Սիրուն զատիս, զգացմանցդ վրայ հօրմէյ բացատրութիւն խնդրելով զան ծաղրելու երևոյթ մը կը ցուցընես։ Բժիշկները ամեն բան չեն բացատրեր, քանզի դրեթէ ամենքն ալ նիւթապաշտ են, որով բան մը կատարելապէս չբացատրուի. բայց եթէ նոքա ալ ինձի պէս աղջիկ մը ունենային որ երկինքը իրենց ցուցընէր, շատ բաներ կը բացատրէին որոնց վրայ ծանօթութիւն չունին։»

«Ես որ Աստուծոյ կը հաւտամ ինչպէս ամեն բանի որ բարի ու ճշմարիտ է, ես որ վերջապէս գիտեմ թէ կենացդ ուրախութիւնը Էտմօնի առողջութենէն կախում ունի՝ այս կ'ըսեմ քեզ. Հիւանդ մը առողջացընելու համար երկու միջոց կայ, մէկը մարմնապէս և միւսը հոգեպէս։»

Էտմօնի հոգին քու ձեռքդ է ու զան անխտիր քեզ կը թողում, քանզի քեզմէ լաւագոյն բժիշկ մը չլինար ունենալ։

«Իսկ մարմնոյն զալով հիւանդութեան սկիզբն առած ենք, ու պիտի տեսնենք թէ Աստուած գիտութիւնը մարդուս ոչնչի համար տուած է։»

«Յուսա և աղօթէ։»

Անթօնին այս նամակը ընդունելէն զրեթէ տասնևհինգ օր ետքը հօրը կը զրեւր .

«Այս գիրս առնելուդ պէս, ամեն ինչ թող, Փարիզէն անմիջապէս մեկնէ ու մեր քովը եկուր: Որչափ ալ շուտ գաս, գուցէ խիստ ուշ պիտի ըլլայ»: . . . Էտմօն մահուան դուռն է:»

ԻԱ

Էտմօնի մէկ անխոհմտ թիւնը պատճառ եղաւ, որ այսպէս յանկարծ այն սաստիկ հիւանդութիւնը՝ որնոր եթէ ոչ առողջութեան ճամբուն մէջ, զոնէ լատաղոյն վիճակ մը ստացեր էր, Նիս հասնելէն ՚ի վեր նորէն երեւի:

Ինչպէս որ տեսանք իւր Նիս թիւնը դրած նամակներէն մեկուն մէջ, շատ անգամ արեւին վաղվա տեղով յանկարծ խոնաւ խորշի մը մէջ կանկ կ'առնուր, ուր քրտինքը ճակտին վրայ կը սառեցընէր: Այս փորձերը շատ անգամ կրկնուելու հարկ չմնաց. քանզի քիչ ատենէն անոնց աղետալի հետեւաբեր կրեց. և օր մը գլուխը ծանրացած, ոտքէն մինչև գլուխը գողգողալով տուն մտաւ և զգայազիրկ անկողին ինկաւ:

Ահա այս միջոցին էր որ Անթոնին հիւանդութեան արագութեանէն զարհուրած՝ հօրը զրեց որ նամակը ընդունելուն պէս շուտ մը գայ:

Իրօք ալ այն սոսկալի նշաններով խեղճ աղջիկը խիտն համոզուեցաւ որ ալ ճար չկար և Էտմօնի բանը բուսած էր:

Բժիշկ մը կանչել տուաւ, որ հայրը կը ճանչնար և բսած էր թէ ՚ի հարկին կրնար անոր զիմը և ինքն հաստատ սրտով հիւանդին բարձին քով նստաւ:

Բնականաբար այս հարուածը տիկին տը Բէրէօն պահել անկարելի էր, որնոր որդւոյն ամուսնութենէն ՚ի վեր վտահ անոր առողջու-

թեան վրայ՝ հիւանդութեան ծանրութիւնը դժուարաւ կրցաւ ըմբռնել. բայց որչափ ալ կասկածը կը դժկամակեր քր հոգւոյն մէջ մտնելու, այնչափ առելի իրր իշխան պիտի թաղարուէր հոն՝ երբ աչաց վիայն թիւնը ու սրտին ազդարարութիւնները ճշմարտութիւնը պարզէին:

Տիկին տը Բէրէօն նախ կարծեց թէ անյատար տկարութիւն մ'էր այս, բայց երբ տեսաւ իւր որդին երկու ժամ մարած առանց սր և իցէ դարմանով կարենալ ուշարելու, երբ տեսաւ այս թալկացումէն ետքը զառանցում վրան գալը և ՚ի նշան յուսահատութեան բժշկին զլօտը թոթվելը՝ կայծակի մը պէս արագ ու սաստիկ տակուվրայութիւն մը զգաց իր ներսի զին:

Գորովալիւր բնութեանց համար՝ որը սրտով միայն կ'ապրին միջին հաշիւ չկայ: Անջի օրը այնքան ասպհով էր որդւոյն առողջութեան վրայ, որ ալ ևս չէր մտածեր իսկ: Երկրորդ օրը սեւեռով ծածկուեցաւ: Իրեն համար որդին մեռած էր:

Տասը վայրկենի մէջ տասը տարուան ծերացաւ:

Էտմօնի անկողնոյն գլուխն անցաւ ու աչքերը հիւանդին վրայ օնդած ցառոց մունջ արձանին պէս կեցաւ:

Երկու արցունք վազեցան աչքերէն, երկու հատ միայն, բայց այս երկու արցունքները խեղճ կնկան այտերուն վրայ երկու խոռոչներ բացին, ինչպէս հրափրփուր հեղեղ մը հրաբուխի մը կողերը կը պեղէ:

Տիկին տը Բէրէօի բոլոր կեանքը, հոգին ու գիտութիւնը իւր նայուածքին մէջն անցաւ, որնոր Էտմօնի գէմքին վրայ ամբացած անոր ամենէ անշմարելի շարժումներն իսկ կը դիտէր: Յայտնի էր որ երբ այս շարժումները դադրէին, մօր նայուածքն ալ անմիջապէս անփոյթ ու անձիճ՝ կենացը հետ պիտի շիջանէր և այս երկու երկուրեակ հոգիները իրարու միացած Աստուծոյ պիտի դառնային:

Այս անհուն ու զօրաւոր վիշար այնպէս կը նուաճէր իր մայրենի սիրտը, որ բոլորովին անկարող էր զայն առթողին օգնութիւն մ'ընելու: Տիկին տը Բէրէօն անմիջապէս և յօժարակամ իւր կեանքը որդւոյն կու տար, ուստի անխոհմտութիւն էր Էտմօնի խնամը

անոր վրայ թողուլ, քանզի անոր մուսաձ ատեն ինքն ալ հետը պիտի մեռնէր: Խեղճ կինը տառապելէն զատ ուրիշ բան մ'ընելու կարող չէր:

Անթօնին այսպէս չէր, և երկու սիրոյ տարբերութիւնը երկու վշտաց տարբերութեան մէջ կ'երևէր:

Երբ Անթօնին տեսաւ էրիկը սառած, անշարժ ու մուեւազոյն սրտին խորէն հառաչանք մ'արձակեց թէ «Ամեն ինչ լմնցաւ», բայց այն սոսկալի ազգարարութեան դիմաց ուժը կրկնապակեցաւ նոր ոգի մը գղենլով ինքն ալ երգում ըրաւ հիւանդին քովէն չբաժնուելու և ցաւը սրտին խորը մղելով ըսաւ «Նա ամեն բանէ առաջ»: Ան ատեն տիկին տը Բէրէօի անշարժ մարմնոյն փաթթուելով համբուրեց զան: Այս համբուրին մէջ նորատի կնկան հոգւոյն բոլոր խոստումները կ'ամփոփուէին: Ետքը բժիշկը կանչել տուաւ և հօրը ու Աիւսթավի գրեց որ շուտ մը դան: Ար կարծէր թէ խնամք ու բարեկամներ միշտ քիչ էին Էտմօնի:

Ինչպէս որ ըսինք բժիշկը եկաւ ու առջի տեսնելուն յուսահատեցաւ:

«Ութ օր միայն ապրի, ըսաւ Անթօնին, այս միայն կը խնդրեմ ձեզմէ, պարոն»:

Այն ութը օրուան միջոցին իւր նամակները Փարիզ պիտի հասնէին ու Պ. Տըվօ Նիս պիտի գար: Ուստի Անթօնին կը կարծէր որ եթէ Էտմօնի կեանքը մինչև այն օրը երկարէր, ալ ազատած էր:

Իւր հօրը գիտութեան ու սիրոյն վրայ այնքան մեծ վստահութիւն ունէր . . . :

Պ. Միւրէ՛ այն բժշկին անունն էր որ Պ. Տըվօ իր ազնկան յանձնարարած էր, պատասխանեց գեոատի կնկան թէ հիւանդին վիճակը ութ օրէն առաջ չպիտի վատթարանար և վատթարագոյնը մահ էր:

Պ. Միւրէ շուտ մը արին առաւ որով կուրծքը ընդարձակուելով սկսաւ աւելի ազատ շնչել, բայց անմիջապէս ուղեղին վրայ ընդգդիմագործութիւն ընելով, դանդաղանքը՝ այն ցաւին յանկարծադէպ

փոփոխումը, այն խենթութեան վշտալի պատկերը վրան եկաւ, որն որ ներկայ եղողները կը սարսափեցընէ, որք չեն վիտեր թէ հիւանդին բերնէն դուրս ելած այն անտեղի խօսքերը ինչպէս արդիւնն որ լուծենէ աւելի դժնդակ են՝ այն լուծիւնը եթէ յաւիտենական լուծեան կարասեան իսկ եղած ըլլայ:

Տիկին տը Բէրէօ որդւոյն ղառանցման միջոցին վրան հակած կ'ըսէր.

— Էտմօն, իմ պաշտելի Էտմօնս, այդպէս մի խօսիր: Ես եմ, մայրդ, որ կ'աղաչեմ:

Շէք մայրը կը կարծէր որ ամեն բանի հակառակ՝ պէտք էր իւր ձայնը որդւոյն սրտին հասնիլ:

Բայց հիւանդին տենդային շուրթերը ջղաձգօրէն անդադար կ'երերային և դանդաղանքը գեո ևս կը տւէր:

Այն երկար զիշերները, Անթօնին տիկին տը Բէրէօի ոտից ներքև պառկած՝ բերանը զոքանչին հրատապ ձեռաց վրայ կը դնէր:

— Յուսա՛, մայր իմ, յուսա՛ . . . կ'ըսէր, հայրս պիտի գայ:

Տիկին տը Բէրէօ առանց պատասխանելու անոր ձեռքերը կը սեղմէր: Խեղճ կինը ալ ևս մտածում մը կամ խօսք մը չունէր: Ալ բան մը չէր ուտեր, միայն տաքութիւնը հանդարտեցընելու համար մեծ անօթներով ջուր կը խմէր: Ապրէր ու այսպէս ամիսներ կընար ապրիլ: Իւր հոյին միայն սննդեան կարօտութիւն ունէր, ուստի աղօթքով ու երկիւղով կը մտնէր:

Չորս գիշերներ ու երեք օր այսպէս անցան:

Չորրորդ օրուան առտուն դանդաղանքը դադրեցաւ, խաղաղ քունով հիւանդը քիչ մը հանդարտեցաւ և խիստ տկար վիճակի մը մէջ արթննալով իւր շուրջը եղող անձերը ու նիւթերը նշմարեց:

— Անթօնին, մայր իմ, ըսաւ գլուխը երկու կանանց կողմը դարձընելով:

— Իմ անունս վերջը տուաւ, մրմնջեց տիկին տը Բէրէօ:

— Քանի՛ ժամ է որ պառկած եմ. . . քանզի բան մը չեմ յիշէր, ըսաւ Էտմօն՝ որուն ճակատին վրայ կարծես թէ կապարեայ քօշ մը կը ծանրանար:

— Այս չորրորդ օրն է, զաւակս, պատապխանեց տիկին արժէ-
րէօ: Ինչպէս ես:

— Աողս միայն սաստիկ ցաւ մը կայ: Եւ երկուքնիդ ալ ըստ
կարգի հսկեցէք, շարունակեց երկու ձեռքերը տալով կամ լաւ ևս
աշխատելով որ երկու ձեռքերը մօրն ու կնիկանը տարածէ:

— Երկուքնիս միատեղ, պատասխանեց Անթօնին:

— Իմ երկու բարի հրեշտակներս, օրհնեալ ըլլաք:

Եւ Էտմօնի աչքերը երախտադիտութեան արցունքով լեցունեցան:
Այս քանի մը խօսքերէն յսկնելով տեսաւ որ դժուարաւ շունչ
կ'առնուր, ան ատեն յիշողութիւնը վրան եկաւ և մօտալուտ մա-
հուան զաղափարը միտքը բերելով սկսաւ դառնապէս լալ:

— Թողէք որ լամ, կ'ըսէր Անթօնինի ու մօրը, ասիկա զիս կ'ըս-
փոփէ:

Տիկին ար Բէրէօ նոյն աթոռին վրայ նորէն ինկաւ, որ գրեթէ
ութտունեւ վեց ժամ չէր թողուցեր:

— Ա'լ գործս լմեցած է, կ'ըսէր Էտմօն իւրովի իր կուրծքին
հրատապ տաքութիւնը ու սպառիլը զգալով: Ես ինքս աճապա-
րեցի այս մահը, իբր թէ յախտենականութիւն մ'ունենայի ապ-
րելու:

Եւ նոր արցունքներ այս խորհրդին յաջորդեցին, քանզի խելը՞
պատանին լալէն զատ ուրիշ բան մ'ընելու ուժ չունէր:

Անթօնին այս արտասուաց շարժառիթը հասկընալով.

— Հանդարտէ, Էտմօն, կ'ըսէր Էրկանը, հօրս գրեցի քիչ ա-
տենէն պիտի գայ:

Այս խօսքին վրայ հիւանդին աչքը յուսով կը վառէր:

Այն միջոցին Անթօնինի նամակները հասեր էին: Պ. Տըվօ իս-
կոյն թղթաբեր կառքը վազեց որպէս զի նոյն օրուան համար իսկ
տեղ մը դանէ, այն ժամանակ ասիկա ամենէ շուտ հասնելու ճամ-
բան էր:

Ան ատեն բերլինեան կառք մը վարձեց ու սուրհանդակի ձիեր
բերել տալով երկու ժամուան մէջ պատրաստուեցաւ:

Ախտաբաժնի ալ երբ իր նամակը բնդունեց իսկոյն Նիշէթի տունը
վազելով:

— Էտմօն կը մեռնի կայ, ըսաւ, կը մեկնիմ, բարի Նիշէթս:
Աստուած է որ կը պատժէ զիս հետը չերթալուս համար, բայց
այնքան երջանիկ էր, որ կը կարծէի թէ ալ ինծի պէտք չունի: Նիս
գրէ ինձ, նամակատան մէջ մնալի, ու ես ամեն անցքերուն վրայ
տեղեկութիւն կու տամ քեզ:

Նիշէթ ու Ախտաբաժնի լալով իրար համբուրեցին:

— Անշուշտ Անթօնին հօրն ալ գրած ըլլալու է, ըսաւ Տօմօն,
երթամ Պ. Տըվօի տունը ու այլա կու դամ վերջին անգամ մ'ալ
մնաս բարեաւ ըսելու:

Ախտաբաժնի բժիշկը դտաւ որ մեկնելու պատրաստութիւն կը տես-
նէր:

— Ձեզի հետ կու դամ, ըսաւ:

— Մէկ ժամէն, պատասխանեց բժիշկը:

Ախտաբաժնի կառք մը ցաթիկեց, դնաց Նիշէթը համբուրելու
ինչպէս որ խոստացեր էր, և յետոյ նորէն բժիշկին բակը երե-
ցաւ, նոյն միջոցին որ կառապանը ոտքը թամբին վրայ կը
դնէր: Կառքը շտապաւ մեկնեցաւ: Չորս օրէն երկու ուղեորները
Նիս հասան:

Ի Բ

Պ. Տըվօի և Ախտաբաժնի հասնելէն երկու օր առաջ Էտմօնի
գանդաչանքը միւսանգամ վրան գալով Պ. Միւռէ կրկին արիւն ա-
ռաւ: Ուստի Էտմօն գրեթէ անձանաչելի եղեր էր. անձկութիւնը
քիչ կը նուազէր:

Երկու կանայք միշտ կը հսկէին, մէկը բարձին քովը, միւսը
հիւանդին անկողնոյն գլխին վրայով, և այս երեքէն ամենէ աւելի
վշտակիրը Էտմօն չէր, քանզի նորա խելքը գլուխը չէր:

Անկողնոյն կիսափակ վարադոյրները մահացելոյն քունը մութին մէջ կը պահպանէին : Սակայն քողարկեալ կանթեղին մի աղօտ նըշույլը անկողնին վրայ սփռուելով՝ վախա ու շոր ձեռքի մը հոծ ածգունութիւնը կը լուսաւորէր :

Անթօնին և տիկին տը Բէրէօ հիւանդին ուշաբերլուն վրայ պահ մը յուսադրեցան . բայց յետոյ երբ նոյն տկար , տենդային ու զառանցալի վիճակին միւսանդամ երեւիլը տեսան նորանոր սարսափներով համակուեցան :

Ոգեվարներու անկողնոյն քօփն է որ զիրենք սիրողները այն ամեն յիշատակները կը մտաբերեն , որք իրենց կորսնցրնելու էակին երջանիկ , զօրաւոր և ուրախ ժամանակին հետ կապակցութիւն ունին : Անցեալը կու գայ իր բերկրաստար ժամերը սպասահամբ աղետալի ներկային վրայ նետելու , ինչպէս մանուկ մի վարդերով լի զղեստը շիրմի մը վրայ կը թոթուէ : Այս յիշատակները առաւել զառնակսկիծ կըլլան երբ մայրենի սրտի մէջ արթնանան , քանզի անոր համար անցեալը սահման չունի : Որդւոյն գոյութեան ամեն մէկ կերպարանները ծանօթ են իրեն , որդւոյն անունը ուրիշներու անունը միտքը կը բերէ , որք շատ անգամ իրենէն առաջ ջնջուած են : Մայրը մտքին ու սրտին օժանդակութեամբ իր կենաց ընթացքէն վեր ելնելով պահ մը երիտասարդական , ցնորային ու սիրոյ զովարար ստուերներուն տակ կը նստի : Աստուած թոյլ կու տայ նորա որ քիչ մ'ատեն , քնոյ տեղ՝ որ աչքերէն խոյս կու տայ՝ երանաւէտ օրերու յիշատակարանին մէջ կարենայ հանդիլ . թէև յետոյ աւելի կը վշտանայ և ցաւը միշտ իր հաշիւը կը զտնէ հոն :

Այսպէս տիկին տը Բէրէօ՝ այն դժուարին շնչաութիւնը լսած տտեն մի միայն նշան որդւոյն կենդանութեան՝ Էտմօնի մանկական շուքը կը տեսնէր թէ ինչպէս նորա առաջին ժպիտներէն ոգևորուած՝ անոր նախընծայ խաղերուն կը ծիծաղէր : Այն թուականին ամեն ինչ բերկրութիւն ու ցնծութիւն էր իր շորս գին : Ինք նորատի էր ան ատեն , և եթէ ոչ զգայական ու կրից բուռն սաստ

կութեամբ՝ բայց հողոյ խորհրդածութեամբ ու սրտի իմացականութեամբ կը սիրէր : Երկինք իրեն որդի մը զրկեր էր , որուն վրայ կը համառօտէր իր բոլոր կորուսած սէրերը և ամեն անոնք որ իր տարիքին մէջ կրնար ունենալ : Ար յիշէր զիրախախուտ արարածին ամենափոքր անհանգստութեանց վրայ կրած սարսափները , անոր մեծնալուն վրայ զգացած ուրախութիւնը , առ Աստուած ունեցած երախտագիտութիւնը Էտմօնի հողոյն և մտաց թարմ ծաղիկներու պէս կենաց ճառագայթներէն բացուիլը տեսնելով : Երկը մնած էր . ուստի ամեն բան , սէր երջանկութիւն , յոյս նոյն իսկ գոյութիւն այս որդւոյն վրայ թափած էր և ահա քսանեչորս տարի յարատե խնամներէ՝ ծնած ու անհետացած երկիւղներէ ետք , ահա զան իր հողոյն այն սովորութիւններէն մին ընելէն յետոյ՝ որուն բաժանումը սիրա կը խորտակէ , ինք կը հսկէր արդ իր որդւոյն մահառան անկողնին քով , ինչպէս երբեմն հսկած էր նորա օրօրոցին վրայ և թէ բան մը կարող չէր ընել որպէս զի արդիլէ այն շունչը , որ պիտի երթար օդին մէջ անհետանալու իր հետը ուրախաւէտ անցեալ մը և յուսալի ապագայ մը տանելով :

Այնպէս չէ՛ , ընթերցող մայրեր , որ եթէ տիկին տը Բէրէօի տեղ զանուէիք , ահամայ պիտի ըսէիք ինչ որ ահամայ նա կ'ըսէր ,

« Աստուած իմ , զաւակս պահպանէ : Քեզմէ իր առողջութիւնը չեմ խնդրեր , չեմ համարձակիլ խնդրելու , բայց միայն թէ ապրի , զիս տեսնէ , դեռ կարենամ ես զինքը տեսնել , չչեմ այդ շնչառութեան դադարումը՝ որուն հետ միացած է հողին , քահանային հոս մտնելը չտեսնեմ , իմ աղեծնունդ զաւակիս անկողնոյն քով մահառան աղօթքներ չչեմ . . . չտեսնեմ ցուրտ ու անձուկ դադաղի մը մէջ այս մարմնոյն պառկիլը , որ իմ արխնովս շինուած է , այս դէմքը որ ինձ կը ժպտէր և « Մայր իմ » կը կոչէր , այս ձեռքերը որ զեռ կրնամ սեղմել . . . ո՛հ , գերեզմանի խոնա հողին անոնց վրայ թափիլը չչեմ . . . այն էակին որուն խլրախը ծոցիս մէջ օր մը զգացած եմ , ամիսփակուիլը ու աչքերէս հեռանալը չտեսնեմ : . . . Ինչ որ կ'ուզես , Աստուած իմ , որդւոյս կենաց

փոխարէն . . . բայց միայն թէ ապրի նա ինծի համար, որպէս զի կենացս վերջին տարիները ինձ ընկերանայ, որպէս զի չքաշեմ այս աշխարհի մէջ այն վիշտերը, որ գատապարտելոյ համար միայն կը պահես: Եթէ կենացս մնացեալ օրերը այս վայրկենիս պէս շարունակ հսկել ու աղօթել պէտք ըլլայ, հսկում ու աղօթք քաղցր պիտի ըլլան ինձ, Տէր իմ, եթէ զաւակս չտեսնայ ալ, եթէ բան մը չգիտնայ ալ, եթէ զիս չտեսնէ իսկ ու չճանչնայ, բայց միայն թէ ապրի: . . . Նամ եթէ աւելի կը հաճիս, Աստուած իմ, կը շարունակէր խեղճ մայրը՝ որուն անբիծ սիրտը յուսահատութեան մէջ իսկ կը հաւատար որ Աստուծոյ հեռ կարելի է սակարկութիւն ընել. ալ չեմ տեսներ զինքը, կեանքս քեզ կը նուիրեմ, վաճար մը ժանկուով անոր սանդուղներուն աստիճանները ծռակերովս կը մաշեցընեմ. բայց միայն թէ գիտնամ որ կ'ապրի նա ու երջանիկ է. ու երբեմն երբեմն թոյլ կու տաս որ անոր պատկերը քունիս մէջ ինձ այցի գայ, եթէ երբէք որդեբաժին մարց քուն շնորհուած է: Յանցանքն իմն է որ թողուցի ամուսնանայ: Ինձ համար միայն պէտք էր պահէի զան. դուցէ այս ժամուս ողբվար չէր ըլլար: Ասիկա իմ պատիժս է: Որչափ ժամանակ որ միայն իմ սեպհականութիւնս էր, բան մը չպատահեցաւ իրեն: Այս ախտաւոր սէրը զաւակս կ'սպաննէ, մինչդեռ իմ խաղազ ու արթուն սէրս զինքը կ'ապրեցընէր:»

Ու իւր որդւոյն մեռնելու խորհրդին վրայ սիկին տը Բէրէօ զրեթէ կ'ատէր Անթոնինը:

Իսկ այն քաղցրարարոյ աղջիկը իր կողմէն այսպէս կը խօսէր Աստուծոյ.

«Տէր, կարելի է որ վեց ամսէն զան ինձմէ առնես, դու որ քու սուրբ անունդ բարեպաշտօրէն մեր ամեն խորհուրդներուն ու գաղանթներուն կցորդ էր: . . . Կարելի է որ մեր սարսափած վախճանն իսկ չշնորհես, որնոր հիմակ եթէ զան ունենանք յախտեանականութիւն պիտի թուի մեզ: Աստուած իմ, կայ արդեօք ասկէջ աւելի մեծ վիշտ մը, որ տեսնես յանկարծ կենացդ անուրջին խնդին»

Թուշիլը և այն բերանին՝ որ սիրոյ առաջին խօսքերը քեզ ըսած է: Կուրտ ու սառած մնալը: Գիտես որ կը սիրեմ զան և իրը ըլլալու զեցի: Եթէ վայրկեան մը ապագան յաղթել ակնկալեցի ներէ ինձ, Աստուած իմ, և այսօր մի պատժեր զիս այս բանիս համար: Զմեզ մէկ մէկու թող: Այնքան կը սիրենք զիրար: Եթէ դիտնայիր, Աստուած իմ, ինչ քաղցր խորհուրդներ կը փոխանակէինք առանձին եղած միջոցինս: Եւ այս մարմնոյս հողին մէջ նետուիլը պիտի տեսնեմ, որ քանիցս բազկացս մէջ սեղմած եմ: Ասիկա անկարելի է: . . . Եւ սակայն եթէ ցաւաղար կեանք մը պիտի շնորհես իրեն, այնպէս որ սիրտը բոլորովին սիրոյ դէմ փակուի: Եթէ պիտի պարտաւորիմ ալ ևս չլսեր այն բառերը, որոնց հրատապ յիշատակը մինչև այս ողբարի անկողնոյս քով ետևէս կու գան, եթէ՝ որպէս զի այրի հրածարիէ հարկ ըլլայ վեց ամսէ ՚ի վեր իւր ինձ շոյալած սիրովաւ բերկրութիւններէն, եթէ բժշկուելով կենդանի զիակ մը պիտի գառնայ միայն արտաքին կեանքով ապրելով, ան ատեն լաւ կը համարիմ զան Քեզ տալ, Աստուած իմ. քանզի այս մասնական մահը ամբողջականէն աւելի սոսկալի պիտի ըլլայ: Անոր քով կենալ և զան սպաննելու երկիւղով չկարենալ ըսել թէ որչափ կը սիրեմ զինքը, այս տարեքով առանց մեր սրտից զեղումները դուրս թափելու ապրիլ, միշտ աչքի տակ ունենալ իւր կենդանի մահուան տեսարանը, մէկէն ՚ի մէկ իմ եւս անդադրի ու աշխոյժ սէրս երկչոտ ու զոռուաւոր տատանութեան փոխանակել, հազիւ շրթանցս դոյած գաւաթը ինձմէ հեռի նետել և կենդանի մեռեալ կեանքի մը մէջ թաղուիլ, Աստուած իմ, կ'զգամ որ լաւադոյն է վաղուանէն այրի մնալով սներու մէջ թաթխուիմ: . . .»

Ինչպէս կը տեսուի այս երկու սէրերը որ կէտով մը իրար կը միանային, մէկ մէկէ խիստ տարբեր էին, երկուքն ալ այն անձնասէր կողմը ունենալով որ ամեն անկեղծ սէրերուն շանակն է:

Այն է թէ, եթէ մօր մը համար խիստ տաժանելի է շյիշել այնուհետև իր որդւոյն տուած քաղցր ուրախութիւնները, նմանա-

պէս խիստ դառն է դեռատի, սիրավառ նորհարսի մը համար որ տակաւին սիրոյ յայտնութեամբ շլացած է, չյիշել այն գաղտնախորհուրդ ժամերը ուր մէկ մէկու համար ինքզինքնին կը մոռնային և ուր Ֆիզիզական գեղումները հոգւոյն փափաքները կը լրացնեն:

Ինչպէս որ տեսանք այն որոշումէն՝ որ Էտմոնի հետ ամուսնանալու համար շուտ մը ըրած էր, Անթոնին այն գործունեայ ու անխախտ բնաւորութիւններէն, այն զօրաւոր ու արի անձերէն մէկն էր որ կիսութիւն չեն հասկընար: Էտմոն գլխիկոր ինկած էր այս սիրոյ մէջ լուրջորդի մը պէս, որ մարգարիս ժողովելու համար ինքզինքը ծովը կը ձգէ առանց գիտնալու թէ շնչառութիւնը կէս ճամբան արդեօք պիտի հատնի, կամ թէ կենդանի թէ մեռած դուրս պիտի ելնէ:

Արդ՝ Էտմոն Անթոնինը քսաններեք տարեկան երիտասարդի մը բոլոր բանաստեղծութեամբ, ցնորքներով ու աշխուժիւ սիրած էր. և նորատի կինը չէր կրնար զիջանիլ որ զան ուրիշ կերպ տեսնէ, այլ կ'ուզէր զան ճանչնալ միշտ այնպէս՝ ինչպէս որ իրեն ընծայուած էր:

Ահա ինչու համար իւր սէրը տիկին տը Բէրէօի սիրոյն զոհութիւնները յանձն չէր առնոր:

Հաւանական է որ, եթէ վեց ամսի տեղ հինգ վեց տարիէ 'ի վեր կարգուած ըլլար Անթոնին և զաւակներ ունենար ուրիշ կերպ կը ճարտարամատէր. բայց տակաւին մայր չէր և երիտասարդութեան ստիպիչ ձայնը դեռ կը խօսէր իր մէջ:

Եթէ Աստուած լսէր այս աղօթքները, և կը լսէր ալ, քանզի ամեն աղօթք կը լսէ, ասոնց անկեղծ ըզձից մէջ Խւր՝ կնկան տուած երկու բնաւորութիւնները պիտի տեսնէր:

Ինչպէս որ արդէն ըսինք Պ. Տըվօ և Կիւսթավ Նիս հասեր էին. բայց զիտէք որ տիկին տը Բէրէօ, իւր որդին և Անթոնին Նիսի մէջ չէին բնակեր և իրենց բնակած տեղը անուն չունէր. գրեթէ քաղաք էր ու չէր: Իրարմէ հեռի շատ տուներ կային շինուած և մեր երկու նորեկները չէին գիտեր սրբու գիւմն:

Պ. Տըվօ յաջ և ահեակ կը նայէր որպէս զի իւր փնտուածը

գտնելու համար նշան մը տեսնէ, երբ երեք անձինք տեսաւ որ կը ճեմէին. աղջիկ մը, ծեր պարոն մը և պառաւ տիկին մը որ իւր աջ թևին տակ ծալածոյ աթոռ մը և ձախ ձեռքը զիբք մ'ունէր: Երկու մեծ բարակներ ճեմողներուն առջևէն կը վազէին: Պ. Տըվօ կառքը կեցրնել տուաւ, իջաւ և ծեր պարոնին ուղղելով ըսաւ.

— Պ. տը Բէրէօի տունը կրնաք մեզ ցուցընել, պարոն, եթէ կը ճանչնաք:

— Ճիշդ մենք ալ անոր վրայ լուր առնելու կ'երթանք, պարոն, պատասխանեց այն որու Պ. Տըվօ ուղղած էր խօսքը: Իւր գրացիներն ենք և այն օրէն 'ի վեր որ խեղճ երիտասարդը հիւանդ է, ամեն օր կու գանք հարցընելու թէ ինչպէս է: Չհամարձակեցանք խնդրելու որ զմեզ ընդունին: Եթէ իւր մայրը ու կինը տեսնէք, պարոն, հաճեցէք ըսել թէ իւր առողջութեան համար խիստ կարօտակէզ ենք:

Այս միջոցին Կիւսթավ ալ կառքէն իջնելով՝ Պ. Տըվօի ու երեք անձանց մօտեցեր էր:

— Ահա Պ. տը Բէրէօի տունը, շարունակեց ծեր պարոնը ձեռքը երկնցընելով և կանաչափեղի սնակը ցուցընելով, ահա իմ, շարունակեց ետին դառնալով և հարիւր քայլ հեռի ուրիշ տուն մը ցուցընելով: Տը Մօրթօն հրամանատարը կը կոչուիմ, կնկանս ու աղջկանս հետ կ'ապրիմ. եթէ տը Բէրէօ տիկնանց կրնանք օգտակար ըլլալ, ըսեցէք իրենց կ'աղաչեմ, պարոն, որ բոլորովին պատրաստ ենք:

Տիկին տը Մօրթօն և իւր աղջիկը հրամանատարին ըսածը նշանով մը զովեցին:

— Այսպէս Պ. տը Բէրէօ դեռ կ'ապրի, ըսաւ բժիշկը շնորհակալ ըլլալէն յետոյ:

— Երէկ չէ մէկալ օր քիչ մ'ալ աղէկ էր, պատասխանեց տը Մօրթօն:

— Հնորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ, նորատի տիկին տը Բէրէօի հայրն եմ ու բժիշկ, և ես ըստ կարգի պատրաստ եմ

ձեզ օգտակար ըլլալու եթէ դուք կամ ձեր ընտանիքէն մէկը դժբաղդութեամբ հիւանդանաք:

Հրամանատարը և Պ. Տըվօ սիրով իրար ուղջունեցին, և այս վերջինը Արսթավլի ընկերակցութեամբ դէպ ՚ի նշանակեալ տունը գիմեց:

Հրամանատարը, իւր կինը և գուստրը իրենց շրջադայութիւնը շարունակեցին:

Անթօնին հօրը մտնելը տեսնելուն պէս վիզը նետուեցաւ. իսկ տիկին տը Բէրէօ ձեռուրները համբուրեց և Տօմօնը իւր որդւոյն պէս գրկելով պս բառերը միայն արտասանեց «Իմ խեղճ Աիւսթավա: . . .» Բայց այս խօսքերուն հնչմանը մէջ իւր ութ օրէ ՚ի վեր ունեցած բոլոր տառապանքները ու սարսափները կային:

Բժիշկը Էտմօնի անկողնոյն մօտենալով ձեռքը բռնեց:

Էտմօն չչարժեցաւ: Հրատապ տենդով մը անզգայ պառկեր էր:

— Միւռէ եկաւ, հարցուց բժիշկը իւր աղջկան:

— Այո, հայր իմ:

— Ի՞նչ ըրաւ:

— Արիւն առաւ:

— Ամբն օր:

— Ամեն օր:

— Լաւ:

Աիւսթավ և Էտմօնի մայրը ողեսպառ բժշկին ամեն խօսքերը մտիկ կ'ընէին:

Պ. Տըվօ հիւանդին մարմինը բանալով ականջը կուրծքին դրաւ:

— Կարելի է որ Աստուած զրկած է այս հիւանդութիւնը, ըսաւ ոտք ելնելով և Էտմօնը ծածկելով:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, գոչեցին երկու կանայք:

— Ըսե՛լ կ'ուզեմ, շարունակեց Պ. Տըվօ, որ եթէ կուրծքին այս հոստմէն զան փրկեմ, բոլորովին բժշկուած պիտի ըլլայ մեր վախցած հիւանդութենէն. իմ ընելու փորձիս ամեն ինչ նպաստաւոր կը տեսնեմ. և աւելի զիւրութեամբ անկողնակալ հիւանդի մը վրայ կրնամ դորձադրել, քան թէ ոտքի վրայ եղողի. քանզի ամենափոքր արկած մը կրնայ բոլոր փոյթերս ջրուել:

— Ուստի, . . . հարցուցին երկու տիկնայք:

— Այո, յարեց բժիշկը, շատ յուսով եմ որ այս հիւանդութիւնը բարօրութիւն մ'է:

Տիկին տը Բէրէօ և Անթօնին արտասուօք և խնդութեամբ իրարու բաղկաց մէջ նետուեցան:

Էտմօնի բժշկութիւնը իրենց սիրոյ կցորդութեան կէտն էր:

Նոյն օրը գրեթէ հանդէս կար տան մէջ:

— Ո՞րչափ ժամանակ պէտք է, հայր իմ, հարցուց Անթօնին:

— Էտմօն տասնևհինգ օրուան մէջ կրնայ ազատիլ, բայց ոչ բժշկիլ. ապաքինութիւնը երկար պիտի ըլլայ, քանզի նոյն միջոցին պիտի աշխատիմ հիւանդութիւնը բոլորովին ջնջելու: Գուցէ հինգ կամ վեց ամիս գիւմանայ որ հոս պիտի անցնենք:

— Մեր քով պիտի կենան ուրեմն:

— Միթէ կը հարցընեն: Ամեն բանէ առաջ քու երջանկութիւնդ որ ամուսնոյդ առողջութեան վրայ կը կայանայ, այնպէս չէ:

— Հասցա քու առողջութիւնդ:

— Սիրուն զաւակ, գոչեց Պ. Տըվօ Անթօնինը գրկելով: Այսուհետեւ չեմ ուզեր, մանաւանդ թէ մտածէ որ բժիշկն է խօսողը, չեմ ուզեր որ այս տան մէջ արցունք թափուի:

Եւ յիրաւի երեք շաբաթ ետքը տունը նոր կերպարանք ստացաւ:

Անթօնին Էտմօնի անկողնոյն քով նստած էր: Հիւանդը որ հազիւ խօսելու ուժ ունէր կնկանը ձեռքը բռնած զան բոլոր հոգւով կը նայէր:

— Երեք շաբաթ է շատ լայիլը, ըսաւ տկար ձայնով մը, իմ խեղճ հրեշտակս, որչափ վշտացած ըլլալու ես: Ի՞նչ սարսափելի է այն հիւանդութիւնը որ չթողուր սիրած անձերդ տեսնելու: Հոս կ'զգայի դժբեղ, քանզի սրտիս մի թելով կապուած եմ քու հետ, և չէի կրնար քեզ տեսնել ու խօսիլ և զառանցումը ըսելիքներս կը յափշտակէր:

— Խեղճ բարեկամս:

— Ո՛հ, Անթօնինս, եթէ վերստին առողջանամ, կ'ուզեմ որ

աշխարհի մէջ ինչպէս որ ամենէ սիրուած կինն էս, նոյնպէս ամենէ երջանիկն ըլլաս: Ուր է մայրս, բարի մայրս, զիտես որ քեզի համար գրեթէ կը մոռնամ զան: Այնքան կը սիրեմ զքեզ որ սէրս կեանքէս առաջ կ'երևի:

— Մայրդ սրահն է, զիտէ որ արթննալու ժամանակդ կ'ուզես զիս քովդ տեսնել, և հիմակ որ վտանգէ գերծ ես, կըսէ «Ալ ինչ պէտք չունի» և քու երջանկութեանդ համար կըցածը կ'ընէ:

— Գնահ կանչէ, ըսաւ Էտմոն մօրը սուրբ պաշտպանութեան յիշատակով աչքերը արտասուօք լեցուած, կ'ուզեմ զան ջեխել որ արթննալուս չսպասեց: Ասիկա իրեն հաճելի պիտի ըլլայ: Չես նախանձիր անորմէ:

— Բայց կարծեմ որ ան ինչմէ քիչ մը կը նախանձի:

— Ինչ կ'ուզես որ ընէ. խեղճ կինը իւր սիրտը բոլորովին ինչ նուիրելով չկրնար յանձն առնել որ իմ ուրիշի մը հետ բաժնէ, Եթէ քեզ կորսնցընէի, Անթոնին, ինքզինքս կ'սպաննէի. եթէ մայրս կորսնցընէի կարծեմ ցաւէս կը մոռնէի: Գնահ շուտ կանչէ:

Անթոնին իւր ամուսնոյն անջեմ ճակատին վրայ համբոյր մը զըռնելով սրահը գնաց:

Հիւանդին բերնէն մունջ աղօթք մը դուրս ելաւ:

Այս աղօթքին մէջ կը խնդրէր Աստուծմէ այն երկու հրեշտակներու համար որ իւր քոյն էին առողջութիւն ու բարօրութիւն որ երկուքն ալ իրենց սիրելի հիւանդին համար խնդրած էին:

Անթոնին երբ սրահը մտաւ, տիկին տը Բէրէօ տը Վօրթօն հրամանատարին, անոր կնկան, աղջկան, Պ. Տըվօի և Աիւսթավի հետ կը խօսակցէին:

— Մայր իմ, ըսաւ, Էտմոն կ'ուզէ քեզ տեսնել ու յանգիմանել որ արթնցած ժամանակ զիս միտակ քովը գտաւ:

Մայրենի դէմքին վրայ բերկրութեան ժպիտ մը շողաց ու իսկոյն որդւոյն քով վազեց:

— Միշտ իմ վրայ կը մտածես, իմ սիրելի զաւակս, ըսաւ անոր:

— Լաւ մը զիս համբուրէ. բարի մայր իմ, ըսաւ Էտմոն ու իր վատուցած բազուկները տիկին տը Բէրէօի վիզը անցուց. քու համբոյրներդ ինչ կեանք կը պարզեն:

— Փրկուած է, փրկուած, կը մըմնէր մայրը. Պ. Տըվօ ալ կըսէր հիմակ, բայց միթէ իրան է Աստուած իմ:

Ու իւր որդին կը գրկէր:

— Սրահը մարդ կայ, հարցուց Էտմոն:

— Այո, տը Վօրթօն հրամանատարը:

— Ո՛վ է այդ տը Վօրթօն հրամանատարը:

— Պատուական մարդ մ'է, որ ամեն օր կնկան ու աղջկան հետ կու գայ որպիսութիւնք իմանալու. աղջիկը տամնեվեց տարեկան մեծահասակ ու զեղադէմ անձ մ'է: Պ. Տըվօ իւր սովորութիւնները ունի: Փարիզ իր հիւանդները տեսնելու կ'երթար, իրիկունը մարդ կընդունէր և «է-է» կը խաղար: Հոս քիչ մը օտարացած է: Հիւանդութեանդ առջի ժամանակները իրեն բաւական զբաղմունք մ'էր, սիրելի զաւակս, բայց հիմա որ աղէկ ես, բոլորովին աղէկ, քանզի ալ ցաւ մը չունիս, այնպէս չէ:

— Չէ, բարի մայր իմ, հանդարտ եղիր:

— Արդ՝ խեղճ բժիշկը իրիկունները խիտ երկար գտնելով քիչ մը զուարճանալ կ'ուզէ, ուստի հրամանատարին հետ քէ-է-է կամ տապալի կը խաղայ: Երբեմն իրեն հաճելի ըլլալու համար մենք ալ «է-է» կը խաղանք որ նոր սորվեցայ: Ասով շատ շեմ զուարճանար, լաւագոյն կը համարիմ քու քովդ մնալ, բայց ան այնքան աշխատեցաւ մեզի համար, որ ես ալ իրեն համար այս բանս պէտք եմ ընել: Եթէ կեանքս ալ ուզէր կու տայի:

— Հապա Աիւսթավ, մայր իմ, անշուշտ կը ձանձրանայ հոս:

— Ամենեկն, հրամանատարին ու անոր աղջկան հետ ձի կը հեծնեն, կը պտրտին ու կը զուարճանան: Այս ներելի է քանի որ դու ալ վտանգ չունիս: Երբ կարենաս ելնել, ութ օրէն սրահը կու գաս ու մեզի հետ կը խաղաս: Չաւակս երկրի վրայ տակաւին շատ բարեբաստ օրեր ունինք անցընելու:

— Խեղճ մայր իմ. . . ըսաւ Էտմոն զգուշութեամբ տիկին տը Բէրէօն նայելով, որուն քանի մ'օրէ ՚ի վեր զղացած ուրախութիւնը իւր վշտաց հետքերը չէր կարող ջնջելու:

— Այո, ըսաւ քիչ մը փոխուած եմ. մի քանի մոխրագոյն մա-

զեր կը տեսնես որ հիւանդութենէդ առաջ չկային . բայց բան մը չէ , սրտիս մէջ յաւիտեանական յոյս և երիտասարդութիւն ունիմ :
 Եւ այս ըսելով աիկին ար Բէրէօ նորէն որդին գրկեց , որուն աչքերէն հոսած քանի մը արտասուքը երկու համբոյրներու սակ չորցան :

Ի Գ

Արևթավ Էտմոնի հիւանդութեանց ամեն պարագաները նամա-
 կաւ Նիշէթի կը հաղորդէր : Այն օրերը որ տարփուհին Նիսէն նամակ կ'ընդունէր իրեն համար հանդիսաւոր ծրեր էին : Երիտա-
 սարդին աճապարանօք մեկնելէն 'ի վեր , ամենեւին զուարճութիւն չէր ունեցած . Արևթավի հաճելի և աւելի իբր ըլլալու համար իր ծանօթներէն իսկ հեռացաւ և անոր մեկնելէն 'ի վեր մարդ մը չընդունեց :

Նիշէթ նախ շատ արցունք թափեց . ետքը երբ ընց որ Էտմոն վտանգէ զերծ էր . կրկին ուրախացաւ , քանզի մէյմը որ սիրած բարեկամ մը չէր մեռած , և ապա Էտմոն առողջանալուն պէս Արևթավ կրնար վերադառնալ :

Ուստի Տօմոնի նամակ մը գրելով բոլոր իւր ձանձրոյթները նկա-
 րադրեց և ըստ թէ որչափ երջանիկ պիտի ըլլար երբ զինքը տես-
 նէր :

Արևթավ նամակը ընդունեցաւ , կարգաց երկու երեք անգամ և գրտանը գնելով ճշմարիտ յուզմամբ մը ըսաւ .

«Իտեղճ Նիշէթ . . . »

Եւ պատասխան մ'ալ գրեց թէ Էտմոն տակաւին տկար ըլլա-
 լուն իւր բարեկամութեանը կը կարօտէր և թէ անմիջապէս որ նա ապաքինութեան ճամբուն մէջ մտնէր , ինք Փարիզ պիտի վերա-
 դառնար :

Մտոյցանք ըսելու որ հոգեվարը երբ կենդանացաւ ու կիսթավը մօրը ու կնկան հետ մէկտեղ բարձին քով տեսաւ , այս երրորդ մտիթարութեան համար ալ շնորհակալ եղաւ Աստուծոյ :

Ինչպէս նախընթաց գլխին մէջ տեսանք , Էտմոնի հիւանդութեան վրայ ալ երկիւղ չէր մնացեր . միայն այն ախտը կը կենար որ մանկութենէն 'ի վեր ունէր և պ. Տրլօ պիտի ջնջէր :

Արդ բժիշկը հիւանդին իմացուց որ երեք չորս ամիս իւր պզտի տան մէջ պիտի կենար առանց դուրս ելնելու , և թէ այս միջոցին մէջ կը յուսար բոլորովին բժշկել զան :

Էտմոն համբերեց : Եւ իրեն տեղը ո՛վ պիտի չհամբերէր երբ այսպէս սիրուած ըլլար :

Ուստի ամեն զուարճութիւն փնտռեցին հիւանդին քով բերելու , քանզի վայրկենապէս ինք անոնց չէր կրնար երթալ :

Այս զուարճութիւններն անոնք էին , ինչ որ ամեն ասպաքինեալ-
 ներու համար են :

Որչափ ժամանակ որ չկրցաւ դուրս ելնել , Անթոնին շարունակ քովը նստած երբեմն կը կարդար , կ'աշխատէր ու կը խօսէր , և երբեմն ըրածը ընդմիջելով գլուխը Էտմոնի անկողնոյն վրայ կը դնէր , որ հիւանդը շատ կ'ախորժէր անոր մաղերուն հիւսքը քա-
 կելով ժամերով շոյել զանոնք :

— Գիտես որ , կ'ըսէր Էտմոն , մնացեալ կեանքս խիստ յօժա-
 րութեամբ այսպէս կ'անցընէի : Միթէ ինձմէ երջանկաղոյն մէկը կայ : Քեզ կը տեսնեմ ու կը լսեմ . աշխարհս ինձ համար այս եր-
 կու բառերուն մէջ ամբոփուած է : Ինչո՞ւ պէտք մնացեալ երկիրը : Ինչ պիտի ընեմ ուրիշ հորիզոններ , ինչո՞ւ երթամ պիտի ուրիշ երկիրք ու մարդիկ փնտռելու : Քու մեղմիկ ձեռքս սեղմելէդ զատ այլ ևս ի՞նչ բանի պէտք ունիմ : Մայրս և դու , այս խաղաղատե-
 տունը , այս սահմանեալ հորիզոնը , այս ամայի շրջագայութիւնը որ մեր ոտից ներքև օձապտոյտ կը սահի , երբեմն երբեմն Արևթավի նամակները , առիկա երկրի վրայ արքայութիւն չէ : Բայց դու այս կեանքէն զո՞չ պիտի ըլլաս :

— Ամեն ինչ քաղցր է քեզի հետ , իմ սիրելի Էտմոնս : 22

— Խենթ են անոնք որ սրտի և քաղցր մտերմութենէն զատ ուրիշ վայելմունք կը փնտռեն կենաց մէջ : Եւ հայրդ որ երկար տարիներ կը խոստանայ : . . .

— Քեզ պիտի փրկէ և մահուան այդ զագրելի դաղափարներդ պիտի ցրուին :

— Ան ատեն զիտես ինչ կ'ընենք : Ջուկցերի կամ Իտալիոյ մէջ մենաւոր կամ պայծառ տուն մը կը գնենք , անձանօթ ծառի մը մէջ եղած բունի մը պէս պահուած և որ կապուտակ լճակի մը ջուրին մէջ նայի . քանզի հոս միշտ աչքերնուս տակ ուրիշներու մահուան տեսարանը պիտի ունենանք : Հոն կը փակուինք , մայրս , դու և ես : Այլոց ըսածին ու ըրածին վրայ չենք զբաղիր : Մեր երջանկութիւնը ամեն աչքէ պահելով առանձին և ուրախ կ'ապրինք : Մեր զաւակները , գոցէ Աստուած մեզ զրկէ , բնութեան և իրենց ծնողաց մէջ մեծնալով բարւոյ համար կը զարդանան : Մի ևնոյն գերեզմանը մեր ոսկերտիքը պիտի ամփոփէ ինչպէս միևնոյն սէրը զմեզ միացուցած է : Արեղակնափայլ զագաթի մը վրայ երկուքնիս միատեղ պիտի ննջենք և երբ հովիւը իր հօտը առաջ նորգած ժամանակ մեր գերեզմանաքարին առջևէն անցնի՝ պիտի ըսէ . « Ասոնք երջանիկ մահկանացուներ էին » : Ասորմէ զատ ուրիշ փառասիրութիւն մը խենթութիւն է , զիտնաս :

Անթօնին իւր ամուսնոյն այսպէս խօսիչը լսելով ժպտա զիմօք ձեռքերը կը բռնէր . Էտմօն իր բոլոր ըսածները կարծես թէ կնկան սրտին մէջ կը կարգար , քանզի այս խօսքերը անոր հանապազօրեայ երագներուն իրականութիւնն էին : Այս խօսակցութիւնները ամեն օր կը նորոգուէին :

Աերջասէս Պ. Տըվօ իր հիւանդին հրաման տուաւ որ ելնէ ու զահլիճը զայ . ուստի մէկ կողմէն Անթօնիի ու միւս կողմէն մօբը կ'աթնելով եկաւ :

Էտմօն շատ փոխուած էր : . . .

Մարմարեայ դռնատուրթեամբ այտերը խորեր էին , աչքերը որ երեսին վատուածութենէն աւելի մեծ կ'երևէին , կենաց նոր հուրով կը շողային , իւր երկար խարտեաշ մաղերը խնամով ետև

ձգուած էին և այն տեղոյն դէմքին վրայ քաղցր , սիրուն ու համակրական ժպտ մը կը փայլէր՝ որնոր հոգւոյն կայծն էր :

Գահլճին մէջի գտնուող անձինք Էտմօնը տեսնելով ոտքի վրայ ելան ու ընդ առաջ նորա եկան : Այս անձինք անոնք էին որոնց հետ արդէն ծանօթացած ենք :

— Գիտեմ , պարոն , ըսաւ Էտմօն հրամանատարին , ինչ բարեբարոյ հոգածութեամբ ամեն օր կու գայիք իմ վրայ տեղեկութիւն առնելու . հրաման տուէք որ երախտագիտութիւնս յայտնելով բարեկամ ձեռք մը ձեզ կարկառեմ :

Հրամանատարը հիւանդին իրեն երկնցուցած ձեռքը խանդաղին սեղմեց :

— Գուք ալ , տիկին և օրիորդ , շարունակեց Էտմօն տիկին տը Մօրթօնի և իր աղջկան ուղղելով խօսքը , բարեհաճեցաք մօրս քով կենալ և իւր վշտաց սփոփանք տալ : Կը բաղձամ որ ես ալ ըստ կարդի յաճախակի այցելութիւններս կարենամ ընել : Հիւանդի մը ընկերութիւնը զուարճալի չէ , սակայն կը յուսամ որ իմ սիրելի բժշկիս զիս դատապարտած արդեւման միջոցին երբեմն երբեմն կու գաք մեզ տեսնելու :

— Չեր բարի մայրը շատ անհանգիստ էր , ըսաւ հրամանատարին կինը , և մեր անձնուիրութեան հակառակ , ես և Ղօրանս չէինք բաւեր նորա երկիւղները փարատելու :

— Բարեբաղդաբար այս ամենը լմեցած է , այնպէս չէ՛ , տօքթօր , ըսաւ տիկին տը Բէրէօ Պ. Տըվօի :

— Հանգիստ եղիք , պատասխանեց այս վերջինը , ամեն բան ազէկ կ'երթայ :

Էտմօն Կիսթափի և Անթօնիի հօրը ձեռքը բռնելն ետքը մեծ թիկնաթուրի մը վրայ նստաւ , որուն բարձերը մայրը շտկտեր էր :

— Խօսակցութիւնը ընդմիջելու առիթ չըլլամ , ըսաւ Էտմօն , ես ալ կ'ուզեմ մասնակցիլ :

— Յոգնած չես , ըսաւ կամեց մը տիկին տը Բէրէօ :

— Չէ՛ աակաւին , բարի մայր իմ , պատասխանեց ժպտելով , փարձածէդ աւելի ուժեղ եմ :

Եւ ձեռքը մօրը ձեռքին մէջ թողուց :

— Տօբթօրին և Պ. Տօմնի կը պատմէի, ըստ Հրամանատարը Էտմոնի, թէ ինչպէս հոս եկանք բնակելու և տիկին տը Վօրթօն և ես 'ի զուր այս անապատին մէջ կենալնուս պատճառը կը փնտռէինք: Բնակած փոքրիկ տուններնիս սքանչելի գտանք ու հոն հաստատուեցանք: Ես անակնկալ բաները կը սիրեմ: Զինուորական անընդհատ փոփոխութիւններս միշտ նոր բնակութիւն փոխելու սովորութիւնը տունն ինձ: Տեղ մը վեց ամիս որ կենամ կ'սկսիմ ձանձրանալ և ուրիշ կողմ կ'ուզեմ ելթալ:

Էտմոն Հրամանատարը մտիկ ընելով միանգամայն նոր ծանօթացած անձինքը աչքէ կ'անցընէր, որոնց նկարագիրը զեռ ըրած չենք:

Պ. տը Վօրթօն յիսունհինգ տարեկան կար: Գէմբին վրայ զինուորական ամեն նշանները կը կրէր: Ընչացքը խոշոր էր և մազերը դերձեալ, աչքը ազատ էր, այտերը քիչ մը գունաւորեալ, ակոսաները գեղեցիկ, որնոր կերպարանաց փայլ մը կու տային: Հասակը բարձր էր ու երկայն թիկնոց հագեր էր, սրուն ճարմանդին վրայ Լէդգեոնի պատուոյ ասպետական նշանը կապուած էր: Վերջապէս ամենայն կատարելութեամբ հրամանատարը բարի մարդ մ'էր ու ըրած պատերազմներուն և ընդունած վէրքերուն խօսքը բնաւ չէր ընէր. ճակտին վրայ ալ նշան մ'ունէր որ ուրիշի մը համար մեծ պատմութեան աղբիւր կ'ըլլար:

Տիկին տը Վօրթօն դրեթէ քառասունևութ տարեկան կար: Արդէն պատու կնկան մը բոլոր գնացքները ունէր, ակնոց կը գնէր ու գուլպայ կը հիւսէր: Շատ անգամ թալկադոյն շրջագոյնս մը կը հագնէր և տիկին Անմէլիքի մեր քանի մ'ատենն 'ի վեր աչքէ կորսնցուցած Հին ծանօթութեան որնոր Փարիզ Պ. Տըվօն տունը միալով ամեն առաւ չէր մոռնար Սէն-Թօմաս-ա'Նքէնի եկեղեցին երթալ ու Անթօնինի ամուսնոյն առողջութեան համար արթթել սիրած գտակներէն զլուխը կը գնէր:

Տիկին տը Վօրթօն գեղեցիկ կին մը ըլլալու էր. տակաւին թարմ էր մորթը ու ձեռքերը սպիտափայլ էին, բաական գոհացուցիչ

զիրութիւն մ'ունէր, որ իւր բարեկազմութեան ու առողջապահական զգուշարութեան յայտարարն էր:

Օրիորդ Լօրանս տը Վօրթօն ինչպէս տիկին տը Բէրէօ բաժ էր որբոյն, տաննվեց տարեկան, մեծահասակ ու չքնարդէմ աղջիկ մ'էր: Սթի պէս սեպոյն մաղերը բնական խոսքովքներ ձեացած էին, խոշոր աչուրները այնքան թուխ ու նշանական էին, որ մէկ նայուածքով չէր հասկցուէր թէ արգեօք սեւ էին թէ կապոյտ: Ապոյտ էին, և վայրագ ու ապշած կողմ մ'ունէին որ այս նորանշան կերպարանին մեծ հրապոյր կու տար: Շրիորդ տը Վօրթօնի կաշին մագուսի պէս ողորկ էր, բերանը գույշէ քիչ մը մեծկակ, բայց այնքան շնորհալի ու այնպէս գեղեցիկ ակուններովզարգարուած էր, որ տոյն պաշտութիւնը դրեթէ ձիւք մը կ'ըլլար: Նուրը և թեթեաշարժ հասակը՝ բանաստեղծ մը կրնար եղէգի կամ արմաւենիի հետ բաղդատել:

Չեմ գիտեր ինչ պատճառաւ զիւրաշարժ հասակները ստեպ արմաւենի կը նմանցընեն, որ աշխարհիս մէջ ամենէ նուազ զիւրաւոր ծառերէն մէկն է:

Օրիորդ տը Վօրթօն սև շրջագոյնս մը հագեր էր մինչև վերջ կոճկած:

Հետաքրքրութեամբ Էտմոնը կը նկատէր:

Իւր ուժեղ կազմուածքը կարծես թէ չէր կրնար հասկընալ այս ցաւագար ու հիւանդոտ բնաորութիւնը:

— Է՛հ, հրամանատար, յարեց հիւանդը, ձեր սովորութեան հակառակ երկար ժամանակ հոս կենալու բարեհաճեցէք: Երբ Պ. Տըվօ հրամայէ ինձ դուրս ելնելու, միատեղ շրջագոյնութիւններ կ'ընենք:

— Այս երկիրը ինձ կը յարմարի. շատ զուարթ չէ, բայց եթէ տիկին տը Վօրթօնի ու Լօրանսի ախորժելի է և եթէ իմ ընկերութիւնս կրնայ ձեզ քիչ մը զուարճացընել ո՞վ կ'արգիլէ մեզ որ վեց ամիս աւելի կենանք:

— Ոչինչ, յարեց տիկին տը Վօրթօն: Իսկ Լօրանս իր միտքը չյայտնեց:

— Բայց ի՞նչ ունիս, Ախարամ, ըսաւ կամայուկ մը Էտմօն ճարեկամին ականջին, որ կարծես թէ մտմտութի մէջ ընկողմեր էր:

— Ի՞նչ կ'ուզես որ ունենամ. . . պատասխանեց Ախարամ, մտիկ կ'ընեմ:

— Խոստովանէ, վրայ բերաւ Էտմօն, որ դու կը ձանձրանաս հոս:

— Ե՞ս, ընդհակառակը:

— Ի՞նչ կը մտածես ուրեմն, եթէ ոչ Բարիդի ու Նիշէթի վրայ:

— Այո առտու անորմէ նամակ մ'առի:

— Ի՞նչ կը գրէ:

— Ա՛ռ զէ հոս գալ:

— Ինչո՞ւ չգոր:

— Շատ նեղութիւն պիտի տայ ինձ:

— Ի՞նչ բանի մէջ:

— Իրեն շատ կատուելով քեզի բաւական չպիտի ըլլամ:

— Բան մը կայ որ կ'ուզէի գիտնալ, ըսաւ Էտմօն:

— Ի՞նչ:

— Թէ ինչո՞ւ Նիշէթին հետ չես ամուսնանար:

— Երբէք:

— Ինչո՞ւ երբէք: Ար սիրես զան, նա ալ կը սիրէ և քեզի համար կրակը կը նետէ ինքզինքը: Գիտես ինչպէս մայրս ալ կը մեծարէ ու կը սիրէ զան: Եթէ հետը ամուսնանաս ու կ'ընդ ըլլայ այնուհետև մեր քովը դալու արդելք մը չմնար: Նայիս ի՞նչ երջանիկ պիտի ըլլանք: Բարի արարածի մը բարեբաստութիւնը կազմած պիտի ըլլաս, և գուցէ երբէք ամենէ պարկեշտ ընտանեաց ու բարձրաստիճան աղջկանց մէջ անդամ՝ Նիշէթի սրտին նման սիրտ մը չպիտի դանես: Պատուոյս վրայ կ'երգնում որ եթէ քու տեղը ըլլայի անոր հետ կ'ամուսնանայի:

— Ի՞նչն ըս:

— Տակաւին կանխակալ կարծիքներ ունիս:

— Այո:

— Անիրաւ ես: Աերջպէս եթէ անոր նամակ գրես, ըսէ որ բոլոր սրտանց կը գրկեմ զինքը:

Այս միջոցին Պ. Տրվո և Պ. ար Մօրթօն իրենց բէտէն սկսեր էին և տիկին ար Բէրէօ օրիորդ Լօրանսի մօտենալով կնային չնչին իրերու վրայ կը խօսակցէին:

Ախարամ ալ ելնելով Լօրանսի մօտեցաւ. բայց ոտքի վրայ կեցաւ:

— Պարոն հայրերնեզ վաղը առտու ձի պիտի հեծնէ, օրիորդ, ըսաւ նորատի աղջկան:

— Եթէ օդը աղէկ ըլլայ՝ անշուշտ. ասկէ զատ զուարճութիւն մը չունինք:

— Եթէ պարոն հայրերնեզ հրաման տայ, ձեզի պիտի ընկերանամ:

— Իրեն հաճութիւն մը ըրած պիտի ըլլար. ձեզի հետ կրնայ խօսիլ ու ծիտել, մինչդեռ լոկ իմ ընկերութիւնս ձեր վնասօրականի մը համար խիստ միակերպ է:

— Հոս տեղ ձի դամբ, զաւակս, հարցոց տիկին ար Բէրէօ Լօրանսի:

— Այո, տիկին, և շատ աղուորներ: Պ. Տօմօն մէկ հատ մ'ուսնի որ խիստ ընտիր է:

— Միշտ ձեր հրամանին ներքև դրած եմ, օրիորդ, եթէ կ'ուզէք հեծնել:

— Իսկոտ երազոտ է. ես կը վախնամ:

— Ատիկա պարկեշտութիւն է, օրիորդ, ինձմէ աղէկ ձի հեծնել զիտէք:

— Հայրը սորվեցուց այդ վարժութիւնը, պատասխանեց տիկին ար Մօրթօն, և անորմէ ալ լաւադոյն վարժպետ մը չէր կրնար գտնել:

— Ի՞նչպէս ես, կը հարցընէր Անթօնին Էտմօնի:

— Շատ աղէկ, սիրելիս, ու շատ երջանիկ: Ի՞նչ հաճելի է այս կեանքը: Սիրած անձերուդ հետ իրիկունները անցընել, ասկէց լաւադոյն ի՞նչ կայ:

— Միշտ այդպէս մտածէ , այս է Աստուծմէ խնդրածս :
Տիկին տը Բէրէօ Արևածաղկը Լորանսի հետ թողլով զնայ ինքն
նին օշարակը պատրաստելու , որ ամեն ժամ որդին կը խմէր ու
բերաւ :

Արևածաղկ Լորանսի քով նստաւ :

Երկու խաղաղողները խողերնին աւարտեցին , հրամանատարը
զլխարկը առաւ ու բաժնուելու պատրաստուեցան :

— Հայր իմ , ըսաւ Լորանս , Պ. Տօմօն կը հարցընէ եթէ վաղը
ձի պիտի հեծնե՞նք :

— Հարկաւ :

— Ուրեմն ժամը ու թին , ըսաւ Տօմօն , կու գամ ձեզ սունելու ,
հրամանատար :

— Պատրաստ պիտի ըլլանք :

Երկու ընտանիքները իրարմէ բաժնուեցան :

Արևածաղկ իւր սենեակը ելաւ , որ Էտմօնի սենեկին վրան էր
և պատուհանը բանալով տեսաւ որ Պ. տը Մօրթօն իւր կինն ու
աղջիկը կը հեռանային . այս վերջինը իւր սովորութեան համե-
մատ ետևէն առանձին կը քալէր :

Արևածաղկ գիտեց որ Լորանս ետին կը դառնար և աիկին տը Բէ-
րէօի տան կողմը կը նայէր :

Պատուհանը գոցեց :

«Պէտք է նիշէթի նամակ մը գրեմ» ըսաւ ինքնին ու սեղանի
մը առջև նստելով գրիչ մ'առաւ ու գրելու պատրաստուեցաւ :
Բայց գիր մը նշանակելէն առաջ գլուխը ձախ ձեռքին մէջ ինկաւ
ու գրիչը աջին մէջ անգործ մնաց :

Անշուշտ կը մտածէր թէ ինչ պիտի գրէր , թէև ուրիշ ան-
գամ բառերը առատութեամբ կու գային :

Գուցէ այս չէր մտածածը :

Պահ մը խորհելէ ետև գրեց :

«Բարի նիշէթս , այս առտու նամակդ ընդունեցայ և . . . :»

Նորէն կանկ առաւ , բայց այս անգամ օտքի վրայ ելաւ ու պա-

տուհանը բանալով քանի մը վայրկեան նոյն ճամբան գիտեց , ուր-
կէց Պ. տը Մօրթօն տունը կ'երթար : Ճամբան ամայի էր :

Արևածաղկ տեղը դարձաւ , և նիշէթի նամակը կրկին կարգաց ,
իւր թէ պէտք ունէր այս բանս ընելու որպէս զի անոր պատաս-
խանը տայ :

Ետքը գրիչը առնելով շարունակեց .

«Եւ հիմակ կը պատասխանեմ գեղեցիկ իրիկուն մը անցընելէս
ետև Էտմօնի՝ որ այսօր առաջին անգամ ելաւ , իւր մօրը , կնոջը ,
ծեր պարոնի մը և պառաւ տիկնոջ մը հետ որ մեր գրացիներն
են և ամեն օր մեր հիւանդին այցի կու գան :»

Միթէ՞ պատահամբ էր թէ կամաւ որ Արևածաղկ ծեր պարո-
նին ու պառաւ տիկնոջ գեղեցիկ աղջիկ մ'ունենալնին չէր իմացը-
նէր :

Անշուշտ պատահամբ էր , քանզի ինչ պատճառ կար այս բանս
նիշէթէն պահելու :

Արևածաղկ այս խօսքը նշանակելէն հտրք՝ կարծես թէ ալ գրելու
բան չունէր . քանզի նամակը շարունակելու տեղ փայտեայ սեղանին
վրայ սկսաւ գրչով կէտեր շինել և ինք որ չէր կրնար ուշադրու-
թեամբ դրուածը յառաջ տանիլ , մեծ խնամով մը նոյն կէտերը
մէկմէկէ հաւասար հեռաւորութեամբ լաւ մը կը շարէր :

Յանկարծ մատովը կէտերը աւրելով գրելու սկսաւ :

«Հոս միշտ աղէկ օգ կ'ընէ և վստահ եմ որ այս գրած ժամա-
նակս Բարիդ կ'անձրևէ , մինչդեռ մնրք հոս աստղազարդ երկինք
մը ունինք :»

Յայտնապէս Արևածաղկի միտքը ուրիշ տեղ էր . քանզի այս ետ-
քի երկու տողերը գրած առեն գրեթէ թուղթին վրայ չէր նայեր ,
այլ կը գրէր քանզի կ'զգար որ բան մը գրել պէտք էր : Բայց նի-
շէթի համար ինչ շահ կար եթէ նիսի երկինքը աստղալից էր ու
Բարիդի օգը անձրևային : Արևածաղկ այս բանս հասկըցաւ անշուշտ ,
ըստ որում ուրիշ թերթ մը առնելով այլ նամակ գրելու պատ-

բաստուեցաւ . բայց այս նորթ թերթին վրայ, բառ մը միայն դրաւ որ էր ,

«Օրիորդ» :

Եւ երբ շարունակելու վրայ էր , կանկ առաւ և թուղթը ձեռքին մէջ ճմուկելով , կրակարանին մէջ նետեց ու ըսաւ .

«Օ՛ն , խենթ եմ» :

Եւ Նիշէթի համար սխաժ նամակը ձեռք առաւ :

«Հոս բանի մը համար միայն կը ցաւիմ , շարունակեց իւր գրուածը կարգալով քանզի արդէն մոռցեր էր . քու , բարի Նիշէթս , քու վրայ միշտ կը մտածեմ և կը յուսամ որ դու ալ իմ վրայ քիչ մը կը խորհիս : Իբր Էսմոն բոլորովին առողջանայ Բարիդ պիտի գամ և հարկ չլից ըսել թէ շուտ մը ո՞ր պիտի վաղեմ : Խեղճ պղտիկս , հարկաւ շատ կը ձանձրանաս , քանզի ձմեռը այնքան տխուր է Բարիդի մէջ : Բայց հանգարտ եղիր , այս բաժանումը երկար չպիտի ըլլայ և ալ այնուհետև չպիտի բաժնուինք :

«Աւելի երկար չեմ գրեր , քանզի նամակաբերին ժամը հասած է . բայց յաջորդ նամակս աւելի երկար չորս էջ պիտի ըլլայ» :

Կիւսթավ այս վերջին մասը արագութեամբ գրեր էր , իբր թէ կը վախնար որ նորէն արգելք մը չենէր :

Բայց քանի որ գիշերուան ժամը տասին կը գրէր , ինչո՞ւ կ'ըսէր թէ նամակաբերին ժամը հասած էր :

Այս առաջին անգամն էր որ Կիւսթավ Նիշէթի սուտ մը կ'ըսէր , և ո՞վ գիտէ եթէ նամակին մէջ ասորմէ զատ ուրիշ ալ չկար :



Ի Դ

Նախահայեաց բնութիւնը թոյլ տուաւ որ նոր սոք ելնող հիւանդը իրեն տրուած պարզ հաճոյքներով բաւականանայ , որք իւր կատարեալ առողջութեան չէին հակառակեր բնաւ : Գիւրուածեամբ այն սովորութիւնները ընդունեցաւ , որ հիւանդութենէն առաջ բնաւ չպիտի հաւանէր , մանաւանդ թէ զանոնք ծերոց վրայ իսկ առանց ծիծաղելու չէր կրնար տեսնել : Անկողնոյն յաջորդող մեծ թիկնաթուր , այն անձանց այցելութիւնը որ կանոնաւոր վիճակի մը մէջ տողտկալի կ'երեայ , քաղցր բայց անարդիւն խօսակցութիւն մը , արեւի ճառագայթ մը կիսբաց պատուհանէն կէսօրին ներս սպրդելով , ճերմակ միսերու կերակուրը , քիչ մը ընթերցում , աղիւսակի խաղ կամ էփօրէի որ ընկերը կամաւ կը կորսնցընէ հաճութիւն մը տալու համար՝ այս ամենը ՚ի վերջոյ հիւանդի մը նպատակն ու զարմուհքը կ'ըլլան : Մարմնոյ տկարութենէն տաժանեալ միտքը ուրիշ բանի չբաղձար , և որովհետև ամեն օր հիւանդը նոր զօրութիւն մը կ'զգենու , վայրկեան մը կու գայ որ աւիկա՝ ինչպէս բժիշկը կ'ըսեն , առանց իմանալու իւր անցեալ կեանքը նորէն կ'սկսի և զարմացմամբ կը յիշէ այն ժամանակը երբ խիտ գժուարութեամբ անկողնէն սեղան ու սեղանէն անկողին երթալը մեծ քաջութիւն կը սեպէր :

Հիւանդութիւնը Նախինամութեան կողմանէ մարդուս եղած ազդարարութիւն մ'է , որմէ մարդս մեծ օգուտ չքաղէր . քանզի անցեալ չարիքէ մ'աւելի շուտ մոռցուած բան չկայ :

Ամեն օր կը պատահէր այնպիսի անձանց որք կ'ըսեն . Երկու երեք տարի կայ , վեց ամսուան հիւանդութիւն մ'ունեցայ . և այս ըսած ատեն նոյն ժամանակուան քաշած ցաւերնին չեն յիշեր : Հիւանդութիւնը այն աղէկութիւնը ունի , որ սպաւորութիւնները կ'ազնուացընէ և քիչ մ'ատեն բնութեան նոր կերպարանք կու սայ մեր

աչաց : Աւելի կամ նուազ մահուան այսինքն Աստուծոյ կը մտնեցընէ զմեզ ու անկէ ծագած իրերուն վրայ անյագ ծարաւ մը կու տայ մեզ : Ծառերը, անտառները, ծաղիկները այնպիսի բարեկամներու պէս կ'երևին մեզ որ կը վախնայինք միւս անգամ չտեսնելու զանոնք և որք միշտ 'նոյնը' այսինքն բարի ու համակիր կը գտնենք :

Յետոյ այս ժամանակը կ'անցնի և այն քաղցր յուզմունքները կենսական մեծ զբաղմանց ատիկ կու տան :

Արդ կ'ուզէի գիտնալ թէ յիսուն տարուան մտաւոր արարածը ետին նայելով՝ իւր անցելոյն մէջ բնութեան հանդարտ բերկրութիւններէն ու անմեղ զօրարձութիւններէն աւելի քաղցր յիշատակ մը կը գտնէ արդեօք :

Ինչո՞ւ պիտի ցտէինք մանկութեան վրայ , բայց եթէ ոչ մտաց անկախութեան համար որ սղայութեան ժամանակ ունինք , և որն որ մեր հոգին այս աշխարհի զգաստ տպաւորութեանց միայն մատչելի կ'ընէ , որոնց աւելի ետքը կու դայ կը միանայ սէրը՝ այն ծաղիկը որ ամեն մարդու համար միեւնոյն ճամբուն մէջ կը բուսնի ուր անդ կը ժողվեն զինքը , կը շնչեն , շատ անգամ՝ կ'աղբարտեն , կը նետեն ու ետքը այն սողմին մէջէն կ'ուզեն նորէն առնուլ զան , ուր իւր Աստուածային հիւթը իւր խանդարումը արգիլած է :

Էտմօն այն բնաւորութեամբ՝ գիւրութեամբ իւր հիւանդութեան պահանջմանց անձնատուր եղաւ , որնոր ապագային երկիր զները մոռցրնել տալու զօրութիւնը ունեցեր էր : Խօք ալ Պ. Տըվօի հրաշապէս բժշկելը առողջութեան իբր երաշխաւոր մ'էր :

« Եթէ պիտի մեռնէի , կ'ըսէր մտքէն , արդէն մեռած կ'ըլլայի : » Սակայն ինք ոչ համազում ունէր ոչ յոյս . այլ երջանիկ էր իւր շուրջը սիրելի անձինք տեսնելով , որոնցմէ քիչ մնացիր էր պիտի յափշտակուէր : Զինքն անգամ մը բժշկող բժիշկը վստահութիւն կու տար , և նա առանց մտածելու մարդկային այն քաղցր զգացմամբ կը վարակէր , որնոր մէկը երբ վերակենդանանայ կ'զգայ :

Արդ՝ ժամանակը այսպէս կը սահէր : Էտմօնի օրերը մէկմէկու կը յաջորդէին , զիտութեան իրենցմէ պահանջած բարեկեցութեան հարկը հետեւինքն բերելով :

Պ. Տըվօի իւր փեսին վրայ գրած կանոնը կ'սկսէր իւր ազդեցութիւնը ունենալ : Կուրծքին հոսման յաջորդող հազը քիչ քիչ կը մեղմանար : Գործողութիւնը շատ պարզ էր թէև քիչ բժիշկներ կը համարձակէին գործածել , քանզի քիչ ժամանակէ 'ի վեր ճանչցուած էր : Պ. Քուրր անուն անգղիացի վիրաբոյժ մը զան հնարած էր , անոր արդիւնքները հուշակելով : Պարզապէս այս էր . հիւանդը միշտ միևնոյն կլիմային տակ ձգելով տնկադի լուծում մը տալ պէտք էր աստիճանաբար չափը աւելցընելով :

Գարձեալ հիւանդին բնաւորութիւնը և կազմուածը պէտք էր ճանչնալ , քանզի այս դարմանը եթէ ումանց համար օգտակար՝ ուրիշներու արեստարբեր կրնար ըլլալ և ամեն հիւանդի վրայ չէր կրնար գործադրուիլ :

Երկու ամիս էր Կիւսթավի Բարիզէն մեկնելը և տակաւին վերադառնալու միտք չուներ . թէև Նիշէթի նամակները հետզհետէ ստիպիչ կ'ըլլային , թէև Էտմօնի առողջութիւնը ալ կը ներէր որ հեռանայ , թէև տիկին սը Բէրէօ որ երիտասարդին ցոփուհւոյն վրայ ունեցած սաստիկ սէրը կը ճանչնար , ստեպ կ'ըսէր իրեն թէ ալ ազատ էր ու չէր ուզեր աւելի հեռուն մղել իւր որդւոյն վրայ ունեցած անձնուիրութիւնը :

Այս ամենուն հակառակ Կիւսթավ կը կենար :

Քանզի իր մէջ նոր բան մը կ'անցնէր , քանզի ինչպէս որ նախորդ գլխին մէջ նշանակեցինք ուրիշ անուն մը կու դար 'Նիշէթի անուան քով կը կենար ու անորը կը ջնջէր :

Քիչ մը դժուար է Կիւսթավի զանազան տպաւորութիւնները նկարագրել , որոնց մէջ թաթաւեալ էր Էտմօնի քով ըլլալէն՝ և Մօրթօն ընտանիքին հետ ճանչնորութիւն ընելէն 'ի վեր : Ինք որ մինչև այն ատեն սէրը՝ ինչպէս որ ըսած ենք իբր հաճոյք մը նկատած էր և 'Նիշէթը իբր ախորժեղի տարփոհի մը և իբր անձնուէր քոյր մը սիրելով՝ կը կարծէր թէ սրտին վերջին սահմաններուն հասած էր , Կիւսթավ , կրտնք , հիմակ իւր հոգւոյն մէջ ծագած նոր նշոյլին վրայ պակշած էր , որնոր ցարդ իրեն անձնութիւնը եղած մասերը կը լուսաւորէր :

Տակաւին Լօրանս տը Մօրթօնը իւր առաջին սիրուհւոյն չափ չէր սիրեր, բայց կ'զգար որ քիչ ասեմէն անորմէ աւելի պիտի սիրէր և արդէն կը հասկընար թէ անոր ընտանած տեղերէն անշատուիլը անկարելի էր :

Միւս կողմէն Նիշէթի իւր վրայ ունեցած ճշմարիտ ու յստակ սէրը, այն գեղեցիկ օրերը որ անոր կը պարտաւորէր, նորա ծիծաղելու այնքան յարմար չքնաղ գէմքը որնոր երկու հարիւր մղոն հեռաւորութենէն կ'ընդհնարէր՝ տխուր և գուցէ արտասուօք ողողեալ, այն ցաւը որ յաւիտենական բաժանում մը պիտի տար խեղճ աղջկան որ իւր բոլոր երջանկութիւնը սիրահարին վրայ գրած էր ու այս գժտութիւնը կենաց ամենէ ամայի երկրին վրայ պիտի ձգէր զան, այս ամենը իրիկունը Վիւսթավի մտքէն անցնելով երբեմն երբեմն կշիռը Նիշէթի կողմը կը ծանրացընէր :

Բայց այս երկայն չէր տևեր ու իսկոյն որոշում մը կը ծնանէր և երբ երկրորդ օրը Լօրանսի գեղանի ու զգաստ գէմքը երևէր, խեղճ Նիշէթ՝ որուն միանալու համար երկու հարիւր մղոն պէտք էր ընել, իւր ազգեցյութիւնը կորսնցընելով բաղգատութեան տակ կ'իյնար :

Ստեպ, ասիկա հաւանական իրողութիւն մը ըլլալէն առաջ, մինչգեւ Վիւսթավ չէր յուսար իսկ որ ըլլայ, ինքնիրեն խորհրդածութիւն կ'ընէր՝ որնոր ընթերցողաց հաղորդած ենք «Եթէ ամուսնանամ Նիշէթի վիճակը կը բարւոքեմ և ամեն ինչ կը լմնայ» : Բայց նոյն թուականին, կը կրկնենք, ամուսնութիւնը Վիւսթավի մտքին մէջ չէր և ասակա ին զան իրեն ցանկացընող կին մը չէր տեսած :

Շատ անգամ սրտով ու մտքով այնպիսի բաներու կը պատրաստուինք, որ ներքնապէս համոզուած ենք թէ բնաւ չպիտի պատահին և եթէ բողբը հաւանականեցրնէ զանոնք, այն ատեն զիւրին երեցած որոշման մը գժտարութիւնը կը տեսնենք : Հիմակ իւր գաղափարները փոխուած էին, ամուսնութիւնը ձև մ'առեր էր, և ահա այն երբեմն իբր Նիշէթը միութարեւու միջոց մը զիրութեամբ ընդունածը՝ իրեն անբաւական կը թուէր արդ. քանզի գաղտնի

ձայն մը կ'ըսէր իրեն թէ իւր լքմանէ յուսահատեալ աղջկան՝ ստակէ զատ ուրիշ հատուցում մը կը պարտաւորէր :

Անտանն Կոմօնի այն խրատը կը լիշէր, որ ըսած էր. «Նիշէթի հետ ամուսնացիր» . և կ'ըսէր իւրովի ինչո՞ւ չէ : Բայց յայնժամ ինքնասիրութեան թելերը էր մէջ կը խօսէին և հետևեալ մտախօհութիւնը յանձն կ'առնուր, որ դժբաղդաբար, գուցէ բարեբաղդաբար Նիշէթի համար, խոհասպէս մարդուս բնութեան հետ անքակտելի կերպով միացած է .

«Նիշէթ զիս շատ կը սիրէ, ընտիր ու ազնիւ աղջիկ մ'է, բայց վերջապէս ցոփուհի մ'է, որ և ոչ մէկ պատճառ մը կայ հետը ամուսնանալու . քանզի իւր սիրահարն եմ և եթէ ուզեմ անոր հետ կենակցութիւնս շարունակել, կրնամ առանց ամուսնանալու շարունակել : Ասկէ զատ եթէ տիկին տը Բէրէօ կը յարգէ զան, ինք մտահաճութեանց ներքև կին մը չէ . բայց աշխարհ նոյն դիւրութեամբ պիտի ընդունի՞ զան : Եւ ես ալ եթէ կինս ըլլար, անցելոյն վրայ իրմէ հաշիւ խնդրելով զան դժբաղդ չպիտի ընէի : Չէ, ասիկա որոշապէս անկարելի է : Մանաւանդ որ օրիորդ տը Մօրթօն ամուսնութեան խորհուրդը միտքս ձգեց, ինչ իրաւամբ ուրեմն Նիշէթը պիտի առնեմ :»

Վիւսթավ այն վիճակին հասեր էր որ ալ ևս երկմտութիւն չէր : Երկու կանանց մէջ տեղը կը գտնուէր, մէկը որ ցոփուհի մ'էր և երկու տարիէ ՚ի վեր նորա սիրահարն ըլլալով՝ այն խանդաղատութեամբ կը սիրէր արդ՝ որ կը սիրէ մէկը երբ ուրիշ կնկան մը համար համակրութիւն սկսի զգալ . մըստը նորատի, գեղազէմ, ազնուական գեղբաստանէ, հրեշտակի պէս անարատ աղջիկ մը՝ որուն հոգւոյ առաջին յուզմանց ակնատես եղած էր ինք, (քանզի Լօրանս կ'սկսէր իմանալ որ սրտին մէկ հատորը Վիւսթավի իրմէ հեռացած ատեն անոր կը հետևէր) . որուն վրայ աշխարհ զինքը պիտի գովէր և որուն մինչև այն ատեն և ոչ մէկ էրիկ մը մատին ծայրովը գպած էր :

Արդ Վիւսթավ իւր սրտին նրբութեամբ միայն կ'արգիլուէր : «Ինչպէս այս խոստովանութիւնը խեղճ Նիշէթի ընեմ» կ'ըսէր իւրովի :

Այս ալ կայ որ տնտեսութիւնը մարդս հաւանականութենէ անդին կը մղէ . ուստի այս ամուսնութեան ցոփուհւոյն վրայ ընելիք տպաւորութիւնը եռապատկելով կ'ըսէր «Եթէ այս բանս իմանալով ինքզինքը սպաննէ» :

Եւ ապա կ'աւելցընէր «Ասոր համար ինքզինքնին շէն սպաններ . ընդհակառակը Նիշէթ սիտի մունայ զիս :» Եւ ո՛ր մարդկային զարմանալի բնաւորութիւն . Նիշէթի զինքը մունալու գաղափարը Աիւսթավի ցաւ կը պատճառէր , որ ընդհակառակը հաճոյք մը տալ պէտք էր , քանզի ասիկա իւր գիտաւորութեանց ներուժ մը կ'ըլլալար :

Մարդու սիրտը Տետաղոսի Լաբիւրինդոսին կը նմանի . որ ճամբան որ բռնեմ միշտ Մինսօտրի զիմացը կը գտնուիս : Մարդս ի՛նչ ուղղոյ ալ հետեւի իւր կեանքին մէջ , միշտ իւր անձնասիրութեան զիմաց կ'եղնէ , Մինսօտր մը որ ցնորքները՝ այն հոգւոյն կոյսերը կ'սպաննէ :

Ինչպէս որ յայտնի է , Աիւսթավ առանց զօրաւոր փաստեր ու նենալու Լօրանսի հետ ամուսնանալու կարելիութեան վրայ չէր մտածած : Աստա՛հ էր որ Լօրանս մէկը չէր սիրեր . քանզի երկտասարդուհւոյ մը հետ տեսակ մը մտերմութիւն հաստատուէն ետքը նորա գաղտնիքները երեւան հանելը խիստ զիւրիւն է : Մանաւանդ թէ զիտէր որ եթէ Լօրանս տակաւին իրեն համար յայտնի համակրութիւն մը չէր զգար , գոնէ իւր կինը ըլլալու պիտի չընդդիմանար երբ Պ . և տիկին տը Մօրթօն իրենց հաւանութիւնը տային :

Քանի մ'անգամ Աիւսթավ իբր ճարտկութեամբ հրամանատարին հարցընելով թէ ինչ գիտաւորութիւն ունէր իւր աղջկան վրայ , հասկըցաւ որ ասիկա խիստ արամազիր էր զան կարգելու եթէ այնպիսի մէկը գտնէր որ աստիճան , հարստութիւն և ազնուութիւն ունենար :

Իսկ տիկին տը Մօրթօնի գալով իւր ամուսնոյն ուզածը ինքն ալ կ'ուզէր . և եթէ ըսինք որ Աիւսթավ իբր ճարտկութեամբ հարցափորձած էր հրամանատարը , այն է թէ այս վերջինը իւր միտքը խելոյն քիչ մը դուշակելով ստէպ կնոջը հետ այս նիւթին վրայ բանակցած էր :

— Պարոն Աիւսթավ Տօմօն Լօրանսի համար ընտիր ամուսին մը կրնայ ըլլալ , կ'ըսէր տիկին տը Մօրթօն , եթէ իւր վրայ դնեցած համարումներս ստոյգ են : Նաև տիկին տը Բէրէօի հետ կ'ուզեմ խօսիլ անոր վրայօք և լաւ տեղեկութիւն մը առնուլ :

Լօրանսի ծնողքը գիտած էին որ Աիւսթավ իրենց աղջկան հետ սիրաբանութիւն կ'ընէր , որնոր Աիւսթավ իսկ չէր նշմարած :

Երբ մէկը կնկան մը սիրահարել սկսի , այն բաւերուն տեղ որ Համարձակիր արտասանելու և որոնք արդէն զգացած սիրոյ յայտարարներն ըլլալով որեւիցէ կերպով մը դանոնք զեղլու պէտքը կ'զգայ , նայուածքով կը յայտնէ շատ անգամ իւր կամաց հակառակ այն ամենը՝ որ բերանը տակաւին կը լռէ : Այս նայուածքներն են որ ծնողք կը տեսնեն , որք ամեն բան կը տեսնեն և իրենց զաւակը կը հսկեն :

Արդ՝ Աիւսթավ Լօրանսի հետ միշտ անձրեւի ու գեղեցիկ եղանակի վրայ խօսելով զան կը նկատէր այնպիսի մէկու մը պէս՝ որ իւր ըսածէն տարբեր իրի մը վրայ կը մտածէ :

Ուստի օր մը տիկին տը Մօրթօն ըսաւ տիկին տը Բէրէօի .

— Պ . Աիւսթավ Տօմօն ձեր որդւոյն բարեկամն է :

— Գպրոցական ընկեր մը , պատասխանեց տիկին տը Բէրէօ :

— Աղնիւ ընտանիքէ է :

— Այո՛ :

— Ծնողքը գեւ կենդանի են :

— Չէ՛ , որք է :

— Հարուստ է :

— Գրեթէ քսան հազար լիբա եկամուտ ունի , որ մանչու մը համար խիստ գեղեցիկ է :

— Ի՛նչ բնաւորութիւն ունի : Հիմա պիտի ըսեմ թէ ինչո՞ւ այս հարցումները կ'ընեմ :

— Այն բնաւորութիւնը որ դուք կը ճանչնաք , բարի ու աղնի սիրտ մ'է . իմ յատուկ որդւոյս պէս կը սիրեմ զան : Այս բաւական է իր ինչ ըլլալը ձեզ հասկըցընելու :

— Ընորհակալ եմ , սիրելի տիկին տը Բէրէօ , այս ամենը ամուսնոյս պիտի հաղորդեմ :

— Ի՞նչ կայ :

— Պ. Տօմօն Լօրանսի հետ քիչ մը սիրաբանութիւն կ'ընէ , նա ալ ամուսնանալու տարիքն ունի ու կ'ուսումնասիրէ իրեն տհաճելի չէ ըստ իւր խօսքերուն . ուստի երջանիկ պիտի ըլլամ եթէ այս ամուսնութիւնը տեղի ունենայ , քանզի ասով աւելի ձեզի հետ պիտի կապուինք Պ. Տօմօնի ձեր որդւոյն վրայ ունեցած սերտ բարեկամութեան պատճառաւ :

— Ա՛հ , օրիորդ Լօրանսի սիրաբանութիւն կ'ընէ , ըսաւ տիկին տը Բէրէօ :

— Այդ խօսքը այնպէս մը կ'արտասանէք իբր թէ այս ամուսնութեան մէջ արգելք մը տեսնէիք .

— Ամենին , ճշմարիտ վկայ , կրկնեց տիկին տը Բէրէօ , միայն կը զարմանամ թէ ինչպէս ձեզի պէս ես ալ կ'ուսումնասիրէ Լօրանսը սիրելը չեմ 'նշմարած :

— Ո՛հ շատ դիւրին է տեսնելը : Բայց դուք միայն Պ. Էտմօնի վրայ զբաղած ըլլալով խիստ բնական է որ ձեր չորս դին անցածը չնկատէք :

— Իրաւունք ունիք : Ի՛հ , այս բանս կ'ուսումնասիրէ պիտի ըսեմ . հաճութիւն կու տամ :

— Յօժարակամ : Իւր գիտաւորութիւնները քննեցէք և երբ տեսնէք որ խաբուած չեմ , ըսէք իրեն որ Պ. տը Մօրթօն և ես զինքը սիրով կ'ընդունինք : Եթէ այս տղաքները միատեղ երջանիկ պիտի ըլլան , կ'ուզեմ որ անմիջապէս ըլլան :

— Յիրաւի : Այսօր իսկ կ'ուսումնասիրէ հետ կը բանակցեմ , իւր մօր պէս կը սիրէ զիս և բան մը չպահէր ինձմէ :

Տիկին տը Բէրէօի զարմանքը զբաղող պատճառը բացատրելու հարկ չկայ : Նիշէթի յիշատակը միտքը իյնալով չէր կրցեր իւր արգահատութիւնը զսպել :

Նոյն իրիկուն իսկ կ'ուսումնասիրէ մէկ կողմ առնելով ըսաւ .

— Կ'ուսումնասիրէ , քեզի հետ ծանր խօսքեր ունիմ ընելիք :

— Մտիկ կ'ընեմ , տիկին :

— Օրիորդ տը Մօրթօնը կը սիրես , ըսաւ տիկին տը Բէրէօ ,

որ իւր սովորական համարձակախօսութեամբը անմիջապէս բուն նիւթէն կ'սկսէր :

— Այլէկ գուշակեր էք , տիկին , ըսաւ կ'ուսումնասիրէ կարմրելով :

— Չէ , ես չեմ գուշակողը , տիկին տը Մօրթօն տեսած է :

— Եւ ձեզի խօսեցաւ :

— Այո՛ , քիչ մը առաջ :

— Ի՞նչ ըսաւ :

— Ինչ որ իբր մայր ըսել կը պարտաւորէր : Գու վրայ հարցափորձեց և ինչպէս որ ընտիր յատկութիւններդ միայն կրնայի պատմել , ըսաւ թէ եթէ իւր աղջկան հետ ամուսնանալ ուզես այս ամուսնութեան հակառակող մը չպիտի ըլլայ :

— Արջափ շնորհակալ եմ ձեզմէ , տիկին , ըսաւ կ'ուսումնասիրէ տիկին տը Բէրէօի ձեռքը սեղմելով :

— Այսպէս , եթէ ուզես կրնամ միջնորդուհայ տեղ ծառայել քեզ :

— Ըսել կ'ուզէք մօր տեղ :

— Գու Էտմօնը եղբոր պէս չե՞ս սիրեր :

— Ի՞նչ բարի էք :

— Հիմա կ'ուզեն որ խրատ մը տամ :

— Ըսեցէք , ըսեցէք , տիկին , և ինչ որ ալ ըլլայ մտիկ պիտի ընեմ :

— Ի՛հ , այս որոշումը ընելէն առաջ անգամ մը պէտք է Բարիդ երթաս :

— Կ'երթամ , պատասխանեց Տօմօն այս խրատին իմաստը ըմբռնելով ու աչքերը խոնարհեցուց :

— Ասիկա , յարեց տիկին տը Բէրէօ , ինձ ժամանակ պիտի տայ քննելու և իմ ճշմարիտ սպասարութիւններս յայտարարելու : Գուցէ անգամ մը որ Բարիդ երթաս , աշխարհի ծոցը , ուրիշ երիտասարդուհեաց մէջ տեղը , երբեմն սիրած անձերուդ քով , պիտի տեսնես որ այս նորածին սէրը սրտիդ մէջ խոր արմատ չէ ձգած . այլապէս անուշաբանութեան միայն ծագած է : Հոստեղ երկու ամիսէ 'ի վեր օրիորդ տը Մօրթօնէ զատ ուրիշ երիտասարդուհի մը չես տեսներ :

Բնականաբար բոլոր երևակայութիւններդ դէպ ՚ի անոր կը ձգուին, բայց այս ալ բնական է որ օր մը տեսնես թէ առաջին խրտման մը անսալդ վրիպանք մը ըլլայ : Ամուսնութիւնը ծանր խնդիր մ'է . Էտմոնի վրայ տես այս բանս : Աին մը առնելէդ առաջ, վստահացիր թէ սիրտդ արդեամբ իւր երջանկութեան համար այդ բանին պէտք ունի և թէ որոշապէս զինքը երբեմն բարեբաաս ընողէն պաղած է :

Տիկին տը Բէրէօ այս վերջին խօսքը լաւ մը շեշտեց, որուն իմաստը երիտասարդը ըմբռնելով իր երախտազիտութիւնը յայտնեց :

— Ապա, յաւելցուց տիկին տը Բէրէօ, բոլոր թողութիւնդ պէտք են քեզ, որ հոս չեն . որպէս զի երբ վերադառնաս ամեն ինչ կանոնաւոր ըլլալով շուտ մը ամուսնութիւնը տեղի ունենայ :

— Ինչպէս ամեն բան լաւ կը տեսնէք, տիկին, ըսաւ Աիւսթավ, և ինչպէս շնորհակալ եմ ձեր ըսածներէն :

— Լաւ, միտքս աղէկ ըմբռնեմ ես, Աիւսթավ : . . Երբէք մեր սիրածներուն դէմ ապերախտ չըլլանք : Եթէ Բարիզի մէջ հասկընաս որ բարեբաստութիւնդ օրիորդ տը Վօրթօնի կախում ունի, յետին ուրախութիւն մը տուած պիտի ըլլաս մէկու մը՝ որն որ ստոյգ եմ քու վրայ կը մտածէ այս պահուս : Ապրը առտու մեկնէ : Մէկ ամսէն աւելի ունիս առջեդ : Բարիզէն մեկնելէդ քանի մ'օր առաջ եթէ սակայն վերադառնալու ըլլաս, ինձ գրէ և եկած ատենդ ամուսնութիւնդ որոշուած պիտի գտնես : Ար հաւնիս :

— Ամեն ինչ կը նախատեսէք : Քանի Էտմոն երջանիկ է զձեզ մայր ունենալուն և ես ինչ բարեբարդ եմ որ զիս քիչ մը առաջնորդել կ'ուզէք :

Տիկին տը Բէրէօի խորհուրդը խոհական էր և Աիւսթավ բերկրութեամբ ընդունեցաւ : Տիկին տը Բէրէօ ամեն ինչ միայրնելով հաւասար կշռով կը չափէր :

Նիսի մէջ, Աիւսթավ արիութիւն չունէր Լօրանսէ հեռանալով Նիշէթը երթալ տեսնել . նայինք Բարիզի մէջ, քաջութիւն պիտի ունենար Նիշէթը թողլով Լօրանսի գալու : Ո՛րը արդեօք աւելի զօրաւոր պիտի ըլլար հին սէրը թէ նորը :

Ամեն ինչ ասոր վրայ կը կայանար :

Աիւսթավ սենեակը ելնելով մեկնելու պատրաստութիւններ տեսաւ և որովհետեւ կը մեկնէր ուղեց Նիշէթի ուրախութիւն մը ապառ հետեւալը գրեց :

«Գրեթէ այս նամակիս հետ կը մեկնիմ, որմէ կէս օր ետքը Բարիզ պիտի ըլլամ :»

Ապա դնաց Պ. և տիկին տը Վօրթօնի հրամեշտի ողջոյն տալու :
— Նորէն պիտի գա՞ք, ըսաւ հրամանատարը :

— Կարելի եղածին չափ շուտ, պատասխանեց Աիւսթավ :

Տիկին տը Վօրթօն ամուսնոյն հետ ակնարկ մը փոխանակեց, որուն տիկին տը Բէրէօի հետ ունեցած խօսակցութիւնը պատմած էր :

Լօրանսի սիրտը ուժգնապէս բարախեց :

— Հրամանատար, զձեզ հոս պիտի գտնեմ, հարցուց Աիւսթավ :

— Տեղեքնէս պիտի շարժինք, պատասխանեց Պ. տը Վօրթօն : Աիւսթավ Լօրանսի ալ հրամեշտի ողջոյն տուաւ ու թեթեւ մը իրարու ձեռք սեղմեցին :

— Ինչո՞ւ համար Պ. Տօմօն կը մեկնի, հարցուց Լօրանս իւր մօրը երբ Աիւսթավ հեռացաւ :

— Աման դի կարգուելու դիտաւորութիւն ունի կարծեմ, պատասխանեց տիկին տը Վօրթօն, որուն տիկին տը Բէրէօ Աիւսթավի հետ ունեցած խօսակցութեան մէկ մասը յայտնեմ էր և ըսեմ էր թէ գործերը կարգադրելու համար պէտք էր որ մեկնի :

Այս ըսելով տիկին տը Վօրթօն ծածկապէս աղջիկը կը նկատէր :

— Բարի մայր իմ . . . գոչեց մօրը բաղկացը մէջ նետուելով :

— Ուրեմն կը սիրեն Աիւսթավը :

— Այո՞, մայր իմ :

— Ի՛հ, քանի մ'օրէն պիտի կրնաս այդ իրեն խոստովանիլ :

Աիւսթավ մեկնեցաւ Նիսի փոքրիկ տունը իւր հանապաջօրեայ խաղաղ զուարճութեանց մէջ թողլով :

Էտմօն իւր վիճակին ներածին չափ կը բարւոքէր :
 Կիւսթավ մեկնեղէն չորս օր ետքը Բարիզ հասաւ , Կօտօ փո-
 զոցը վազեց և Նիշէթ որ անհամբերութեամբ կ'սպասէր անոր վի-
 զը նետուելով այս անակնկալ վերադարձին պատճառած ցնծու-
 թեան արցունքները չկրցաւ զսպել :

Ութ օր առաջ Կիւսթավ կը կարծէր որ Լօրանսէն չափաւ կրնար
 հեռանալ : Նիշէթի առաջին համբոյրը ընդունելուն պէս համու-
 զուեցաւ որ Բարիզէն մեկնելը անկարելի էր :

Անոնք որ մարդկային սրտի բացատրութիւն կու տան , թո՛ղ
 քայատրեն ասիկա : Ես կը պատմեմ միայն :

ԻԵ

Նիշէթի տան մէջ փոփոխութիւն մը չկար : Կիւսթավ զգայ
 որ սիրուհւոյն գտնուած անղը այն էր՝ ուր երկու ամէն 'ի վեր վին-
 քը հոն կ'սպասէր : Պատերը նորաստաց սուլորութեան յատկութիւ-
 նը կ'առնուէ : Ամեն ինչ որ Կիւսթավ Նիշէթի տան մէջ կը ճանչ-
 նար այնպէս ճշգրութեամբ իւր աչքին ներկայացան , որ պահ մը
 Բարիզէն մեկնած ըլլալը մոռցաւ :

— Վերջապէս եկար , . . . զօշեց երիտասարդուհին Տօմօնի ձեռ-
 քերը բռնելով ու զան նկատելով : Քանի՛ զոհ եմ : Ար վախնայի
 որ ալ չափաւ տեսնեմ՝ քեզ , ըսաւ ծիծաղելով , քանզի այն ժա-
 մուն որ նորա վերադարձին վրայ ստոյգ էր , բացակայութեանը վրայ
 կրնար ծիծաղել :

— Էտմօնը չէի կրնար լծողուլ , սիրելիս , պատասխանեց Կիւս-
 թավ : . . . Գիտեն որչափ հիւանդ էր :

— Բայց ազատեցաւ , այնպէս չէ :

— Գրեթէ յուսալի է :

— Շատ մտածեցի իր վրայ , խեղճ տղայ , Ամեն իրիկուն ձեր
 երկու քնուդ համար կ'աղօթէի :

— Ար յուսամ որ զան բոլորովին վտանգէ զերժ սիրտի գտնամ :

— Ինչ , նորէն պիտի մեկնիս , ըսաւ Նիշէթ տրտմութեամբ :

— Տիկին տը Բէրէօի և Էտմօնի խոստացայ քիչ ատենէն քո-
 վերնին երթալու :

— Ա՛հ , ըսաւ Նիշէթ համբերատար ձայնով մը , որուն մ ջէն
 այս լրոյ առթած յուզմունքը կը տեսնուէր :

— Ինչ ունիս , հարցուց Կիւսթավ , որ թէև Նիշէթի ինչ ու-
 նեանը աղէկ գիտէր , բայց ուզեց շուտ մը իւր մեկնելու կարե-
 լիութիւնը հաստատել . որպէս զի եթէ Նիշէթ անբաւական ըլ-
 լար իրեն Լօրանը մոռցընել տալու իսկոյն՝ Նիս վերադառնար :

— Տասը վայրկեան է որ հասար . ճամբորդութեան վերաբրիւդ
 հանելէդ առաջ կ'ըսես որ նորէն պիտի մեկնիս ու կը հարցընես
 թէ ինչ ունիմ : . . .

— Հանգստացիր , տասնհինգ արդար օրեր ունինք միասեղ ան-
 ցընելու :

— Միայն տասնհինգ օր :

— Գուցէ երեք շաբաթ :

— Շատ կը սիրես ուրեմն Էտմօնը , ըսաւ Նիշէթ ու անակ մը
 ձևով Կիւսթավի նայեցաւ :

— Գու աղէկ գիտես և շատ դժուարութեամբ թողուց որ մեկ-
 նիմ : Բայց չէի կրնար զիմանալ , ուզեցի անպատճառ քեզ անս-
 նել :

— Իրան է :

— Միթէ՛ երբէք սուտ խօսած եմ՝ քեզ :

— Գիտեն որ սկսեր էի վախնալ , ըսաւ նորատի աղջիկը և Կիւս-
 թավի ճամբորդութեան վերաբրիւն ու զլխանցը հանելով անկող-
 նոյն վրայ նետեց :

— Եւ ի՞նչ բանէ կը վախնայիր :

— Ար վախնայի որ ալ ևս զիս չես սիրեր ու սիրող ուրիշէ
 նուիրած ես :

— Որո՞ւ, բարի Աստուած, գոչեց Աիւթավ կարմրելով և այս կարմրութիւնը բացազանշութեան տակ ծածկել յուսալով:

— Որո՞ւ, ուրիշ կնոջ մը:

— Եւ Հիւսիսի ասպանիկ ես, հարցոյց Աիւթավ Նիշէթը ծնագոյցը վրայ առնելով:

— Կատարելայէս, քանզի ահա հոս ես. թէև . . .

— Թէև . . . կրկնեց Աիւթավ այնպիսի հնչումով մը որ խօսքին վերջը կը խնդրէր:

— Թէև կը վախնամ որ Էտմոնէ զատ ուրիշ բան մը քեզ հոն կը հրաւիրէ:

— Կու գայի եթէ այսպէս ըլլար:

— Ըսած ես թէ «Խեղճ պղտիկ Բարիզ խիստ թշուառ է, երթամ քիչ մը սիրտիմ զան . . .» Գուցէ երբ միան ալ հեռանալու ստիպուած էր: . . . Այս ալ կրնայ ըլլալ:

Կանանց ներքին նախազգացումները անժխտելի են. որք սեպ առանց ամենափոքր յայտարարի ճշմարտութեան մէկ մասը նշմարել կու տան. նախազգացումներ որոնց մեկնութիւնը խիստ զերբն է երբ ճշմարտութիւնը հաւանական ըլլայ:

— Խե՛նթ ես, ըսաւ Աիւթավ որ անմիջապէս այս խօսակցութիւնը ընդմիջել կ'ուզէր:

— Արեւմն նախաճաշէնք, ըսաւ Նիշէթ աթոռ մ'առնելով և պղտիկ սեղանի մը մօտենալով որ պատրաստ Աիւթավի կ'սպասէր. քանզի երիտասարդուհին մտածած էր որ իւր տարիաւորը յոգնած ու անօթի պիտի գար:

— Աւերջապէս, աւելցուց Նիշէթ իւր սիրելի կոչնականին քով նստելով, եթէ նա կը սիրէ քեզ ինձի չափ չսիրէր:

Այս վերջին խօսքը Աիւթավի շրթանցը տակ մարեցաւ, որն որ երկու տարուան սովորութեանցը մէջ վերահաստատուելով տակաին Լօրանսի յիշատակը երևան չէր ելներ, մանաւանդ թէ գոնէ քիչ մը ժամանակ ճշմարիտ հաճոյք մը կ'զգար այս սովորութիւնները վերստին կրկնելու:

Ապա Նիշէթ արդեամբ հրապուրելի էր: Սիրահարը ընդունելու

համար իւր հանձարեղ պչրասիրութեան ամեն միջոցները 'ի գործ դրած էր. հանձարեղ կ'ըսենք, քանզի պչրասիրութիւնը այլափոխ երևոյթներ ունի, և թէ խելամոռութիւն պէտք է ամեն պարագայի մէջ անորմէ օգուտ քաղել, առանց այն որուն առարկան է՝ կարենալ իմանալու: Այսպէս Նիշէթ իւր զգակով, զխաղարդով, շրջագոյցաւով նոր բան մը ունէր որ միանգամայն անցեալը յիշեցնել կու տար և Աիւթավը կը հրապուրէր: Կարճ խօսքով Նիշէթն էր քիչ մ'աւելի: Այս քիչ մ'աւելին գուցէ այն երկու ամիսներն էին որ Աիւթավ զան տեսած չէր. վերագարձող մարդուն համար անբացատրելի հրապոյր:

Նախաճաշի ժամանակ Աիւթավ իւր տարփուհւոյն պատմեց այն ամեն չգրածները և նաև բոլոր գրածներն իսկ. իւր օրերուն ինչպէս անցնելը, բայց միշտ զգուշանալով որ Լօրանսի նուիրած վայրկեանները ու անոնց հետ ըրած ձիրնթացութեան ժամերը ընէ:

Նիշէթ ալ իր կողմանէ իր անցուցած կեանքը պատմեց:

Ասիկա շատ պարզ էր: . . . Նախ շատ լացեր ու տաննահինգ օր անէն դուրս չէր ելեր, յետոյ երկար ատենէ 'ի վեր չտեսած բարեկամուհիի մը հանդիպել էր, որ իւր աշխատած խանութին մէջ կը ճանչնար. ասիկա ժառանգութիւն մը ձեռք ձգելով Թուր պիտի հաստատուէր:

Մինչև այն բարեկամուհւոյն մեկնելը Նիշէթ անօր հետ տեսակցութիւն կ'ընէր: Մերթ միատեղ տեսարան կ'երթային և ըստ կարի իրարմէ չէին բաժնուեր, մինչև այն ատենը որ օրիորդ Շարլօթ Թուսէն Բարիզէն մեկնելու ստիպուեցաւ, այսինքն Աիւթավի զալէն ութ տաս օր առաջ: Նիշէթի ալ շատ ազաչեց որ իրեն ընկերանայ ասպանով ցընելով որ պիտի հարստանար, բայց 'ի զուր ասիկա չընդունեց:

— Հիմակ, ըսաւ Նիշէթ Աիւթավին երբ նախաճաշը լմնցուց, չորս գիշեր կառքի մէջ անցուցիր, քնոյ պէտք ունիս, քնացիր:

— Այո՛, տունը պիտի երթամ, ըսաւ Աիւթավ:

— Չէ՛, կրկնեց Նիշէթ, իմ անկողնոյս վրայ երկնցիւր ու քնացիր և ես մինչև արթննալը կ'աշխատիմ՝ կամ կը կարգամ:

Արևածաղկի Նիշէթի հնազանդելով անկողնոյն վրայ երկնցաւ . . .
և մէկ ժամ ետքը այնպիսի մարդու մը պէս կը քնանար որ երկու
հարիւր մղոն տեղէ եկած է :

Նիշէթ հայլին դիմաց մագեբը կարգադրեց և կրակին անկիւնը
նստաւ կարգալու համար . բայց աւելի քնացողին կը նայէր քան թէ
իւր ծնոցայ վրայ բացուած գրքին :

Երբ իրիկուան եօթին Արևածաղկ արթնցաւ , Նիշէթ երեսը՝ գո-
ցուած կանթեղին կիսալուսով պայծառացած սեղանին քով կ'աշ-
խատէր , և ոտքերը կրակին մօտ փոքրիկ աթոռակի մը վրայ հանդ-
չեցուցած էր :

Արևածաղկ վայրկեան մը այս չքնաղ պատկերին առջև հիացած
մնաց , որուն վրայ պատկերահան մը աւելցրնելու բան չուներ :

« Ահա իմ անցեալս , ըստ ինքնին , պէտք է որ զան ապագաս
ալ ընեմ : Այս պղտիկը կը սիրէ դիս , առաջին շարժում մ'ընե-
լուս իւր բոլոր գոյութիւնը իմ վրայ պիտի ձգտի , պիտի դայ դիս
համբուրելու ու վիզս փաթթուելու : Բայց ասիկա ո՞ւր պիտի տա-
նի մեզ : Նա պիտի ծերանայ , ես ալ , մեր հաճոյքները պիտի փո-
խուին , և երբ մեր շորս դին ընտանիք մը ունենալու պէտքը զգանք ,
որ երկուքնիս ալ չունինք՝ ան ատեն արդեօք պիտի բաւականա-
նանք իրարու : Տակաւին պիտի սիրենք զիրար : Անկան մը ծերա-
նալը կրնանք տեսնել , բայց կենակցուհոյ մը պառաւնալը անտա-
նելի է . քանզի այս վերջինին հետ զմեզ միացուցած զոյգումը
միւսին վրայ ունեցածնէս խիստ տարբեր է : »

Ահա ինչ կը մտածէր Արևածաղկ , և իւր գալէն երեք օր ետքը
սկսաւ համոզուիլ որ պիտի մեկնէր , և գրեթէ կը ցաւէր Նիշէթի
խոստանալուն որ երեք շաբաթ քովը պիտի մնայ :

Մեր ընթերցողները անշուշտ շուտ մը պիտի հասկնան պատճա-
ռը և Արևածաղկը իրր ապերախտ չպիտի դատապարտեն . այլ յոռ-
ցանքը մարդկային բնութեան յաւերժական պիտայից պիտի տան :

Նիշէթ հրաշագեղ էր , Արևածաղկ զան տեսած ատեն զգածուե-
ցաւ . բայց անդամ մը որ առաջին աւիւնը անցաւ միշտ մեկնողնը
մնաց : Այս այն կիններէն մէկն էր որ իւր զեզոյն համար կը սի-

րենք , որ մտացածին հաճոյք մը մեզ ներշնչած է ու դիւրու-
թեամբ ինքզինքը յանձնած , և զան կը պահէր քանզի իւր վրայ
անկարծելի ձիրքեր կը զտնենք . ասիկա մաքերնիս կ'զբօսյընէ , ինք-
նասիրութիւննիս կը շողմէ , սրտերնիս կը գրաւէ , այնպէս որ
մինչև ուրիշ կնիկ մը չտեսնենք կամ անորմէ արժանաւորագոյնի
չպատահինք չենք թողուր զան . բայց երբ ասիկա զգաստ ու անմեղ
կուսի մը հետ զուգահաւասարի , որնոր առանց իւր սիրահարին ա-
նունը իմանալու ինքզինքը անոր չյանձնէր , որնոր ընտանիքի սրաշա-
պանութեան տակ մեծցած ու կրօնի սկզբանց մէջ կրթուած է , որ
իբեն համար անձանօթ իրին խոստումները ու հրապոյրը և հոգւոյ
ու մարմնոյ կուսութեան անընդդիմակ միտումը պիտի ունենայ , ա-
ռաջին կինը քայլը երկրորդին շնորհելու կը հարկադրի . քանզի
էրիկ մարդուն սիրտը երկուքին մէջտեղը չվարանիր այն օրը՝ երբ
Արևածաղկի պէս երկու տարի մէկուն հետ կենակցեցէն ետքը , միւ-
սին հետ յախտեան ապրելու յոյս ունենայ :

Ասիկա երեսէ ձգուած կնկան համար տխուր է , բայց սովորու-
թիւնն է որ սրտին այս յօժարութիւնը կը նուիրագործէ , որուն
շաա մարդիկ կը հնազանդին քանի որ կենաց մէջ յառաջանան , և
սովորութիւնը միանգամայն ցուցըցած է որ այս խեղճ լքեալները
վերջապէս համբերելու կը զիջանին , կը մոխթարուին ու ստէպ օր
մը կ'ըսեն .

« Այս այսպէս ըլլալը աւելի աղէկ է : »

Սակայն տարփուհոյ մը սէրը երբեմն տեսակ մը իրականութիւն-
ներ ունի որ ուրիշ ամեն սէրէ զօրաւոր կ'ըլլայ , մանաւանդ երբ
տարփուհին Նիշէթի պէս նորատի , զեզանի և Ֆիզիզական առա-
ւելութիւններով ճոխացած ըլլայ : Դժբաղդաբար այս իրականու-
թեանց մարմնական խոնջ մը կը յաջորդէ , ինչ ատեն սիրտը ա-
ռիթ գտնելով իւր դուռը կը բանայ այն միւս սիրոյ որ տակաւին
ցնորից ու խոստման վիճակին մէջ կը գեղերի : Երկուքին մէջտե-
ղը կեցած՝ անատեն մարդս իր նախամեծարութիւնը վերջինին կու-
տայ . քանզի առաջինէն խնդրելու բան մը չունի և երկրորդէն ա-
մեն ինչ կը յուսայ :

Ո՛վ երբէք կին մը բազկաց մէջ բռնած ստեն ուրիշ կնոջ մը վրայ մտածած չէ : Այս բանիս մէջ անդամ սիրտը այնքան պահանջող է , որ ինքնասէր ու անարգար կ'ըլլայ : Աշարկեաններ կար , աննկարացրելի վայրկեաններ որ երբ Նիշէթ Կիւսթավի բազկացը մէջ իւր սրաին բոլոր ծաւալումները անոր առջև կը հեղուր ու սիրահարին համբոյրներուն ներքև կը դողդոջար , Կիւսթավ կը կարծէր որ այս չքնաղ մարմինը Լօրանսինն էր և խեղճ Նիշէթ իւր անմտութեան մէջ կ'ըսէր . « Կարծես թէ Կիւսթավ զիս այսօրուան պէս երբէք սիրած չէ : » Խեղճ աղջիկը եթէ զիսնար թէ ինչ բանի կը պարտաւորէր այս զրկախառնութեանց աշխուժութիւնը , շատ պիտի լար :

Սակայն , քանի ժամը կը մօտենար որ Կիւսթավ յախտեան Նիշէթէ պիտի բաժնուէր , այնքան իր երիտասարդական յիշատակները իրենց քաղցր ժպիտով կ'երևէին ու կ'ըսէին « Մեզի հետ կեցիր : »

Անգամ մը Նիշէթի բացակայութեան ժամանակ անոր սունը եկա : Բանալին առնելով վեր ելաւ և մինչև անոր գալը բնակարանին մէջի ամեն իրերը աչքէ անցուց : Հոն բոլոր իւր տուածները տեսաւ և այս պարզկները ըրած ժամանակուան պարագաները միտքը բերաւ :

« Խեղճ պղտիկ , ըսաւ իւրովի արձանները և պզտի նկարները զննելով՝ որոնցմով սենեակը զարդարեր էր , ինձմէ առածներուն վրայ ինչ ինչով կը տանի : . . . Ահա այն սակաւաղին գոհարները , որոնք միայն հաճեցաւ ընդունելու և իմ հետս գուրս ելած ժամանակ կը դուրս : Ահա իմ պատկերս որ անկողնոյն խորը վարպոյրներուն ետին պահեր է , որպէս զի իւր սունը եկող անձանց առջև զիս պախարակելի չընէ : Բարի Նիշէթ : Օր մը այս ամենը արտասուալի աչօք պիտի նայի որոնց այժմ կը ժպտի և զինքը ձգող մարդը պիտի յիշէ՝ որ ուրիշ կին մը պիտի սիրէ : Այս ամենուն տեսքը զինքը աւելի պիտի առանձնացնեն , քանզի գրեթէ արդեւ մը պիտի ըլլան իմ վրայ չգտածը ուրիշ մարդէ մը ինդրելու :

Եւ Կիւսթավ երբ այսպէս կը մտածէր , գուցէ կ'ուզէր սրտին

խորը աւելի զորաւոր պատճառ մը դսնել հոն կենալու համար . բայց միշտ ապագային՝ Լօրանսի միակ անուան մէջ իրեն տուած խոստումները մեկնելու կը յորդորէին . այսու ամենայնիւ Նիշէթի համար ալ արցունք կը թափէր այն մօր պէս՝ որ երկու զաւակ կ'ունենայ և մէկը կորսնցընելով անոր մահուան վրայ լացած ժամանակ միւսին համբոյրներուն կը ժպտի ու վերջապէս կը միթարուի :

Արդ Կիւսթավ հոն Նիշէթի սենեկի մէջ տեղն էր աչքերը տամուկ , երբ երիտասարդուհին ներս մտաւ առանց լսուելու կամացուկ մը գնաց իւր շնորհալի զլուխը սիրահարին ուսին վրայ դրաւ : Կիւսթավ մէկէն ետին դարձաւ և Նիշէթի շրթանց վրայ ժպիտ մը ու համբոյր մը գտաւ :

— Ի՞նչ ունիս , ըսաւ , քանզի Կիւսթավ չէր կրցած յուզմունքը ծածկել :

— Բան մը չունիմ , բարի Նիշէթս , պատասխանեց Կիւսթավ իւր բազկացը մէջ առնելով զան , քեզմէ բաժնուելուս համար քիչ մը տրտում եմ :

— Ուրեմն պիտի մեկնիս անպատճառ :

— Այո :

— Նիսէն լուր առի՞ր :

— Այս առտու նամակ մ'առի :

— Միթէ Լամօն աւելի գէշ է :

— Չէ , բայց աղէկ ալ չէ , և խեղճ տղան կ'ուզէ զիս իր քովը ունենալ . հիւանդներուն ամեն կամքը կատարել պէտք է :

— Կիւսթավ , ըսաւ Նիշէթ . . . աղերսալի ձայնով մը :

— Ի՞նչ կ'ուզես :

— Եթէ զիս սիրէ իր , բան մը կ'ընէ իր :

— Ըսէ :

— Բայց չպիտի ուզես :

— Ըսէ նայինք և եթէ կարելի է կ'ընեմ :

— Ո՛հ , ասիկա կարելիէն ալ աւելի է , զիւրին իսկ է :

— Խօսէ՛ տրեմն :

— Զիս հետդ տար :

— Երբ այդ բանին համար ինձ գրեք էիր , սիրելիս , հոն գալուդ արգիլող բոլոր պատճառները տուի քեզ :

— Այսպէս , չե՞ս ուզեր :

— Չէ , պատասխանեց կամայակ մը Կիւսթավ :

— Քեզի հետ չե՞մ բնակիր , կրկնեց իբր թէ այս պատճառը իւր սիրահարին վրայ ազդեցութիւն ընէր . նա պատասխան չտուաւ : Ան ատեն Նիշէթ կարծելով թէ միտքը ըրած է շարունակեց .

— Նիսի մէջ փոքրիկ բնակարան մը կը վարձեմ . մարդ մը չդիտար իմ ուլ ու հոն ըլլալս : Տիկին տը Բեթէօ և Էտմօն իսկ չպիտի գիտնան : Երբեմն երբեմն կու գաս զիս տեսնելու , այն միջոցին որ փողոցները ամայի են , իրիկունը , և ես շատ գոհ պիտի ըլլամ , քանզի Բարիզ խիստ տխուր է ինձ համար երբ դուն հոս չես :

— Շուտ պիտի դամ , սիրուն Նիշէթս , կրկնեց Կիւսթավ , և ալ չենք բաժնուիր :

— Ինչպէս որ կ'ուզես : Գու տէրն ես , ըսաւ նորատի աղջիկը աչքերը սրբելով : Երբ պիտի մեկնիս :

— Հինգ կամ վեց օրէն :

— Կ'ուզեն որ մինչև Շալօն տանիմ քեզ որպէս զի աւելի երկար հետդ ըլլամ :

— Լաւ , մինչև հոն եկուր , պատասխանեց Տօմօն ուրախանալով որ խեղճ աղջկան բան մը կրցաւ շնորհել :

— Ո՛հ , ինչ բարի ես . . . ըսաւ անոր վիզը պլըռելով :

Եւ ուրախութենէն ցաթկեց :

Կիւսթավ Բարիզ գալէն 'ի վեր Նիշէթի համար այնպէս էր , ինչպէս հայր մը իւր սրբույն համար որ գպրոց պիտի դնէ , ուր տղան պիտի ձանձրանայ : Ինչ հաճոյք որ կրնար տալ կու տար անոր , ըսելով թէ « Գոնէ քիչ մը գուարճանայ : »

Այս միջոցին Էտմօնէ նամակ մը ընկալաւ . քանզի ինչպէս որ յայտնի է Կիւսթավի Նիսէն նամակ ընդունեցի ըսելը պատրուակ մ'էր միայն , մարդ մը իրեն գրած չէր :

Ահա մեր հիւանդին գրածը .

« Տակաւին խիստ տկար եմ , սիրելի բարեկամս , բայց քեզի քանի մը սող գրելու զօրութիւն կը գտնամ : Նախ իմ վրայօք շուտ մը լննցընելու համար , քիչ մը աւելի աղէկ եմ և այս աղէկութիւնը երթալով կ'աւելնայ :

« Մայրս պատմեց ձեր մէջ եղած խօսակցութիւնը և քու մեկնելուդ պատճառը հասկըցուց : Անմիջապէս այն խեղճ , բարի ու անձնուէր Նիշէթի վրայ մտածեցի որուն այնքան լաւ օրեր կը պարտաւորինք : Ետքը խորհեցայ , և որովհետև գալու վայրկեանդ կը մօտենայ եթէ գաս , ուզեցի խրատ մը տալ քեզ : Գիտես որ Նիշէթ թը բոլոր սրտանց կը սիրեմ . բայց գիտես նաև որ քեզ կրկնապատիկ կը սիրեմ և ասիկա խիստ բնական է : Ուստի չեմ վարանիր խրատ տալու , որ ըստ իմ կարծեաց կրնայ քեզ երջանիկ ընել թէև Նիշէթի վիշտ մը պատճառէ : . . . Ամեն բանէ առաջ քու երջանկութիւնդ . . . Արդ կարծեմ սիրելի Կիւսթավս որ քու երջանկութիւնդ օրիորդ տը Մօրթօնի ձեռաց մէջն է : Քեզ կը պարտաւորիմ Անթօնիւր , դու Լօրանսը ինձ չպիտի պարտաւորիս , բայց գոնէ պարտքս կատարած պիտի ըլլամ քու վարանութեանդ փարատելով , եթէ խախտին ունիս :

« Լօրանս կը սիրէ զքեզ և շատ , քանզի ստեպ քու վրայ կը խօսի և քեզի համար ունեցած համակրութիւնը իւր խօսքերու մէջէն դուրս կը ցայտէ : . . . Արդ երջանկութիւնը հոն է , ուր որ սէր կայ : . . .

« Իւր հայրն ու մայրը պատուական անձինք են ու կորսնցուցածներուդ տեղը պիտի բռնեն : Երջանկութիւնը հոն է , ուր որ ընտանիք կայ : . . . Լօրանս անմեղութեան ու զեղեցկութեան հրեշտակ մ'է , ձևակերպելու բոլորովին նոր հողի մ'է , նուաճելու կոյս դրախտ մ'է : Երջանկութիւնը ուրեմն հոն է , ուր որ կրօնք , անմեղութիւն ու ապագայ կայ :

« Ամուսնացիք օրիորդ տը Մօրթօնի հետ :

« Բայց Նիշէթի համար ամեն պէտք եղածը ըրէ : Քու տեղը բան մը պիտի չպահէի իրմէ : Գրով յայտնելու տեղ ամեն ինչ ես ինքնին պիտի խոստովանէի . քու զխաւորութիւնդ ալ անշուշտ

այս է : Ողջամբտ աղջիկ մ'է նա . հարկաւ դիտէ որ քու միութիւնդ յախտեանական չէր կրնար ըլլալ և կարծեմ որ եթէ այս խոստովանութիւնը բնեւ՝ քու իրեն վրայ ունեցած վստահութենէդ շնորհակալ պիտի ըլլայ : Բարեբաւ է նորա ապագան , այս բանս պատուիրելու թէև հարկ չկայ , բայց այնպէս մը բարւոյք որ այս ապագան անոր համար զբօսանք մը ըլլայ : Պզտի խանութ մի դնէ անոր . ասկէ զատ նոտարի մը քով քիչ մը ստակ զիր , որպէս զի եթէ իւր ձեռնարկութեան մէջ չյաջողի ան գործածէ : Գիտես որ հիւանդ մը ձերունոյ մը պէս իրաւունք ունի խօսելու : Այս ամենը գրեթէ Լօրանսի հազորդեցի , որ երկար բացակայութեանդ վրայ կը զարմանար : Իրօք ալ թող թերդ առնելու համար մէկ ամիս պէտք չէր և քու մեկնիլդ ամիս մը մօտ է : Ըսի իրեն որ Բարիզի մէջ երկարիլդ անշուշտ այս ըսածներս կարողի դնելու համար էր : Պատասխանեց թէ իրաւունք ունէիր այսպէս ընելու և թէ այս բանս ազնուախոհ սրտի մը ու պարկեշտ մարդու գործն է : Ար հասկընաս որ այս դաղանիքը եթէ հազորդեցի անոր՝ օրիորդ տը Մօրթօնի պատասխանին վրայ վստահ էի : Բայց շուտ բրէ եկուր , քանզի եթէ Լօրանս Նիշէթի ապագան ապահովցնելուդ համար Բարիզ կենալդ ընդունի , երբէք չպիտի հաճի որ մեր խեղճ բարեկամուհւոյն սիրոյն համար կենաս . այս կասկածը անշուշտ պիտի ընէ եթէ շուտ չվերադառնաս : Անհատապի է թէ ինչ գիւրութեամբ երիտասարդուհիք սրտի նրբութիւնները կ'ըմբռնեն որ ստէպ կարգուենէն ետքը ալ ևս չեն ընդունիր : »

Այս նամակը Արևթավի վերջին վարանքները ցրուեց , բայց իւր ամուսնութեան խոստովանութիւնը Նիշէթի ընելու բնաւ չկրցաւ հաւանիլ : Այլ կրցածին չափ այն վայրկեանը հեռացընել ուզեց և ասիկա տարփուհւոյն սիրոյն համար և որպէս զի նորա իրեն հետ ընկերանալու ուրախութիւնը չթունաւորէ :

« Զէ , ըսաւ իւրովի , այս բանս թող հեռաւորութեանս ատեն իմանայ : Զեմ ուղեր որ իմ հետս անցուցած ժամանակը յիշելով անոր մէջ ցաւալի վայրկեանս մը դտնէ : Ա՛ ուզեմ որ իրեն վիշտ պատ-

ճառել ինայելուս համար շնորհակալ ըլլայ և այս բանիս մէջն ալ սիրոյս յետին ցոյց մը տեսնէ : Գէշ լուր մը տալու միշտ ժամանակ կայ , ապա ո՞վ գիտէ եթէ իւր արցունքները զիս չարդիւնէ , և Էտմօն իրաւունք ունի , երջանկութիւնս հաստատադէս հոն է , քանզի կ'զգամ որ սիրտս ալ արդէն հոն է : »

Այնպիսի իրողութիւններ կան որ զժբաղդաբար՝ ուրիշ կնկան մը համար լքեալ սիրուհոյ մը չըսուիր , քանզի սէրը միջին հաշիւ չընդունիր և սակայն օր կու գայ որ այս բաները ստէպ իրականութիւն կ'ստանան . այս այն ատենը կ'ըլլայ երբ տպաւորութիւնները կը փոխուին և անոնք որ իրար կը սիրէին կրնան քովէ քովանցնիլ առանց սրտերնուն մէջ ուրիշ զգացում մը արթննալու՝ բայց եթէ յիշողութիւնը՝ այն մարած զգացմանց ջերմ մոխիրը : Եթէ երկար ատեն մէկը իւր սրտին խորը որոնելէն յետոյ որոշապէս տեսնէ որ սիրած կնկան համար զորով մը չէ մտայեց հոն , այլ ուրիշի մը համար կ'սկսի համակրութիւն զգալ . եթէ համարձակապէս իւր զգացմանց ցրտութեան խոստովանութիւնը առաջին կնկան կարենայ ընել ու զան անմիջապէս համակրութեան կլիմային տակ բերելով նորա սէրը անձուէր ու սուրբ բարեկամութեան փոխելու զօրութիւնը եթէ ունենայ՝ մարդկային սիրտը մեծ քայլ մը ըրած կ'ըլլայ այն ժամանակ : Գժբաղդաբար այս բանս միայն ընտրեալ սրտերու համար կարելի է , որոնց նախ ինքնասիրութիւնը և ապա ինքականութիւնը իրենց ցաւը ծածկելու ու զան անցելոյն վրայէն թօթափելու զօրութիւնը կու տան :

Ասիկա Նիշէթի համար անկարելի էր որ հեծկտանքներով Արևթավի ծնկացը պիտի փարէր :

Սակայն վերջ մը տալ պէտք էր :

Արևթավ Իիլիին տը Բէրէօի գրեց , որ իւր նամակին երկրորդ օրը իրենց քովը պիտի ըլլար : Ասիկա ինչպէս որ կը յիշեն՝ ըսել էր «Օրիորդ տը Մօրթօնի ձեռքը կը խնդրեմ» :

Նոյն իրիկունը իսկ Նիշէթի հետ Շալօն կը մեկնէին :

Տարփուհին որ երբէք ճամբորդութիւն ըրած չէր սրանչացած կերեէր : Ամեն ինչ կ'զմայլեցընէին զինքը :

Ողորմելի աղջիկը չէր կասկածեր բնաւ որ այս ուրախութեան նպատակը ինչ էր :

Առաւօտեան ժամը վեցին Կիւսթավի հետ Շալճն հասան :

Շողենաւը կէսօրին Լիօն պիտի մեկնէր :

Նիշէթ որ բոլոր ճամբան Կիւսթավի կրկնել կու տար թէ այս բաժանումը երկարատեւ չպիտի ըլլար՝ մինչև բեռերը շողենաւ տանելին բաւական զուարթ էր և մինչև շողենաւին մեկնելը Կիւսթավի քով կեցաւ :

Վերջապէս մեկնելու նշանը գրուեցաւ :

Նիշէթ Կիւսթավը համբուրելէն ետքը ծովեզրը ելաւ , որն որ աւելի երկար իւր խեղճ սիրուհին դիտելու համար նաւուն յարկին վրայ դնաց :

Շողենաւը հեռացաւ : Նիշէթ որ իւր սիրահարը չէր ուզեր տրամեցընել ժպտելով պատասխանեց .

— Քիչ ատենէն պիտի տեսնուինք , այնպէս չէ :

Կիւսթավ գլխով նշան ըրաւ , քանզի կ'ըզար որ եթէ բերանը բանար արցունքները ձայնը պիտի կտրէին :

Որչափ որ կը տեսնուէր երիտասարդուհին թաշկինակը կը շարժէր , ետքը սկսաւ շողենաւը դիտել . բայց Կիւսթավ ալ չէր տեսներ զինքը , քանզի ծովեզրին վրայ ուրիշ անձանց և ուրիշ առարկաներու հետ խառնուած էր :

« Օ՛ն , ըսաւ Նիշէթ աչքէն հոսած արցունքները սրբելով , շուտ մը պիտի գայ : »

Իւ միտքը դրաւ ալ չլալու :

Շողենաւը սնհետացաւ :

շալճ

ԻԶ

Այս գիրքը գրողը ուրիշ նպատակ չունի , բայց եթէ նկարագրել և գուցէ ներելի իսկ ընել ժամանակին և ընկերութեան մարդուս վրայ բերած այն փոփոխութիւնները . որք միշտ կը ջնջեն գրեթէ այն առաջին տեսականութիւնները , և յոյսերը՝ որ մարդս իւր վրայ յղացած էր : Կիւսթավ այս բնածին այլակերպութեանց մեկուն մէջն էր : Նա որ կը կարծէր թէ կեանքը կրնար շարունակել ինչպէս որ սկսած էր , վերջապէս զանազան զգացմանց տպաւորութիւնը ընդունեց , որք սիրտը կենաց հանդոյցին մէջ բռնելով դէպ ի նոր հորիզոններ կը տանին : Իտմօնի բարեսրտութեան տեսարանը իւր հոգին նոր գաղափարներու բացեր էր : Թէև միշտ կ'ըսէր թէ « Իտմօն գուցէ երիտասարդ պիտի մեռնի » սակայն ստիպուած էր միանգամայն խոտոտվանելու որ մեռնելէն առաջ նա այնպիսի բերկրանքներ կը ճաշակէր որ իրեն տակաւին անձանթ էին , և կը կարծէր ալ որ ասոնք աշխարհիս ամենէ քաղցր զուարճութիւններն էին , քանզի ամենէ զդաստներն են : Այս խորհրդածութիւնները իւր Բարիկ եղած ժամանակը ըրած էր ինչ ատեն Իտմօն Նիս դնաց , և ապա Անթօնիսի ամուսնոյն իրեն գրած նամակներուն մէջ նկարագրած երջանկութեան պարագաները իւր տարտամ խղճերը քաջալերեցին , որոնց դիպուածը վերջ մը պիտի տար : Լօրանս հոն նախահնամութենէ զրկուած էր և Կիւսթավ անոր վրայ իրեն համար նոր ապազայ մը տեսաւ :

Երբեմն մարդկային կերպարանափոխութիւնները ամենուն համար ինչպէս նաև Կիւսթավի , երջանիկ հետեանք մը չեն ունենար : Այս բանս մարդուս ընկերութեան մէջ իւր անցուցած առաջին տարիներուն կերպէն կախում ունի : Անոր համար է որ ստահակները ընտիր ամուսիններ և ընտանեաց բարի հայրեր կ'ըլլան և միւս կողմէն այն մարդիկը՝ որոնց սկզբունքը ու կարծիքը երաշխաւորու-

Թիւն մը կը թուէր՝ յանկարծ փոխուելով իրենց սիրտը ամեն տեսակ մոլութեանց և փտտերու կը բանան :

Ձեռք աշխատիր Ախոթավի վարսնուսները բացատրելու , այլ սրտին փափկութիւնները . քանզի ալ ևս Նիշէթի և Լօրանսի մէջ տեղը չէր վարաներ : Միայն կը հայրներ իւրով թէ այս բրածին վրայ իրաւունք ունէր : Երբեմն իւր բնութեան չարագոյն կողմը (քանզի ամեն մարդ իր մէջ չար բնագոյում մը ունի որ կենաց մեծ պարագաներու մէջ երեան կ'ենէ որուն վերջապէս կրնայ յաղթել , բայց գէտլին նիւթականութեան վրայ հաստատուած երկար ժամանակ իւր իշխանութիւնը կը պահէ) իւր բնութեան չարագոյն կողմը , կ'ըսէինք , երբեմն ականջին կը փսրտար որ Նիշէթի համար նեղուելու պէտք չունէր , թէ իրմէ առաջ ուրիշները անորմէ բաժնուելու համար այնքան տառապանք կրած չէին , թէ նա այն աղջիկներէն էր որ միշտ զո՛հ կ'ըլլան և թէ անոր վիճակը բարեւաւելով պարարէն աւելին պիտի ընէր : Ախոթավ այս վատ խորհուրդները կը վանէր , որոնցմէ ինքն իսկ կ'ամչնար . բայց անդադար մտքին մէջն էին : Այս խորհուրդները իրեն համար՝ միշտ ձեռքի աակ եղած կեղծ կշիռի մը պէս էին , որուն վերջապէս ինչ աղբիւրէ ըլլալը կը հասկընայ մարդ և օր մը չափոյ մէջ գնելով կը զարմանայ թէ ինչպէս շահած է : Արջափ ալ վեհանձն ըլլայ մէկը , շատ դժուար է իւր սրտին մտքընել տալ այն ամենը որ յիշելու պէտք ունի :

Սակայն երջանկութեան այնքան իրական ժամեր կը պարտաւորէր Նիշէթի , որ Ախոթավ ապաշնորհ մը պիտի ըլլար եթէ ոչ գոնէ իւր չորս դին իր առթելու վշտին ներողութիւններ չփնտուէր : Ան ատեն հաճութեամբ այն բարեկամներուն վրայ կը խորհէր թէ իւր վիճակին մէջ գտնուելով ինչ բրած էին : Միշտ կը գտնէր այնպիսիներ ու երթալով կը քաջալերուէր , քանզի նոքա իրեն պէս լաւ փոխարինութիւն մը բրած չէին ինչպէս որ ինք պիտի ընէր , և դարձեալ անոնց վրայ պարսաւելի խօսք մը չէր լսուած :

Այս ամենուն վրայ կը մտածէր Շաբօնէն մինչև Նիս և երբ Էսմօնի տան դիմաց հասաւ , ուր կը յուսար Լօրանսը գտնել , սիր-

տը ակնկալութեամբ բարախեց , քանզի վիշտերը ալ ևս դադրեր էին :

Ամենքն ալ սրահը դտաւ իւր մեկնելուն նախընթաց օրուան պէս և ըստ սովորութեան ընդունուեցաւ :

Էսմօնի բազկացը մէջ նետուեցաւ որ քալելու սկսեր էր : Անթօնինի ձեռքը պաղաւ և տիկին տը Բէրէօի ձեռքը սեղմեց :

Օրիորդ տը Վօրթօն անոր մտած ժամանակ կարմրելով աչքերը խոնարհեցուց : Հրամանատարը իւր կիներն ու Պ. Տըվօ կը ժպտէին իրեն :

— Օ՛ն , սիրելի պարոն Ախոթավ , ըսաւ Պ. տը Վօրթօն՝ պատանին դէպ ՚ի Լօրանս մղելով , գրկէ կիսի :

Լօրանս ճակատը երկնցուց Ախոթավի որ անոր ձեռքերը բռնեց :

— Ալ ևս Բարիդի վրայ չես մտածեր , ըսաւ կամացուկ մը :

— Արնաս հարցընել :

— Ա'երգնուս :

— Ա'երգնուս :

— Եւ երջանիկ ես :

— Այնպէս որ չեմ կարող բացատրելու :

— Հոս նայէ , տիկին տը Վօրթօն ըսաւ հրամանատարը հառաչանքով մը , միթէ այսպէս հայրդ ալ զմեզ մէկ մեկու գրկաց մէջ չնետեց քսաներկու տարի առաջ :

— Իցի՛ւ թէ ասոնք ալ քսաներկու տարի ետքը այդ խօսքը կարենան ըսել . . . պատասխանեց տիկին տը Վօրթօն խանդալատանօք երկու նշանածները նկատելով :

— Քեզմէն զո՛հ եմ , Ախոթավ , ըսաւ տիկին տը Բէրէօ Տօմօնի ձեռքը բռնելով :

— Շատ աղէկ ըրիր , ըսաւ Էսմօն կամաց մը :

Ձարմանալի բան , Ախոթավ այս ուրախութեան մէջ սիրտը կը ձմէր տեսնելով որ ոչ տիկին տը Բէրէօ և ոչ Էսմօն Նիշէթը յիշելու դիտաւորութիւն չունէին , որն որ այս տեսարանը անցած պահուն Ախոթավի կը գրէր թէ իւր մեկնէն ՚ի վեր ինչպէս կը ձանձրանար և թէ արդէն ինչպէս կը փափաքէր որ վերադառնար : Խեղճ Նիշէթ : . . .

— Ար տեսնես, սիրելի Ախւթաւ, յարեց տիկին տը Բէրէօ, խօսքս բռնեցի :

— Եւ երբ պիտի ըլլայ հարսնիքը, հարցոյ Լօրանս մօրը բազկացը մէջ նետուելով :

— Երբ որ Էամօն իմ վկաս կարենայ եկեղեցի գալ :

— Ուրեմն ութ օրէն, պատասխանեց Պ. Տըվօ և միայն այս առթիւ, քանզի տակաւին երկու ամիս տնէն դուրս պէտք չէ ելնէ :

— Յոյս ունի՞ք, բառ կամաց մը Ախւթաւ բժշկին :

— Ամեն ինչ աղէկ կ'երթայ, պատասխանեց այս վերջինը :

— Հիմայ, Ախւթաւ, ըսաւ տիկին տը Բէրէօ Տօմօնի, գնա՛ քիչ մը հանդստացիր : Ուրախութեան յաջորդող քունը քաղցր է :

Պահ մը ետքը Ախւթաւ իր սենեակը կ'երկէր ըսելով իբր թէ մտքէն անցած վերջին յիշատակները բողբոջիկն ջնջելու համար :

« Հիմա ալ այն ինդրոյն վրայ չմտածենք, ամեն ինչ լմնցաւ : »

Եւ պառկելուն պէս քնացաւ ինչպէս ըրած էր Բարիզ Նիշէթի տունը :

Ով մարդկային բնութի՛ւն :

Երբ տրթնցաւ առաւօտ էր : Պատուհանին վարպոյրը քաշելով տեսաւ որ Լօրանս Անթնիսի հետ տան պարտիզին մէջ կը շրջագայէին :

Նորատի տղջիկը անշուշտ դողտնիք կը հաղորդէր իւր դեռատի քարեկամուհւոյն : Գրեթէ ժամ մը զանոնք դիտեց առանց անոնցմէ տեսնուելու :

« Ի՞նչ գեղանի է . . . » ըսաւ :

Եւ բոլոր անդամոց վրայ սարսուռ մը զգաց :

Զգեստները առնելու համար պայտասկը բանալով Ախւթաւ այն պաշարներուն մնացորդը դտաւ, որ նախատես Նիշէթ իրեն համար հոգացեր էր : Այն նարինջներուն ու պաքսիմատի կտորուանքներուն տետրը զինքը վայրկեան մը կասեցոյց :

Նոյն միջոցին ժամը չորս կը զարնէր :

Ախւթաւ ձեռքը ճակատը տարաւ :

« Տակաւին երկու ժամ ունիմ առջևս, մտածեց : Նիշէթի դրելու ժամանակ կայ . այսօր լմնցընենք : »

Սեղանին քով նստաւ ու այս դժուարին նամակը ինչպէս սխալը քիչ մը խորհեցէն յետոյ գրեց .

« Բարի Նիշէթս, Բարիզ եկեր էի բան մը ըսելու, բայց զքեզ այնպէս երջանիկ դանելով չհամարձակեցայ խոստովանելու և հիմակ հեռաւորութենէն կը խնդրեմ այն զօրութիւնը՝ որուն պէտք ունիմ : Այսուհետեւ իրար չպիտի տեսնենք, սիրելիս : Անանքը պայմաններ ունի որ կը հասկընաս : Ինծի համար, քեզի համար վաղ կամ անապան բաժանում մը պէտք էր : Գուցէ քու աչնիւ սիրտդ յաւիտեանականութիւն մը կը յուսար որ դժբաղդաբար մարդկային իրականութեան մէջ չէ : »

« Արնայի, սիրելի Նիշէթս, քեզ խաբել ու ըսել թէ Գաղղիա յէն կը մեկնիմ, բայց լաւ կը համարիմ համարձակ ըլլալ հետոյ, քանզի քու չքնաղ սիրտդ այս բանին արժանի է : . . . Պիտի ամուսնանամ : . . . Ասիկա օր մը պիտի ըլլար : Ինծի բնասնիք մը պէտք է և ո՛վ գիտէ եթէ լաւագոյն չէ որ հիմակ բաժնուիմք, քան այնպիսի ժամանակի մը սպասենք որ առանց ցաւոյ պիտի կըրնանք իրարմէ հեռանալ : Ար յիշես որ ստէպ իմ ամուսնութեանս հաւանականութեան վրայ խօսած ատենդ կ'ըսէիր թէ սիրով պիտի համբերես : Արդ կը ներես ինձ քու կանխազգուսնեցող իրաւունք տալուս : »

Ախւթաւ դժուարաւ կը գտնէր իւր վարքը անբասիր հանելու կարեւոր բառերը, քանզի կը հասկընար թէ ինչ ալ ըսէր ինդճ աղջկան առջև անիրաւ պիտի երևէր : Ուստի վերջի տողէն ետքը յանկարծ Նիշէթի ապագան բարելաւելու միջոցներուն անցաւ, քանզի իրեն կը թուէր թէ այս բաժանման մեծ կարեւորութիւն չտալով ողորմելի աղջկան ցաւը կերպով մը կը թեթեւցընէր :

Ուստի շարունակեց .

« Բայց կ'ուզեմ որ երջանիկ ըլլաս, որուն համար ամեն բան

կարգադրած եմ: Նորատի ես ու զեղանի, մեծ ապաղայ մ'ունիս առջևդ: Անշուշտ պարկեշտ մարդ մը պիտի գտնես որ սրտիդ բարեմասնութիւնները ճանչնայ ու անցեւոյդ զաղտնիքը չլինտուէ: Այս բանիս համար պէտք է որ անկախ վիճակ մը ունենաս, և ահա ինչ ըրի: Նոտարիս գրեցի որ երկու հազար հինգ հարիւր ֆրանք եկամուտի յետկար մը բերէ քեզ որով միշտ ուղածդ պիտի ունենաս, և տասը հազար ֆրանքի գումար մ'ալ որով կը խրատեմօրիորդ Շարլօթ Թուսէնի հետ ընկերանաս: Եթէ իմ յառաջատեսութեանս հակառակ այս ըրածս օր մը անբաւական ըլլայ քեզ, ինձմէ զատ չեմ ուզեր որ ուրիշի գիմես: Այս լուրը առնելուդ պէս գիտեմ, իմ բարի Նիշէթս, որ մեծ վիշտ պիտի կրես, քանզի ճշմարտիւ կը սիրես զիս. բայց համոզուած եմ որ քեզի համար տակաւին երջանիկ օրեր կան եթէ քիչ մը արիութիւն ունենաս:

«Տող մը գիր պիտի գրես ինձ, այնպէս չէ՞, ըսելու համար թէ կը ներես ինձ և ընծայածս կ'ուզես ընդունիլ մեր սիրոյն յիշատակ: Գուցէ օր մը դժբաղդ ըլլամ, եթէ այս պատահի քեզմէ պիտի գամ միթիթարութիւն փնտռելու:

«Ողջ լեր, սիրուն զաւակ, յախտեան անձնուէր բարեկամի մը յաւերժական գորովով կը գրկեմ զքեզ, որ կը սիրէ ու ազնիւ սիրագ կը յարդէ:

«ԿԻՒՍԹԱՎ ՏՕՄՕՆ»

Կիւսթավ գրելու ատեն քանի մ'անգամ աչքերը լեցուեցան, բայց չուզեց իւր բոլոր յուզմունքը նամակին մէջ յայտնել: Պատճառը դիւրաւ կը հասկցուի: Պէտք էր որ այս նամակը լուրջ ու նաեւ ցուրտ կողմ մը ունենար, որ սաստիկ հարուած մը տալէն ետքը անմիջապէս համբերութիւն շնորհէր անոր որուն ուզուած էր:

Կիւսթավ նաեւ իւր նոտարին գրեց որ Նիսէն իւր առաջին նամակը ընդունելուն պէս Նիշէթին տունը վազէ և որոշեալ գումարը հատուցանէ: Չէր ուզեր որ Նիշէթ այս ընծան ընդունելու հա-

մար նեղուէր. քանզի եթէ իբր ողորմութիւն երթալ խնդրել պէտք ըլլար պիտի մերժէր նա անշուշտ:

Այս նամակը գրկելէն երեք օր ետքը, Կիւսթավ Նիշէթի իւր Նիս հասած օրունս դրածը ընդունեց: Հէք աղջիկը երբեք չէր կասկածեր զան գրած ատեն, թէ պատասխան մը առնելէն առաջ իւր և սիրահարին մէջ ամեն ինչ պիտի լինար:

Այս նամակը ակնկալութեամբ ու խորհրդով լի էր: . . .

Հարսանեկան պատրաստութիւնները կը կատարուէին, ծանուցումները հրատարակուէր էին: Նոյն օրը որ արարողութիւնը տեսնելու պիտի ունենար, Կիւսթավ Նիշէթի պատասխանը ընկալաւ: Պահ մը զան անմիջապէս բանալու վարանեցաւ և ուզեց քանի մը օրէն ետքը թողուլ ընթերցումը. բայց չկրցաւ անոր պարունակութիւնը զիմնալու փափաքն զիմանալ և բացաւ. շատ պարզ էր: Ահա ինչ կ'ըսէր:

«Նամակիդ ինձ ազլած առաջին տպաւորութեան ներքեւ չուզեցի պատասխան տալ քեզ, Կիւսթավ, քանզի նախ կարծեցի թէ խենթեցայ և վախցայ որ վերջին խօսքերուդ պատասխանելու ինձ տուած արածութիւնդ շարաշար չգործածեմ՝ գանդատներ ընելով: Զարմանցմամբ չորս դիւ կը նայէի, որոնց մէջ տեղն էի գու քանի մ'օր առաջ և կարծես թէ այն առարկաները նամակդ սուտ կը հանէին: Բայց գիրդ խիստ ճշմարիտ էր: Շատ լայի, Կիւսթավ, այս օր քիչ մ'աւելի խողալ ըլլալով, քեզ կը գրեմ:

«Ուրեմն չեմ յանդիմաներ քեզ, մանաւանդ թէ ինչ իրաւունք ունիմ, իմ վշտերով չեմ ձանձրացընէր քեզ, քանզի անողու է: Այդ ըրածդ շատ անգամ մտածեր էի որ պիտի ընես, միայն թէ չէի կարծեր թէ այսչափ շուտ ըլլար:

«Շատ կը սիրէի քեզ:

«Երջանիկ եղիք, բարեկամ, սրտիս ամեն անձկայրեաց իղձն է այս և օր պիտի չանցնի որ քեզի համար չարութեմ:

«Գու բաղձանքներդ պիտի կատարուին: Շարլօթի հետ Թուր պիտի երթամ: Երտունք ունիս նա պիտի զբօսցընէ զիս, բայց շատ

տաժանելի պիտի ըլլայ այս պղտի բնակարանէն մեկնիլ ուր երկու աղւոր տարիներ անցուցեր եմ :

«Աւերջապէս թող քու կամքդ ըլլայ, Աիւսթալ, ու կինդ իմ սիրածիս չափ սիրէ քեզ, այս է երկնքէն բոլոր խնդրածս :

«Այս նամակին մէջ վերջին վարդենիին քանի մը տերեւները կը դնեմ որ քեզի հետ ըրած ծանօթութեանս աւանդութիւնը կը պահէ : Ասիկա յետին յիշատակ մ'է :

«Գուցէ տակաւին երջանիկ ըլլամ. այսու ամենայնիւ ըրածիդ վրայ մի ցաւիր :

«Նօտարդ տունէս կը մեկնի . շնորհակալ եմ :

«Ողջ լեր՝, Աիւսթալ, ձեռքդ կը սեղմմի բըբ լաւ բարեկամի մը :

«ՆԻՇԷԹ :»

«Որչափ ցաւ կրած ըլլալու է այս պարզ նամակը գրելէն առաջ, մըմուաց Աիւսթալ :

Իրօք Նիշէթ շատ վշտացած էր :

Ինքն իսկ Աիւսթալ չէր կրնար իր յուզմունքը զսպել : Նախ ուղեց ընդունած նամակը պատուել վախնալով որ մէկու մը ձեռք չանցնի . բայց բնական աւելորդապաշտութեամբ մը պահեց զան և վարդենիին քանի մը տերեւները շրթանցը տանելէն ետքը՝ կնկանը սողօթագրքին մէջ գրաւ զանոնք :

Երկու ժամ ետքը օրիորդ տը Մօրթն տիկին Տօմօն կը կուչուէր :

Գրեթէ նոյն ժամուն քողարկուած ու աչքերը արտասուօք կարմրեցած կին մը, Բարիզէն Քուրթի ձեպընթաց կառքը կը մտնէր :

Այս կինը Նիշէթն էր :



ԻԷ

Հիմակ արդեօք Նիշէթը տանող կառքին ետեւէն երթնաք, թէ Նիսի պզտիկ եկեղեցիէն ելլող հարսնիքին :

Անձնասէրներու և շողօքորթներու պէս ընենք ու երջանիկ անձանց հետեւինք :

Աիւսթալ ալ երջանիկ էր, նմանապէս իւր շուրջը եղողները : Յուրտ քամին կը նուազէր և կէսօրուան կանխահաս արևը նորածիլ տերեւները կը բանար : Ամենուն համար դարուն էր, իսկ Էտմօնի համար կեանք :

Նիսի մէջ ամեն մարդ Էտմօնի հիւանդութիւնը լսեր էր և ամեն ոք իւր առողջութեան վրայ խնդութիւն յայտնեց : Մայրը կը շնորհաւորէին, Պ. Տըվօն կը շնորհաւորէին, և ասկէ աւելի սրտաշարժ բան չկար տեսնել այն պատանին որ տակաւին տօղոյն ու Նիհար՝ իւր նորատի ու անձնուէր կնկան կութնած՝ կ'սկսէր վերատին կեանք չնչել :

Աիւսթալի հարսնիքը Էտմօնի համար իրր երկրորդ ամուսնութիւն մը եղաւ : Իւր ամուսնութիւնը միտքը կը բերէր և Տօմօնի նշանտուքը օրհնող քահանային առջև, Էտմօն Անթօնիի կրկին խոստում մը ընել կարծեց :

Աիւսթալ Լօրանսի, տիկին տը Բէրէօ Պ. Տըվօնի քով երախտապարտ սրտերու ամենայն ջերմեռանդութեամբ կ'աղօթէին : Այս նուիրական օրը քաղցր արտասուքներով մկրտուեցաւ :

— Միայն թէ, ըսաւ բժիշկը իւր աղջկան, ամուսինդ երկու ամիս առաջ գործած անխոհեմութիւնը չկրկնէ, վախ մը չկայ . ալ փրկուած է :

Էտմօն այնուհետև նոր կեանքի մը մէջ կը մտնէր որ անվիշտ էր, քանզի անխուով պիտի ըլլար :

Ուստի սիրտն ալ ամեն բանէ կ'ախորժէր, տունէն եկեղեցի և ե-

կեղեցիէն տունը եկած ճամբուն մէջ բան մը անտարբեր չէր իրեն : Աստուծոյ բնութեան տուած գոյութիւնը և շնորհը իր վրայ կը ցոլային : Գարունը սրաին մէջն էր : Նորափթիթ ծաղկանց , որք իրենց բողբոջներուն վրայ տակաւին դողողուն առաջին բոյսը կը տեսնեն . օրուան տաքութենէն բացուող տերեւներուն , որք երկրորդ օրուան՝ զարնան վերադարձէն մեղմացած օդի մը քաղցր ջերմութենէն նոր հիւթ կ'սպասեն . վերջապէս երկրային ամեն տարեկան զուարճութեանց հետ Իտմօն իւր հողին կը բաղդատէր :

Այն տակաւին զգոյազգոյն ծաղիկները որ օր ըստ օրէ կը մեծնային ու կը հոտաւորէին , այն տերեւները որ զեռ ևս բողբոջներէին և որ քիչ ատենէն իրենց շուրջը շուք պիտի արձակէին , այն ձմեռուան աշխարհէն մեկնող զազջ շնչառութիւնը , այս ամենը ինքն էր . Աստուծոյ իրեն պարզեամբ բարեբաստութեան և քաղցր ակնկալութեանց պատկերն էր :

Անթօնի մէկ նայուածքին մէջ բոլոր այս զարնանային հրաշալիքները կը բովանդակէին , և Իտմօն կ'զգար որ սէրը՝ այն հողոյն կեանքը առողջութեան՝ մարմնական կեանքին հետ իր մէջ նորէն կը մտնէր :

Արիւնը երակայ մէջ դիւրաւ կը շրջէր : Ազատ կը շնչէր : Հաճութեամբ իւր շուրջը եղածները կը նկատէր : Արժեք թէ վաղ վատող մանկանց կըսէր . «Քիչ ատենէն պիտի կրնամ ձեզի պէս ընել ես ալ :» Իւր երջանկութիւնը ապահով էր ու առջեւէն քալելով ճամբայ կը ցուցնէր : Յաղթութեան շեփորներէ ու սրինդներէ կարապետեալ աշխարհական էր ինք : Ամեն ինչ իր մէջ ու շուրջը կ'երգէին :

Մինչև ցարդ իրեն անծանօթ եղած ձայներ կը լսէր : Իւր կնկան քով անցուցած տասը ամիսները վայրկենի մը պէս կը նուազէին ապագային իրեն խոստացած երկար տարիներուն առջև . Անթօնի համար ունեցած սէրը հիմակուան զգացածին քով բան մը չէր երևեր : Այն խոստումները կ'ընէր անոր , ինչ որ զեղանի նշանածի մը քով կ'ընեն , որն որ իւր սիրահարին տակաւին բան մը չէ շնորհած : Իտմօն սիրահարէ ալ աւելի էր : Բանաստեղծա-

կան օդի կ'եռար իր մէջ : Իւր տպաւորութիւնները նոյնահանգ տողերով հողիէն կը բղխէին և կը խոստովանէր որ բնաւ այսքան ուրախ եղած չունէր :

Իւր կեանքը սահմանեալ և ապագան երկու տարւոյ մէջ բովանդակեալ կարծել , ամեն անցած օրին ըսել . «Ահա քայլ մը մնաց դէպ 'ի գերեզման .» կանխաւ վշտանալ որ օր մը կեանքէն , երիտասարդութենէն , մօրմէն ու սիրասուն կիներ մը պիտի մեկնի և ապա մեկէն յանկարծ վերափանգնիլ և յուսալու սկսիլ . կորուսեալ նաւարեկ մը՝ մեկէն բնութեան և հոգւոյ բոլոր հրապուրանաց մէջ ծաղկալի ակունքի մը վրայ արթննալ , այս ամենը իրօք անպատում երջանկութիւն չէ և զան չխոստովանիլը ապերախտութիւն և սրբապղծութիւն չէր համարուէր :

Նիսի ճամբուն վրայի պզտի տնակը նոյն իսկ , իւր մէջ պատապարած ուրախութիւնը գուրս կը զեղուր : Պատահանները որոնց վրայ ծաղկեայ կողբներ շարուած էին կայտառութեամբ արեգական դիմաց կը բացուէին : Պատերը այժմեաներէնով ծածկուած էին և անցնող ճամբորդը չէր կնար չնկատել այս կանաչափեղկ Ջերմակ անակը , ուրկէց գրեթէ միշտ երգ մը գուրս կ'եղնէր , իբր թռչնոց բունէ մը :

Երբէք անհետած չէր միևնոյն յարկի տակ այսքան բարեբաստ անձինք : Այն բերկրութիւնները որոնց տակաւին Իտմօն յիշատակն ու յոյսը կը սածէր , Աիւսթալ իրականութեամբ կը վայելէր : Լօրանսի հետ ամուսնանալէն 'ի վեր կը զարմանար թէ զան ճանչնալէն առաջ ինչպէս կըցած էր ապրիլ : Այս դեռափթիթ , անրիծ ու վառվառն սէրը , որուն առաջին ծառայումը կը քաղէր իրեն պէս նորատի , բուստոր , խնկաւտ ու երգախառն բնութեան մը ծոյցին մէջ՝ այն զգացումները կը պարզէր իրեն որ տակաւին կը քնանային իր մէջ և մէկ բառով մը արթնցեր էին :

Ամեն անտու Աիւսթալ կնկան հետ ձի կը հեծնէր , և Անթօնի ու Իտմօն որոնց չէին կրնար տակաւին ընկերանալ , իրենց պատահանէն աչքով կը հետնէին մինչև որ նոքա ձիերուն հանած փաշխներուն մէջ աներեղթ ըլլային :

Այս ընթացանութիւնը ու երաժշտութիւնը օրուան երկու մեծ գրադմունքներն էին . Հիւլիօ , Լամարթին և տը Միւսէ սիրելի բանաստեղծներն էին , Շուպեր , Ուէպեր և Սկիւսո ընտրեալ երանժիշտներն էին :

Երբեմն Լօրանս իւր յտակ և երերուն ձայնովն մեր երեք բանաստեղծներուն թախծալի խորհրդածութիւններէն մին կը կարդար . երբեմն Անթօնին իւր քաղցր ու սրտաուշ ձայնովն Սէրէնոս կամ Լը Ֆիւ Դը Լա Ալէքսէ կոչուած՝ այն պարզ մեղեգին կ'երդէր որ քրտաղին երդի մը պէս աղեխարշ ու եկեղեցական երգի մը պէս պարզ է :

Այս ամենը Էտմօնի անպատում հիացում կը պատճառէին . իւր զգայմանց այնպէս լաւ կը համապատասխանէին , սէրն ու հաստքը այնպէս ճշմարիտ էին իր մէջ , կրօնական կամ սիրահարական մեղեգին երիտասարդին հոգւոյն մէջ այնպէս շուտ քոյր մը կը գտնէր , որ իւր կենաց այս խաղաղ անջրպետին մէջ կը կարծէր թէ յաւիտենականութիւն մը ունէր ապրելու :

Անթօնին և Լօրանս սերտ բարեկամութեամբ իրարու կապուած էին : Մէկ մէկու սրտակիցներն եղեր էին : Երկու նոր հարս աղջիկներ այնքան ըսելիքներ կ'ունենան երբ իրարու վրայ վստահ ըլլան , երբ իրենց սիրտը յարմարած ըլլալ , երբ իրենց սէրը ամբիժ է :

Անոնց երեկոյեան խօսակցութիւններէն և զգացած նորանոր սպաւորութեանց պարզ պատմութիւնէն աւելի սքանչելի բան չկար :

Անթօնին Լօրանսի կը պատմէր Էտմօնի հետ ծանօթանալը , անոր հիւանդութեան վրայ զգացած քաղցր դորովը , իւր և երիտասարդին պատահման մէջ Նախաինամական աղբ մը տեսնել կարծելը , որ հիւանդին ապաղան և նորա երջանկութեան պատասխանասուութիւնը իւր ձեռաց մէջ կը դնէր :

— Բու ամուսինդ կարգադրեց այս ամենը , Լօրանս , կ'ըսէր Անթօնին , անկա էր որ անմիջապէս Էտմօնի ըլլալու որոշումն ընել տուաւ ինձ : Երեսմովի կը պարտաւորիմ ամուսնութիւնս : . . . Խեղճ Էտմօն , տակաւին չէի գիտէր թէ կը սիրէի զինքը , բաւ մը

լուսաւորեց զիս և հիմա Աստուծմէ շնորհակալ եմ ըրածիս վրայ : Կը հասկընաս , նա որ երկու տարի ունէր միայն ապրելու , նա որուն հետ այն աղետալի համոզմամբ ամուսնացայ թէ քիչ ատենէն զիս այրի պիտի ձգէր , ահա փրկուած է , ահա ուրիշներուն ապագան մերն է , ահա երկար տարիներ մեզ կը խոստացուին և նոր հորիզոն մը կը բացուի մեզ : Երկուքնիս ալ գեռատի , հարուստ , առջի օրուան պէս՝ գուցէ աւելի ալ զիրար սիրելով , ձեզի պէս բարեկամներով , իմ հօրս պէս հայրով մը , տիկին տը Բէրէօի պէս մայրով մը ուրիշ ինչ կրնանք մաղթել և ինչ բանէ կրնանք երկնչել :

— Իրօք ոչինչ , պառասխանեց Լօրանս :

— Ուստի չենք բաժնուիր իրարմէ , մէկ ընտանիք մը միայն կը կազմենք : Կը հաճին : Մեր ամուսինները երկու եղբայրներու պէս մեկզմէկ կը սիրեն :

— Մենք ալ երկու քոյրերու պէս պիտի սիրուինք , ընդմիջեց տիկին Տօմօն Անթօնինը գրկելով :

— Այս քաղքէն կը մեկնինք , շարունակեց այս վերջինը , Պ . և տիկին տը Մօրթօն փոփոխութիւնը կը սիրեն : Ճամբորդութիւն ընելու արգելք մը չունինք , ծիծիւնիկներուն ետեւէն կ'երթանք ու ամեն տեղ երջանիկ կ'ըլլանք :

Ստէպ տիկին տը Բէրէօ ալ այս խօսակցութեանց կը մասնակցէր և սուրբ մայրը՝ որուն կեանքը որդւոյն կեանքին մէջն էր , ուրիշ բան չէր ուզեր բայց միայն անորմէ չհեռանալ , քանզի քաջ գիտէր որ անոր եղած տեղն էր իւր երջանկութիւնը :

Պ . Տըվօ Էտմօնի վրայ զարմանալի բժշկութիւն մը ըրած էր :

Հիւանդին վիճակը օրէ օր երևութապէս կը բարւոքէր , այտերը կը կարմրէին , ջերմը անհետացած , քունը անխուով էր : Մտքին վրայ միայն քիչ մը թախծութիւն կը տեսնուէր , ջնջուած ախտին վերջին նշանը :

Չօրս ամիս էր Պ . Տըվօի՝ Նիս գալը երբ օր մը Էտմօնի ըսաւ .

— Հիմակ դու բժշկուեցար . ես միւս հիւանդներուս քով կը վերադառնամ , որոնք քեզի համար թողուցի :

Էամօն և Անթօնին իրարու երես նայեցան :

— Ալ երկուը չկայ, հարցուց նորատի կինը :

— Ոչինչ, կը կրկնեմ :

— Էամօն Բարիդի օդէն վախ չունի :

— Չէ :

— Ուրեմն ինչո՞ւ քու հետը չպիտի գանք :

— Ատիկա մեծ հաճութիւն պիտի պատճառէ ինձ, զաւակներս :

— Ոչ մեք, ոչ Ախաթալ, ոչ իւր կինը. քեզմէն չբաժնուելու արդելք մը ունինք, ըսաւ Էամօն բժշկին ձեռքը բռնելով, այս բաժանումը դուցէ մեզ դժբաղդութիւն մը բերէ :

— Ուստի միատեղ մեկնինք :

— Այո, կը փափարիմ մեր պզտի սենեակը տեսնել, ըսաւ Անթօնին ամուսնոյն վիզը նետուելով, այն սենեակը ուր այնքան զիւրար սիրած ենք և ուր առկալին պիտի սիրուինք, այնպէս չէ :

Համբոյր մը այս խօսքերուն պատասխանեց :

Որոշեցին որ Ախաթալ և Լօրանս եթէ կարելի էր նոյն տան մէջ բնակէին. իսկ եթէ ոչ, Էամօնի և Անթօնին փողոցին մէջ, և թէ Բարիդ ալ Նիսի պէս իրարմէ պիտի չբաժնուէին :

Հուտ մը մեկնելու պատրաստութիւնները տեսնուեցան և քանի մը օր ետքը երկու կառք պզտիկ տան դուռը երկու ընտանիքներուն կ'սպասէին :

Անթօնին այս տեղերէն հեռանալու ատեն արցունքը չկրցաւ զսպել և Նախազգացում մ'ունէր թէ անկէց բաժնուելով իւր երջանկութեան մէկ մասը հոն կը թողուր : Բացատրելու հարկ չկայ այն ամեն յիշատակները որ հոն կը ձգէր և որ իւր մեկնելու վայրկենին կը ժպտէին իրեն :

Իսկ Լօրանս որ հօրը թափառական ճաշակը ժառանգած էր, իւր մեկնած երկրին վրայ չէր ցաւեր երբէք :

— Մայր իմ, ըսաւ կամաց մը Էամօն տիկին տը Բէրէօի, ըսէ որ Բարիդ երթալու ատենդ Թուրէն կ'ուզես անցնիլ :

— Ինչո՞ւ, հարցուց տիկին տը Բէրէօ :

— Քանզի հոն ուխտ մը ունիմ :

Տիկին տը Բէրէօ որդւոյն ուզածը ըրաւ, և Թուր հասան :

Կառքէն իջնելու ատեն Էամօն Ախաթալի ըսաւ՝ որ թէ և բան մը չէր հարցուցած սակայն դուշակած էր թէ ինչո՞ւ Էամօն Թուր կ'իջնէր :

— Նիշէթի բտելիք մը չունին :

— Չան տեսնելու պիտի երթամ :

— Այո, պէտք է որ երթամ :

— Իմ կողմէս ձեռքը սեղմէ, ահա այս է :

— Չէն ուզեր հետս գալ :

— Լաւ է որ ալ չտեսնէ դիտ :

Էամօն օրիորդ Զարլթ Թուսէնի վրայ հարցուփորձ ընելով աւետարանութիւնը գտաւ և հոն գնաց :

*** փողոցին մէջ պարզ ու սիրուն պզտի խանութ մ'էր, որուն ապրանքն էր զգալներ, աստիճաններ, աստիճաններ ու տեսակ տեսակ ժապաւէններ :

Մանեղէն առաջ Էամօն խանութին պակիներէն ներս նայեցաւ. Նիշէթ հաշտեցանքին զլուխը նազած կ'աշխատէր : Խեղճը խիստ աժգոյն էր և սև շրջապստ մը հագեր էր, իբր թէ սուգի մէջ ըլլար :

«Ի՞նչ անցքեր անցան, ըսաւ Էամօն իւրովի, զան վերջին անգամ իւր պատահանին քով աշխատելը տեսնելէս 'ի վեր : . . .» Եւ ներս մտաւ :

Նիշէթ մէկու մը մանելը լսելով զլուխը վեր վերցուց և Էամօնը ճանչնալով ճիշ մ'արձակեց :

Էամօն թեքը բաց յառաջացաւ և Նիշէթ արտասուալի աչօք անոր գրկացը մէջ նետուեցաւ :

Այս յուզումէն աւելի պերճախօս բան մը չկար :

— Ի՞նչպէս ես, Էամօն, ըսաւ Նիշէթ քիչ մը խաղաղէլէն ետքը, և հաստատապէս միտքը դրաւ որ Ախաթալի խօսքը չընէ :

— Չիս բժշկեցին, բարի Նիշէթս, փրկուեցայ :

— Աւելի աղէկ : Մ'ըջափ շնորհակալ եմ Աստուծմէ այս բանին համար : Հոս առանձին եկար :

— Անթոնինի և . . .

— Ե՛ւ, հարցուց Նիշէթ ահամայ տժգունելով:

— Եւ մօրս հետ:

Էտմօնի պատասխանին դժուար հնչումէն Նիշէթ հասկը ցաւ որ Վիւսթավ ալ կնկան հետ քաղքին մէջն էր, և թէ Էտմօն օրտէր յայտնէր եթէ գունատած չըլլար:

— Բարիզ կը վերադառնա՞ք, հարցուց Նիշէթ:

— Մէկ պահէն: Ազգեցի Թուր իջնել քեզ տեսնելու համար, բարի Նիշէթս, և ըսել թէ միշտ կը սիրեմ գքեզ:

— Օր չանցնիր որ քեզ ու քեզ ստէպ տեսած ժամանակս շփշիւմ: Միտքդ է պօսօ փողոցի մեր պզտի հայկերոյթները. իմ ամենասիրելի ժամանակս էր այն:

Եւ Նիշէթի աչքերը նորէն արտասուօք լեցուեցան: Նոյն ինքն Էտմօն իւր յուզմունքը չէր կրնար զոպել և խեղճ աղջկան ցաւը տեսնելով կը հարցընէր իւրովի թէ ինչպէս Վիւսթավի սիրտը դիմայեր էր անորմէ բաժնուելու:

— Եւ ատոր վրայ չխօսինք, ըսաւ Նիշէթ աչքերը սրբելով: Մայրդ, կինդ աղէկ են ու միշտ կը սիրեն գքեզ:

— Այո՛:

— Երջանիկ եղիք, Էտմօն, իմ ըղձալի ուխտերէս մին է այս:

— Եւ դու, Նիշէթ, երջանիկ են հոս:

— Այո՛, ըսաւ հառաչանքով մը, կրցածիս չափ: Շարքթ բարի աղջիկ մ'է, մեր փոքրիկ խանութը ճանչցուած է. այո՛, երջանիկ եմ:

Նիշէթի այս խօսքերը արտասանած կերպէն աւելի սրտաշարժ եղանակ չկար:

Բոլոր այս խօսակցութեան միջոցին անգամ մը իսկ Վիւսթավի անունը չարտասանուեցաւ. բայց եթէ նորա անունը Նիշէթի շրթանոց վրայ չէր սրտին մէջն էր:

Աը փափաքէր որ Էտմօն իւր նախկին սիրահարին խօսքը բանայ, բայց ասիկա իրեն վիշտ մը չպատճառուելու համար լռեց. քանզի երբ անգամ մը այս խօսակցութիւնը սկսուէր, Նիշէթ զինքը հարց-

ուփորձելէ պիտի չդադրէր և ուրիշ բան պիտի չիմանար բայց եթէ զինքը վշտացընելու իրողութիւններ, քանզի Վիւսթավ երջանիկ էր:

Երկու կտրքերը քաղքէն մեկնելու ատեննին կին մը քողարկուած ճամբուն վրայի առաջին ծառերուն ետին պահուրտած էր, որպէս զի կառքին մէջիններէն չտեսնուի և ինքը զանոնք տեսնէ:

— Տեսա՞ր, ըսաւ Էտմօն կամայ մը Վիւսթավի:

— Այո՛, ըսաւ յուզեալ ձայնիւ մը Վիւսթավ. Նիշէթը, այնպէս չէ:

— Շատ փոխուած է, աւա՛ղ:

— Խեղճ աղջիկ, մրմնաց Վիւսթավ:

Եւ արցունք մը սրտէն աչքը ելաւ:



Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Եթէ կը կարծես որ երիտասարդական բանաստեղծութիւնը մինչև կենաց վերջը կը տևէ.

Եթէ տակաւին քու բանդադուշանաց ծաղիկեալ ծառին ներքև կը նստիս.

Եթէ կենաց երջանկագոյն մասը միայն կ'ուզես ճանչնալ.

Եթէ կ'ուրանաս բարոյ և չարի խառնուրդը, որով բնութիւնը մարդկային սիրտը սրորած է.

Եթէ այս աշխարհի մէջ զրկողութիւն մը չես ունեցած, եթէ տաս տարի առաջ ունեցած բարեկամդ տակաւին բարեկամդ է այսօր, եթէ սիրած կինդ քեզ չէ խաբած և տակաւին նորա հետ կենակցելով անոր համար դեռ կը բաբախէ սիրտդ, եթէ անցելոյն համար տալու արցունք մը չունիս. ողորմութիւն որ այս մեծ մաշականը միշտ կ'ուզէ որ իրեն նետես.

Եթէ կը կարծես որ երբ սիրած կինը առնէ մարդ մը , ապրի , հարուստ և առողջ ըլլայ , այնուհետև հայցելու կամ ցաւելու բան մը չունենար , գոյէ այս դիրքը կարգացած վերջին գլխիգ վրայ . քեզ որ այգպէս կը մտածես խօսք մը չունիմ ըսելու , քանզի կ'ամչամ հոգեւոյդ խորը աղմուկ յարուցանել և կը թողում քեզ՝ եթէ գրքիս գիւցազնին վրայ համակրութիւն ունիս , որ իւր բժշկութեան վրայ ուրախանաս . քանզի նա արդ երջանիկ , սիրուած ու առողջ է , նա՛ որուն մահը մատով դպած էր : Բայց եթէ ընդհակառակը երկրային իրաց հմտութիւն ունիս , եթէ գիտես որ սիրտը չկրնար միշտ միևնոյն բերկրանքներով սնանիլ , ինչպէս ստամոքսը չկրնար միշտ միևնոյն կերակուրները ընդունիլ , եթէ շիրի մը բարեկամներէդ մին կ'ամփոփէ , եթէ կասկածը քու ցնորքներէդ մի քանին ջնջած է , եթէ առանց յուզուելու կ'անցնիս անոր քովէն որուն երբեմն գողալով կը նայէիր , եթէ անտարբերութեամբ կը հնչես արդէն այն անունները որոնց վանկերը քեզ կը սառսրեցընէին , միատեղ խօսինք . քանզի մէկմէկու խօսք կը հասկրնանք և ինծի պէս այս գրքին վերջին բառէն ետքը պիտի ըսես .

«Այս տխուր է , բայց ճշմարիտ է :»

Արդարև Էտմոն երջանիկ էր և երբ Բարիզ հասաւ , աշխարհին մայրաքաղաքին մէջ գժուար էր իւր վիճակէն աւելի դժ մարդ մը գտնել : Նիշէթը տեսեր էր , որուն վրայ Նիւսթավի խօսք չէր բացած այս վերջինին ամուսնութենէն ՚ի վեր՝ վախճալով որ նորա արտամութիւն չպատճառէ , բայց միշտ կը յուսար որ օր մը պիտի սեռնէր ու գրկէր լքեալ աղջիկը . քանզի երախտաղիտութիւնը Էտմոնի առաքինութիւններէն մին էր : Ուստի Թուրէն անցնելով պէտք եղածն ըրեր էր և սիրտը յուսով ճոխացած ու վշտով թեթեւացած այն սենեակը կը մտնէր , ուր Մնթոնին առաջին անգամ իրեն անձնատուր եղաւ :

Սիրոյ յիշատակները զինքը հիւրընկալեցին ներս մտած ատեն ու սկսան երգել այն ընտանի թուջոց պէս որոնց վանդակը կը բացուի : Այն ամեն առարկաները որոնցմէ բաժնուած էր այլ ևս

չտեսնելու ստուգութեամբ իրեն կը ժպտէին : Գրեթէ միևնոյն զգացումը կը կրէր երբ Նիւսթավ Նիշէթի սենեակը տեսաւ . միայն թէ բարեկամին պէս սիրած կնկան մը վիշտ պատճառելու ցար չունէր ինք , քանզի իւր սիրած կինը տակաւին կը սիրէր :

Գարանամուտ լինելը գրեթէ սրբապղծութիւն մ'է . բայց մենք հիմակ Էտմոնի ճամբան շրջանակող ծաղկալից մացառներուն ետև պիտի պահուրախէք , որպէս զի իւր կենաց ամենափոքր պարագաներն իսկ հնարիք կորզելով ՚ի նպատտ ցուրտ իրականութեան մեկնութիւն տանք : Աւելի աղէկ չէր որ նախկին առասպելախօսներու կամ ամեն ժամանակի վարդապետներու պէս ամուսնութեան վրայ կենայինք և ընթերցողին թողութիւնք որ ուզածը վարկանի , այսինքն թէ ամուսինները միշտ ֆիլէմոնի և Պօլիսի պէս պիտի սիրուին և Ֆլօրիանի գիւղացոց պէս շատ տղաք պիտի ունենան :

Ճշմարտութիւնը այս պարզ վախճանին մէջ իր հաշիւը կը գտնէ : Նեանքը երիտասարդութեան , տարին գարնան մէջն է : Պէտք է անդադար մարդոց ըսել . «Անբիւղ քալեցէք , կեանքը գեղեցիկ , անուտ , անսխալ ու անփոփոխ է :» Եթէ ճամբէ մը անցնիս ու դողերէն արդիւիս , պիտի չտրտնջաս որ այս վասնդը ճանչցողները ինչո՞ւ կանխաւ իմաց չտուին քեզ : Արդ վիպասանութիւնը հայլիէ մ'ալ աւելի է . ազգարարութիւն մ'է , որ երկու պատկերներու տակ կ'արտագրէ կեանքը , և մարդկային սիրտ կոշուած այն բարոյական Յանուսի երկու կերպարանքը կը ցուցնէ : Եթէ վիպասանութիւնը դիւթական ակնոց մ'ընելով մէջը նայողներուն կեղծ տեսիլք մը կամ սուտ բնութիւն մը ցուցընեն , այսինքն ձմեռն ալ ամառուան պէս կանաչազարդ ու տարօյն ամեն եղանակները արեգական պայծառութեամբ լուսաորուած՝ աւելի փնտասկար կ'ըլլար այն ատեն քան թէ եղելութեան զատ ուրիշ մեկնիչ չունենալով հայլիէ մը պէս իր գիմացէն անցածը արտագրէր : Ինչ բանի կը ծառայէ առաջնորդ մը , և վիպասանութիւնն ալ առաջնորդ մ'է , եթէ ասիկա գահավէժները ինձ չցուցնէ ու ոտքս ծաղկանց վրայ դնել կարծած ժամանակս չիմացընէ թէ անգունդի մը մէջ պիտի գլորիմ :

Երկայնատե երջանկութիւնը միթէ մարդկային հաւանականութեան վրայ է, տասներկու ամիսուան մէջ բնութիւնը վեց ամիս ճառագայթազուրկ և տերեաթափ չէ: Ո՞ր սրտկերահանը ճշմարտանկար ըլլալու փափաքով երբէք համարձած է մարդ մը միշտ երջանիկ ներկայացընել: Եւ ոչ մէկը: Ամենքն ալ այն աղետալի յարկին առջև զլուսն ձուած են որ մարդկային կեանքը այս երկու բառին մէջ գրած է. յոյս և վիշտ:

Սրտի, երիտասարդութեան և սիրոյ երեք այլաշրջական զբքերը ձեռք առնենք. Պող և Ախրզինէ, Աերթէր և Մանօն Լէպօ:

Ոչ Պէրնարտէն ար Սէն-Բիէր, ոչ Աէօթէ և ոչ Աբբայ Բրէվօ իրենց զբքին գիւցաղնը այն մտացածին բերրութեանց մէջ ապրեցընելու համարձակեցան: Իրենց գործին բոլոր բանաստեղծութիւնը զբթէ այն մարդուն մահտան վրայ է, որուն ապրիլը ընթերցուլը կը փափաքէր տեսնել:

Գլցուք թէ Ախրզինէ կ'ապրի ու Պողի հետ կ'ամուսնանայ, գիցուք թէ Աերթէր ինքզինքը շապանէր և Շարլօթի հետ կ'ամուսնանայ, գիցուք թէ Մանօն տէ Արիէօն չխարէր և միատեղ կը կենակցին. արդարև մեծ հրճուանք մը պիտի զգաս այս սիրուն և համակրական տիպարները տեսնելով: Բայց այս երջանկութեան ետևէն գնա և վախճանը պիտի տեսնես: . . .

Անմիջապէս պիտի հասկընաս թէ անկարելի է, և թէ մահը միայն կրնայ նուիրագործել այն նորատի սէրերը, այն խանդակաթ երազները, այն սիրապատար անուրջները որ կեանքը երկարելով ամեն փուշերէ պիտի պատուէին ու ամեն մէկ քայլի ոռնակոխ պիտի ըլլային:

Մուցիր որ երեք բանաստեղծները իրենց գիւցաղները մուցուցած են, զոցէ աչքերդ և մտքիդ մէջ փնտռէ թէ ինչ պիտի ըլլային օր մը:

Ար տեսնես Պող և Ախրզինէ այն երկու սքանչելի էակները, թարմ, նորատի, զղաստ, սիրավառ ու բանաստեղծական, կը տեսնես ծեղանալնին, այսերնուն խուռչիլը, մաղբընուն ճերմկնալը, կունակնին ծխրիլը, ակուանին թափիլը: . . .

Ար տեսնես Աերթէր և Շարլօթ, խորշմած, դեղնած, դողդոջոտ քայլերով՝ Սուվընէ-վուշան կատակերգական երկձայն նուազը կ'երգեն: . . .

Ար տեսնես Մանօն և տէ Արիէօ այն երկրային մոլեգին ու յիմար սիրոյ երկու տիպարները, կը տեսնես երկուքն ալ իրենց վարած ցանկասէր կենաց պատճառաւ, տկարութեամբ ընդարմացած դիմացէ դիմաց մեծ թիկնաթուռներու վրայ երկու հարրխոտ զառամութիւններ կը նստին: . . .

Ար տեսնես թէ կեանքն ու տարիքը ինչ ըրեր են այս սիրուն արարածները, այս երեւոյթ անուշահոտութիւնները, վառվռուն ճառագայթները, կենդանի բանաստեղծութիւնները: . . . Իրենց անցեալէն բան մը չէ մնացեր, սրտերնին խանգարուած է, մարմիննին անձանաչելի, դէմքերնին զազրալի է:

Գնա այդ ծերունիներուն քով ու երբեմն ըսած խօսքերնուն մէկ արձագանքը փնտռէ: Գուցէ խուչ են, գուցէ ալ չեն յիշեր, գուցէ կը խնդան:

Այո, եթէ ստեղծած տիպարիդ յիշատակը մտաց մէջ անարատ կ'ուզես թողուլ պէտք է զանոնք դեռատի Աստուծոյ քով զրկել, պէտք է որ անոնց կերպարանաց գրոշմը տեսնելու հաճելի ըլլայ և կենաց երջանկագոյն ժամանակը միտք բերէ, պէտք է որ նոցա անշարժ շրթունքները ժպտելով մը ընդբացուին, պէտք է որ անոնց մահը քնոյ երեւոյթ ունենայ, պէտք է որ ցնորքները իրենց սնարին քով թուշտին և նոցա խնդալով ապրելէ դադրին:

Ինչ սիրելի բանաստեղծ մը ըսած է.

Երկնային բարութիւն մ'է քսանամեայ մեռնիլը
Եւ չըզգալ երբէք մեր գեռատի օրերուն
Պերճ սրակները ճակատնուս վրայ թողալը:

Եւ իրաւունք ունէր:

Այս օրուան դրած զբքերնիս այս երեք տողերուն վրայ հաստատուած է: Եթէ սակայն քու ստեղծած զիւցաղնիդ հետ նոյնակերպիս եթէ զան դեռատի, զեղեցիկ սիրահար ու սիրելի ընէլէդ ետքը:

սիրտդ չբռնէ շուրջը եղած հաճոյից մէջ սպաննել զան, եթէ ուզես թողուլ որ շրթանց գոյցուցած զաւաթը մինչև վերջին ռամկ խմէ, եթէ զան ապրեցընելով իւր բոլոր մաղթածը տաս իրեն ու ապա զան հոն թողուս առանց ըսելու թէ ինչ եղաւ, տանն չորս կամ տանն հինգ տարեկան աղջկանց համար սքանչելի զիրք մը բրած սլիտի ըլլաս, բայց լուրջ մարդոց համար անկատար գործ մը:

Իսկ եթէ անոր ետեւէն երթաս պէտք է որ վաղ կամ անապան քիչ մը առաջուան ըսած կէտին հասնիս, քանզի շէս կրնար յիտուն տարեկան մարդուն թողուլ այն գէւթը և զգացումները որ քսան սարու սիրահարը կ'ունենայ:

Արդ, այս օրինակը ես եթէ ոչ առանց վշտի՝ գոնէ անաչառութեամբ կը ցուցընեմ. Էտմօնը ամեն տեսակ երանութեամբ, բանաստեղծութեամբ, ցնորքներով ու երիտասարդական սիրով օժտեցի, հիւանդութեամբ մը արտաւորեցի որ քսան հինգ տարեկան պիտի մեռնէր:

Մեռնելու վայրկենին երբ մայրը, կինը ու բարեկամը, այն ամեն սէրերու անձնաւորութիւնները որ մարդս կրնան պաշտպանել՝ իւր մարին քով կու լային այն քանի մ'անձանց հետ որք կը ճանչնամ մէկը չգտայ որ չըսէ, Էտմօնը մի մեռցընէր:

Այսպէս կեանքը ամեն ինչ է: . . . Ազատ շնչել, խմել, ուտել, ամեն մարմնական կարողութեանց վարժութիւն ունենալ, ահա դերագոյն բարիքը: . . . Եւ այս ամենը այն հիւանդին տալ որ մահուան դէմ կը մարտի, իրեն երջանկութիւն տալ է, մահաւանդ երբ Էտմօնի պէս իր չօրս գին աչքերը բանալով մայր մը, կին մը, բարեկամ մը, երիտասարդութիւն, հարստութիւն, վերջապէս մարդկային բարօրութեան ամեն կատարելութիւնները կը գտնէ: . . .

Լաւ: Էտմօն գրգիս մէջ իրականութեան պէս ապրեցաւ. քանզի այս պատմութիւնը հնարելու ճիգ չըրի, այլ գրեցի զան այն անձանց վրայէն իսկ օրինակելով որք շատերուն համար դեռ կ'ապրին. մի-

այն հրաման կը խնդրեմ անոնց Բարիգէն վերադառնալէն քիչ մը ետքը իրենց հետեւիլ:

Այս պատմութեամբ գէպքերէն երկու տարի ետքը, պատմութեանս մէջ երեցած ամեն անձինք Նիշէթէն զատ՝ տիկին տը Բէրէօի սեղանատան մէջ ժողովուեր կը ճաշէին:

Խարտեաչ ու վարդադոյն մանկիկ մը տասններեք կամ տասնչորս ամուս, Աիւսթավի և Լօրանսի մէջ տեղը նստած էր:

Այս օրս Անթօնիսի և Էտմօնի ամուսնութեան երրորդ տարեգարձն էր:

Այս վերջինը դրեթէ անձանաչելի էր:

Այն մեզ ծանօթ սոժոյն ու վտիտ երիտասարդին տեղ՝ երևաւ կայէ նշանաւոր վեղեցկութեամբ մարդ մը, գէր, մօրուքաւոր ու ընչացքով:

Այս այլափոխութեան տեւքը Պ. Տըվօի արտրժելի կը թուէր, քանզի իւր գործն էր:

— Է՛հ, զաւակներս, ըսաւ բժիշկը, այսօր երեք տարի է որ կարգուած էք. երեք տարուան մէջ քանի՛ գէպքեր անցան:

— Քանի՛ երջանիկ գէպքեր, պատասխանեց տիկին տը Բէրէօ իւր որդւոյն ժպտելով:

— Ատարեալ առողջութիւն, կրկնեց Պ. Տըվօ, այս բանս հարիւրին անգամ մը իսկ չըլլար: Օ՛ն, խմե՛ք Էտմօնի կենաց:

Իւրաքանչիւր կոչնական Շաճօնեայի գաւաթը վեր վերցընելով՝ ի նշան միաւորութեան իւր շրթանցը տարաւ ու յետոյ սեղանին վրայ զետեղեց:

Էտմօն իրենը ՚ի մի ումպ խմեց իբր բժշկին ըսածը հաստատելու համար:

Անթօնիսի հայրը հիացաւ այս բանին վրայ:

— Ի՛նչ երեւի գարման գոչեց նորէն: Երեք տարի առաջ այս Շաճօնեայի գաւաթը այս կերպով եթէ խմուէր երկրորդ օրը արիւն պիտի թքնէիր ու գոնէ ութ օր ջերմ պիտի ունենայիր: Այս իրիկուն ջուր խմածի պէս պիտի քնանաս: Ի՛նչ աղուոր պաշտօն է բժշկականութիւնը՝ այն յարութիւնը որ Աստուած տեսակ մը մարդ-

կան ձեռաց մէջ դրած է : Ես երբէք հիւանդ մը չեմ բժշկեր առանց քրիստոնէական յուզում մը զգալու :

— Հասցա ինծի , աօքթօր , ինծի ալ չպիտի բժշկէք , հարցուց տիկին տը Բէրէօ . Էտմօնի հիւանդութենէ 'ի վեր այնպէս սրտի ցաւեր ունիմ որ երբեմն կը հեղձամղձկիմ :

— Բժշկականութիւնը ատոր բան մը չկար ընել , պատասխանեց Պ . Տըվօ : Բարոյական ցաւը ձեզ հիւանդացուց , երջանկութիւնը պիտի բժշկէ : Երջանիկ էք :

— Ինչպէս կրնամ չըլլալ : . . .

— Ուրեմն վախնալու բան մը չունիք :

Այն խօսակցութեան միջոցին Անթօնին զգուշութեամբ ամուսինը կը դիտէր : Ասիկա որ անօթի էր , հարեանցի կերպով կարծես մտիկ կ'ընէր իւր մօրը ու Պ . Տըվօի ըսածները :

— Ինչպիտի ընես այս իրիկուն , հարցուց յանկարծ Վիսթավի :

— Հոս պիտի կենամ , պատասխանեց Տօմօն , և զո՛ւ :

— Ես Պ . տը * * * ին այցելութիւն մը տալ խոստացայ : Հրաման կու տաս , սիրելի մայր իմ , այս իրիկուն հեռանալու :

— Գնա , սիրելի զաւակս , գնա : Հիւանդ ըլլալէ զատ ամեն բանի հրաման կու տամ քեզ :

Անթօնին ամուսնոյն վրայ գրեթէ աղերսալի ակնարկ մը վերցուց , Էտմօն անմիջապէս երեսը միւս կողմ դարձուց . այս տեսարանը Վիսթավի աչքէն չւրծաւ :

Երբ ճաշը լմնցաւ Վիսթավ Վտմօնի մօտենալով ,

— Պէտք է որ չմեկնիս , ըսաւ :

— Ինչո՛ւ :

— Ինչու որ Անթօնին կը վշտանայ :

— Անթօնին տղայ է , պատասխանեց Էտմօն : Եթէ իրեն մտիկ ընեմ երբէք ասկէջ չպիտի մեկնիմ :

— Այնքան զքեզ կը սիրէ որ պէտք է ներես իրեն այդ բանը :

— Կանայք այդպէս են , վաղ կամ անագան իրենց սէրը բռնութեան կը դառնայ : Ինչ վնաս կայ եթէ Պ . տը * * * ին այցելութեան երթամ , որուն տունը միւս օր ճաշեցի :

— Անթօնին կը նախանձի :

— Որմէ՞ :

— Պ . տը * * * ին կինէն :

— Ամեն մարդէ կը նախանձի . խեղճ է նա :

Մինչդեռ Էտմօն և Վիսթավ այսպէս կը խօսակցէին Անթօնին Լօրանսի մօտեցաւ :

— Կը տեսնես , ըսաւ , այս իրիկուն ալ պիտի երթայ :

— Մի , այդպէս մի վշտանար , պատասխանեց Լօրանս , զուր տեղը կը խուզիս : Էտմօն միշտ խանդակաթ կը օիրէ զքեզ :

— Ո՛վ երբէք մտքէն կ'անցընէր այս բանս , ըսաւ Անթօնին անպատում տրտմութեան ժպիտով մը :

— Ինչ կայ , հարցուց կամաց մը Պ . տը Վօրթօն երկու կանանց մօտենալով :

— Այն թէ , յարեց Լօրանս , Անթօնին կը վշտանայ իւր ամուսինը ստէպ Պ . տը * * * ին տունը երթալուն համար : Կը կարծէ թէ անոր կնկան հետ սիրաբանութիւն կ'ընէ :

— Թո՛ղ որ երթայ , ըսաւ Պ . տը Վօրթօն , զան անկէ պողեցընելու լաւագոյն միջոցն է այս : Որչափ ուզես զան արգիլել այնքան կը յամառի : Ինչ կ'ըլլայ եթէ տիկին տը * * * ի քիչ մը սիրաբանութիւն ընէ : Աղէկ գիտես որ քեզմէ զատ ուրիշը չսիրէր :

— Տխուր մտիթարութիւն , մրմուաց Անթօնին աչքերը լեցուելով :

— Նայեցէք , կ'ըսէր տիկին տը Բէրէօ Պ . Տըվօի Էտմօնը ցուցընելով որ սիկառը կը վառէր , նայեցէք ինչ առողջ ու աշխոյժ է : Ինչ երջանիկ եմ , աօքթօր , և ինչչափ ձեզի պարտական եմ :

— Կ'ուզէս քիչ մը հետս գալ , ըսաւ Էտմօն Վիսթավի , զլսարկը առնելով :

— Չէ , ես աս տիկնանց հետ կը կենամ :

— Ուրեմն մնաս բարով :

— Կ'երթան ուրեմն , ըսաւ Անթօնին իւր ամուսնոյն մեկնելու պատրաստուիլը տեսնելով :

— Այո՛ :

— Շուտ պիտի վերադառնան :

— Մէկ ժամէն հոս պիտի ըլլամ :

— Ստոյգ :

— Այո :

Անթոնին ճակատը երկնաց էրկանը որն որ համբոյր մը դրողմեց :

— Այս իրիկուն մի միկնիր , ըսաւ կամաց մը զան արդիլել ջա-
նալով :

— Ա՛հ , ինչու այդչափ կը փափաքիս որ չմեկնիմ :

— Այս օր երեք տարի է որ կարգուած ենք ուստի բոլոր օրը
կրնաս ինձ զոհել :

Էտմոն ուսերը թոթովելով սրտմտութեամբ գլխարկը սեղանին վրայ
դրաւ :

— Գնա , քանի որ այդքան կը փափաքիս , ըսաւ իւր կինը :

— Չէ , որովհետեւ կ'ուզես որ կենամ :

— Չեմ ուզեր , այլ կը բաղձամ մեր բարեկամներուն պատճա-
ռաւ , որ հոս եկած են այս տարեդարձը շնորհաւորելու :

— Մոռցեր էի որ այսօր էր այդ տարեդարձը :

— Արդէն , ըսաւ Անթոնին : Ուրեմն ալ չես սիրեր զիս , Էտմոն :
Էտմոն նորէն գլխարկը առաւ :

— Եթէ զգայական տեսարան մը ներկայացընելու համար արդի-
ւեցիր զիս , ճշմարիտը զուարճալի չէ :

— Գնա , բարեկամս , ես եմ յանցաւորը : Անգամ մ'ալ համ-
բուրէ զիս . բայց մէկ ժամէն պիտի վերադառնաս , այնպէս չէ :

— Մէկ ժամէն , այո :

Էտմոն սենեկէն դուրս ելնելու ատեն Անթոնին անոր ժպտելով ,
— կէս գիշերին չպիտի վերադառնայ , մրմնջեց :

— Ինչ ունիս , սիրելի աղջիկս , ըսաւ տիկին տը Բէրէօ Անթո-
նինի , տրտում կ'երեխս :

— Բան մը չունիմ , մայր իմ , պատասխանեց Անթոնին , ճշմարիտը
բան մը չունիմ :

— Էտմոնի ստեպ մեկնիլը քեզ կը վշտացընէ : Բայց զիտէ որ
սուանձին չես և մինք քու քովդ ենք : Ամեն երիտասարդները այս-
պէս են : Մտածէ որ քսանսկեց տարեկան է և այս տարիքին մէջ
մարդիկ գրգռանքի պէտք ունին :

Ինչ որ ալ ըլլար տիկին տը Բէրէօ միշտ որդւոյն իրաւունք պի-
տի տար : Իւր բոլոր բաղձանքը զաւկին առողջութիւնը ու երջան-
կութիւնն էր , անոր համար Անթոնին կը հասկընար որ անոր զան-
գատիլը անօգուտ էր :

Սիւսթավ , հրամանատարը , տիկին տը Մօրթօն և բժիշկը սեղա-
նի մը շուրջը նստելով Ռիֆի սկսեցին : Այս գուարձութիւնը թէև
Տօմնի խիստ ախորժելի չէր , բայց միւս երեք խաղացողները այն-
քան կ'ըբօսնուէին որ իրենց հաճութիւն տալու համար միշտ խաղին
կը մասնակցէր :

Սիւսթավ խաղի նստելէն առաջ որդին ու կինը համբուրեց , որն
որ տղան ծնդացը վրայ առնելով բազմոցի մը վրայ Անթոնինի հետ
կը խօսակցէին , մինչդեռ տիկին տը Բէրէօ զիրք մ'առնելով արե-
ւին վերջին ճառագայթներուն լուսով ընթերցումը կ'աւարտէր :

Անթոնին ամեն վայրկեան ժամացոյցը կը նայէր : Մէկուկէս ժամ
այսպէս անցաւ :

Յանկարծ ոտք ելաւ :

— Ո՛ւր կ'երթաս , ըսաւ Լօրանս :

— Պահ մը սենեակս կ'երթամ :

— Կ'ուզեն որ հետդ գամ :

— Անշուշտ :

Լօրանս Անթոնինի անհնարին տրտմութիւնը տեսնելով չէր ու-
զեր քովէն հեռանալ , քանզի կը վախնար որ այս վիշտը յուսա-
հատութեան չփոխուէր :

— Աստուած իմ , Աստուած իմ , ինչ դժբաղդ եմ . . . զոչեց
Անթոնին աթոռի մը վրայ իյնալով և ջերմ արտասուք թափելով :

— Բարեկամուհիս , քոյրս , այդպէս մի չար , ըսաւ Լօրանս :

— Այդ կինը կը սիրէ , կը կրկնէր Անթոնին , վստահ եմ . . .
կէս ժամ է ի վեր պէտք էր վերադարձած ըլլար :

— Ի զուր կը խուովիս , հանգստացիր : Անշուշտ ականաց ար-
գիլուած է :

— Եթէ այդպէս ըլլար՝ հոյս չէր , պատասխանեց Անթոնին .
բայց կը տեսնեմ ինչպէս փոխուած է Էտմոն : Եթէ զան յառաջա-

դոյն տեսած ըլլայիր, Հիմա չէիր ճանչնար: Իմամենափոքր մտածութեանցս վրայ իսկ կը նախանձէր, չէր ուզեր որ սենեկապահուհիս անդամ դպչէր ինձ: Հիմա ամբողջ օրեր առանձին կը թողու զիս: Իրաւ է որ Հիմակ մեծ ապագայ մը ունի առջևը, մինչդեռ այն ատեն մօտադուռ մահէ մը կ'երկնչէր: Արդեօք իւր սէրը այդ համոզումէն յառաջ կու գար: Երբեմն այնպէս կը կարծեմ: Միթէ լաւադոյն էր որ հայրս չըժշկէր զինքը: Այն ժամանակ մահը միայն իւր սիրոյն վերջ տալու էր, մինչդեռ Հիմակ, կը կրկնեմ, Լօրանս, լստահ եմ որ ուրիշ կին մը կը սիրէ:

Այս միջոցին Արևթավ ներս մտաւ:

— Ձեր դուրս ելնելը տեսայ, ըսաւ երկու կանանց, ինչ կայ: Լօրանս Անթոնինը Արևթավի ցցուց:

— Առ լոյ, ըսաւ այս վերջինը:

— Բարի Արևթավս, ըսաւ Անթոնին Տօմօնի ձեռքը բռնելով, դու կնիկանդ վիշտ չես պատճառեր:

— Տղայ ես, ըսաւ երիտասարդը Անթոնինի: Էտմօն կը սիրէ քեզ:

— Ես ալ այդ կ'ըսէի, ըսաւ Լօրանս, և այնպիսի կնիկան մը պէս Արևթավի երեսը նայեցաւ որ գիտէ թէ մտածածը չըսէր:

— Քովը կեցիր, ըսաւ կամաց մը Արևթավ Լօրանսի, ես երթամ Էտմօնի հետ խօսիմ, քանզի ըրածը խիստ դէշ է:

— Այո, մեզ հոս պիտի գտնես:

Արևթավ կնիկանը ձեռք սեղմեց ու դուրս ելաւ:

Պ. տը * * * որուն տունը կը գտնուէր Էտմօն, Տեղ Իբրաիմի ծառուղոյն վրայ կը բնակէր ու Արևթավը կը ճանչնար. ուրեմն զարմանալի չէր որ Արևթավ իրեն այցելութեան երթար:

— Պարտը հոս չէ, պատասխանեց ծառան Տօմօնի, բայց տիկինը ներսն է:

— Իմաց տուր զիս:

Արևթավ Էտմօնը տիկին տը * * * ի հետ գտաւ: Երկուքն ալ զան տեսնելուն պէս զարմացան: Արևթավ որոշած էր անմիջապէս մեծ հարուած մը տալ:

— Ներողութիւն կը խնդրեմ, տիկին, ըսաւ, այսքան ուշ ձեր տունը դալուս, բայց տիկին Անթոնին տը Բէրէօ հիւանդ է և կու գամ Էտմօնը առնելու, որուն հոս ըլլալը զիտէի:

Քանի որ տիկինը մը տուն ներկայանալու համար ժամանակը ուշ էր, հոն կենալն ալ անպատեհ էր:

Տիկին տը * * * Արևթավի միտքը հասկըցաւ, կարմրեցաւ և Էտմօնի գառնալով ըսաւ:

— Ձեմ արգիլէր ձեզ, պարոն, և կաղաչեմ իմ անկեղծ յարգանքս տիկին տը Բէրէօի մատուցանէք, որուն հիւանդութիւնը կը յուսամ որ ծանր չըլլար:

Երկու երիտասարդները տիկին տը * * * է հրամանատիւ:

— Ինչ կը նշանակէ այս, ըսաւ Էտմօն Արևթավի, երբ գուրս ելան:

— Ասիկա կը նշանակէ, սիրելիս, պատասխանեց Տօմօն քիչ մը խտտութեամբ որ Անթոնինի հետ անարժանապէս կը վարուիս:

— Եւ դուն վրադ առիր բաշայակամութիւն ինձ սորվեցրնելը:

— Այո:

— Գէշ ըրիր, քանզի բարոյականութենէ չեմ զբօսնուր:

— Բայց մտիկ պիտի ընես:

— Գիտեմ որ բարեկամութեան իրաւունքներն մէկն է այդ խօսէ:

— Անթոնինը կը խափես:

— Ասիկա միայն ինձ կը վերաբերի:

— Ատիկա ինձ կը վերաբերի՝ որ երեք տարի առաջ դայի օրիորդ Տըվօի խնդրելու որ կնիկ ըլլայ. քանզի այս միջոցին միայն նա կը սիրէիր, և երբ հետդ ամուսնանալու յանձն առնելը քեզ իմացուցի որ արևութեանէդ վրիպ նետուեցար:

— Երեք տարի է . . .

— Ի՛հ:

— Երեք տարույ մէջ շատ անցքեր կ'անցնին, սիրելիս: Այս միջոցին արեւն կը թքնէի, կը կարծէի երկու տարի միայն ապրիլ. հիմա քեզի պէս առողջ եմ ու կեանքը ուրիշ երեւոյթ մը ունի: Կը սիրեմ միշտ Անթոնինը, բայց այնպէս ինչպէս կ'ըլլայ երբ երեք

տարի շարունակ կնկան մը քով անցընես : Առջի օրուան պէս հա- նապաղ կնկան մը ոտքին ներքեւ կենալը անկարելի է : Բարեկա- մուծիւնը , խաղաղ սէրը առաջին յուզմանց կը յաջորդեն . ապա , կը կրկնեմ , երբ կարծես թէ պիտի մեռնիս ու յետոյ ուողջանաս , այն ըսած ու ըրածներէդ շատը գրեթէ ծաղրելի կը գտնես :

Քսանկվեց տարեկան եմ ու ամուսնացած՝ բայց չեմ ուզեր կնկանս հետ միայն կենակցել իբր թէ վաթսուոն տարեկան ըլլայի :

— Ուստի հաճոյքի մը համար կ'ուզես զան վշտացընել :

— Կեանքը այսպէս կ'անցնի սիրելիս , և եթէ Անթօնին իւր գլուխը տաքցընող անձերէ շրջապատուած չըլլար չպիտի վշտա- նար :

— Ինծի համար կ'ըսեն այդ խօսքը :

Իտմօն չպատասխանեց :

— Ուրեմն ալ սրտիդ մէջ զգացում չէ մնացեր , ըսաւ Կիւսթավ , բարեկամութիւններդ կը մոռնաս : Այդ գէշ է , Իտմօն , և շատ գէշ : Մոռացիտութիւնը երբեմն ասիբախտութիւն կը համարուի :

— Գուն Նիշէթը կը յիշես , որ այնքան կը սիրէիր : 2է :

— Բայց վերջապէս Պ. Տըվօի կը պարտաւորիս կեանքդ և եթէ ոչ սիրով , գոնէ երախտագիտութեամբ պէտք ես աղջիկը երջան- կացընել : Ձեռն պատասխաներ :

— 2է :

— Ինչո՞ւ :

— Քանզի իրողութեանց գարձուածին վրայ չեմ գիտեր թէ իւր ըրածին համար երախտագէտ ըլլալ պէտք եմ :

— Ինչ կ'ըսես :

— Կ'ըսեմ թէ վայրկեաններ կան որ ինքնին կը հարցընեմ՝ ե- թէ սակայն մօրս մահ չպատճառէր այս բանս՝ թէ լուսագոյն չէր որ երկու տարի առաջ մեռնէի : Այն ժամանակ կեանքէն ցաւե- լով պիտի բաժնուէի , անբիծ սիրոյ վրայ հաւատ ունենալով և համոզուած որ այս աշխարհի մէջ երջանիկ պիտի ըլլայի , մինչ- դեռ հիմա եթէ պէտք եմ քեզ խոստովանիլ , կարծեմ թէ ամուս- նութեան համար ծնած չէի . զիտեմ որ Անթօնինը կը թշուառացը-

նեմ , բայց չեմ կրնար ուրիշ կերպ ընել : Կը տեսնեմ որ գուցէ այն պատճառաւ միայն զան կը սիրէի որովհետեւ քիչ ժամանակ- ունէի ասրելու : Միւս օր իւր հաւանութիւնը առած ատենուան ի- րեն գրած նամակս կարգացի և ծաղրելի դտայ : Աստուծմէ ընկալած երջանկութեան գումարս մէկ կամ երկու տարուան մէջ վատնեցի և երբ ինքզինքս երկար տարիներու առջև տեսայ , պարտ- քերէն աղատած մարդու մը պէս եղայ : Վերջապէս քեզմէ բան մը չպահելու համար , օրեր կան , յաճախ օրեր , որ կը ձանձրա- նամ և կ'ստիպուիմ գուրսը գուարձութիւն փնտոելու որ այլ ևս տանս մէջ չեմ գտներ : Գիտեմ որ Անթօնին կը սիրէ զիս զիտեմ որ զեղանի է ու անձնուէր , որուն կեանքս կը պարտաւո- րիմ , որ եթէ մեռնիմ վաղը ինքն ալ կը մեռնի . ուստի սրբուհւոյ մը պէս կը պաշտեմ , մօրս պէս կ'օրհնեմ զան . բայց ափսոս որ ալ չեմ սիրեր զինքը և կարծեմ ալ թէ երբէք սիրած չունիմ :

— Խեղճ Անթօնին , յարեց Կիւսթավ :

— Ես ալ քեզի պէս կը մեղքնամ , ըսաւ Իտմօն :

— Բայց դու գոնէ երջանիկ ես :

— Կ'ուզես ճշմարտութիւնը իմանալ :

— Այո :

— Ի՛հ , բոլոր ասրելու տարիներս հիմա յօժարակամ կու տայի այն ամուսնութենէս ետքի վեց ամիսներուն համար :

Թրուա-Ֆրէր փողոցը հասան :

Կիւսթավ յուզուած էր ու արտում . Իտմօն մերթ ընդ մերթ ձեռքը ճակատը կը տանէր այնպիսի մարդու մը պէս որ տաշտկալի խորհուրդ մը կ'ուզէ ցրուել :

« Իրաւունք ունի , կ'ըսէր Կիւսթավ ինքնիրեն : Այսպէս է ու- րեմն կեանքը , որ մարդս միանգամայն ցաւելով իսկ իւր սիրածէն պէտք է հեռանայ : Հազիւ թէ իրաւունք ունիմ Իտմօնը կշտամ- բելու , անոր Անթօնինի ըրածը ես ալ Նիշէթի ըրի : Միթէ ս- ղէկ ըրի : »

Այս ըսելով Անթօնինի սենեկին դուռը բացաւ և Լօրանս գե- ղանի , զգաստ և ծիծաղաբէմ՝ տղան զիբկը իւր զինացը ելաւ :

Այս տեսարանը իւր ըրած հարցման հաստատական պատասխան
մ'էր :

Էտմծն Անթծնիսի գնաց և ձեռքը սեղմեց . խեղճ կինը ամուս-
նոյն վիզը նետուեցաւ :

Էտմծնի սիրտը չէր բարբախեր :

Այս պատմութեամբ զէպքերը տասը տարի է որ կատարուեցան :
Տիկին տը Բէրէօ մեռաւ իւր զաւակին ժպտելով, զորն որ երջանիկ
կը համարէր . և այս մահը ինչպիսի որ կը կարծէք Էտմծնի՝ կենաց
վրայ ունեցած ձանձրոյթները չրժշկեց : — Սախայն այսօր առանց
յուզուելու կը խօսի անոր վրայ :

Պ. և տիկին տը Մօրթմն կ'ապրին դեռ , միայն թէ տիկին տը
Մօրթմն անդամաւրոյճ է :

Պ. Տըվօ շատ առողջ է և Էտմծնի բժշկութիւնը իւր ծուխերը
շատցուց :

Վիւթաժ և Լօրանս վերջերս Նիսի պղտիկ եկեղեցւոյն մէջն է-
ին , ուր իրենց որդին առաջին հաղորդութիւնը կ'ընդունէր :

Տիկին տը Մօրթմնի հիւանդութենէն 'ի վեր իրենց աղջկան
հետ այս քաղաքը կը բնակին :

Էտմծն * * * ի վերակացու է :
Իւր կենաց բոլոր բանաստեղծութիւնը այս դուրնաբեայ փառա-
սիրութեամբ համառօտեցաւ :

Քաղքին մէկ փաստարանի մը քառսուն տարեկան կնիկն սիրա-
հարն է : Ամեն մարդ գիտէ , մինչև Անթծնի իսկ որուն վրայ խօ-
սեցած ժամանակ կը ծիծաղի :

Եթէ Թուր երթար և Բարիզի փողոցէն անցնիք հետևեալ ծա-
նուցադիրը պիտի տեսնէք .

ՏԻԿԻՆ ԼԱՔՐՈՒԱ . ՆՈՐԱԶԵԻՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԿԵՐՊԱՍՆԵՐ

Այս տիկին Լաքրուան Նիշէթն է , որ Թուր համնեքն երկու
տարի ետքը դրածախի մը որդւոյն հետ ամուսնացաւ , որուն խա-
նութը իրենին գիմացն էր :

Ողորմելի աղջկան անհարին տրամութիւնը տեսնելով երիտասարդը զրբեր փոխ կու տար զան զուարճացրնելու համար : Այսպէս միմիթարել ուզելով սիրահարեցաւ , վերջապէս սիրեց 'սիշէթը և էրենց տունը իբր միութեան և ներքին ուրախութեան տիպար մը կը ցուցընեն :

Տիկին Անձէլիք կաթուած ունի , բայց ֆէֆել-ըրֆէլ Դէ-լէ աւարտեց :



1826

2013

